



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

---

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО  
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

**СБОРНИК НАУЧНЫХ  
СТАТЕЙ СНО ЕГУ**

**COLLECTION OF SCIENTIFIC  
ARTICLES OF YSU SSS**

**1 (1)**

*Гуманитарные науки - Human sciences*  
**(Филология – Philology)**

ЕРЕВАН - YEREVAN  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS  
2014

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱԿՐՈՒՆ

ՈՒՍՏԱՌՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829-4367

# ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1 (1)

*Դասարակական գիտություններ*

(Բանասիրություն)

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2014

**Յրատարակվում է  
ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**

**Издаётся по решению Ученого совета ЕГУ**

**Published by the resolution  
of the Academic Council of YSU**

**Խմբագրական խորհուրդ՝**

- թ. գ. դ., պրոֆ. Ս. Մուլադյան
- թ. գ. դ., պրոֆ. Ռ. Սաքապետոյան
- թ. գ. դ., պրոֆ. Ե. Երզնկյան
- թ. գ. դ., պրոֆ. Գ. Ասատրյան
- թ. գ. դ., դոց. Ն. Դարությունյան
- թ. գ. թ., դոց. Ն. Դիլբարյան
- թ. գ. թ., դոց. Ռ. Առաքելյան
- թ. գ. թ., դոց. Ա. Եգանյան
- թ. գ. թ., դոց. Ռ. Մելքոնյան
- թ. գ. թ., դոց. Վ. Ոսկանյան

**Դրատ. պատասխանատու խմբագիր՝ Ս. Մալխասյան**

Յրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն

Հասցե՝ 33, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55-55-70, publishing@ysu.am

Յրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական գիտական ընկերություն

Հասցե՝ ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 60) 71-01-94, sss@ysu.am

ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ ssspub.ysu.am

## **Հարգելի՝ ընթերցող,**

Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության կառուցվածքային ստորաբաժանումները 2012-2013 թթ. ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել են շուրջ հինգ տասնյակ միջազգային, համբավետական և ֆակուլտետային գիտաժողովներ, որոնցից ամենախոշորը նվիրված էր Հայ գրատպության սկզբնավորման 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին: Գիտաժողովում ներկայացված 350 գեկուցումներից 244-ը տպագրվեցին հինգ հատորներից կազմված ժողովածուում: Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպված մյուս գիտաժողովների ընթացքում ներկայացվել է շուրջ 650 գեկուցում, որոնց մի մասը գիտական դեկավարների, ամբիոնների վարչների և ֆակուլտետների գիտական խորհուրդների համապատասխան երաշխավորությունն ստանալուց հետո ներկայացվել է ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածուում տպագրության: Զգալի խնճագրական աշխատանքներից հետո ժողովածուն ներկայացվել է ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը:

Այսպիսով, Զեր դատին ենք ներկայացնում 94 գիտական հոդվածից բաղկացած ժողովածուն՝ հասարակական գիտություններին առնչվող 3 հատորներով՝ բանախորհություն (25 հոդված), պատմություն և արևելագիտություն (39 հոդված), իրավագիտություն, փիլիսոփայություն, տնտեսագիտություն, սոցիոլոգիա, ժուռնալիստիկա (30 հոդված):

Այս եռահատորյակի իրատարակումը տրամաբանական շարունակությունն է ՈՒԳԸ իրատարակչական ձեռնարկումների, քանի որ վերջին տարիների ընթացքում ուսանողների և ասպիրանտների գիտակազմակերպչական հետաքրքրությունների աճի, պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուշիմության, սրտացավորության և պրոֆեսիոնալիզմի, ինչպես նաև ԵՊՀ վարչակազմի և ՈՒԳԸ ստորաբաժանումների համակարգված գործելածի շնորհիվ ԵՊՀ-ում զարգանում է ուսանողական գիտական կյանքը: Կետզինետ մեծանում է երիտասարդական գիտաժողովների ընթացքում ներկայացվող գեկուցումների քանակն ու որակը, և գիտաժողովների անցկացման տրամաբանական շարունակություն է դառնում գիտական հոդվածների ժողովածուների իրատարակումը: Պատահական չէ, որ ՈՒԳԸ շրջանակներում 2012-2013 թթ. ուսումնական տարվա ընթացքում իրատարակվել է գիտական հոդվածների 9 և գեկուցումների թեզիսների 2 ժողովածու, որոնցում ընդգրկված են համապատասխանաբար շուրջ 370 հոդված և մոտ 80 թեզիս: Անչափ կարևոր է, որ ԵՊՀ-ում ձևավորված այս երիտասարդական գիտական միջազգային մասնակիցն են նաև ՀՀ այլ բուհերի ուսանողներ և ասպիրանտներ, ովքեր ևս տպագրում են իրենց աշխատանքները ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածուներում: Կարևոր ձեռքբերում է նաև ՈՒԳԸ իրատարակումների կայքի ([sssrpub.yusu.am](http://sssrpub.yusu.am)) ստեղծումը, ինչը հնարավորություն է ընձեռում հոդվածների հեղինակներին՝ ավելի ճանաչելի դարձնելու իրենց աշխատանքները հանցանցի միջոցով:

Անփոփելով մեր խոսքը՝ խորին երախտագիտություն ենք հայտնում ԵՊՀ ՈՒԳԸ աշխատանքներին մասնակցող ուսանողներին և ասպիրանտներին, ԵՊՀ ռեկտորատին, ֆակուլտետների դեկավարությանը, ամբիոններին և հատկապես պրոֆեսորադասախոսական կազմի այն ներկայացուցիչներին, ովքեր դեկավարել կամ գրախուել են աշխատանքները:

**Հարգանքով և արգասաքեր համագործակցության ակնկալիքով՝**

**ԵՊՀ պրոռեկտոր, տ. գ. թ. Ռուբեն Մարկոսյան և  
ԵՊՀ ՈՒԳԸ նախագահ Միքայել Սալիխասյան**



ՀԱՅ ԲԱԿԱՆԻՐՈՒԹՅՈՒՆ

**АРМЯНСКАЯ ФИЛОЛОГИЯ**

**ARMENIAN PHILOLOGY**



**ԳՐԱԲԱՐԵԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԵԱՆ ՇԵՐՏԵՐԸ ՀԱԿՈԲ ԿԱՐՆԵՑՈՒ  
«ՏԵՂԱԳԻՐ ՎԵՐԻՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ ՅՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Թամարա Պողոսյան  
**ԵՊԴ, Դայ բանասիրության ֆակուլտետ, մագիստրանտ**  
Գիտ. դեկ.՝ բ.գ.թ., դոց. Ն. Պողոսյան  
Էլքիոստ՝ [tnelesnovna@gmail.com](mailto:tnelesnovna@gmail.com)

Դակոր Կարնեցին 17-րդ դարի մատենագիր է: Նա հեղինակել է ժամանակագործունը, իր Գերօր հոր կենսագործունը, «Ծինուած Կարնոյ քաղաքի» աշխատությունը, Կարինի վանքերից մեկի 1653 թ. կողոպուտի պատմությունը: Դակոր Կարնեցին ծնվել է 1618 թ. փետրվարին: Ուսումնասիրողներից Վ. Դակորյանը, հաշվի առնելով նրա գրած «Ժամանակագործության» վերջին տարեթիվը՝ 1672 թ., կարծում է, որ նա մինչև 1672 թ. ողջ է եղել<sup>1</sup>: 1903 թ. Վաղարշապատում Կ. Կոստանյանցի հրատարակությամբ լույս է տեսել Դակոր Կարնեցու «Ծինուած Կարնոյ քաղաքի» աշխատությունը, սակայն այսպիսի վերնագրով՝ «Տեղագիր Վերին Դայոց»: Վ. Դակորյանը կարծում է, որ հրատարակության բնագրի խորագիրն ավելացվել է հետագայուն ուրիշների կողմից հավանաբար ձեռագրի սկզբից թղթի կորստի պատճառով, քանի որ այդ հրատարակությունում Կարինի հիմնադրման հանգանաքները բացակայում են: Այդ դրվագները Դակոր Կարնեցին քաղել է Սովետս խորենացուց: Դրանք կազմում են Դակոր Կարնեցու աշխատության ներածականը: Դեղինակի կողմից գրված խորագիրը եղել է հետևյալը «Ծինուած Կարնոյ քաղաքի, որ կոչեցաւ Թեուղուածուիս, որ այժմ Արգրում վերածայնիալ կոչի»<sup>2</sup>:

Դակոր Կարնեցու այս աշխատությունը գուտ պատմագրական երկերի թվին չի դասվում, քայլ այն պարունակում է այնպիսի տվյալներ, որոնք ոչ միայն Կարինին և նրա շրջակայրին են վերաբերում, այլև Օսմանյան Թուրքիայի կազմակերպած պատերազմներին, ավերիչ ասպատակություններին:

Մենք ուսումնասիրում ենք Դակոր Կարնեցու այս երկը լեզվական առանձնահատկությունների տեսանկյունից: Երկի հոլովման համակարգում զատելու ենք գրաբարյան և աշխարհաբարյան շերտերը<sup>3</sup>: Ստացված արդյունքների հիմնա վրա պիտի փորձենք եզրակացնել, թե 17-րդ դ. ստեղծված այս երկում որ շերտի առանձնահատկություններն են գերակշռում, քանի որ վաղ աշխարհաբարը մեր լեզվի զարգացման յուրօրինակ ժամանակահատված է, ումի իրեն բնորոշ առանձնահատկություններ, որոնք ստորև կներկայացվեն: Այս տեսանկյունից վերոհիշյալ երկի լեզվի ուսումնասիրությունը կարևոր է և հետաքրքիր արդյունքներ կարող է ի հայտ բերել:

Նախ ցանկանում ենք անդրադառնալ աշխարհաբարի, վաղ աշխարհաբարի որոշ առանձնահատկությունների: Մեր կարծիքով դա անհրաժեշտ է աշխարհաբարյան շերտի առանձնացման և բնութագրման համար:

Յր. Աճառյանն աշխարհաբարը միջին հայերենից բաժնելու նշան է համարում զ նախողի բացակայությունը, սակայն սա միանշանակ չէ, քանի որ այս դեպքում ևս կա անհնարինության հանգամանքը. անհնար է որոշել, թե կոնկրետ որ բարբառը որ թվականին է գրկվել զ նախորից: Լեզվաբանն աշխարհաբարի առաջին ննուշների մեջ երկու հատկություն է առանձնացնում՝

<sup>1</sup> Դակորյան Վ., Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. 1, Երևան, 1951, էջ 238:

<sup>2</sup> Նույնի Մանր ժամանակագրություններ, հ. 2, Երևան, 1956, էջ 543:

<sup>3</sup> Աշխարհաբարյան շերտ ասելով՝ հոդվածում նկատի ունենք գրաբարյան սկզբունքներից շեղումներ ընդգրկող շերտը:

1. գրաբարի առատ խառնուրդ,
2. տեղական բարբառների կնիքը:

Դամամիտ ենք Յր. Ածառյանի այն կարծիքին, որ ամեն զավառ ունի իր տեղական առանձին աշխարհաբարը: Այն գրողի գիտելիքների համապատասխանությամբ կարող է մոտենալ կամ հեռանալ գրաբարից<sup>1</sup>:

17-18-րդ դդ. աշխարհաբարը տարբեր հեղինակների մոտ տարբեր ծևերով է հանդես եկել: Երբեմն գերիշխել են գրաբարի տարրերը, երբեմն՝ որևէ բարբարի, երբեմն՝ միջին հայերենի օրինաչափությունները: Յայոց լեզվի պատմության մեջ աշխարհաբարի հնագույն նմուշները են համարվում Քջմիջի 1358 թ. արձանագրությունը:

Ըստ Ս. Ղազարյանի՝ 17-18-րդ դդ. աշխարհաբարը սկսում է մշակվել տարբեր բարբառների հիմնա վրա: Այս դարերում որպես աշխարհաբարի հիմնական առանձնահատկությունների նա նշում է՝

1. գրաբարյան նախորդների գործածության թուլացումը,
2. բարբառների խստ ազդեցությունը գրական լեզվի վրա,
3. բարբառով գրականություն ստեղծելու ձգուումը,
4. տարբեր, երբեմն անգամ նույն հեղինակի գործերում բարբառների, գրաբարի, միջին հայերենի իրողությունների կիրառությունը<sup>2</sup>:

Առանձին կետ կարելի է համարել նաև այն, որ այս դարերում ստեղծված պատմական, նաև այլ բնույթի երկեր գրաբառով են գրվել, բայց այն ենթարկվել է բարբառների ազդեցությանը, իսկ գեղարվեստական երկերը հագեցած են եղել միջին-հայերենյան, բարբառային տարրերով հարուստ գրաբարով: Մեր կարծիքով այս շրջանը կարելի է համարել հնի և նորի հանդիպում, քանի որ ընդհանուր առանձ պահպանվում էր լեզվական ծևերի զանազանությունը, նաև տարածվում էին քերականական նոր, գրաբարին օտար ծևեր: Աշխարհաբարին բնորոշ էր քերականական նույն իմաստը տարբեր ծևերով արտահայտելու հատկությունը: Նույն գրողն իր նույն երկում կիրառում էր ինչպես ուժ, այնպես էլ կը ճյուղի բարբառային իրողություններ, համաձայնեցումը կարող էր կատարվել տարբեր սկզբունքներով: Ինչպես նկատում ենք, նաև իրողություններով հարուստ է Յակոբ Կարնեցու վերոհիշյալ երկը: Այս բազմազանությունը լիովին ազատ չէր ազդեցություններից, ավելին՝ այն տարբեր ազդեցությունների յուրահատուկ ամբողջություն էր:

Ակադեմիկոս Գ. Զահոնկյանը հայոց լեզվի զարգացման շրջանաբաժնում կատարելիս առանձնացնում է հետևյալ փուլերը՝ վաղնջահայերեն, հնագույն հայերենի շրջան, իին հայերեն, միջին շրջան և նոր կամ աշխարհաբարի շրջան: Նոր կամ աշխարհաբարի շրջանն ընդգրկում է 17-20-րդ դդ.: Նոր շրջանում հանդես է գալիս նոր գրական հայերենը կամ գրական աշխարհաբարը խոսակցական լեզվի հիմնա վրա: Գրական աշխարհաբարի հետ ստորև ներկայացվող առաջին ենթաշրջանում շարունակում է հանդես է գալ գրաբարը: Յայոց լեզվի զարգացման այս շրջանի համար առանձնացվում է երեք ենթաշրջան՝

5. վաղ աշխարհաբարի՝ 17 դարասկզբից մինչև 19-րդ դարի կեսը,
6. ուշ կամ երկջուղ աշխարհաբարի՝ 19-րդ դարի կեսից մինչև 1920 թ.,
7. ժամանակակից՝ 1920 թ. մինչև մեր օրերը<sup>3</sup>:

Գ. Զահոնկյանը «Յայոց լեզվի զարգացմանը և կառուցվածքը» աշխատության մեջ նշում է, որ վաղ աշխարհաբարի ենթաշրջանի մի շարք հեղինակներ իրենց ժամանակի լեզվական վիճակը բնութագրում են երեք կարգի տարատեսակների առկայությամբ՝

1. իին գրական հայերեն կամ գրաբար,

<sup>1</sup> Աճառյան Յր., Յայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 440-445:

<sup>2</sup> Ղազարյան Ս., Յայոց լեզվի պատմություն, Երևան, 1981, էջ 321:

<sup>3</sup> Զահոնկյան Գ., Յայոց լեզվի պատմություն. Խախագրային շրջան, Երևան, 1987, էջ 26:

- «քաղաքական» կամ քաղաքացիական հայերեն,
- բարբառներ:

**Քաղաքացիական հայերեն** բառակապակցության փոխարեն Նազարյանը 19-րդ դ. կետերին գործածում էր *հասարակաց հայախոսություն* բառակապակցությունը: Մեր կարծիքով երկու արտահայտություններում էլ ընդգծվում է այն գաղափարը, որ այդ հայերենը պատկանում էր հանրության լայն շերտերին:

Կազ աշխարհաբարի առանձնահատկություններին անդրադառնելուց հետո քննենք «Տեղագիր Վերին Յայոց» երկի հոլովնան համակարգը՝ առանձնացնելով գրաբարյան և աշխարհաբարյան տարրերը: Նախ հոլովաձևերն առանձնացրել ենք ըստ սեռական-տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական հոլովների, այնուհետև խմբավորել ենք գրաբարյան և աշխարհաբարյան տարրերը հոլովնան համակարգում:

Սեռական-տրական հոլովի դեպքում իշխում է գրաբարյան համակարգը: Դա նշանակում է, որ 17-րդ դ. գրված այս երկում անունների և ներանունների սեռական-տրական հոլովաձևերը գրաբարյան սկզբունքների վրա են հենվում: Բերենք մի քանի օրինակ՝ ....որ ումի գիւղը և աւանը և բերդ ամուր և ամառիկի ի վերայ գետոյն Եփրատայ....<sup>2</sup>, ....որք բազում հօտք ոչխարաց և անասնոց ծարակաւորեալ....(էջ 16)<sup>3</sup>, ....և ի դրունս մեծամեծաց ընծայ մասուցեալ լինի.... (էջ 17) և այլն: Երկի հոլովնան համակարգն ուսումնասիրելիս հանդիպել ենք այնպիսի օրինակի, երբ սեռական-տրական հոլովի դեպքում հեղինակը գոյականը հոլովել է ոչ թե գրաբարում տվյալ գոյականի համար ընդունված հոլովիչով, այլ գրաբարյան հոլովիչի հիման վրա միջին հայերենում ձևակորված մեկ այլ հոլովիչով: Ինչպես գիտենք, գրաբարում ի-ով վերջացող միավանակ բառերը պատկանում են ո պարզ հոլովնան և հոլովում են ո հոլովիչով<sup>4</sup>, սակայն հեղինակը ծի միավանկ գոյականը հոլովում է այսպես՝ ծիան: Միջին հայերենում ա ներդրական հոլովումից վերջնականապես անջատվել էր ան վերջադրական հոլովումը, ինչպես նաև նկատվում էր նաև ո հոլովնան կրօնատման կամ ու-ի վերածվելու գործընթացը: Զի գոյականի սպասված ձևը պիտի լիներ ծիու, սակայն մենք ունենք ծիան օրինակը ....եվ աստի ելանէ արապի ծիան վարժ քելամ....(էջ 23): *Տեղ* գոյականը, որ գրաբարում պատկանում էր ո-ա խառը հոլովնան, երկում գործածված է այսպիսի ձևով՝ տեղոց: Բերենք բնագրային օրինակ՝ ....մինն է անքոյք ի բարձրաւանդակ տեղոց, որոյ անունն Պղնձագոյն անապատ ասեն....(էջ 11): Միջին հայերենում ո հոլովիչը, միանալով շ հոլովակերտին, կազմեց նոր վերջադրական հոլովում՝ ոյ: Սակայն այս հոլովնան պատկանում էին անձ և ազգակցական հարաբերություն ցույց տվող գոյականները, իսկ այս դեպքում մենք ունենք հետաքրքիր օրինակ՝ տեղոց: Այս հոլովի վերաբերյալ նկատված իրողություններից մեկն է այն է, որ գրաբարյան ընդունված Մարենու ձևի փոխարեն հեղինակը գործածում է Մարիամու ձևը:

Յայցական հոլովի պարագայում ևս հիմնականում իշխում է գրաբարյան համակարգը: Յայցական հոլովով դրված գոյականներն անորոշ առման դեպքում առանց զ նախորի են գործածվել, իսկ որոշյալ առման դեպքում՝ զ նախորով, օրինակ՝ ....եւ այլ բազում ուտանաւորս է շարադրեալ....(էջ 12), ....հօտք ոչխարաց իրու զաստեղս երկնից սփռեալ կամ ընդ երեսս դաշտին... (էջ 21-22): Երկում կան այնպիսի կիրառություններ, երբ նախորի կրող բառն ունի նախադաս լրացում, և զ նախորիը փոխանցվել է նախադաս անդամին, օրինակ՝ ....իշելով զույր և զրիտ կարգ....(էջ 29), ....զգեղեցիկ ամառն, զցրտասառոյց ձմեռն....(էջ 30) և այլն: Կան

<sup>1</sup> Զահուկյան Գ., Յայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 50:

<sup>2</sup> Յակով Կարմեցի, Տեղագիր Վերին Յայոց, Վաղարշապատ, 1903, էջ 12:

<sup>3</sup> Այսուհետև բոլոր օրինակները բերվելու են Յակով Կարմեցու «Տեղագիր Վերին Յայոց» Երկից, այդ պատճառով կնշվեն միայն օրինակների էջերը:

<sup>4</sup> Արքահամյան Ա., Գրաբարի ծեռարկ, Երևան, 1976, էջ 41:

դեպքեր, երբ հեղինակը զ նախդրով բարի հետ գործածում է նաև և հոդը: Գրաբարում ը հոդ չկար, կար միայն ն հոդ, որն ուներ արդի հայերենի ն կամ ը հոդի նշանակությունը: Բերենք նման կիրառության օրինակներ ... և սուրբ հայրապետն Սեբի տեսեալ գիրաշագեղն Ներսէս կարուղիկոս Դայոց... (էջ 43), ....առեալ զուրբն Ներսէս իշխանօքն ամենայն զօրօք... (էջ 44) և այլն: Ցանկանում ենք ընդգծել այն հանգամանքը, որ երկու դեպքում հեղինակը զ նախդիրը գործածել է ուղղական հոլովի հետ: Մի օրինակում կարող ենք համարել, որ շինուածք գոյականում ք-ն որպես հոգնակերտ այլևս չեր դիտարկվում, և այս բառն ընկալվում էր եզակի թվով, այդ պատճառով ունենք այսպիսի օրինակ՝ ....և ծեղեալ յերկուս բաժանե՛ զշինուածք... (էջ 51): Ինչպես նկատում ենք, առ արդեն աշխարհաբարյան իրողություն է՝ ի տարբերություն հայցական հոլովի Վերաբերյալ Վերը նշված իրողությունների: Սակայն մյուս օրինակի պարագայում մեր կարծիքով նման մոտեցում ցուցաբերվել չի կարող: Յեղինակը զ նախդիրը գործածում է բնակիչը գոյականի հետ՝ զբնակիչը քաղաքիս, թէ որքան է կամ ով ոք են ժարանգող սորա (էջ 30):

Բացառական հոլովի դեպքում նկատում ենք տարբեր իրողություններ: Նախ նշենք, որ երկում կան և հոդով գործածություններ, որը գրաբարյան հատկանիշ է, օրինակ՝ ....որ են ի բնիկ գեղեցկաշէն մայրաքաղաքէն Թէորուազօւէն.... (էջ 9), ....է հիմնարկեալ ի սրբոյն Գրիգոր Լուսավորչէն եղեալ մասն սրբոյն Կարապետին.... (էջ 11) և այլն: Մեկ օրինակում կա նախդիր կրկնակի կիրառություն, օրինակ՝ ....և երկրիս Վրացիքն ամենայն յերկուցեալք ի յահե խարածին դարձան յօրենս Մահմետի.... (էջ 18): Կա նաև այնպիսի օրինակ, երբ ձայնավորով սկսվող բարից առաջ ի նախդիրը պիտի կիրառվեր յ տարբերակով, սակայն գործածված է ի նախդիրը ի արևելից (էջ 28): Սա ո՞չ գրաբարյան իրողություն է, ո՞չ աշխարհաբարյան, կարելի է վերագրել հեղինակի անուշադրությանը: Բացառական հոլովի Վերաբերյալ ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ մի շարք բառեր բացառական հոլովում գործածված են առանց ի նախդիրի: Այժմ նշենք այդ կառույցները կայսերէն (էջ 18), գաւառէն (էջ 25), թագաւորէն (էջ 35), պարսպէն (էջ 36), առաջմանէ (էջ 36), Սեսրոպայ վարդապետէն (էջ 36), ամենայն կողմանէ (էջ 39), ....և գայ զուր Յրտածորոյն և բլրոյն... (էջ 47), հայոց երկրէն ելանեն (էջ 49): Ցանկանում ենք նշել, որ կարինը թուրքական երգում նահանգի վարչական կենտրոնն էր: Յակոբ Կարմեցու անունից հասկանալի է, որ նա Կարինից է եղել: Երկուն այս օրինակների առկայությունը վկայում է այն մասին, որ հեղինակն իր հարազատ Կարնոն բարբարին հասուկ լեզվական ծներն է օգտագործել երկում, իսկ այդ բարբարը կը ճյուղին է պատկանում: Ինչպես վերը նշվեց, արևմտահայերենը ձևակիրվել է Պոլսի բարբարի հիման վրա, որը կը բարբառածյուղի հատկանիշներն էր միավորում: Իսկ արևմտահայերենում բացառական հոլովը կազմվում է է և մէ հոլովակազմիշներով: Մէ հոլովակազմիշը հիմնականում դերանվանական հոլովն դեպքում է գործում: Արևմտահայերենում, ի տարբերություն արևելահայերենի, բացառական հոլովն ընդունում է որոշիչ հոդ, իսկ որոշիչ հոդով բացառական հոլովի օրինակներ և երկում կան, Վերը բերվել են: Թեև այս պարագայում խոսքն աշխարհաբարի վաղ ենթաշրջանի մասին է, որին հետագայում պիտի հաջորդեր երկայնու աշխարհաբարի շրջանը, կարծում ենք, որ լեզվական այս ծների կիրառությունը համապատասխան բարբառակիրների կողմից լիովին բնական է: Հատ հետաքրքիր կիրառություն է նաև այն օրինակը, որում ի նախդիրի այսպիսի տեղաշարժ է տեղի ունեցել կողմանէ բարութեամք ի լի է (էջ 39):

Գործիական հոլովի կազմությունը գրաբարյան և գրաբարից շեղվող առանձնահատկությունների անբողջություն է: Գործիական հոլովի գրաբարյան համակարգը երկում բնորոշվում է համապատասխան հոլովիշներով, օրինակ՝ Յակովը անուամբ (էջ 9), բարութեամբ (էջ 9), հրամանաւ (էջ 9), այգեստանօք (էջ 10), անասնօք և ոչխարօք (էջ 10), ասելով (էջ 13), գովելով, արտասուելով (էջ 29) և այլն: Միջին

հայերենում գործիական հոլովի համար ստեղծվել էր *ով ընդիանրական նասնիկը*, որը գրաբարյան ո հոլովման եզակի գործիականի ցուցիչն էր և բաղկացած էր *ո հոլովիչից և վ հոլովակերտից*: Այն ընդիանրանում է բոլոր հոլովումների գործիականի համար: Երկում *ով-ով* գործիականի շատ օրինակներ կան, նշենք դրանք՝ աղով, եղով, ըմկովով, մեղրով (*էջ 10*), խաչերով (*էջ 11*), ստորոտով (*էջ 12*), հոտով և համով (*էջ 16*), խաղողով, ձիթապտղով, մրգով (*էջ 18*), խազմայով (*էջ 27*), թեմով (*էջ 28*), գրով (*էջ 29*), գովելով, արտասուելով, աւաղելով (*էջ 29*), ծաղկով (*էջ 31*), ոգով (*էջ 32*), ունելով (*էջ 32*), խորհրդով (*էջ 35*), օրով (*էջ 39*), մարմնով (*էջ 41*), դասով (*էջ 59*):

Ներգոյական հոլովի վերաբերյալ ցանկանում ենք նշել, որ այս հոլովի կազմության գրաբարյան սկզբունքները որոշ չափով պահպանվում են, օրինակ՝ *ի փառարանութիւնս* (*էջ 6*), *ի լերինս* (*էջ 20*), *ի ժամանակին* (*էջ 34*) և այլն: Սակայն մեծ թվով բառերի ներգոյական հոլովը կազմվել է գրաբարյան կաղապարից տարբերվող ձևով՝ *մէջ բարի օգնությանք*: Նշենք այդ կազմությունները՝ *ի մէջ ծորոյն* (*էջ 13*), *ի մէջ բերոյին* (*էջ 36*), *ի միջոյ բերոյի* (*էջ 36*), *ի մէջ դաշտին* (*էջ 47*), *ի մէջ երկուց գետոց* (*էջ 49*), *ի մէջ կամրջին* (*էջ 50*), *ի մէջ գիշերին* (*էջ 54*), *ի մէջ եկեղեցուն* (*էջ 54*), *ի մէջ ժամատանն* (*էջ 54*), *ի մէջ բաղին* (*էջ 54*), *ի մէջ եղբարցն* (*էջ 60*), *ի մէջ մայրեացն* (*էջ 47*):

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Յակոբ Կարմեցու «Տեղագիր Վերին Յայոց» երկի հոլովման համակարգը գրաբարյան և աշխարհաբարյան տարրերի ամբողջություն է: Սեռական-տրական հոլովի պարագայում բացառապես գրաբարյան համակարգն է գերակշռում, այդ համակարգից դուրս քիչ իրողություններ կան: Յայցական հոլովի դեպքում ևս գրաբարյան շերտն է գերակշռում, շեղումներն աննշան են: Բացառական հոլովի պարագայում կան գրաբարյան շերտից դուրս շատ հետաքրքիր իրողություններ, որոնք վկայում են այն նասին, որ հեղինակը հարազատ Կարնո բարբար տարրերն է օգտագործել երկում: Գործիական հոլովով օրինակները ցույց են տալիս, որ գրաբարյան շերտին գումարվում է աշխարհաբարյան լայն շերտ՝ ծևավորելով գրաբարյան և աշխարհաբարյան շերտերի յուրօրինակ ամբողջություն: Նույնը կարող ենք ասել նաև ներգոյական հոլովի վերաբերյալ:

Մեր քննած երկում յուրաքանչյուր հոլովով դրված բառերի վիճակագրական աղյուսակն ըստ գրաբարյան շերտի և նրանից դուրս կազմված աշխարհաբարյան հոլովաձևերի համադրության ունի հետևյալ մոտավոր պատկերը: Այսուսակի տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ վաղ աշխարհաբարում, որին պատկանում է «Տեղագիր Վերին Յայոց»-ը, հոլովական համակարգը գրաբարյան ձևերի համեմատ ուներ ընդհանուր առնամբ մոտ 10-12 տոկոս կիրառություն:

Հոլովներ	Գրաբարյան շերտ	Աշխարհաբարյան շերտ
Սեռական-տրական հոլով	98.5 %	1.5%
Յայցական հոլով	98%	2%
Բացառական հոլով	90%	10%
Գործիական հոլով	76%	24%
Ներգոյական հոլով	88%	12%

**ДРЕВНЕАРМЯНСКИЕ И НОВОАРМЯНСКИЕ ПЛАСТЫ В ПАДЕЖНОЙ  
СИСТЕМЕ В СОЧИНЕНИИ АКОБА КАРНЕЦИ «ТОПОГРАФИЯ ВЕРХНЕЙ  
АРМЕНИИ»**  
Тамара Погосян

Изучение древнеармянских и новоармянских пластов в падежной системе в сочинении Акоба Карнечи «Топография Верхней Армении» (XVII век) приводит к интересным выводам, важным для описания языка XVII века, начального периода исторического развития армянского языка, известного как ранний ашхарабар. Этот период просуществовал около двух веков: от начала XVII до половины XIX. В течение этого времени ранний ашхарабар по-разному был представлен в сочинениях различных авторов: иногда преобладали элементы грабара, иногда элементы какого-либо диалекта, иногда закономерности среднего этапа развития армянского языка.

Была исследована падежная система сочинения XVII века, сгруппированы древнеармянские и новоармянские элементы пятипадежной системы.

Можно утверждать, что падежная система в рассмотренной статье, представляет совокупность древнеармянских и новоармянских элементов.

**THE OLD ARMENIAN AND MODERN ARMENIAN LAYERS IN THE CASE  
SYSTEM OR HAKOB KARNETSI'S WORK "HIGHER ARMENIAN  
TOPOGRAPHY"**  
Tamara Poghosyan

The research of Old Armenian and Modern Armenian layers in the case system of Hakob Karnetsi's work "Higher Armenian topography" shows interesting results which are important for description of the 17<sup>th</sup> century language. It is a special period of development of Armenian language which is known as Modern Armenian. It includes the period of the beginning of 17<sup>th</sup> century until the end of 19<sup>th</sup> century. The Modern Armenian was different in different author's works. Sometimes the Old Armenian elements prevailed, sometimes the elements of any dialect or the Middle Armenian regularities.

We have classified the Old Armenian and Modern Armenian elements for each case during the research. We could conclude that the case system of writing is a set of Old Armenian and Modern Armenian elements.

**ՂԱՍԱԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ՈԲԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿԻ  
«ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ» ԵՎ «ԴԻՄԱԿՆԵՐ» ՇԱՐՁԵՐՈՒՄ**

Լուսինե Համբարյան  
**ԵՊՀ, Դայ բանասիրության ֆակուլտետ, մագիստրանտ**  
Գիտ. դեկ.՝ բ.գ.թ., դոց. Ն. Ներսիսյան  
Էլքուստ՝ lusinarm@gmail.com

Այս աշխատանքում մենք ուսումնասիրել ենք Սևակի պոեզիան և պարզել այդ պոեզիան բնորոշող բազմաթիվ առանձնահատկություններ, բայց, իհարկե, մեր ուշադրությունը կենտրոնացրել ենք համագործածական բառերի և դրանց ոճական կիրառության վրա «Եղիցի լույս» և «Դիմակներ» շարժերում:

Ընդհանրապես բառապաշարն ուսումնասիրելիս հիմնականում առանձնացնում ենք որոշ շերտեր, ինչպես՝ հնարանություններ, նորաբանություններ, փոխառություններ, օտարաբանություններ, ժարգոնային բառեր և այլն: Բառապաշարի ամենաստվար և հիմնական մասն են կազմում համագործածական բառերը:

Այս բառերը չունեն գործածության սահմանափակում, կարող են կիրառվել գործառական բոլոր ոճերում, գործածվել թե՝ գրավոր, թե՝ բանավոր խոսքում, տաճը, աշխատանքում, ստեղծագործելիս, գրասենյակում, նիստերի ժամանակ, զրումելիս, վիճելիս, սեր խոստովանելիս և այլն, քանի որ այս բառերն ընդհանուր են, բնորոշ են տվյալ լեզվով բոլոր հաղորդակցվողներին, և կապ չունի տարիքը, կրոնական պատկանելությունը, սերը, սեռական կողմնորոշումը, աշխատանքը, հասարակության մեջ զբաղեցրած դիրքը, պաշտոնը և այլն: Գուցե առանց արտահայտված ոճական երանգավորում ունեցող բառերի հնարավոր է պատկերացնել մեր բառապաշարը, բայց առանց այս բառերի անհնարի է: Դամագործածական բառեր կարող են լինել կենցաղային իրերը, թվականները, դերանունները, պարզ գործողությունները, որոշ հատկանիշներ և այլն, և այլն:

Այս բառերը ոճական երանգավորում չունեն խոսքաշարից դուրս, սակայն խոսքաշարում դրանք կարող են ստանալ այդպիսի երանգավորում առանձին կիրառություններում:

Դետաքրքիր են նաև դարձվածքները, հիմնականում դարձվածքների բաղադրիչները համագործածական համարվող բառերն են, մինչդեռ դարձվածքներն ունեն ընդգծված ոճական կիրառություն:

**Դամագործածական բառերի ոճական կիրառությունը Պարույր Սևակի «Եղիցի լույս» շարքում:** ճշնարիտ է ասում Համն Սահյանը. ««Եղիցի լույս». ննան ցանկություն, որ նա ընտրել էր իր խորագիր իր սքանչելի պոետական շարքի, իր հարազատ երկրին և ողջ աշխարհին կարող էր մաղթել միայն այն բանաստեղծը, որի սիրտը լի է բարությամբ, ազատությամբ, գեղեցկությամբ ու սիրով՝ դեպի մարդը: Դեպի այն մարդը, ում մեծագույն սիրով նա քննչորեն տանում էր իր «ափի մեջ՝ այնքան մոտիկ իր շուայլ սրտին: Նրա ամբողջ քնարերգությունն ու էպիկական ստեղծագործությունը թափանցված էր լուսակիր բարու և ազատության բերկրանքով»:

«Եղիցի լույս» շարքը սկսվում է «Նորօրյա աղոթք» բանաստեղծությամբ, մեր ուսումնասիրությունը նույնպես սկսենք այս բանաստեղծությունից:

Այստեղ հետաքրքիր է «հավատ» և «մանուկ» բառերի համադրությունը և կիրառությունը:

Հավատը երեխա է, որը դեռ պետք է հայր դարնա, նրան ապտակուն են, ծեծուն, նա ճշում է, լաց լինում, նա մաքուր է, անմեղ, անսուտ, չունի որևէ բիծ, և այդպիսի

Երեխային ուզում են սպանել սուտ հավատացյալները, ուզում են կեղտոտել. հավատ պահելը հավատ թաղելուց դժվար է:

Ահա հաջորդ բանաստեղծության մեջ հետաքրքիր է «առավոտ» բառի կիրառությունը:

Ի՞նչ է առավոտը, լույսի առավոտը, այն նոր կյանք է, ջինջ, անաղարտ կյանք, նոր աշխարհ է, ինքնակատարելագործման աշխարհ: Ու շարունակում է բանաստեղծը:

*Ես՝ զարթնած արդեն,  
Բայց դեռ ամյվա...*

Դրաշալի գոլգահեր է ամենօրյա սովորական, կենցաղային գործողության և արթնացումի, կարծես վերակենդանացման միջև, որը, սակայն, դեռ կատարյալ չէ: Առաջին քայլն արված է, բայց կա դեռ մաքրման, բուժման երկար ճանապարհ, պետք է լվանալ, զովացնել ցանկացած «հիվանդ»-ի դեմք, կապ չունի այդ հիվանդը մա՞րդ է, երկի՞ր, թե՞ հավատ:

Ենց «Լույս» բառը, լինելով համագործածական, հզոր ոճական արժեք ունի, այն կատարյալն է, ջինջը, այն երջանկությունն է, գիտակցությունը, գույնը, լույսը ավետարեր է, բուժող, ջերմացնող, հուշող, պաշտպանող: Լույսն Աստվածն է:

«Լույս» բարին մեկ այլ բանաստեղծության մեջ հակադարձում է «մութ» բառը: Ինչպես մյուս բառերը, որոնք քննում ենք այս աշխատանքում, այնպես էլ «մութ» բառը մեզ ոչ թե հետաքրքրում է իր պարզ և համագործածական նշանակությամբ, այլ իր ոճական երանգով տվյալ խոսքաշարում: Մութն ամենուր է, ճիշտ է, ասում են՝ մթության խտացումից է ճիշտ լույսը ծնվում, բայց ո՞ւր է լույսը, մենք փնտրում ենք այն, մինչդեռ անգամ մեր արյունն է մթությամբ լցված, որը տեսնում ենք, երբ այն չորանում է: Մենք անընդհատ փորձում ենք ցրել այդ մութը, բայց հակառակն ենք անում: Մութը փակում է մեր աչքերը, չի թողնում զնալ լույսի ճանապարհով, մութը տգիտությունն է, այն ճահճի է նման, որից դուրս գալը շատ դժվար է, իսկ մենք գտնվում ենք այդ մթի մեջ, որը սեղմում-սեղմում է մեզ, ճնշում, խանգարում, ցանկանում կլանել, ու ինչքան էլ մեզ համոզեն, որ մթի խտացումից է լույսը ծնվում, առանց լույսին ձգտելու, առանց լույս գտնելու անխախտ նպատակի չի ծնվելու ամենափրկիչ լույսը:

«ճակատամարտ պատի հետ» բանաստեղծությունը ճակատամարտ է ինքն իր դեմ, իր բարության դեմ, այստեղ պատը հենց ինքն է, իր բարի հությունը, որին ամեն կերպ փորձում է հաղթել, որն իրեն խանգարում է, իր թշնամին է, ոխերիմը, ուզում է խեղդել իրեն:

*(Բարությունը ինձ գերի է տանում հարկի դիմաց  
Ու կես գնով վաճառքի է հանում հիմա)...*

Այս ստեղծագործության վերջում բանաստեղծը կրկին փակագծերի մեջ ասում է.

*(Բարությունը, վերջ ի վերջո, ես կիսեղի մ՝  
Թե չարացնող կյանքն էլ չօգնի՝  
Խեղդվելիս... մե՛ջըս կիսեղին)՝*<sup>1</sup>

Այսինքն՝ պատը կոտրել, պատին բան հասկացնել կամ ինքն իրեն հաղթել նա չի կարող: Այդ պատին հաղթել նշանակում է խեղդել սեփական անձը, որովհետև ոչնչացնելով պատը՝ նա ոչնչացնում է իրեն:

«Սաի» բառի կիրառությունը նոյնպես ոճական արժեք ունի «Աշխարհի իին սպիները» բանաստեղծության մեջ, ոճական արժեքը զգացվում է հենց վերնագրից: Այդ սպիները, որ նոյնիսկ մեր «առողջ մսերի» մեջ են «նվում», իրականում տառապանքով հարստացնում են մեզ և մեր կյանքը, այդ «ցավը» ավելի վտանգավոր չէ, քան այն դեղը, որով ձգտում ենք ցավը բուժել:

<sup>1</sup> Սևակ Պ., Եղիցի լույս, Երևան, 1992, էջ 21:

Մենք ևս ցավի ծնունդ ենք, և ցավն է օրենսդիրը: Յին սպիների հարուցած ցավը սրբագրում է, ինչպես կնքիոներն են սրբագրում ճակատը: Այդ սպիները, ցավը մեր փորձն են, մեր գիտելիքները կյանքի մասին, ուժեղացնում ու կոփում են մեզ, ինչ սպիների ցավը կազդուրիչ է, քանի որ այն անընդհատ հիշեցնում է, որ այդ սպիները վերքերի հետքեր են, իսկ վերքերն ավելի իմաստուն են դարձնում:

Սի հետաքրքիր առանձնահատկություն ենք նկատել Սևակի պոեզիայում. շատ կարևոր դեր են կատարում վերնագրերը: Դրանք երբեմն այնքան կարևոր են, որ եթե չկարդանք, բանաստեղծության հիմնական իմաստը և ասելիքը անհասկանալի կարող են մնալ: Ենոյ այսպիսին է «Խարույկ սառույցի վրա» ստեղծագործությունը: Անբողջ բանաստեղծության մեջ ոչ խարույկ բառը կա, ոչ սառույց, սակայն ողջ բանաստեղծությունը խարույկ է, որը բանաստեղծ ձգտում է վատել սառույցի վրա, այսինքն՝ կյանքի, գոհացման, փառաբանման, ծիծաղի ու ժամփի կոչ է այն բոլորին, ովքեր միայն վշտերն են համարում հարստություն, միայն տանջանք-տվյալանքն են համարում պահուստ, ովքեր տեսնում են միայն մեր հոգու տերևաթափի ամիսը, մինչդեռ կան օրեր և աստղաբափի:

Մեկ այլ բանաստեղծության մեջ համդիպում ենք «սիրտ» բառի հետաքրքիր կիրառության, իհարկե այս բառը շատ ստեղծագործություններում է ունենում ոճական կիրառություն՝ չնայած համագործածական լինելուն: Ահա համապատասխան հատվածը.

*Ու ես դարձում եմ... համատարած սիրտ.*

*Հարժումներս ամեն՝ սրտի բարխում,*

*Բոլոր ձևերը՝ շարժումներ սրտի...*

Այս բանաստեղծության մեջ փաստորեն տարվում է սիրտ-բանաստեղծ գուգահեռը:

«Եղիցի լույս» շարքում Սևակը հենց սիրտ է, համարյա բոլոր բանաստեղծություններում տիրում է մարդասիրությունը և ինքնանվիրումը՝ հզոր ու բանաձևային ձևակերպումներով:

Այս շարքի վերջին բանաստեղծության մեջ (Պարապություն) մի հետաքրքիր միտք է հայտնում հեղինակը. իր ձեռքերը, որոնք ինքնասաստման համար կարողացել են ուժ գտնել, սկսում են մտածել, որ գուցե ավելի կարևոր են, քան «ինքնագոփառող-մեծամիտ» սիրտը: Ինքնամերժման, ինքնահալածման ու ինքնաքննադատության մի կարմիր գիծ է զգացվում այս բանաստեղծության մեջ, որը ընդհատվում է՝ հասնելով բանաստեղծի պարապությունից տառապող միտքը հանկարծակի զբաղեցնող միջադեպի: Բանաստեղծը հիշում է, որ առավոտյան բեռնամեքենայով ծիեր էին տանում: Մինչ այդ ծիերը եղել են ուժեղ, նրանց ոչնչով հնարավոր չի եղել ճնշել, նրանք են իրենց մեջքի վրա կրել մարդկային ցեղի պատմությունը, այդ վրնջացող, դոփող, բերանից կրակ թափող ծիերը, իսկ հիմա դարձել են բեռ՝ վախկոտ, խեղճ, դրորողացող, ճկվող. այս ծիերը հենց մարդիկ են, այդ ծիերը մենք ենք: Նզոր գործ է, ցնող պատկեր: Ինչպես տեսնում ենք, «Ճի» համագործածական բառը շատ յուրահատուկ ոճական արժեք ունի այս ստեղծագործության մեջ:

Անշուշտ, այս շարքում բազմաթիվ են ոճական արժեք ունեցող համագործածական բառերը, գիտական ծավալուն աշխատանքի նյութ կարող են դարձնալ: Բայց մենք սահմանափակվել ենք այսբանով՝ աշխատելով հնարավորինս անդրադառնալ ամենաակնառուներին և փորձել սեղմորեն բացատրել դրանք: Նույն սկզբունքով ենք քննել նաև «Ղիմակներ» շարքը:

*Համագործածական բառերի ոճական կիրառությունը Պարույր Սևակի «Ղիմակներ» շարքում:* «Ղիմակներ» շարքը հաջորդում է «Եղիցի լույս» շարքին: Շարքում շատ է կիրառվում «Ղիմակ» համագործածական բառը: Ինչո՞ւ Ղիմակ:

Ղիմակը քողարկում է, ծածկում է շատ արատներ, վատ կրթեր, հակումներ, բայց և կարող է ծածկել նաև մարդու խեղճ, թույլ էռթյունը, պաշտպանել նրան արտաքին վնասներից, հարվածներից, չքողնել բացահայտված և խցելի դառնալ:

Դիմակը նաև փախուստի միջոց է, կարող է խաղաղեցնել փոթորիկը կամ գոնե շնատնել փոթորկված հոգին: Սևակին բնորոշ է բռնկուն, բայց կշռադատված միտքը, մտքի լարվածությունը: Շարքում այս ամենը ներկայացվում է խաղի միջոցով: Բանաստեղծությունները կարծես փոթորիկ բեմադրություններ լինեն:

Գուցե առաջին հայացքից մի քիչ անլուր թվա արտահայտման ձևը այս շարքում, բայց իրականում հենց այստեղ են արձարձված իրականության ամենացավոտ կողմերը, ամենալուրջ թեմաները: Ու մի քիչ հումորը կամ խաղը և ավելի ազդեցիկ են դարձնում ճշմարտությունը, և օգնում են ընթերցողին մի քիչ թերև ընդունել սարսափելի իրականությունը: Այս շարքում միահյուսված են որբերգականն ու կատակերգականը, իսկ սա, կարծում ենք, ամենախելացի ձևն է ասելիքը տեղ հասցնելու, հուզելու և ազդելու: Եթե մարդը հասկանում է իր թերությունը, ընկալում, ընդունում ու սկսում ծիծաղել այդ թերության վրա, նշանակում է՝ նա արդեն բարեփոխման ուղին է բռնել:

Շարքը սկսվում է «Միաչքանին» բանաստեղծությամբ: Միաչքանին մի աչքով է նայում կյանքին, որովհետև մյուս աչքն ապակուց է, բայց այդ երկրորդով ավելի շատ է տեսնում.

*Առողջ աչքով ես տեսմում եմ,  
Իսկ կույր աչքով... միշտ երազում...*

Այս ստեղծագործության մեջ հետաքրքիր է կիրառված «աչք» համագործածական բառը: Կույր աչքը ավելին կարող է տեսմել, որովհետև իրականում տեսմողը մեր տեսողական օրգանը՝ աչքը չէ: այն կարող է նայել, բայց տեսնելու համար ավելին է պետք, տեսնելու համար պետք է բաց պահել հոգին, սիրոց: Շատ քչերն են իրականում տեսնում: Միաչքանու կույր աչքը ազատ է, դիմակավոր չէ, և այն կարողանում է լինել իրական, մոտ լինել իր իսկ եռթյանը:

Տիտուր ստեղծագործություն է «Միտնանին», այստեղ էլ ոճական արժեք ունի «ոտ» բառը, որով տնտեսում է տան ծախսերը՝ զույգի փոխարեն միշտ կենտ կոշիկ պատվիրելով: Յուրահատուկ համարդում է արսուրոի և իրականության:

«Դարբեցողը» բանաստեղծության մեջ հարբեցողը հենվել է սեղանին ու ճոճվում է դատարկ գավի վրա, ինչպես «ահեղ մի անդունդի»: Ու շիշը թվում է նրան մի հրիո, որը պատրաստ է երկինք սլանալ, բայց վառելիք չունի: Ուշադրություն դարձնենք «շիշ» բառին, շիշ-հրիո զուգադրումը պատմում է մեզ հարբեցողի երազանքի մասին: հրազենի մի կենտ գնդակ, որով այդ շիշը և ինքը կսուրային դեպի երկինք, դեպի իր իսկական հայրենիքը՝ քառսային միգամածը:

Դաժանորեն մատնում է իրականությունը «Խեղկատակը» ստեղծագործությունը, որից հետո «Ծաղրածուն»:

«Ծաղրածու» բառը համագործածական է, բայց ունի ոճական կիրառություն այս ստեղծագործության մեջ: Նա ստվորական ծաղրածու չէ, այլ դիմակավորված ու քողարկված ճշմարտություն: Այս գործը բավականին համարձակ է, այստեղ բառերի մեջ մասն ունեն թաքնված իմաստներ և ոճական արժեք: Ուսումնասիրենք հետևյալ հատվածը:

*Բանտարկյալները գազանանցի  
(Փղից սկսած ու հասած օձին),  
Առանց խորության ու տարրերության,  
Բոլորը պիտի ստանան կարգով  
Դամապատասխան շքանշաններ  
Եվ... ինչի՞ համար.  
Լոկ համբերության...*

«Գազանանց» ասվածը խորիրդային միությունն է, որտեղ մարդիկ շքանշաններ էին ստանում ըմբոստ չլինելու համար<sup>1</sup>, տիրում էր համընդիհանուր համբերու-

<sup>1</sup> Գասպարյան Դ., Պարույր Սևակ, Երևան, 2001:

թյան մթնոլորտ, և միայն իին էշերն էին երբեմն քացի տալիս. նրանք էլ համարձակ հանդուզն մարդկանց տեսակն էին, որոնք ոչինչ փոխել չէին կարող, բայց լռել էլ չէին կարող :

Ծշմարտությունն է փնտրում նաև «խաղալիք սարքողը». նա կարող էր ամեն բան սարքել, բայց դրանք կլինեին միայն խաղալիքներ, չէին լինի իրական: Նա չէր կարող ծշմարտությունը «սարքել», որովհետև «սարքով» ծշմարտություն չի լինում:

Եվ ահա հերթը «դիմակահանդեսի գլխավորին»-ն է, ո՞վ է այդ միակ անդիմակը, որ դիմակահանդեսը հայտարարում է ավարտված: Դիմակահանդեսի գլխավորը հենց հեղինակն է՝ ամբողջովին մերկ նյարդերով, բոլորից ուժեղ, քանի որ համարձակվում է ասել անդիմակ ծշմարտությունը: Յեղինակը հորդորում է բոլոր դիմակավորներին ճանաչել իրենց «Վերջին անգամ, Վերջից առաջ...», որովհետև ուշացած արթնացումը «Կնճանվի մի պայքարունի», իսկ այս խաղում մորթվողը «մարդկայնություն-մարդկությունն է»:

Դամագործածական բառերի ոճական հետաքրքիր կիրառությամբ հատկապես աչքի է ընկնում սևակյան հզոր ստեղծագործություններից մեկը, որը բաղկացած է երեք մասից և կոչվում է «Իրերի բնությունը»:

Ի՞նչ է աթոռը, մի՞թե բանաստեղծի մատնանշած աթոռն այն է, որը կա բոլորին տներում, սեղանների մոտ, որի վրա սովոր ենք նստել: Ոչ, բանաստեղծի մատնանշած աթոռը բոլորովին դա չէ, այլ պաշտոնը, որին, ինչպես ընտանի չորքոտանիներին, մեր տուն ենք ընդունել, որ ծառայի, սակայն ի՞նչ ծառայել:

Աթոռ կոչվածը, ինչպես գիտեք դուք,

Նրա համար է, որ նստենք վրան:

Սակայն պարզվում է,

Որ սրա վրա նստողի վրա

Սա ինքն է նստում...

Եվ դատավորը որոշում է դատել նրան, քանի որ նա մի չար ապստամք է, նման է վարակի, որը հեշտությամբ կարող է վարակել այն բոլորին, ում կյանքը չի սովորեցրել դիմադրել: Դատավորը օգուշացնում է, որ աթոռին նստողը չպետք է մոռանա, որ ինքը բարձրագույն երկոտանի է, ոչ թե չորքոտանի կամ չորքոտանու ճորտ.

Տակառակ դեպքում

Այս նո լյմ ամքիոնից,

Այս նույն բերանով կիմչի արդեն

Այսինչ Օրենքի Այսի նչ Շողվածք...

Դաշօրդ դատվողները գլխարկն ու համազգեստն են: Այդ օգեստի հետ ով կրում է այդպիսի գլխարկ, նա այլևս չի մտածում: Գլխարկը՝ պաշտոնն ու դիրքը, ամեն ինչ որոշում է գլխի փոխարեն: Օրենքի և իրավունքի սպասավորները ունեն օրենքի պաշտամունք, բայց այդ կույս օրենքը բռնաբարում է ոչ թե հատուկենտ անհատ-ների, այլ նույնիսկ ամբողջ ժողովուրիների:

Բացառությունն է կուսություն խախտում,

Եվ դրանից է

Ծնվում մեր մանուկ Արդարությունը:

Յնարավորինս ներկայացրինք նաև այս շարքում առկա և ոճական արժեք ունեցող համագործածական բառերը՝ անդրադառնալով նաև ստեղծագործությունների այլ առանձնահատկություններին, որովհետև անհնար է ուսումնասիրել Սևակի ստեղծագործությունների լեզվական տարրերը՝ բացարձակ չփառարկելով նրա ստեղծագործությունների բովանդակային կողմը:

Այս շարքը, ինչպես և նախորդը, երեք ժամանակավեա չեն լինի:

Մեր ուսումնասիրության համար ընտրել էինք Սևակի ստեղծագործությունների համագործածական բառաշերտը, որովհետև կարում ենք՝ ոչ բոլորը կարող էին համագործածական բառերին այդքան արտահայտչականություն և գույներ տալ, այդ բառերով ստեղծել արվեստի արժեքավոր, գեղեցիկ ու բովանդակալից գործեր:

Սևակը կարող էր նույնիսկ առանց շքեղ ու գունագեղ բառերի շքեղ ու գունագեղ մտքեր արտահայտել. հազվագյուտ տաղանդ, որ բնորոշ է շատ քչերին:

Սևակյան պոեզիայում ամենահետաքրքիրը բառի հետ խաղն է. Սևակը բառը սիրում է ու փորձում է պաշտպանել նրան ավելորդ շահարկումներից, չարչարվելուց: Բանաստեղծը բառը կիրառում է միայն ճիշտ տեղում ու ճիշտ պահին, ասելիքը հստակ է, դիպուկ ու բազմաշերտ:

Լավ հրամանատարի սկզբունք է. կարևոր համարել ամեն մի զինվորի դերը ու կյանքը, միայն այս դեպքում է հաղթանակը բոլորինը և իրական լինում:

Սևակի ստեղծագործություններում մենք տեսնում ենք նրա ուժեղ, բայց լարված նյարդերը, տաք ու տաքացնող արյունը, ընդվզող, ըմբոստ հոգին ու անափ սիրով լցված սիրտը: Սևակը զարմանալիորեն ճանաչում է մարդուն և հրաշալիորեն տիրապետում է մարդուն մարդ դարձնելու դժվարին արվեստին: Մնում է միայն ավելի խորությամբ կարդալ սևակյան ստեղծագործությունները, և դրական փոփոխությունները անխուսափելի կլինեն:

## СТИЛИСТИЧЕСКОЕ ИСПОЛЬЗОВАНИЕ ОБЩЕУПОТРЕБИТЕЛЬНЫХ СЛОВ В ПОЭТИЧЕСКИХ ЦИКЛАХ ПАРУЙРА СЕВАКА «ЕГИЦИ ЛУЙС» И

«ДИМАКНЕР»

Лусине Амбарян

В статье представлены стилистические значения общеупотребительных слов, которые использовал армянский писатель Паруйр Севак в своих двух поэтических циклах «Егици луйс» («Да будет свет») и «Димакнер» («Маски»).

В результате исследований можно предположить, что Севак использовал стилистически немаркированные общеупотребительные слова для выражения образных и интересных идей.

## THE STYLISTIC USE OF COMMON WORDS IN PARUYR SEVAK'S POETIC CYCLES. "EGHITSI LUYS" AND "DIMAKNER"

Lusine Hambaryan

In this article the author presents the stylistic meaning and value of common words (words that have a common use) in Armenian writer Paruyr Sevak's two poetic cycles: "Eghitsi luys" (Let there be light) and "Dimakner" (Masks).

The author has come to the conclusion, that Sevak could express figurative and interesting ideas without using words with stylistic meaning and value.

## ՂԱՐՎԱԾԱՅԻՆ ՐՈՍՍԻԵՆԵՐ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԽԱՂԵՐՈՒՄ

Հասմիկ Գրիգորյան

Գորիսի պետական համալսարան, Մանկավարժական հումանիտար  
մասնագիտությունների ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ.՝ բ.գ.թ., դոց. Մ. Քումունց

Էլքուստ՝ hasmik993@gmail.com

Խոսքն ինքնատիպ ու պատկերավոր դարձնելու համար Սայաթ-Նովան գործածել է բազմաթիվ դարձվածքներ, որոնք աչքի են ընկնում իմաստային յուրահատուկ կառուցվածքով և բովանդակային առանձնահատկություններով:

Այս աշխատանքի նպատակն է ուսումնասիրել Սայաթ-Նովայի ստեղծագործությունների լեզվական առանձնահատկությունները դարձվածքների տեսանկյունից: Սայաթ-Նովայի քնարական արվեստի, և արհասարակ, դարձվածքաբանական աշխատանքների համար առանձնահատուկ նշանակություն ունեն դարձվածքների հոնանիշային խնդերի, այդ խնդերում հեղինակային դարձվածքների տարանջատումը:

Դետաքրքրական է, որ հոնանիշ դարձվածքներն ունեն միևնույն իմաստային հիմքը, տարբերվող բաղադրիչային կազմ և պատկերային համակարգ, ուստի հեղինակի դարձվածքների հոնանիշությունը դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել դարձվածային իմաստի բազմաշերտ բնույթն ու դրա ձևավորման առանձնահատկությունները, որ կրում են Սայաթ-Նովա բանաստեղծի լեզվամտածողության առանձնահատկությունները: Հոնանիշ դարձվածքների, բանաստեղծի մտածողության ու ժամանակի խոսակցական տարբերակների քննությամբ միայն հնարավոր է առանձնացնել հեղինակային կազմությամբ դարձվածքները:

ա) **Տանջվել, տառապել** հմաստով.

Արուն-քրտինքով թաց լինել<sup>1</sup> - «Արյուն-քրտինքով» դարձվածքը նշանակում է «մեծ դժվարությամբ, տանջալից ծիգերով», Սայաթ-Նովան այս դարձվածքին կցել է «թաց լինել» հարադրությունը և ստեղծել նոր դարձվածք՝ «սաստիկ տանջվել, տառապել» նշանակությամբ:

Կիմքը մաշել<sup>2</sup> - «Դա՝ լաց էլա, վայ կանչեցի անհաշիվ, էլ ի՞նչ օքուտ, ջան տու, կիմքը հա՛ մաշի, ես իմ դարդից թուղ վուր օչով չոքաշի»<sup>3</sup>, չարչարվել, տանջվել, տառապել<sup>4</sup> - 1. Երկար ժամանակ չարչարվել, տրնել, 2. տառապել, (հեղինակը կիրառել է «կյանք»-ի բարբառային «կինք» ձևը):

Զանը մաշվել-հյուծվել, տանջվել<sup>5</sup> - «Մաշվեցավ ջանըս», «Զանըս է մաշած, Զանս հանեցիր, ջադութար իս», կիրառվել է նաև սրա հարակատարով ձևը՝ որպես հատկանիշ. ջանը մաշած-հյուծված, տառապած, տանջված<sup>6</sup>:

Սիրտո (փուրում) սըքուր լինել - տխուր լինել, տառապել<sup>7</sup> - «Սիրտըս փուրումըս սըքուր է, ալ աչկիրըս լաց է անում» դարձվածքը հեղինակային է, առաջացել է փոխաբերության հիմքի վրա: Այն դիտարկում ենք որպես դարձվածք, որովհետև կայուն, վերահնաստավորված, պատկերավորությամբ օժտված կապակցություն է:

<sup>1</sup> Սայաթ-Նովա, Դայ խաղեր, Երևան, 1959, էջ 117:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 89:

<sup>3</sup> Սուրիայան Ա., Գալստյան Ս., Դարձվածքաբանական բառարան, Երևան, 1975, էջ 114:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 54:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 72:

**Մարմինը բեղամաղ զլնել<sup>1</sup>** - «Թեվուր հոքուտ կամքն իս անում, մարմինտ բեղամաղ է զլում» «Բեղամաղ»՝ անտրամադիր, նեղացած, վշտացած: «Բեղամաղ զլնել» հարադրությունը, գործածելով «մարմինը» բարի հետ, ստեղծել է դարձվածային միավոր՝ «Վշտանալ, ցավ ապրել, տանջվել» նշանակությամբ:

**Զիգարը երվել-տանջվել<sup>2</sup>** («Երվեցավ զիգարոս») - բարբառներում առկա դարձվածք է:

**Զան չունենալ<sup>3</sup>** (յարի ձեռնեմեն) - (սիրած էակի պատճառով) **հյուծվել, հալումաշ լինել:** ժողովրդական մտածողությունից եկած, փոխարերության և չափազանցության հիմքի վրա առաջացած բարբառային դարձվածք է:

**Աչկեմեն ջուհար գնալ-աչքի լույսը, փայլը կորցնել, այստեղ՝ սիրուց սաստիկ տառապել<sup>4</sup>** - «Աչկեմեն ջուհարըն գնաց յարեն կարոտ ախ անելեն»). ջուհար՝ գոհար, փիսը՝ փայլ, աչքի լույս. «աչքի լույսը հատնել» դարձվածքը նշանակում է **տեսողությունը թուլանալ:** Դարձվածքը ձևային առումով գործածական է խոսակցական տարրերակներում, իմաստային առումով հեղինակային է. Սայաթ-Նովան կիրառել է «սիրուց սաստիկ տառապել» իմաստով:

**Աչկը արին լալ - սաստիկ տանջվել, շատ տառապել,** («Սայաթ-Նովեն ասաց՝ զալում, աչկըս լալիս է արին»)<sup>5</sup>. առաջացել է փոխարերության հիմքի վրա<sup>6</sup>: Այս դարձվածքը **«աչքը արյուն լալ»** ձևով նշված է որպես թրիխսիի բարբարի դարձվածք և որպես օրինակ բերված է Սայաթ-Նովայի նույն նախադասությունը:

(Ուարեն//յարեն) երված լինել – սիրուց տանջվել, տառապել («Փակրադրն միրած, Շիրինն ասաց՝ դարեն երված իմ», «Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն երված իմ»)<sup>7</sup>. Երված լինել՝ հարադիր բայ, որն ունի նաև դարձվածային արժեք, **«Երվել-խորովվել»** դարձվածքը դարձվածաբանական բառարանում բացատրված է «տանջահար լինել»<sup>8</sup>, այս դարձվածքը հեղինակային է ձևային առումով. ներառված է դարեն//յարեն ներգործման խնդիրը:

**Աչկը չցանաբել-սաստիկ տանջվել, տառապել, տառապանքները շարունակվել,** նաև՝ ողը ու սպի մեջ լինել («Ենորու աչկըս չէ ցամաքում՝ սըրտիս մեշըն արին մնաց»)<sup>9</sup>. դարձվածքը հեղինակային է ձևային առումով, իմաստային առումով գոյություն ունի. **«Ցամաք աչքով (ապրել)»** դարձվածքը դարձվածաբանական բառարանում բացատրված է «լաց, դժբախտություն, սուզ, ծանր կյանք չտեսնել, առանց վշտի, առանց արցունքի (ապրել)»<sup>10</sup>:

Սրտի մեջը արին մնալ – սաստիկ տառապել, տառապանքը հետք թողնել, սպի թողնել նույն տեղում («Ենորու աչկըս չէ ցամաքում՝ սըրտիս մեշըն արին մնաց»). փոխարերության հիմքի վրա է առաջացել, հեղինակային է, պատկերավոր մտածողության արդյունք է. «արյուն» բառի բարբառային ձևին հարադրությամբ կապակցվել է «մնալ» բայց, և փոխարերաբար դա վերագրվել է սրտին:

**Բերնում համ չինել-սաստիկ տառապանքից հետո անզգայանալ** («Աշխարհեն բեզարիլ իմ, էլ բերնումը համ չկա»)<sup>11</sup>. հեղինակային կիրառություն. ստեղծել է փոխարերության հիմքի վրա:

<sup>1</sup> **Սուրիայան Ա., Գալստյան Ս.**, էջ 65:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 56:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 72:

<sup>5</sup> **Սարգսյան Ա., Դայոց լեզվի բարբառային բառարան, հ. Բ, Երևան, 2002, էջ 235:**

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 48:

<sup>7</sup> Նույնի Դայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Երևան, 2001, էջ 79:

<sup>8</sup> **Սայաթ-Նովա,** էջ 31:

<sup>9</sup> **Սուրիայան Ա., Գալստյան Ս.,** էջ 227:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 69:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 566:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 94:

**Սիրտը սով - սիրած էակին կարոտել, սիրուց չհագենալ, կարոտաբաղձ լինել<sup>1</sup>** («Աշխարջըն աշխարով կշտացավ, իմ սիրտըն քիզանից սով ա»). հեղինակային է, ստեղծված է փոխարերության հիմքի վրա. բարբառային բառարանում բացատրված է «կարոտ մնալ (մեկից, մի բանից)»<sup>2</sup> և բերված է վերօբերյալ օրինակը: Դարձվածքանական բառարաններում այս դարձվածքը ընդգործված չէ:

բ) տաճել, տառապանք պատճառել, սիրո գերին դարձնել իմաստով.

**Զիգարը կրակ տալ-տաճել, տառապանք պատճառել** («Զիգարըս կըրակ խստըվի, էրկում իմ՝ բիրյանիս անում»)<sup>3</sup>. «Կրակ տալ» հարադրությունը, որ վերածվել է դարձվածքի, դարձվածարանական բառարանում բացատրված է այսպես՝ 1. հրդեհել, այրել, վառել, 2. կրակ բանալ, կրակել, գնդակոծել<sup>4</sup>: Փոխարերության հիմունքով Սայաթ-Նովան այն համակցել է «Զիգարը» բրբ. բարի հետ և ստեղծել հեղինակային դարձվածք, սակայն պետք է նկատի ունենալ, որ այս դարձվածքի բովանդակությունը կա ժողովրդական նտածողության մեջ (արտահայտվում է տարբեր ձևերով):

**Սիրտը յարա անել - վիրավորել, սրտին վերք թողնել, տառապանք պատճառել, սիրտը կոտրել, տաճել** («Սիրտըս արիր յարա, յա՛ր»)<sup>5</sup>. «յարա անել»՝ հարադրի բայ (բրբ.), «սիրտը յարա անել»՝ փոխարերության հիմքի վրա առաջացած դարձվածք, հեղինակային չէ:

**Սիրտը խուցել-վիրավորել, տաճել, տառապանք պատճառել** («Դառըն խոսկով սիրտըս խուցից»)<sup>6</sup>. հեղինակային չէ, «խուցել»-ի փոխարեն գործածել է «խուցել» ձևը, դարձվածարանական բառարանում այս դարձվածքը բացատրված է «վիրավորանք հասցնել»<sup>7</sup>:

Աղոփի թասը խմեցնել-կյանքը դառնացնել, տաճել, տառապեցնել (նույն տեղում «խմըցըրեցիր անմիջ տիղըն և աղոփի թասն ինձի»): հեղինակի պատկերավոր մտածողության արդյունքն է, բարբառային ձևով է ձևակերպված. հիմնված է փոխարերության վրա: Այս միավորը բառարաններում ընդգրկված չէ, սակայն համապատասխանում է դարձվածքի բոլոր հատկանիշներին (կայունություն, վերահիմաստավորում):

**Արտասունքն արուն շինել-տաճել, ցավ, տառապանք պատճառել** («Արտասունքս արուն շինեցիր»)<sup>8</sup>. հեղինակային է, փոխարերության հիմքի վրա է առաջացել, համապատասխանում է դարձվածքի հատկանիշներին:

**Սիրտը կես անիլ-մեծ տառապանք,ցավ պատճառել** («Վախում իմ, թե սերըտ սիրտըս կես կանի»)<sup>9</sup>. «կես անել»՝ կիսել հարադրի բայը գործածել է «սիրտ» բառի հետ:

**Սիրտը յարալու անել-տաճել, ցավ պատճառել** («Սիրտըս յարալու արիր՝ Աչկըս գու լա հա՛ զարին»)<sup>10</sup>:

**Լիդի պարքիվել-դառնություն, ցավ, տառապանք պատճառել** («Ով քիզի լիդի պարքիվե, դուն տու շաբար, Սայաթ-Նովա»)<sup>11</sup>. հեղինակային է և համապատասխանում է դարձվածքի հատկանիշներին: «Լիդի»-ն «լեղի»-ի բարբառային ձևն է:

<sup>1</sup> Սուքիայան Ա., Գալստյան Ս., էջ 35:

<sup>2</sup> Սարգսյան Ա., Յայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ե, Երևան, 2008, էջ 345:

<sup>3</sup> Սայաթ-Նովա, էջ 18:

<sup>4</sup> Սուքիայան Ա., Գալստյան Ս., էջ 334:

<sup>5</sup> Սայաթ-Նովա, էջ 91:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 94:

<sup>7</sup> Սուքիայան Ա., Գալստյան Ս., էջ 527:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 51:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 46:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 35:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 65:

**Սիրտը դադ անել-տաճել, ցավ, տառապանք պատճառել** («Յարի սիրտըն դադ մի՛ անի»)<sup>1</sup> հեղինակային չէ. Դրձվծ. բառարանում նշված է որպես խոսակցական դարձվածք և բացատրված «սաստիկ վիրավորել, տաճել, կսկծացնել»<sup>2</sup>: Ժողովրդական խոսքում գործածվում է նաև սրա ոչ հարադրավոր ծևը՝ «սիրտը դադել»:

**Քոզին հանիլ** («Յարըն նազով հոքիս հանից»)<sup>3</sup> հեղինակային չէ, դրձվծ. բառարանում բացատրված է՝ 1. սպանել, 2. տաճել, չարչարել, նեղել<sup>4</sup>: Սայաթ-Նովան գործածել է երկրորդ իմաստով:

**Զանը հանել** («Զանըս հանեցիր եղ փրսանդով»)<sup>5</sup> (փրսանդա՝ մոտեցում, վարվելակերպ): Դարձվածաբանական բառարանում գետեղված չէ, բարբառային բառարանում նշված է որպես Թիֆլիսի բարբառի դարձվածք, և օրինակը բերված է Սայաթ-Նովայից<sup>6</sup>:

գ) ԽԵՆԹԱԳԾԵԼ, ԽԵԼՔԱՀԱՆ ԱՆԵԼ ԻՄԱՍՏՈՎ

Ուշկ ու միտկը տանել-խելքահան անել («Ուշկ ու միտկըս դուն իս տարի»)<sup>7</sup> - 1. ուշադրություն գրավել, հմայել, ոյուրել, 2. անչափ ծիծաղեցնել, ուշաթափ անել, 3. դատողություններից, դատելու ունակությունից զրկել, 4. ամբողջ ուշադրությունը գրավել: Սայաթ-Նովան բոլոր այս իմաստները միահյուսել է և դրեւ իր գործածության իմաստային հիմքում բացի այստեղ նշված երկրորդ իմաստից:

**Խիլքը տանել** - («Խիլքըն գրիսես հա՞ տանում իս»)<sup>8</sup> - «ԽԵՆԹԱԳԾԵԼ, ԽԵԼԱԳԾՈՐ դարձնել, զմայել» հեղինակային չէ, դրձվծ. բառարանում բացատրված է՝ խենթացնել, խելացնոր դարձնել, զմայել<sup>9</sup>:

Ուշկ ու միտկը իրար շաղել-մտքերը խառնել, շփոթեցնել («Ուշկ ու միտկըս իրար շաղեցիր»)<sup>10</sup>. հեղինակային է՝ «ուշք ու միտքը տանել»-ի համարանությամբ է ստեղծված:

Ուշկ ու միտկը քնեցնել-միտքը թմրեցնել, սրափ մտածելուց շեղել («Էշխըն վուր կա՝ հազար բարաք հանգ ունե. ուշկ ու միտկըն կու քընեցնե՝ բանց ունե»)<sup>11</sup>. հեղինակային է, «ուշք ու միտքը տանել»-ի համարանությամբ է ստեղծվել:

դ) ՄԻՒԹԱՐԵԼ ԻՄԱՍՏՈՎ.

**Ժխուր սիրտ խնդացնել** - («Շատ տըխուր սիրտ կու խընդացնիս»)<sup>12</sup> սրտից փուշ հանել, միւթարել, սփոփել, տրամադրություն բարձրացնել, ուրախացնել. փոխարերական իմաստով է ստեղծվել:

**Սիրտը հիվանդնել-հանգստացնել**, միւթարել («Էրված սիրտըս հիվանդնելու բջիխիր դու ախառուրի նման»)<sup>13</sup>. կազմված է համենատությամբ: Այս դարձվածքը դարձվածաբանական բառարանում բացատրված է՝ որևէ բանի (Վրեժ, սիրո) ծարավը հագեցնել», «Սիրտը հիվանալ»-ը (նտ) բացատրված է «որևէ բանի ծարավը հագենալ, հանգստանալ»<sup>14</sup>, սակայն Սայաթ-Նովան այս իմաստներով չի կիրառել, այլ սփոփել, միւթարել. ձևային առումով դարձվածքը կա, հեղինակային է իմաստային առումով, իսկ «սփոփել» իմաստով տարածված է նաև բարբառներում:

<sup>1</sup> Սուրբիասյան Ա., Գալստյան Ս., էջ 22:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 525:

<sup>3</sup> Սայաթ-Նովա, էջ 22:

<sup>4</sup> Սուրբիասյան Ա., Գալստյան Ս., էջ 363:

<sup>5</sup> Սայաթ-Նովա, էջ 23:

<sup>6</sup> Սուրբիասյան Ա., Գալստյան Ս., էջ 228:

<sup>7</sup> Սայաթ-Նովա, էջ 72:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 24:

<sup>9</sup> Սուրբիասյան Ա., Գալստյան Ս., էջ 282:

<sup>10</sup> Սայաթ-Նովա, էջ 42:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 39:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 19:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 102:

<sup>14</sup> Սուրբիասյան Ա., Գալստյան Ս., էջ 528:

Իմաստային մոտ երանգ կա նաև «**Յիվանդի դողը կտրել»** կապակցության մեջ («Շատ տըխուր սիրտ կու խընդացնիս, կու կըտրիս հիվընդի դողըն»)<sup>1</sup>, սպեղանելու, բալասան դառնալու, ապաքինելու, ոտքի կանգնեցնելու, բուժելու ինաստով, այստեղ պարզապես ավելի ֆիզիկական դրսնորում ունի, քան հոգեկան սփոփանքն ու ապաքինումն. ազատ կապակցությանը տվել է դարձվածյին երանգ:

### Ե) Արտասպել, լալ

Աչը թացել-լալ, լաց լինել («Զանի լացի, աչկըս թացի, անց չըկացավ միր դըռնենեն...»)<sup>2</sup>, հեղինակային չէ «լաց եղող, լացի, արտասուրի մեջ»<sup>3</sup>:

Աչը զայի ամել-շատ լաց լինել, աչքերը արտասուրով փշացնել, («Լացիս, աչկըտ զայի անիս...»)<sup>4</sup>. «զայի անել»՝ փշացնել, վնասել, որպես օրինակ բարարան-ներում բերված է Սայաթ-Նովայի «աչը զայի անել» կապակցությունը. Դարձվածքը հեղինակային է. «զայի անել» բարբառային հարադրության համադրումը «աչը» բառի հետ՝ ստացել է դարձվածք:

Արտասուրը չայի անել - («Արտասունքը չայի անիս. Չայու ջուրիս»)<sup>5</sup> արտա-սուր բափել, շատ լաց լինել. Սայաթ-Նովայի սույն գրքի բառարանում «Չայ»-ը բա-ցատրված է «գետ», «Չայի անիլ»՝ գետի պես վարար դարձնել։ Դարձվածքը հեղի-նակային է. համեմատության և փոխաբերության հիմքի վրա Սայաթ-Նովան «Աչը» և «Չայի անել»-ը համադրել է և ստեղծել դարձվածք:

#### գ) Խենթանալ ինաստով՝

Խիլքը շվարած դառնալ-խենթանալ, հիմարանալ, շվարել, խելքը գցել, խելքը կորցնել, անխելքանալ («Ովոր երեսը կու տեսնե, խիլքըն կու դառնա շըվարած»). շվարել շվարած դառնալ հարադրության և խելքը բառի համադրությամբ ստեղծել է այս դարձվածք։

Խիլքը տանուլ տված լինել - («Խիլքըս տանուլ տըված լիդնուրթ ին դառի»)<sup>6</sup>, «խելքը կորցնել, թոցնել, հիմարաբար կամ սխալմամբ մի բան ասել կամ անել». Սայաթ-Նովան կիրառել է «խենթանալ» ինաստով։

Խիլքը գլխեն տարած ունենալ - («Արտասունքըս արուն շինեցիր, խիլքըն գըլ-խես ունին տարած»)<sup>7</sup>) «խելքը գլխից հանել, տանել, հիմարացնել, խենթացնել» (հեղինակային չէ):

Միտկը մոլորվիլ - մտքերը խառնվել, չկենտրոնանալ, սխալ ուղղությամբ մտա-ծել, խառնիճաղանձ մտքեր ունենալ («Չըլի՝ միտկըտ մոլորվիլ է»)<sup>10</sup>:

Ճամփեն մոլորվել-ճամփից շեղվել. («Ենդու համա քու տեսնողըն իր ճամփեմեն կու մոլորվի»)<sup>11</sup>, համարժեք է «ճամապարհից դուրս գալ կամ ելնել» դարձվածքին, այստեղ՝ սիրած էակի գեղեցկությունն է մոլորեցնում հեղինակին։

Խիլքը հիմարին բար անիլ-խելքը հիմարի խելքին հավասարեցնել. («Դուն էն գըլխեն ինաստուն իս, խիլքտ հիմարին բար մի անի»)<sup>12</sup>: Հեղինակային չէ, առկա է ժողովրդական մտածողության մեջ (բար անիլ՝ համեմատել թիֆլ. բոք)

#### հ) Զոհաբերվել

Հոգին տալ-կյանքը գոհել, կյանքը տալ, նաև՝ մահանալ («Հոքիս տամ շիմշատ կըռանըն»). 1. Հոգին ավանդել, 2. Հոգի տալ՝ անսահմանորեն նվիրված լինել

<sup>1</sup> Սայաթ-Նովա, էջ 19:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 101:

<sup>3</sup> Սուրիասյան Ա., Գալստյան Ս., էջ 42:

<sup>4</sup> Սայաթ-Նովա, էջ 26:

<sup>5</sup> Տե՛ս սույն տեղում:

<sup>6</sup> Սուրիասյան Ա., Գալստյան Ս., էջ 234:

<sup>7</sup> Սայաթ-Նովա, էջ 80:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 89:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 51:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 35:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 76:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 44:

մի բանի, սիրով, նվիրվածությամբ մի բան անել, պատրաստ լինել կյանքը տալու մի բանի համար, 3. Սաստիկ փափագել, ցանկանալ մի բան: Գործածված է երկրորդ իմաստով:

Գլուխը փիանդագ անել-գլուխը ոտքի տակ փռել, նվիրվել, մեծարել, զոհաբերվելու պատրաստակամություն ցուցաբերել («Գլուխը փիանդագ իս անում, յա՞ր, ա՞ման»)<sup>1</sup>. Փիանդագ անիլ՝ ոտքի տակ փռել(բըք.) (այդպես է բացատրված Սայաթ-Նովայի նույն գրքի բառարանում «գլուխ» բառի հետ ստեղծվել է դարձվածք:

(Զահել) կիմքը տանուլ տալ-կյանքը կործանել, զոհաբերել, կյանքը նվիրել («Զահել կիմքը տանուլ տրված, մե փօշըրված բըրուլ իմ յիս»)<sup>2</sup> - «Կյանքը տալ» դարձվածքի իմաստն արտահայտել է նոր կազմությամբ:

Գլուխը բաղա տալ-գլուխը անտեղի կորստի մատնել, խնդիրներ հարուցել («Նշիախ տիղըն գըլուխը մի՝ տա բաղա»)<sup>3</sup> Բաղա տալ հարադիր բայ, «բաղա»՝ «անտեղի կորուստ», դարձվածքը հեղինակային է. «Գլուխ»-ը համադրել է հարադրության հետ:

Գլուխը մատադ անել<sup>4</sup> - հեղինակային չէ. այս դարձվածքին համարժեք է «Գլուխը մատադ տալ»-ը, որը նշանակում է «իրեն զոհաբերել, իրեն որպես զոհ մատուցել»:

Գլուխը մահի տալ - («Դուն գըլուխը մահի կու տաս, յիս էլ քիզիդ կու միոնիմ»)<sup>5</sup>. 1. Անձնասպանություն գործել, 2. Կյանքը զոհաբերել, վտանգի ենթարկել, կյանքը նվիրել, 3. Զոհվել, սպանել: Սայաթ-Նովան գործածել է երկրորդ իմաստով:

Գլուխը մահու ճանգին լինել - կյանքը վտանգի մեջ լինել, մահը մոտ լինել («Սայաթ-Նովեն ճնդուր գու լա՝ գըլուխըն մահու ճանգին այ»)<sup>6</sup>. Սայաթ-Նովայի պատկերավոր մտածողության արդյունքն է. փոխաբերության իիմքի վրա ստեղծել է դարձվածային արժեք ունեցող այս կապակցությունը:

### ը) Սոռանալ իմաստով

Մտքից հանել - մոռանալ, մոռացության տալ, չիիշել, այլևս չսիրել<sup>7</sup>: Յեղինակային չէ: Մրտից հանել<sup>8</sup> - մոռանալ, մոռացության տալ, չիիշել, այլևս չսիրել: Յեղինակային չէ:

Այս երկուսը նույն իմաստն են արտահայտում մի տարբերությամբ, որ առաջին դեպքում խոսքը հակվում է բանակությանը, երկրորդ դեպքում՝ զգացմունքներին:

Աշխատանքում ուսումնասիրել ենք Սայաթ-Նովայի գործածած 49 դարձվածք: Նրա խոսքը հարուստ է դարձվածքներով, որոնք աչքի են ընկնում պատկերավորությամբ, բովանդակային ընդգրկումներով ու տարաբնույթ դրսնորումներով, իմաստային յուրահատկություններով: Մեկ իմաստի համար գործածել է տարբեր ձևեր, որոնցով կազմվել են դարձվածքների հոնամիշային շարքեր: Առանձնացրել ենք 8 հոնանշային շարք հետևյալ իմաստներով՝ տանջվել (գերակշռում են այս իմաստով դարձվածքները), տանջել, խելքահան անել, մխիթարել, արտասվել, խենթանալ, զոհաբերվել, մոռանալ: Դրանց մեջ կան հեղինակային դարձվածքներ, որոնք կրում են հեղինակի լեզվամտածողության առանձնահատկությունները: Գործածել է նաև բարբառային դարձվածքներ, դարձվածքներ, որոնք ժողովրդական ծագում ունեն: Ոճական նպատակներով կամ հեղինակային նախասիրությամբ, մոտեցումներով արդեն իսկ գործածական որոշ դարձվածքներում կատարել է փոփոխություններ, բառային կազմի, նրանց արտահայտած իմաստի, գրական ձևի բարբառային կիրա-

<sup>1</sup> Սայաթ-Նովա, էջ 26:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 101:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 99:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 91:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 21:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 37:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 27:

ռության արումով, որոշ դեպքերում էլ ազատ՝ ոչ դարձվածքային կապակցությանը տվել է դարձվածքային արժեք:

## ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ СИНОНИМЫ В ПОЭЗИИ САЯТ-НОВЫ

Асмик Григорян

Поэзия Саят-Новы богата фразеологизмами, среди которых встречаются и фразеологические синонимы. В числе рассмотренных фразеологизмов были отмечены такие, которые несут в себе особенности языкового мышления автора. Саят-Нова внес изменения в лексикон, определил роль диалектного языка, используя вместо литературных вариантов фразеологизмов их диалектные формы. В своей поэзии Саят-Нова использовал фразеологизмы народного происхождения. Некоторые свободные словосочетания превратились во фразеологизмы.

## THE PHRASEOLOGICAL SYNONYMS IN SAYAT-NOVA'S POEMS

Hasmik Grigoryan

Sayat Nova's poetry is rich in phrases, among which there are phraseological synonyms and synonym series. There are author's phrases among the phrases used by Sayat Nova, and they have the peculiarities of Sayat Nova's language thinking. Besides, Sayat Nova made changes in the vocabulary and its meaning in terms of usage of dialectical literary form as. Sayat Nova used phrases of folk origin in his poetry and in some cases free word combinations were given phraseological meaning. The wide usage of phrases in fiction works is a means of creating conditions for democratic literature.

## ԳՐԱԲԱՐԻ ՔԱՐԱՑԱԾ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՍ ԲԱՅԱԶԵՎԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հասմիկ Մանուկյան

ԵՊՀ, Դայ բանասիրության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող

Գիտ. դեկ.՝ բ.գ.թ., դոց. Ն. Պողոսյան

Էլփոստ՝ hasmik92@list.ru

Բառապաշտի շարունակական զարգացման ընթացքում լեզվական և արտալեզվական գործոնների ազդեցությամբ բազմաթիվ բառեր գործուն շերտից անցնում են բառապաշտի ոչ գործուն շերտին: Նույնը վերաբերում է նաև զանազան բառաձևերին, այդ բվում՝ բայաձևերին, որոնք խոսքինասային փոխանցումների են ենթարկվում:

Գեղարվեստական գրականության, հաճախ նաև՝ տերմինաբանության պահանջով շատ հնացած բառեր սկսում են նորովի գործածվել և, վերակենդանանալով, անցնում են լեզվի այլ շերտերին, ինչպիսիք են՝ օգլխիչ, ծիծաղախիտ, զգետնել, առաքել և այլն: Ժամանակակից հայերենի բառապաշտում վերջինները մեծ նասամբ գրաբարյան բառեր են, որոնք մեր գրողներն ու գիտնականները ուղղակիորեն քաղում են բառարաններից կամ հին մատենագրությունից (օր. գեղագանգուր, հիր, հերատուկ), մյուս մասը աշխարհաբար գրական լեզվի նախորդ փուլերի բառեր են (գրաբարյան–ժառանգորդական կամ միջնինհայերենյան), որոնք նախկինում թեև դադարել են գործածվելուց, բայց այժմ կրկին գործածական են դարձել (օր. դաստակերտ, բազրիք, բաղդատել և այլն): Ոչ գործուն շերտի՝ գործածության մեջ նտած բառերը սովորաբար պատկանում են կամ տերմինաբանական, կամ էլ բանաստեղծական շերտերին, թեև չի բացառվում նաև դրանց անցումը չեղոք շերտին (օր. արգելարան, առաքել և այլն):

Բառերի հնացումը և գործածությունից դուրս գալը գոյություն ունեցող ու գործածվող բառերի մեջ կատարվող զոտում է,՝ գրում է անվանի լեզվաբան Էդ. Աղայանը: Իսկ ոչ գործուն շերտի բառերի վերստին գործունացումը ընտրություն է հնացած բառերի՝ նրանց գործածության նոր նոտեցումով, լեզվի մեջ նոր առաջացած պահանջով, և դա բառապաշտի կատարելագործման և հարստացման ընդհանուր ընթացքի հրականացման ուղիներից մեկն է<sup>1</sup>: Այս սկզբունքով էլ քննել ենք արդի հայերենում գրաբարի բարացած բայաձևերը:

Բառակազմնության սովորական եղանակը բաղադրությունն է, որով լեզվի մեջ եղած բառերից և արմատներից կազմվել են ու կազմվում են նոր բառեր՝ բարդ և ածանցավոր: Պետք է տարբերել երկու տեսակի բաղադրություններ. մեկը՝ հին, մեռած բաղադրություններ, որոնք ծագում են ուղղակի հնիեվրոպական նախալեզվից, և մյուսը՝ նոր, կենդանի բաղադրություններ, որոնք կազմված են գրաբարյան և հետգրաբարյան շրջաններում կամ նախալեզվյան օրինակի համեմատ, կամ սրանից անկախ, մեր լեզվի մեջ զարգացած եղանակով:

Դին բաղադրություններն այժմ հաճախ այլևս մեզ համար ընթանակ չեն որպես տրոհելի միավորներ հայոց լեզվի արդի վիճակում, օրինակ գրաբարից ունենք հյուլ, հմուտ, հզօր, որոնք բարդ բառեր են, կազմված են հը <հոլ բառից և լու (լուր, լու ի լու), մուտ, զօր բառերից: Այդ հոլ բառը, սակայն, նույնիսկ գրաբարում անկախ գոյություն չուներ, և բաղադրությունների մեջ դրա նշանակությունը զգալի չէ: համեմատական թերականության օգնությամբ միայն իմանում ենք, որ, հոլ նշանակում է

<sup>1</sup> Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 194:

լավ՝ հլու-լավ լսող, հզոր-լավ գորեղ, շատ գորեղ, հմուտ - լավ թափանցած մի բանի մեջ, ներհուն, խելամուտ՝ դրանք քարացած, մեռած քաղադրություններ են:

Այսպիսին չեն նոր, կենդանի քաղադրությունները. մենք այժմ ներ լեզվական զգացումով ոչ միայն ըմբռնում ենք նրանց քաղադրիչ մասերն ու նշանակությունները, այլև նրանց համարանությամբ կարող ենք նոր բառեր կազմել<sup>1</sup>:

Ժամանակակից հայերենում գրաբարյան բառերը լեզվաբանները սովորաբար բաժանում են հետևյալ հիմնական խմբերի.

1. Ընդհանուր հայերեն բառեր. դրանք բառային հիմնական ֆոնդի բառերն են՝ հայր, մայր, եղբայր, քույր, հաց, ջուր, տուն, լեռ, քար, գետ:

2. Գրաբարից անցած տերմիններ. Ժամանակակից հայերենում լայն գործածություն ունեն բայ, մակրայ, բառ, տառ, ինաստասեր, քերականություն, ածանց, քարմատար, իրամայական, ներգործական, սեռական, ձայնավոր, նախադրություն, կամ՝ մակդիր, կատակերգություն, ողբերգություն, ռազմական գործում՝ գումարտակ, նավատորմ. իրավաբանական՝ դատախազ, դատավոր և այլն, որոնք արդի հայերենում հիմնականում տերմիններ են դարձել:

3. Գրաբարյան հմաստափոխված բառեր՝

Պահպանողական բառը գրաբարում ունի հետևյալ հմաստները՝ 1. պահող, պահպանող, 2. ժողովորի կառավարիչ, իսկ ժամանակակից հայերենում՝ 1. ամեն մի նորությանը թշնամի, քաղաքական կարգի, կենցաղի և այլնի անփոփոխության պաշտպան, 2. այդ հայացքներն ունեցող մարդ, 3. ծայրահեղ աջ քաղաքական կուսակցության անդամ:

Գրաբարյան կազմություններ:

Այս կարգի բառերի շերտն է՝ հենց ժամանակակից հայերենում ներկայացնում են գրաբարյան քարացած ձևերը<sup>2</sup>.

Յին լեզվի հոլովական և բայական ձևերի մասնիկները վերանալով՝ մնում են բառերի մեջ քարացած ձևով՝ այլս չզգացվելով իրու կենդանի բառափոխության ձևական մասեր, այլ իրու բառակազմության ածանցական մասնիկներ: Այսպես՝ գրաբարի հոգնակին կազմող «ք» մասնիկը հայերենի հետագա փուլերում շատ բառերի վերջում արդեն այլս գրեթե չի օհտակցվում իր հին նշանակությամբ, այլ լոկ իրու մի ածանցական մասնիկ, որով կազմվում են շատ բառեր, ինչպես տես-տեսք, հայրենի-հայրենիք: Նույնպես գրաբարի -ումն վերջապորություն ունեցող բառերի հոգնակի ուղղականը՝ -մունք, ըմբռնում ենք իրու մի առանձին ածանց՝ բաժանում(ն)-բաժանումք, պատահում(ն)-պատահումք, մտածմունք և այլն: Նույնը վերաբերում է նաև գրաբարի անցյալ դերբայի եալյալ վերջապորությանը՝ անցյալ, մեռյալ<sup>3</sup>:

Բառափոխական ձևույթների տարածման ոլորտը բառակազմական ձևույթների հետ համեմատած սովորաբար ավելի ընդարձակ է լինում, և անկախ բառափոխական կամ բառակազմական լինելու հաճամանքից, կան ձևույթներ, որոնք լայն տարածում ունեն և գործածվում են բազմաթիվ բառերի մեջ, իսկ կան ձևույթներ էլ, որոնք լայնորեն տարածված չեն և հանդես են գալիս սակավաթիվ բառերի մեջ:

Առաջին խմբի ձևույթները կոչվում են գործուն, կենսունակ կամ կենդանի, ինչպես՝ ական (բանվորական, երեխայական), անք (հարգանք, մեղադրանք), իսկ երկրորդ խմբի ձևույթները՝ ոչ գործուն, ոչ կենսունակ կամ քարացած, մեռած՝ ամորի (միայն վտարանդի բառի մեջ), աստի (միայն նավաստի բառի մեջ), արիմ, երիմ

<sup>1</sup> Արեդյան Ա., Յայոց լեզվի տեսություն, հ. Զ, Երևան, 1974, էջ 137-138:

<sup>2</sup> Սուրեհայան Ա., ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2008, էջ 144-148:

<sup>3</sup> Արեդյան Ա., էջ 191:

(հավատարիմ, ոխերիմ, մտերիմ բառերի մեջ), իլ (միայն տեսիլ և կաթիլ բառերի մեջ), իստ (միայն հանգստ բառի մեջ)<sup>1</sup> և այլը:

Նշվածների մի մասը ծագում է, անշուշտ, հայերենի նախագրային շրջանից: Ե՛լ ավելի շատ միավորներ են պահպանվել գրաբարյան քարացած ձևերի տեսքով: Դրանց մեջ առատ են, նաև և առաջ՝ գրաբարյան նախտիրներով, գրաբարի հոլովնան և խոնարհման ձևերով, բայական ածանցներով կազմված միավորները, որոնք ժամանակակից հայերենում գիտակցվում և գործածվում են իրեն ինքնուրույն և մեծ մասամբ անտրոհելի բառեր:

**Բուն բայական ածանցներով կազմված միավորները մասնավորեցնելիս՝ հետևյալ խմբերն ենք ստանում.**

- ա) Պատճառական ածանցով կազմված ձևեր - կառույց, սառույց, թօցնել, հասցնել, ագուցել, բարձրացնել, ծանուցել, աղոտացնել, լցնել, ամայացնել, եղրակացնել, սնուցել, գեկուցել, փախցնել, անհետացնել, հատուցել:
- բ) Ցոյական հիմքով կազմված - գնացք, լվացք, լաց, ընթացք, սլացք, հիացք, ընչացք:
- գ) -Ող մասնիկով կազմված - ծնող, ծառայող, աշխատող, վաճառող, ուրացող, քերթող, տեսնող, թռչող, կտրող, ասացող, ընտրող, հորատող, գրող:
- դ) -իչ մասնիկով կազմված - գրիչ, երգիչ, բրիչ, սրբիչ, կեղեքիչ, կիզիչ, եղծիչ, անարգիչ, քննիչ, արարիչ, բուժիչ, այրիչ, ծնշիչ, փրկիչ:
- ե) -ելի մասնիկով կազմված - ունելի, բանալի, հայելի, ածելի, շոշափելի, տեսանելի, սիրելի, զարմանալի, զարհուրելի, կատարելի, տրոհելի, ուսանելի, անբուժելի, ելանելի, զգալի:
- զ) Գրաբարյան անցյալ դերբայի -եալ ածանցով կազմված - անցյալ, լքյալ, անկյալ (անգյալ), հեծյալ, ննջեցյալ, տվյալ, սառուցյալ, վերոհիշյալ, անիծյալ, հավատացյալ, զառանցյալ, այրեցյալ, մնացյալ, խոստացյալ, զորացյալ, մեղադրյալ, ուսյալ:

է) Ապառնի ձևեր - կեցցես, հասցէ:

Ընդ որում, գրաբարի բարացած քերականական բայաձևերը արդի հայերենում հիմնականում վերածվել են գոյականների, ածականների և բայերի:

**Հիմնականում բայերի են վերածվել**

Պատճառական ածանցով կազմված ձևերը - մատուցել, ծանուցել, սնուցել, գեկուցել, կառուցել, կառույց, մատույց, սառույց, հանդարտացնել, ագուցել, հատուցել, վագեցնել, հիշեցնել, աղոտացնել, լցնել, ամայացնել, եղրակացնել, ընպեցնել, հասցնել, անզգայացնել, բարձրացնել, փախցնել, անհետացնել, բանեցնել, թօցնել, հասցնել, կորցնել, թաքցնել, ածխացնել, եղկացնել, ընկեցնել, ճաքացնել, անցնել:

Գրաբարի բարացած քերականական բայաձևերի մի մասը վերածվել են գոյականների:

Ցոյական հիմքով կազմված - գնացք, լվացք, ընթացք, հիացք, ընչացք, հայացք, սլացք, զայրացք, զարմացք, զովացք:

- Ող մասնիկով կազմված - ծնող, ծառայող, աշխատող, ընտրող, ընթերցող, մատուցող, հորատող, գրող, ուսումնասիրող, մտածող, ուսանող, քննող, մաքող, ծառայող, վաճառող, ուրացող, քերթող, ասացող:

- իչ մասնիկով կազմված - գրիչ, երգիչ, բարգմանիչ, արարիչ, կառավարիչ, քննիչ, ուսուցիչ, մատնիչ, զատիչ, գործիչ, փորիչ, մաքրիչ, փրկիչ, բրիչ, եղծիչ, անարգիչ, քննիչ, սրբիչ:

- ելի մասնիկով կազմված - բանալի, ունելի, հայելի, ածելի:

<sup>1</sup> Ասատրյան Մ., ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2002, էջ 21:

- Գրաբարյան անցյալ դերբայի – եալ ածանցով կազմված բառեր – հեծյալ, ննջեցյալ, տվյալ, հանգուցյալ, արարյալ, բանտարկյալ, ախտացյալ, ամբաստանյալ, լուսավորյալ, անիծյալ, հավատացյալ, զառանցյալ, զորացրյալ, մեղադրյալ:
- Գրաբարի քերականական բայաձևերի բարացումով մի շարք բառաձևեր վերածվել են ածականների՝

– Ող մասնիկով կազմված - տեսնող, թռչող, կտրող, այրող, արժող, վազող, եկող, անկարող, ճնշող

– Իչ մասնիկով կազմված - կեղեքիչ, կիզիչ, հանողիչ, բուժիչ, այրիչ, ճնշիչ, արտահայտիչ, զմայլիչ, ապականիչելի մասնիկով կազմված - սիրելի, գովելի, ընդունելի, զարհուրելի, զարմանալի, զգալի, նկատելի, շոշափելի, տեսանելի, անցանելի, վերծանելի, վստահելի, անըմբռնելի, կատարելի, տրոհելի, ուսանելի, անբուժելի, ելանելի, ընպելի, եղծանելի, զննելի, անջնջելի, խոտելի

– Գրաբարյան անցյալ դերբայի – եալ ածանցով կազմված բառեր – անցյալ, լքյալ, սառուցյալ, վերոհիշյալ, անկյալ (անգյալ), մնոյալ, ածանցյալ, կարծեցյալ, արտոնյալ, մնացյալ, խոստացյալ, թանձրացյալ, հետևյալ, ուսյալ, այրեցյալ, կատարյալ և այլն:

\* \* \*

Ժամանակակից հայերենում գրաբարյան շերտը կազմում են գրաբարից ժառանգած բառերն ու իմաստները, ինչպես նաև գրաբարյան բայաձևերը, որոնք այժմ ներկայացնում են գրաբարի քարացած քերականական ձևերը և ժամանակակից հայերենում գիտակցվում են իրու ինքնուրույն բառեր<sup>1</sup>:

Ուսումնասիրելով գրաբարի քարացած քերականական բայաձևերը արդի հայերենում կարող ենք խմբեր ստանալ

- Պատճառական ածանցով կազմված ձևեր - կառույց, սառույց, թռցնել, հասցնել, ագուցել, բարձրացնել, սնուցել, գեկուցել, փախցնել, անհետացնել, հատուցել:
- Ցոյական հիմքով կազմված - գնացք, լվացք, լաց, ընթացք, սլացք, հիացք, ընչացք:
- Ող մասնիկով կազմված - ծնող, ծառայող, աշխատող, վաճառող, ուրացող, քերթող:
- Իչ մասնիկով կազմված - գրիչ, երգիչ, բրիչ, սրբիչ, կեղեքիչ, կիզիչ, եղծիչ
- Ելի մասնիկով կազմված - ունելի, բանալի, հայելի, ածելի, շոշափելի:
- Գրաբարյան անցյալ դերբայի - եալ ածանցով կազմված - անցյալ, լքյալ, անկյալ (անգյալ), հեծյալ, զորացրյալ, մեղադրյալ, ուսյալ:
- Ապառնիի ձևեր - կեցցես, հասցէ:

Այս համառոտ քննությունը ցույց է տալիս, որ գրաբարի բայաձևերի մեջ մասը արդի հայերենում վերածվել են գոյականների, ածականների և բայերի:

<sup>1</sup> Տե՛ս Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976: Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, Երևան, 2010: «Արձենն բառզիր հայկագեան լեզուի», Անթիլիաս, 1988:

**ДРЕВНЕАРМЯНСКИЕ ЗАСТЫВШИЕ ГРАММАТИЧЕСКИЕ ФОРМЫ ГЛАГОЛА  
В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ**  
Асмик Манукян

Согласно данным древнеармянских словарей, число древнеармянских слов составляет 60-65 тысяч единиц. По самым скромным подсчетам в современном армянском языке сохранилось 40% древнеармянской лексики.

Краткий анализ, проведенный в статье, показывает, что большинство древнеармянских глагольных форм в современном армянском языке превратилось в имена существительные, имена прилагательные и причастия.

**OLD ARMENIAN SET GRAMMATICAL FORMS IN MODERN ARMENIAN**  
Hasmik Manukyan

In the Modern Armenian language, the Old Armenian (Grabar) layer consists of words and meanings as well as Old Armenian types of verbs inherited from Old Armenian.

According to the data from old dictionaries the number of Old Armenian words is approximately 60-65 thousand. The modest ones estimate that the 40% of total Old Armenian vocabulary is transferred to the Modern Armenian language.

The brief analysis shows that the majority of Old Armenian types of words which make grammatical forms in Modern Armenian language turned into nouns, adjectives and verbs.

## 18-ՐԴ ԴԱՐԻ ՆՈՐԱՐԱՅԻ ԿՈՆԴԱԿՆԵՐԻ ԲԱՌԱՊԱԾԱՐԸ

Հոիփսիմե Կոստանյան

ԵՊՀ, Դայ բանասիրության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող

Գիտ. դեկ.՝ բ.գ.թ., դոց. Ն. Պողոսյան

Էլփոստ՝ hripsime.kostanyan@yahoo.com

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրնան համար կարևոր նշանակություն ունեն միջնադարյան հայ գրականության բոլոր ժանրերը: Մենք փորձել ենք քննել 18-րդ դարի նորահայտ մի քանի կոնդակների բառապաշարը: Ուսումնասիրության համար նյութ են ծառայել Ազգության Սուրբ Թովմա Առաքյալի վանքում գտնված կոնդակները, որոնք պահպանվում են Երևանի Սեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և որոնք «Էջմիածին» հանդեսում իրատարակել է Գ. Տեր-Վարդանյանը<sup>1</sup>: Երեք կոնդակներն ընդորինակել է բանասեր, բանաստեղծ, լեզվաբան, բարգմանիչ Սեսրոպ վարդապետ Մաքսուլյանը: Կոնդակների հեղինակներն են՝ Թովմա առաքյալի վանքի առաջնորդ Յոհան Վարդապետը, ամենայն հայոց կաթողիկոսներ Ղազար Ա. Զահկեցին և Դուկաս Ա. Կարճեցին:

Կոնդակը ծագում է հունարեն կոնդակին «գլանածն ձող, գավազան, գալարված մագաղաթ, փաթույթ», նաև՝ «համառոտ հոգևոր երգ, հիրդորակ, մաղթանք» բառերից: Հայ մատենագրության մեջ և Եկեղեցում նախ և առաջ նշանակում է կարողիկոսական (երեմն նաև առաջնորդ-եպիսկոպոսի) գիր կամ թուղթ, նամակ, ուղերձ, շրջաբերական, կտակ: Իրենց գործունեության ընթացքում կաթողիկոսները հղել են բազում կոնդակներ՝ տարբեր բովանդակությամբ ու մեծությամբ: Այսօր էլ կոնդակին գլանածն փաթույթի տեսք են տալիս, ճակատը զարդարում մանրանկարներով, հայրապետական խորհրդանշանով: Կոնդակներն ունենում են պատմական, քաղաքական, ազգ-Եկեղեցական, դավանական, իրավավարչական, մշակութային, կրթական, ինչպես նաև Եկեղեցականներին բարձր պաշտոնների նշանակելու, նրանց գնահատելու, պատժելու և այլ բովանդակություններ: Կաթողիկոսական կոնդակները սկզբնադրյուր են ազգ-Եկեղեցական կարևոր հարցերը պատմական որոշակի ժամանակաշրջանի մեջ ծցգրտելու գործում<sup>2</sup>:

Պահպանվել են բազմաթիվ միջնադարյան կոնդակներ, որոնք լեզվական մանրակրկիտ քննության, որքան մեզ է հայտնի, չեն ենթարկվել: Մեր աշխատանքը նվիրված է դրանցից երեքի բառապաշարին, ավելի ստույգ՝ նորակազմություններին: Ինչո՞ւ հատկապես նոր բառերին, որովհետև այդ երեք կոնդակների ընթերցումն առաջին հայացքից ի հայտ է բերում մեծ թվով նորակազմություններ, որոնք, կարծում ենք, ի մի հավաքելը և մատուցելը որոշակի հետաքրքրություն և կարևորություն կարող է ունենալ:

\* \* \*

Նորաբանությունները լայն իմաստով նոր արտահայտություններն են, նոր բառերն ու նոր բառիմաստները<sup>3</sup>: Նորաբանություններն ուսումնասիրելիս կարևոր է հաշվի առնել լեզվի զարգացման տվյալ ժամանակաշրջանը: Ամեն մի նոր առաջացած բառ, ինչպես նշում է մեծանուն լեզվաբան և բանասեր Ս. Աբեղյանը, նորաբանություն է անկախ նրանից այն փոխառյալ բառ է, թե առաջացել է մայր լեզվում<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Էջմիածին», 2012, նոյեմբեր:

<sup>2</sup> Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 501:

<sup>3</sup> Եղեկյան Լ., Հայոց լեզու, Երևան, 2007, էջ 164:

<sup>4</sup> Աբեղյան Ս., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 38:

Տարբերակվում են բառային և իմաստային նորաբանություններ: Բառային նորաբանություններն իրենց արտաքին՝ հնչյունական կողմով և իմաստով բոլորովին նոր բառեր են, որ առաջին անգամ են գործածվում լեզվում: Իմաստային նորաբանությունները լեզվում արդեն եղած բառերի նոր ձեռք բերած իմաստներն են<sup>1</sup>:

Նորաբանությունների մի տեսակ են նաև անհատական կամ հեղինակային նորակազմությունները: Դրանք նախ և առաջ գրողների, հրապարակախոսների, լրագրողների կողմից ստեղծված բառերն են, որոնք գործածվում են սահմանափակ կիրառությամբ, հաճախ՝ միայն մեկ անգամ՝ խոսքին արտահայտչականություն հաղորդելու նպատակով: Այդ դեպքում գործ ունենք դիպլամատիկին նորակազմությունների հետ: Յեղինակային նորակազմությունների տարբերությունը նորաբանության մյուս տեսակներից այն է, որ գրական լեզվի մեջ գրեթե չեն մտնում, այլ մնում են հեղինակի ստեղծագործության էջերում: Այս այս բառերն են կոչվում *հեղինակային նորաբանություններ*<sup>2</sup>:

Նորակազմ բառերը մի անհատից անցնելով ուրիշներին՝ ընդհանրանում են, երբ անզգայի են մնում թե՝ այդ կազմությունը գործածողի և թե՝ լսողի համար<sup>3</sup>: Մեր քննած կոնդակների նորակազմությունները պետք է անշուշտ համարել հեղինակային նորակազմություններ:

Նշենք, որ մեր քաղած բառերը բննելիս համեմատել ենք «Նոր բառօֆիր հայկագեան լեզուի»<sup>4</sup>, «Առձեռն բառօֆիր հայկագեան լեզուի»<sup>5</sup>, «Միջին հայերենի բառարան»<sup>6</sup> և այլ բառարամների տվյալների հետ: Նորակազմ ենք համարել այն դեպքում, երբ դրանք ներառված չեն եղել հեղինակավոր այդ բառարամներում:

Ուսումնասիրելով այս կոնդակները, ինչպես նշեցինք, մեր ուշադրությունը կենտրոնացրել ենք հեղինակային նորաբանությունների վրա: Դրանք ըստ կազմության բաժանել ենք հետևյալ խնբերի՝ ա) ածանցավոր, բ) բարդ, գ) բարդածանցավոր<sup>7</sup>:

ա) **Ածանցավոր բառեր:** Ածանցավոր են այն բառերը, որոնք կազմվում են մեկ արմատով և մեկ կամ ավելի ածանցներով: Այս դեպքում բաղադրող հիմքի կազմության, ինչյունափոխության հարցերին չենք անդրադառնում, քանի որ մեր հիմնական նպատակը կոնդակների բառապաշարում նորակազմ բառերի վերհանումն է:

Ածանցավոր բառերի մեջ հանդիպում են, նախ՝ գոյական + ածանցով կազմված բառեր:

Գանձանակական (գանձանակ + ական): «Նոյնպէս եւ դուք զձեր պարտսն վճարելով, զոր մեզ պարտիք, տուեալ էք նմա ամենայնիւ յօժարութեամբ եւ առատաձեռնութեամբ զիզեկան տուրսն ձեր՝ զնուիրակականն, զիզեբաժնականն, զգանձանակականն եւ զայլս այսպիսիս լիածեռն արդիւն»:

Գերսկզբնական = գեր + սկիզբն (հ>ը) + ական

պահառութիւն = պահ + առ + ութիւն

սիրայան = սիր (է>ի) + արան

վերալեւորութիւն = վեր + ալի (հ+ա >ե) + աւոր + ութիւն

Կոնդակներում գործածվել են ներ- նախածանցով կազմված երկու նորակազմ բառեր՝

Ներզիմուրեցեալ = ներ + զեն (ե>ի) + ւոր + եց + եալ

ներքանդակեալ = ներ + քանդակ + եալ

<sup>1</sup> Սուրիայան Ա., ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2008, էջ 158-159:

<sup>2</sup> Խլիաքյան Ֆ., ժամանակակից հայոց լեզու, մաս Ա, Երևան, 2009, էջ 208:

<sup>3</sup> Արեղյան Ս., էջ 44:

<sup>4</sup> «Նոր բառօֆիր հայկագեան լեզուի», հ. 1-2, Երևան, 1979:

<sup>5</sup> «Առձեռն բառօֆիր հայկագեան լեզուի», Կենետիկ, Սուլբ Դազար, 1865:

<sup>6</sup> Դազարյան Ռ., Ավետիսյան Յ., Միջին հայերենի բառարան, Երևան, հ. 1-2, 1992:

<sup>7</sup> Բառակազմությունը տես Ածանցան Յ., Հայերենի արմատական բառարան, Երևան, հ. 1, 1971, հ. 2, 1973, հ. 3, 1977, հ. 4, 1979: Աղյան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, 2, Երևան, 1976:

Արձանագրել ենք նաև մակրայական -պէս ածանցով կազմված մեկ բառեր՝  
մանաւանդապէս = մանաւանդ + ա + պէս

**բ) Բարդ բառեր:** Բարդ են այն բառերը, որոնք կազմվում են երկու և ավելի ար-  
մատներով: Իրենց հերթին լինում են հոդակապավոր և անհոդակապ:

Բարդ ածանցավոր են այն բառերը, որոնք կազմված են երկու կամ ավելի ար-  
մատներով և մեկ կամ ավելի ածանցներով:

Բարդ բառերը փորձել ենք դասակարգել ըստ կազմության կաղապարի, այս-  
ինքն ըստ բաղադրիչների խոսքի մասային հատկանիշի:

Կոնդակներից մեր դուրս բերած, բաղած բարդ բառերի մեջ գերակշռում են  
**«գոյական + գոյական»** կաղապարն ունեցող բառերը:

Հայերենի բառակազմության առանձնահատկություններից մեկը բարդության  
առանձին բաղադրիչները հոդակապով միավորելն է, որը հնարավորություն է տալիս  
նորակազմ բառերն ավելի բարեհունչ դարձնել՝ խուսափելով բաղաձայնների կու-  
տակումից: Դա է ցույց տալիս նաև այն հանգամանքը, որ այս կաղապարով բառերի  
մեջ մասը հենց հոդակապով բարդություններ են:

#### *հոդակապով*

հանապազատանջ = հանապազ + ա + տանջ

երջանկապատիւ = երջանիկ ( $h>0$ ) + ա + պատիւ

երջանկապերծ = երջանիկ ( $h>0$ ) + ա + պերծ

թիւնալիր = թիւն + ա + լիր

լուսաւորչակրօն = լուսաւորիչ ( $h>0$ ) + ա + կրօն

լուսաւորչավիդ = լուսաւորիչ ( $h>0$ ) + ա + շավիդ

հոգետիա = հոգի ( $h+ա >ե$ ) + ա + տիա

ոսկեկից = ոսկի ( $h+ա >ե$ ) + ա + կից

քրիստոսապարգեւ = քրիստոս + ա + պարգեւ

քրտնավտակ = քրտն ( $h>\varnothing$ ) + ա + վտակ

*անհոդակապ*

աղավներամ = աղավնի ( $h>0$ ) + երամ

երիցիոխ = երեց ( $ե>ի$ ) + փոխ

Մեծ թիվ են կազմում նաև «ածական + գոյական» և «գոյական + ածական»  
կազմությամբ բառերը: Հատկանշական է այն, որ այս կազմությամբ մեզ հանդիպած  
բոլոր բարդ բառերն ածականներ են:

#### *ածական + գոյական*

ազնուապատիւ = ազն + իւ ( $իւ>ու$ ) + ա + պատիւ

առաքինափայլ = առաքէն ( $է>ի$ ) + ա + փայլ

արդարավաստակ = արդար + ա + վաստակ

բազմակուտ = բազում ( $ու>0$ ) + ա + կուտ

բարակազարդ = բարակ + ա + զարդ

գեղեցկանիար = գեղ + եց + իկ ( $հ>0$ ) + ա + նիար

երանատենչ = երան + ա + տենչ

նոյնազօր = նոյն + ա + զօր

վեհանիստ = վեհ + ա + նիստ

վշտատանջ = վիշտ ( $հ>\varnothing$ ) + ա + տանջ

տրտմակսկիծ = տրտում ( $ու>\varnothing$ ) + ա + կսկիծ

փարթամայոյզ = փարթամ + ա + յոյզ

*գոյական + ածական*

շնորհագեղուն = շնորի + ա + գեղուն

շնչանաքուր = շունչ ( $ու>\varnothing$ ) + ա + մաքուր

Բայական բաղադրիչով բարդությունների («գոյական + բայ», «ածական +  
բայ», «գոյական + ածական») հիմաստային առանձնահատկությունն այն է, որ բոլորն ել գործողության, գոր-

ծողի իմաստ ունեն, օրինակ՝ լուսաւորչածին – լուսաւորիչ ծնող, ողջունանատոյց - ողջուն մատուցող և այլն:

**գոյական + բայ**

արաբատու = արաք + ա + տու

լուսաւորչածին = լուսաւորիչ ( $h>0$ ) + ա + ծին

հայկասէր = հայկ + ա + սէր

ողջունանատոյց = ողջոյն ( $o>n$ ) + ա + մատոյց

քրիստոսակերտ = քրիստոս + ա + կերտ

**ածական + բայ**

համարձակաբան = համարձակ + ա + բան

հնազարդալուր = հնազարդ + ա + լուր

տրտմամեռ = տրտում ( $t>r$ ) + ա + մեռ

տրտմատու = տրտում ( $t>r$ ) + ա + տու

Ածականական բաղադրիչներով (ածական + ածական) միայն մի նորաբանություն ենք հանդիպել՝ ծերունակ = ծեր + ունակ:

Այս բառը շատ հետաքրքրական է իմաստային առումով. բարդության բաղադրիչներն իմաստով ասեն հակադրվում են միմյանց՝ «Ճեր, բայց ունակ»: Կարծում ենք, հեղինակն այս բառը ստեղծել է «յամենունակ» բարի նմանությամբ (որը նույնպես հանդիպում է կոնդակներում), սակայն վկայված է Ստ. Մալխասյանցի «Յայերէն բացատրական բառարան»-ում<sup>1</sup>:

Յանդիպել են մի քանի նորաբանություն նաև մակրայական բաղադրիչներով:

**մակրայ + գոյական**

մշտաժառանգ = միշտ ( $h>r$ ) + ա + ժառանգ

մշտատանջ= միշտ ( $h>r$ ) + ա + տանջ

Յետաքրքրական է նորաբանությունների եռաբաղադրիչ խումբը, որտեղ երեք տարբեր բաղադրիչները մի բառում հետաքրքիր բազմաշերտ իմաստ են արտահայտում:

**թվական + գոյական + գոյական**

միաբնադրաւան = մի + ա + բուն ( $t>r$ ) + ա + դրաւան

**ածական + գոյական + գոյական**

բարեպաշտափայլ = բարի ( $h+a>t$ ) + ա + պաշտ + ա + փայլ

ուղղաջաւաղթաց = ուղիղ ( $h>0$ ) + ա + շաւիղ ( $h>0$ ) + ընթաց

Առանձին խմբում ենք միավորել բարդ ածանցավոր բառերը, որոնք տարբեր կազմություն ունեն. «գոյական + գոյական + ածանց», «գոյական + բայ + ածանց», «ածական + գոյական + ածանց»:

**գոյական + գոյական + ածանց**

հոգեբաժնական = հոգի ( $h+a>t$ ) + ա + բաժին ( $h>0$ ) + ական

պսակազարդութիւն = պսակ + ա + զարդ + ութիւն

տիգահանգոյն = տեգ ( $t>h$ ) + ա + հանգ + ոյն

փառազարդապէս = փառ( $p$ ) + ա + զարդ + ա + պէս

արարչակերտութիւն = արար + իչ ( $h>0$ ) + ա + կերտ + ութիւն

**գոյական + բայ + ածանց**

դրամատրութիւն = դրամ + ա + տուր ( $t>r$ ) + ութիւն

յանդինանակցութիւն = յ + անդի + ման + ա + կից ( $h>r$ ) + ութիւն

պարադրունակ = պար + ա + դրի ( $h>r$ ) + ունակ

տառապակրութիւն = տառապ + ա + կիր ( $h>r$ ) + ութիւն

**ածական + գոյական + ածանց**

արժանացուցիչ = արժան + ա + ցուց + իչ

բազմահոյլութիւն = բազում ( $t>r$ ) + ա + հոյլ + ութիւն

<sup>1</sup> Մալխասեանց Ստ., Յայերէն բացատրական բառարան, Երեւան, հ. 1-3, 1944, հ. 4, 1945:

Երկարախօսութիւն = Երկար + ա + խօս(բ) + ութիւն  
քաջապետական = քաջ + ա + պետ + ական

Կոնդակներում մեր արձանագրած նորաբանություններից բացի կա նաև մեկ այլ խումբ, որ այնուհետև վկայվել են ավելի ուշ բառարաններում, ինչը վկայում է, որ հեղինակի նորաբանությունները հետազայում մտել են լեզվի ակտիվ բառապաշար: Սակայն այդ նորաբանությունների գգալի մասն այդպես էլ մնացել են որպես հեղինակային դիպվածաբանություններ, քանի որ հետազայում չեն հայտնվել ոչ մի բառարանում:

Այդուհանդերձ, անկախ այն բանից հեղինակային այս նորաբանությունները շարունակել են իրենց կյանքը այլ հեղինակների երկերում, թե ոչ, դրանք որոշակի գեղարվեստական արժեք են ներկայացնում:

Լինելով պաշտոնական գրություններ, կոնդակներն, այնուամենայնիվ, հեղինակի ստեղծագործական մոտեցման շնորհիվ գեղարվեստական շունչ ունեցող ստեղծագործություններ են դարձել, որի ապացույցներն են թեկուզ մեր քաղած տասնյակ նորակազմ բառերը:

Կոնդակները հետաքրքրություն էին ներկայացնում ոչ միայն բովանդակային առումով, այլ նաև գեղարվեստական հրաշալի արժեքով:

Դետայալ մեկ հատվածը կարող է վկայել մեր ասածը:

«Արդ, վասն այսքանեաց հարկաւորաց պատճառաց հարկ եղեւ մեզ առաքել զդա առ ձեզ, որպէս զի եկեալ պատմեսցէ ի ձեզ զորախութենէ Մրբոյ Արոռոյս, զբարեկարգութեանց միաբանաց, զանդադար սաղմոսերգութեանց, զանվորաց պաշտամանց եւ պատարազաց, զաղաւներամ բազմահոյլութեանց եւ կամ զմերոյ ծերունակ տկարութեանց, եւ զբազմագունեղ վշտակութեանց, որ ի վարկապարազի հարկաւորութեանց եւ գերաշտիցն պատահութեանց, եւ զանդաստանացն անպտղաբերութեանց»:

Բառաքննության արդյունքները ցույց տվեցին, որ մեր քաղած 62 նորակազմություններում ավելի շատ հանդիպում ենք բարդ բառերի (54), այդ թվում նաև բարդ ածանցավորները, և ածանցավորների (8):

Քննությունը ցույց տվեց, որ խոսքի նասերից ավելի շատ ստեղծվել են ածականներ, երբեմն նաև գոյականներ ու բայեր: Ինչպես վերը նշված է նորաբանությունների գգալի մասը կազմում են հոդակապով կազմված բարդ բառերը: Առավել հաճախ օգտագործվող -գոյն արմատը փոփոխության է ենթարկվել ու դարձել -գունեղ ածանց՝ խոսքին ավելի արտահայտչականություն տալու համար: Յանդիպում ենք նաև ածականից գոյականի անցնանը (-ություն ածանցով բարդ բառեր), որոնք նույնպես գգալի մաս են կազմում: Կան նաև մի քանի անհոդակապ բարդ բառեր, պարզ ու բարդ ածանցավոր գոյականներ և բայեր:

Այս ամենից գալիս ենք այն եզրակացության, որ 18-րդ դարում հայերենի բառապաշարի հարստացման վրա մեծ ազդեցություն է ունեցել ոչ միայն բազմաթիվ փոփոխությունները, այլ նաև մեր լեզվի զարգացման արդյունքում առաջացած նոր իրողությունները: Ժողովուրդն ավելի շատ ինքն է ստեղծել նոր բառեր. դա մեր համոզնունքն է:

## ЛЕКСИКОН НОВОЯВЛЕННЫХ КОНДАКОВ XVIII ВЕКА

Рипсиме Костанян

Материалом исследования послужили новоявленные кондаки XVIII века и их лексический запас. В статье изучаются также авторские словообразования. В результате сравнительного анализа, проведенного на основе современных словарей, относящихся к рассматриваемому периоду, нами была выделена и проанализирована казуистика.

Установлено, что кондаки предоставляют богатый языковой и лексический материал для изучения армянского языка ранних периодов.

**THE VOCABULARY OF THE NEWLY DISCOVERED KONTAKIONS OF THE 18<sup>th</sup> CENTURY**  
Hripsime Kostanyan

The newly discovered kontakions served as material for the study of the present article. The work is devoted to the vocabulary of the kontakions, and particularly to neologisms. The article dwells on author's neologisms. As a result of the comparison with the existing dictionaries, occasionalisms have been distinguished and analyzed. The study has shown that kontakions provide rich lexical and language material for the study of the early periods of the Armenian language.

**ՐԱՅՈՒՄԱՓՈԽՈՒԹՅԱՎ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՐԵԲԻ ԽՈՍՎԱԾՔՈՒՄ**

**Մարիամ Մարտիրոսյան**

**ԵՊՀ, Ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետ,  
բակալավրիատի ուսանող**

**Գիտ. դեկ.՝ բ.գ.թ., դոց. Ա. Խաչատրյան  
Էլքուստ՝ mariam.martirosyan@mail.ru**

Բարբառ անվան տակ սովորաբար հասկացվում է մեկ համընդիանուր լեզվի այնպիսի ճյուղավորում, որն ունի իր բառային հիմնական ֆոնդն ու քերականական կառուցվածքը և սպասարկում է որևէ ժողովրդի ավելի փոքր հատվածին, այն հաղորդակցման միջոց, գործիք է տվյալ ժողովրդի ավելի սահմանափակ շրջանակի համար: Բարբառն ունի տեղական խոսվածքի բնույթ. այն չունի տարածքային լայն ընդգրկում և սահմանափակվում է առանձին շրջանով, իսկ հաճախ նույնիսկ մեկերկու գյուղերով: Բարբառները սպասարկում են ժողովրդի մի ստվար զանգվածի և ունեն իրենց քերականական, այն է՝ ծևաբանական, շարահյուսական և հնչյունական առանձնահատկությունները: Նրանք ունեն միայն իրենց հատուկ բառապաշար, սակայն սա չի նշանակում, որ նրանք մեկուսացած են, չեն փոխազդում կամ բացառում են գրական լեզվի բառապաշարի օգտագործումը: Նշմարիտ է, որ բարբառներն ունեն միայն իրենց հատուկ բառերի որոշակի զանգված, սակայն պետք է նկատել, որ բարբառներում ևս օգտագործվում են համաժողովրդական լեզվի հարյուրավոր բառեր՝ միայն թե որոշակի փոփոխությունների ենթարկված: Բերենք հետևյալ օրինակները՝ մայր, հայր, եղբայր, երեկո, քույր բառերը տարբեր բարբառներում հնչում են հետևյալ կերպ՝ մայր՝ մէր, մամէ, հայր՝ հէր, պապէ, խէր, եղբայր՝ ախապէր, ապէր, ախապար, երեկո՝ րիգուն, իրգուն, քույր՝ քուր, քիր, քիրա և այլն: Դայերենի բարբառների ուսումնասիրություննից պարզ է դառնում, որ հիմնականում ծայնեղ պայթականներն ու կիսաշփականները մնում են անփոփոխ: Բարբառներում հիմնականում հնչյունափոխության են ենթարկվում ծայնավորները, ինչը երեմն անճանաչելի է դարձնում բառը:

Դայ բարբառների դասակարգման առաջին գիտական փորձը կատարեց պրոֆ. Յ. Աճառյանը: Տա հիմք ընդունեց բայերի սահմանական ներկա ժամանակի կազմության եղանակը՝ բարբառները բաժանելով երեք ճյուղ՝ ում, կը և ել: Ում ճյուղի մեջ նա մտցրեց բոլոր այն բարբառները, որոնք սահմանական ներկան կազմում են անկատար դերբայով, որն ուներ ում, ըմ, ամ, իմ վերջավորությունները: Այս ճյուղի մեջ մտան յոր բարբառ՝ Երևանի, Թիֆլիսի, Ղարաբաղի, Շամախիի, Աստրախանի, Զուլայի և Ագուլիսի: Կը ճյուղի մեջ մտան իրենց ներկա ժամանակը կը, զը, գա, գի, զօ, կու, գու մասնիկներով կազմող բարբառները: Այս ճյուղի մեջ մտնում է քանձնեկ բարբառ՝ Կարինի, Մշո, Վանի, Տիգրանակերտի, Շամշենի, Կիլիկիայի, Զմյուռնիայի և այլն: Ել ճյուղի մեջ մտան այն բարբառները, որոնք իրենց ներկան կազմում են ել, իլ, ալ վերջավորություն ունեցող դերբայով: Այս ճյուղի մեջ դասվեցին երեք բարբառ՝ Մարաղայի, Խոյի և Արդվինի:

Կան շատ բարբառներ, որոնք, չնայած ունեն ծևաբանական որոշակի ընդիանություններ և ընդգրկվում են բարբառների նույն ճյուղի մեջ, այնուամենայնիվ ունեն նաև հնչյունաբանական և շարահյուսական բազմաթիվ տարբերություններ: Այս հանգամանքն էլ ստիպում է կատարել նաև հնչյունական դասակարգում, որի համար Ա. Ղարիբյանը հիմք է ընդունում բառասկզբի պայթական և պայթաշփական բաղաձանների համակարգային գոյությունը բարբառներում: Կայուն և հիմնական համարելով գրաբարի եռաստիճան հանակարգը (բ-պ-փ, դ-տ-թ, ծ-ծ-գ, զ-կ-ք)՝

Ա. Ղարիբյանը բարբառներում դրա հանդեպ հանդես եկող փոփոխությունները դիտում է որպես տեղաշարժեր և տեղաշարժ-տեղափոխություններ: Յեղինակը թես տեղաշարժերի ու տեղաշարժ-տեղափոխության երևույթները դիտում է գրաբարյան համակարգի ելակետից, սակայն, վերջում եղակացնում է, թե հիշյալ համակարգերով բարբառները եղել են ոչ թե գրաբարի՝ գրական լեզու դառնալուց հետո, այլ առաջ:

Պրոֆ. Յ. Աճառյանը իր «Դայ բարբառագիտություն» աշխատության մեջ նշում է, որ «Լոռվա խոսվածքը մտնում է Արարատյան բարբարի մեջ»<sup>1</sup>, իսկ պրոֆ. Ա. Ղարիբյանը նշում է, որ «Լոռվա խոսվածքը Արարատյան ենթարարքաւ է, որի մեջ թույլ կերպով արտահայտվում են նաև Ղարաբարի և Թիֆլիսի բարբառները»<sup>2</sup>: Սակայն այժմ էլ մեծ տարակարծությունների առիթ է տալիս այն հարցը, թե որտեղ է վերջանում բարբառը և սկսվում ենթարարքաւը: Լոռվա խոսվածքը մի ամբողջություն է կազմում՝ ընդգրկելով Վանաձորի, Ալավերդու, Ստեփանավանի, Նոյեմբերյանի և Սպիտակի շրջանները: Բնականաբար նշված շրջանների գյուղերում ու քաղաքներում բացարձակ միանման չեն ո՛չ հնչյունային և ո՛չ էլ ծևաբանական համակարգերը, սակայն ակնառու են բազմաթիվ նույնություններն ու ընդհանրությունները, ինչն էլ հիմք է տալիս խոսելու Լոռվա առանձին խոսվածքի մասին:

Լոռվա խոսվածքի մի ճյուղն է կազմում նաև Տավուշի մարզի Արճիս գյուղի խոսվածքը, որը զարմանալիորեն բազմաթիվ ընդհանրություններ է հանդես բերում գրաբարի հետ և հնչյունաբանության, և ծևաբանության մեջ: Այսպես՝ կարելի է ենթադրել, որ մատամի բարի մատոնուք ձևը Արճիսի խոսվածքում առաջացել է գրաբարյան մատն բարի մատունք հոգնակի ձևից՝ դրափոխությամբ՝ դառնալով մատոնուք:

Եթե գրական հայերենում ու և ի լորրությունները ձուլվել են աև և է լորրություններին, ապա Արճիսի խոսվածքում պահպանվել են ու լորրությամբ բայերի որոշ օրինակներ՝ առնուլ, թողուլ, խոնարհված ձևերում՝ հագնուլ չտիմ, մտնուլ չտիմ, գտնուլ տիմ և այլն:

Արճիսի խոսվածքն ընդհանուր առմամբ ունի 41 հնչյուն, որոնցից 6-ը ծայնավոր (ա, օ, ու, է, ի, ը), 2-ը՝ երկբարբառ՝ ուօ, որն արտահայտվում է ո հնչյունով, և իէ երկբարբառը, որն արտահայտում է և հնչյունը: Բաղաձայնները 33-ն են: Լոռվա մի շարք գյուղերում կան նաև օյ, կյ, քյ քմայնացված պայթականները և շնչեղ և հնչյունը: Գրաբարի, ինչպես նաև ժամանակակից հայոց լեզվի համեմատությամբ հնչյունական գլխավոր փոփոխությունը Արճիսի խոսվածքում շեշտի դիրքի փոփոխությունն է: Գրական լեզվում շեշտը դրվում է բարի վերջին ծայնավորի վրա, իսկ Արճիսի խոսվածքում շեշտը հիմնականում նախադիր է և ավելի ուժեղ, քան ասենք նույն Արարատյան բարբարին պատկանող Երևանի խոսվածքում: Տախաշեշտ ա, օ, է, ի ծայնավորների հնչյունափոխությունը Արճիսի խոսվածքի ամենացայտուն առանձնահատկություններից է: Տախադիր շեշտի համգամանքով էլ պայմանավորված՝ բառասկզբի ծայնավորները հեշտությամբ հնչյունափոխվում են ը-ի կամ ընդհանրապես սղվում են: Գրաբարում, ինչպես նաև ժամանակակից գրական հայերենում ան ուժեղ ծայնավոր է և սովորաբար չի հնչյունափոխվում, իսկ Արճիսի խոսվածքում, ընդհակառակը, ան թույլ ծայնավոր է և հաճախ է հնչյունափոխվում կամ սղվում:

ա) ա>ը

ազատել-ըզատել

բաժանել-բըժանել

բ) ա>օ

առավոտ-ռավոդ

հավաքել-հըվաքել

<sup>1</sup> Աճառյան Յ., Դայ բարբառագիտություն, Մոսկվա, 1911, էջ 37-51:

<sup>2</sup> Ղարիբյան Ա., Դայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 219:

Երկու առ ունեցող երկվանկ բառերի առ ևս դաշնում է ը, օրինակ՝ աման-ընանի, կանաչ-կընանչի, տախտակ-տըխտակի և այլն: Երկվանկ և բազմավանկ բառերի բառակզբի ե-ն

ա) դաշնում է է, օրինակ՝

ե>է

եկի-էկա

երինջ-էրինջ

երազ-էրազ

երկաթ-էրկաթ

երանի-էրնակ (ի>ո)

երկու-էրկու

երեկ-էրեգ

բ) Հնչունափոխվում է ը-ի կամ սղվում է

ե>ը                                  ե>օ

եղունգն-ըղունգ

երեկոյ-րիգու

երկիլ-ըրէվալ

երեխա-րեխա

Բառամիջում փակ վանկում ե-ն կրում է նաև հետևյալ փոփոխությունները՝

ա) ե>ը                                  բ) ե>ի                                  գ) ե>ու                                  դ) ե> օ

հետեւել-հըդէվալ                                  երեկոյ-րիգու                                  ուղեղ-ըղուղ                                  հայելի-հայլի

գերեզման-գըրեզման                                  լեզու-լիզու

դեպի-դըբա

խեժ-խիժ

ճեղքել-ճըղել

որտեղ-որդի

Ե-ն, ինչպես գրաբարում, այնպես էլ ուսումնասիրվող Արծիսի խոսվածքում բառաբաղրման ժամանակ կարող է հնչունափոխվել ի-ի՝ էշ-իշան, կէս-կիսու, մէջք-միչկի, դէգ-դիգան:

Ի ձայնավորը կրում է հետևյալ փոփոխությունները՝

ա) ի>ը    բ) ի>ու    գ) ի>օ

անիծել-անըծել                                  գերանի-գերանիու                                  թոնիր-թօրօն

գիշեր-քշեր

իննսուն-ըննսուն

մինչև-մընչէվը

Ի>օ հնչունափոխության նշված դեպքը եզակի է, այլ օրինակների չենք հանդիպում: Մեր կարծիքով այս օրինակում ի>օ հնչունափոխությունը հավանաբար կատարվել է ո-ն դրափոխության հետևանքով:

Ու ձայնավորը հիմնականում մնում է անփոփոխ: Ղ-ից առաջ ուղարկել բառի ու-ն ընկնում է՝ ուղարկել-դրգել: Մի քանի բառերում բառամիջի ու-ն դառնում է ը, օրինակ՝ անուն-անըն, բուսնել-բըսնիլ, դդում- դըդըն կամ՝ օ՝ մածուն- մածօն:

Երկու և ավելի ո ունեցող բազմավանկների ո-ն հնչունափոխվել է ը-ի, օրինակ՝ ուղրել-ըլորել, ողողել-ըղողել, ողրոնածիկ-ըղորմածիկ: Բառակզբի ո-ն դարձել է օ, օրինակ՝ ուկոր-օսկոր, ոռնալ-օռնալ, ոլոր-օլոր: Բառամիջի նախաշեշտ ո-ն հնչունափոխվում է ը-ի՝ բրրբսնել-բըրբսնել, սովորել-սըվորել, կոտորել-կըտորել, դողդողալ-դըդդողալ, հոտոտել-ֆըթօթալ, մորմորվել-մըրմորվել:

Գրաբարյան եւ ո հնչուններին Արծիսի խոսվածքում համապատասխանում են իշեւ ուօ երկբարբառները: Օրինակ՝

ա) ե>իէ    բ) ո>ուօ

բեռն-բիեռ

հող-ֆուօղ

դեղ-դիեղ

գորտ-գուօրտ

Արծիսի խոսվածքի պայթական բաղաձայնների համակարգը եռաստիճան անտեղաշարժ է՝

թ>թ բերան>բերան

զ>զ գառն>գառը

դ>դ դուռն>դուռը

Գրաբարյան **այ** երկրաբառը դառնում է է, օրինակ՝ այս-էս, այծ-էծ, լայն-լէն, ձայն-ձէն, կամ՝ ը՝ այստեղ-ըստի, այնտեղ-ընդի, այդքան-ըդքամ, այսքան-ըսքամ։ Երկրաբառները հիմնականում պարզեցվել են ինչպես ժամանակակից հայոց լեզվում։ Բազմավանկ բառերի վերջին այ-ը դառնում է ա՝ սատանայ-սրտանա, տղայտղա, գուլպայ-գուլբա։ **Աւ** երկրաբառը դառնում է օ, օրինակ՝ աւր-օր, ամաւրանօր, **իւ-ը՝ ի՝** ալիւր-ալիր, արիւն-արին, հարիւր-հարիր, **ոյ-ը** նույնպես ի, օրինակ՝ զրոյց-զրից, բոյլ-թիլ։ **Եայ** եռաբարբառը դառնում է ի՝ փայտեայ-փետի, բրդեայ-բրդի, երկարյա-երկարի, արծաթեայ- ըրծաթի։

Արծիսի խոսվածքում կան ժամանակակից հայերենի բոլոր բաղաձայն հնչյունները, ինչին գումարվում են նաև բաղաձայնների մի քանի տարրերակներ։ Այսպես օրինակ **զ**, **կ**, **ք** հնչյունները է և / ձայնավորներից առաջ քայնանալով՝ արտասանվում են **գյ**, **կյ**, **քյ**, օրինակ՝ գետին-գետին, կեղսոտ-կյեղսոտ, քիթ- քինթ, քեղիքերի, քենի-քյենի և այլն։ Գրաբարում **ֆ** հնչյունի բացակայության հետ կապված՝ փոխայալ բոլոր բառերում տվյալ հնչյունը փոխարինվում էր փ կամ ի տառով։ Այս երևույթը նկատվում է նաև Արծիսի խոսվածքում։ Գրեթե բոլոր փոխառություններում և հատկապես բարբառներում մեծ թիվ կազմող օտարաբանություններում **ֆ** հնչյունը արտասանվում է փ, օրինակ՝ կոնֆետ-կամփետ, շկաֆ-շկափ, կոֆե-կոփե, Ռաֆիկ-Ռափիկ, Փայտոն-փայտոն և այլն։ Չնայած այս փաստին՝ հարկավոր է նաև նշել, որ քննվող խոսվածքում չի բացակայում **ֆ** հնչյունը։

Չնայած նշվում է, որ բաղաձայնները Արծիսի խոսվածքում հիմնականում հնչյունափոխության չեն ենթարկվում, սակայն բավականին տարածված է միավանկ որոշ բառերի և դրանցով կազմված բարդ բառերի կամ բայերի բառասկզբի հի հնչյունափոխումը **ֆ-ի**, օրինակ՝ հոդ-ֆուօդ, հոն-ֆուօն, հորթ-ֆուօօթ, հոր-ֆուօր, հոտ-ֆուօտ, հոտել-ֆուօտել։ Դատկանշական է, որ բոլոր նշված օրինակներում առկա է նաև ո-ի հնչյունափոխությունը ուօ երկրաբառի։

Գրաբարյան **Զվերջնահնչյունը**, որ մեծ մասամբ ընկել է արևմտահայ և արևելահայ գրական լեզվում և բարբառների բացարձակ մեծամասնության մեջ, զարմանալիորեն պահպանվել է Արծիսի խոսվածքում, որոշ ձևափոխությամբ դառնալով թ, այսպես օրինակ՝ թեռն-թեռը, դուռն-դուռը, հարսն-հարսը, ծովկն-ծովկը, մուկն-մուկը և այլն։ Այս բառերի նմանությամբ որոշ բառեր ևս ստացել են այս ը վերջնահնչյունը, օրինակ՝ աչք-աչկը, խօսք-խոսկը, ճիւղ-ճուղը։

Արծիսում և հարկան մի շարք գյուղերում՝ Բերդավան, Կորի, Շնող, ձայնավորով սկսվող մի շարք բառերի սկզբում ավելանում է ի հագագը, ինչպես՝ աջ-ի՝ աջ, առաջ-ի առաջ, արդար-ի արդար, ափ-ի ափուր, ինանալ-ի ինանալ, իրեար-ի իրուր, իւր-ի իրա, երեկ-ի երեկ։ Զայնեղ հի է փոխվում նաև գրաբարյան բառասկզբի յ-ն, ինչպես՝ յիսուն-ի իցցուն, յիշատակ-ի իշատակ։

Դայ բարբառագիտության մեջ մեծ տարակարծությունների տեղիք է տալիս բարբառներում, տվյալ դեպքում՝ Լոռվա բարբառում շնչեղ-ձայնեղ առանձին բաղաձայն հնչյունների գոյությունը։ Դայ անվանի բարբառագետ Ա. Ղարիբյանի տեսակետով Արարատյան բարբառի հնչյունային հիմնական առանձնահատկությունը հենց շնչեղ-ձայնեղների գոյությունն է։ Այլ է պրոֆ. Յ. Աճառյանի տեսակետը, ըստ որի նման հնչյուններ գոյություն չունեն, իսկ եթե նույնիսկ կան որոշակի տարբերություններ, ապա դա պայմանավորված է սոսկ արտաքրության տարբերություններով։

Ընդունելով պրոֆ. Յ. Աճառյանի կարծիքը՝ նշենք, որ նման հնչյունների գոյությունն ապացուցված կարելի էր համարել միայն այն դեպքում, եթե տվյալ խոսվածքում լիներ բառերի որոշակի խումբ, որտեղ արտաքերական նշված տարրերությունները նաև իմաստային տարրերություններ առաջ բերեին: Այսինքն՝ այդ բառերը շնչել ձայնեղներով պիտի արտահայտեին մեկ, իսկ պարզ ձայնեղներով՝ այլ իմաստ: Արծիսի խոսվածքում նման դեպքերի չենք հանդիպում, ինչը մեզ հիմք է տալիս ասելու, որ քննվող խոսվածքը ժառանգել է գրաբարի բաղաձայնների եռաստիճան համակարգը: Անհերքելի է, որ Արծիսի և հարակից որոշ գյուղերի ու քաղաքների խոսվածքներում կան բաղաձայն որոշ հնչյուններ, որոնց արտաքերությունը փոքր-ինչ այլ է, քան գրական լեզվում, սակայն, քանի որ դա իմաստային ոչ մի տարրերության չի հանգեցնում, ապա կրավարարվենք միայն արտաքերական նանաստիպ տարրերությամբ մի քանի օրինակներ նշելով՝ բերան-բերան, գառ-գ'առը, դուռ-դ'ուռը և այլն:

Ընդհանրացնելով ասվածը՝ հանգում ենք հետևյալին.

- Յայ բարբառները գյուրթյուն են ունեցել մինչ գրական լեզվի կազմավորում:
- Գրաբարի համեմատ շեշտի դիրքը տարրեր է: Եթե գրաբարում շեշտը դրվում է վերջին վանկի ձայնավորի վրա, ապա Արծիսի խոսվածքում շեշտը նախադիր է, օրինակ՝ սովորել-լ-սըկո րել, կարդա լ-կա րդալ, բաժանե լ-բըժա նել:
- Նախաշեշտ ձայնավորների գյուրթյունը հանգեցնում է բոլոր ձայնավորների, այդ թվում նաև ա և ո ձայնավորների հնչյունափոխության, օրինակ՝ ազատել-ըզանտել, ոռնալ-օ՛ռնալ, առավուտ-ռավող և այլն: Գրաբարին, ինչպես նաև ժամանակակից հայերենին այս երևույթը հատուկ չէ:
- Բաղաձայնական համակարգը եռաստիճան անտեղաշարժ է, ինչպես գրաբարում:
- Ցայտուն առանձնահատկություններից է նաև հ հագագի հավելումը ձայնավորներով սկսվող մի շարք բառերում, օրինակ՝ աջ-հ'աջ, իմանալ-հ իմանալ, երեկ-հ'երեց:
- Արծիսի խոսվածքում պահպանվել են գրաբարյան ու լջորդությամբ որոշ բայեր, օրինակ՝ առնուլ, բողուլ, իսկ ի լջորդությամբ մի շարք բայեր պահպանվել են առավելապես Ալավերդի քաղաքում և Ալավերդու հարակից գյուղերում:

Ցատվածներ բերենք մեր գրականության հայտնի երկու գործերից՝ վերածած Արծիսի խոսվածքի:

**ԴԱՏՎԱԾ ՐՍՅԹՈՒ «ՍՍՍՎԵԼ» ՎԵՊԻՑ:** «Առավոտ էր: Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտներից մեկը: Արևի առաջին ճառագայթների ներքո՝ Մասիսի սպիտակափառ գագաթը փայլում էր վարդագույն շողբերով, որ աչք էին շլացնում: Արագածի պսակածն գագաթը չէր երևում: Նա դեռ պատաժ էր ձյունի պես ճերմակ մշուշով, որպես մի ամորիսած հարսիկ, որ սքողում է յուր դեմքը անթափանցիկ շղարշով: ... Գեղեցիկ էր այդ առավոտը»<sup>1</sup>:

«Ռավող էր: Արարատյան դաշտի պլայլան ռավողնուց մինը: Արևի առաջին շողբերի տակին Մասմասի սիպտակ գադուկը փայլեր աչք քոռացնող ռոզվի շողբերովը: Արագածի՝ պսակի դայդի գադուկը ըրևեր ոչ: Դա դեռ լա ծածկված էր ձնի դայդի սիպտակ մշուշով՝ հ'իրա էրեսը անթափանց քողովը փագող ընանչկոտ հարսիդայդի: ... Միրուն էր էդ ռավոտը»:

<sup>1</sup> Րաֆֆի, Սամվել, Երևան, 1984, էջ 394

**ՂԱՏՎԱԾ ՔՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԳԻՐՈՐԸ» ՊԱՏՄՎԱԾՔԻՑ:** «Գյուղացի Յամբոյի տունը կրիվ էր ընկել: Յամբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորիին տանի քաղաք, մի գործի տա, որ մարդ դառնա, աշխատանք անի: Կինը չէր համաձայնում: - Չեմ ուզում, իմ քորփա էրեխին էն անիրավ աշխարքը մի զցի, չեմ ուզում, - լալիս էր կինը:

Բայց Յամբոն չսեց»<sup>1</sup>:

«ԳԵՂԱՑԻ Յամբոյի տունը կրիվ էր ընգել: Յամբոն ուզեր հիրա տասներկու տարեկան Գիքորիին տանի քաղաք, մի գործի տա, որ մարդ դառնա, զշխատանք անե: Կնիկը համաձայնվեր ոչ:

- Ուզում չեմ, իմ քորփա րեխին էն անիրավ աշխարը մի գձել, ուզում չեմ,- լաց ըլեր կնիկը:

Բայց Յամբոն լսեց ոչ»:

## ОСОБЕННОСТИ ЗВУКОИЗМЕНЕНИЯ В АРЧИССКОМ ДИАЛЕКТЕ ТАВУШСКОЙ ОБЛАСТИ

Мариам Мартиросян

Каждый язык на протяжении своего развития подвергается различным изменениям. Из племенного языка или диалекта формируется современный развитый язык. Особый интерес представляет связь диалекта с языком более раннего периода развития, проявления особенностей языка данного этапа в каком-либо диалекте, несмотря на то, что эти признаки отсутствуют в современном языке. Сегодня в некоторых диалектах (в частности, в Арчисском диалекте) очень ярко проявляются многочисленные примеры звукоизменения, схожие с древнеармянским языком: застывшие формы слов, параллели в системе спряжения глаголов, в образовании множественного числа, а также в склонении существительных.

Цель данной статьи заключается в том, чтобы показать особенности звукоизменения в диалекте Арчисса в сравнении с древнеармянским языком.

## PECULIARITIES OF THE SOUND INTERCHANGE IN THE DIALECT OF ARCHIS

Mariam Martirosyan

At each stage of its development the language carries many changes: from tribal dialects it is becoming a developed and modern language. It is of a great interest especially in the sense of the connection between the earlier periods of dialect, as well as displays the characteristics of a dialect or idiom in the case when there are no such parallels in the structure of modern language. Nowadays in some dialects (in this case in the dialect of Archis) a number of examples of sound interchanges similar to the Old Armenian language are expressed in crusted word-forms, in verb conjugation systems, in a structures of nouns plural number of nouns and in declinational system structures.

The purpose of this article is to show the peculiarities of the sound interchange in the dialect of Archis.

<sup>1</sup> Թումանյան Յովի., Երկեր, Երևան, 1980, էջ 180:

**ՀԵԹԱՆՈՍԱԿԱՍ ԳՐԱԿԱՍ ՇԱՐԺՈՒՄ. ԿՐՈՍՆԵՐԻ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԹԵՇ ՆՈՐ  
ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Նարինե Նուշերվանյան  
**ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, մագիստրանտ**  
Գիտ. դեկ.՝ բ.գ.թ., դոց. Ս. Արավինյան  
Էլփոստ՝ nushervanyan@mail.ru

**Ազատությունը մարդուն և Գերությունն Աստծու...  
Դ. Վարուժան**

Իրականությունը բանտ է. մարդը ենթարկված է առօրյա կյանքի կապաճներին, մտքերն ու երևակայությունը բթացել են կյանքի տաղտուկում, որից ազատվելու համար ընդվզում է պետք: Այս «օրերուն աղյուն ու տգեղությունն էր», որ մարդու հոգու մեջ զգվանք էր արթնացնում ու տանում ետ, դեպի Յին դարերը, երբ դեռ մարդիկ չեին խաչել գեղեցկությունը<sup>1</sup>: Այսպիսով, երգը հնչում է ներկայից դեպի անցյալ, ու իին աստվածների այդ երգը աշխարհիկ կյանքի պայքարն է, վերագնահատումը այն լավագույնի, որ արմատներով գնում է դեպի հերոսական անցյալի պատմությունը: Յեթանոս թեմայով ժողովրդական, աշխարհիկ կյանքի ու պայքարի ազատ տարերըն և բերվում գրականություն: Ժխտելով կղերական վարդապետությունը և հակադրվելով ժամանակակից մարդու փոքրությանը՝ փառաբանվում էին լիարժեք կյանքը, առողջ ու գեղեցիկ մարմինը, հզոր և անկեղծ մարդուն, ազատ կամքը, Գեղեցիկն ու Ուժը: Նոր ժամանակները, որ համընկան նաև մարդու քրիստոնեացման հետ, բերեցին մարդկային հարաբերությունների նոր ձևեր՝ փոխելով նաև նրա էութեականությունը և մարդուն դարձրին կենսամերժ, գումատ, ցանատ, ցանաքեցրին, տգեղացրին մարմինը, հեռացրին բնությունից և բնականության առողջ, գեղեցիկ ձևերից: Յակառակ քրիստոնեական կեղծ բարեպաշտության բանաստեղծորեն քանդակվում է կոնց մերկ մարմնի գեղեցկությունը, մատնանշվում է ուժը բուլության փոխարեն, ցավի ու զղջան տեղ՝ հաճույքը և մահի դեմ կյանքը: Այսպիսով, ժամանակը պահանջում էր կյանքի ած ու բարգավաճում: Այստեղից էլ ահա ոչ միայն ներբողներ առ հին աստվածներ, այլ նաև կոնց պաշտամունք: Մի կողմից կինը իբրև հաճույքի, ուրախության և խրախճանքի աղբյուր, «իբրև գեղեցկություն՝ իր ներդաշն մարմնով, իբրև արվեստ, իբրև ծնունդ և պատճառ ամեն տեսակ հաճույքների, այն ժամանակ, երբ նա ծախու իր չէ, այլ նվիրվում է «իբրև պսակ սարդենի», երբ սերն ու գեղեցկությունը զորությամբ և «առաքինի քաջությամբ» է գնահատվում»<sup>2</sup>: Մյուս կողմից առկա է կոնց պաշտամունք իբրև կյանքի, հղացման միակ աղբյուր, իբրև մայրության խորհրդանշան:

Այսպիսով, հակվելով հեթանոս դարերին, փորձ է արվում դարերի գեղեցկությամբ իր ժամանակի փոտած մարմններին նոր ձև ու նոր կերպարանք տալ, համատարած ցավի ծանր ապրումներից հետո հաղորդակից լինել նաև հաճույքին, համատարած վայրագություններից, թշվառի ծանր վիճակից բարձրանալ Զորավոր, Գեղեցիկ, Վսեմ ու Մաքուր կայուն հայրենի հողի վրա:

Բանաստեղծական հեթանոսությունը որոշ աղերսներ ունի ֆրանսիական Պառնասյան շարժման հետ, որի պարագլուխն էր Լըքոնդ դը Լիլը: Խմբակի գրողները «կ'ախորժին աւելի ուշ շրջանի, մանաւանդ աղեքսանդրեան շրջանի բանաստեղ-

<sup>1</sup> Սարինյան Ս., Գրական նոր շարժման հարցերը «Մելիյան» և «Նավասարդ» հանդեսներում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1973, N 7, էջ 15:

<sup>2</sup> Տես [http://www.ktak.am/e107\\_plugins/forum/forum\\_viewtopic.php?1244.0](http://www.ktak.am/e107_plugins/forum/forum_viewtopic.php?1244.0):

ծութենեն՝ հովուերգութենեն: Դպրոցը ինքզինք կը հակադրէ քրիստոնէական վարդապետութեան, ասոր աւելի բարոյական և ընկերային եղուրուն»<sup>1</sup>:

Պատճառասականներից հետո դարավերջի ֆրանսիական գրականությունում ձևավորվում է մի նոր գրական շարժում՝ իրեն մարդկային իդեալ, գեղարվեստական ըմբռնում և զգայական աշխարհի փառաբանում: Գրականագիտությունն այն անվանեց «Նոր հեթանոսություն», որի տեսական դրսնորումը դարձավ իր տիտղոսով հատկանշական «Ակադեմոս» ամսագիրը: Այստեղ է, որ Ոռժե Շարպոնելը իր «Հեթանոսության վերադարձը» հոդվածում հեթանոսությունը սահմանում է իրուն բոլոր սարսուների գերեցիկ ու նկարչագեղ արտահայտություն, խտացված այլարանություն, ուր զարգանում է աստվածայինն ու բուռն բնապաշտությունը: Նոր հեթանոսականների միտումը միայն անցյալ ժամանակների վերարտադրությունը կամ տարաշխարհային կյանքի պատկերումը չէր, ինչպես Պատճառայների մոտ: Տեսաբան Փոլ Գաստիոն այս նոր շարժումը սահմանում է որպես լիովին, անկեղծորեն վերադարձ ներշնչման, լույսին, արկին՝ ոչ մի կապ չունենալով հովվերգության հետ: Տեսաբանները հիմնականում վկայակոչում են Նիշշեի փիլիսոփայությունը՝ բնազդ, կենսութ, զգացմունքների որոշ գերակայություն: Չարժման ներկայացուցիչներից հիշատակվում են Ժ. Սորենսասը, Ռ. Վիվիենը, Ա. Խալմոն, ինչպես նաև Է. Վերհանը: Այնուամենայնիվ ֆրանսիական գրականությունում չենք տեսնում Նոր հեթանոսությանը անվիճելիորեն և անմնացորդ հետևող բանաստեղծի, ինչպես Դ. Վարուժանն է:

Հեթանոսական երանգներ հայտնվում են ոչ միայն ֆրանսիական, այլև խտալական գրականությունում: Գարտուչի մոտ արդեն առկա է Յին Յունաստանի, Յօնի կարոտը, բայց այն ամբողջ զորությամբ արտահայտվում է մեծանուն Գ. Դը Անունցիոյի երկերում<sup>2</sup>, որտեղ առկա են կարոտ դեպի Յօնմեական Իտալիան և Յելլադայի հին փառքերը, որոնց հակադիր եզրը ժամանակակից Իտալիայի հզորացման ձգումն է՝ իր քաղաքական որոշ թեքունով: Պարզորոշ է, որ այս միտումը ուղղակի վերածվում էր զուտ անցյալապաշտության և ժամանակակից աշխարհի անվերադարձ հերքման:

Արևմտահայ իրականության մեջ միջազգային այս ընդարձակ հենքի վրա աճում, ընդլայնվում է բանաստեղծական հեթանոսական գրական շարժումը՝ գեղարվեստական ու իմացական շարժումների հունի մեջ կամ դրանց զուգահեռ: Այն արտացոլում էր հայ ժողովրդի պատմության հեթանոս ժամանակները, Ուժի, Գեղեցկության պաշտամունքի շեփորումը: Պարզորոշ է՝ շարժումը հագեցած է խորունկ արդիականությամբ, ավելին՝ իրականության արդյունք է: Ժողովրդի պատմության հեռավոր շրջանը արտացոլված է Դ. Վարուժանի, Լ. Շանթի, Ռ. Զարդարյանի, Սիամանթոյի, Անարոնի, Գասպարյանի, Յ. Սուլենյանի, Լ. Էսաճանյանի ստեղծագործություններում: Դ. Վարուժանի համար հեթանոսականը հերոսականն է, որը միակ զենքն է քաղաքական և սոցիալական թշվառություններին դիմագրավելու հանար. Եթե հային դարերի մեջ չըեթ հեթանոս ոգին: Իհարկե, միայն Դ. Վարուժանի օրինակով չենք կարող ասել, թե բոլորը հասկացան կրոնների համադրումն ու հակադրումը: Շատերը չկարողացան հաղթահարել հեթանոս թեմայի ծանրությունը: Գ. Եյնարյանի խմբագրած «Երկունք» ամսաթերթում (Կ. Պոլիս) Լևոն Էսաճանյանը տպագրում է երկու ծրագրային բանաստեղծություն՝ «Յին Երկունք» և «Նոր Երկունք»: Այստեղ գլխավորը անցյալի և ներկայի ընդգծված հակադրությունն է, որտեղ ներկան պարտադրաբար ստորադասվում է հնին, իսկ հեղինակը կաղում է գաղափարական կարգի իր փորձերում<sup>3</sup>: Յայրենի բնաշխարհի և մարդու ճակատագրով խորապես մտահոգ գրող Ռ. Զարդարյանի երկերում էապես շշշափել են նաև հերոսացման թեմաները: Թուրք բանակալության դեմ մաքառման թեման ականավոր գրագետի

<sup>1</sup> Պըտեան Գ., Կրակէ շրջանակը Դամիել Վարուժանի շուրջ, Անթիլիաս, 1988, էջ 44:

<sup>2</sup> Հատկապես «Մեռած քաղաք» բատերախաղում՝ տպված 1897 թ., իսկ ֆրանսերեն տարբերակը հրատարակվել է «Անդամանա հաղթանակ» խորագիրը կրող ժողովածուում:

<sup>3</sup> Դմտ. Դամիելսան Ա., Հեթանոսական գրական շարժման պատմությունից, Երևան, 1988, էջ 40:

գրչի տակ երբեմն ուղղակի հեթանոսական բառապաշարով ու պաթոսով լեցուն ձևավորում էր ստանում: Այդպիսին են «Աստվածները» բանաստեղծությունը, «Բագինին փառաբանությունը» արձակ քերթվածը, «Դայրենական սազը» երկը, «Ով որ Սուլթան մը ունի իր հոգիին մէջ» զորուցը: Սակայն Ռ. Զարդարյանի մոտ առհասարակ պակասում է հեթանոսականի գեղագիտությունը: Յեթանոսական տրամադրություններին կապվեցին նաև Սիամիը, Ռ. Որբերյանը, Ահարոնը, Յ. Տեր-Սահակյանը, Յ. Սուլրենյանը: Բանաստեղծ Վ. Թերեյանը նախօնտրեց տարեթրին միանալ ազգային վրեժի կողմով («Դրաշալի հարություն» շարքի «Վրեժի գինի»): Յեղինակը չի պատկերել հեթանոսական ժամանակները, սակայն արտահայտում է պայքարի, ուժի հեթանոս բովանդակություն, և պատահական չէ, որ քննադատ Յ. Օշականի հայացքներում Վ. Թերեյանը շեշտվում է ոչ այնքան «հեթանոսաշունչ», որքան նեռումանտիկ բանաստեղծ:

Յեթանոս հոսանքի սկզբնավորումը, իհարկէ անուղղակիորեն, կապվում է նաև Սիամանթոյի ստեղծագործության հատկապես այն շրջանի հետ, երբ նա ծանոթանում է փարիզյան միջավայրին: Յեղինակի գեղագիտական սկզբունքները ձևավորվում և զարգանում են Փարիզում՝ Ա. Չոպանյանի «Անահիտ» հանդեսում, հրատարակած (1897 թ.) «Փարիզյան նոթեր» երեք արձակ բանաստեղծություններում, ապա նաև բանաստեղծությունների առաջին գրքում «Դյուցազնորենում» և հետագա գործերում: Քերթողը առաջադրում էր ազգային ազատագրական պայքարի, խիզախության, ուժի և արիության ծրագիրը, բայց չէր մերժում նաև «ցավի երգը»: Չարի հանդեպ բուռն ատելությամբ և պայքարի վճռականությամբ են պայմանավորված Սիամանթոյի պոեզիայի «հեթանոս» ողին, «հեթանոս» գույների առասպելական խաղն ու փայլը: «Նա ստեղծեց ոչ միայն արյունաներկ հայրենիքի. այլև հեթանոս անցյալի ոգով տոգորված մբնուրոտ, ընդզման և կամքի, վրեժի և զորության, մաքանան և հույսի, երազանքների և երջանկության թեմատիկ մի կոմպլեքս, որ զարգացնում է օտարի լուծը թոթափելու և ազգային ազատագրության հասնելու գաղափարը»<sup>1</sup>: Արդեն իսկ նկատելի է հեթանոս հոսանքի գեղագիտական հիմունքների ձևավորումը Սիամանթոյի «Պաղատանքի խոսքեր բնության առջև» պոեմի «ծրագիր հատակագծում», իսկ Անահիտ աստվածուհուն ուղղված աղոթքը («Նավասարդյան աղոթք առ դիցուիհն Անահիտ») դառնում է ուժի, քաջության, առողջ մարմնի և հոգու ներքոյ: Ծոշափելով քրիստոնեության և հեթանոսության թեման Սիամանթոն չի դառնում իին թեմաների կրկնող. նա ներկայացնում է կենսական մի փիլխոփայություն, որ կապվում է մեր ժողովորի անցյալի, ներկայի և առավել՝ գալիքի հետ: Այս հավերժական փորձը ստիպում է ընկալել, որ քրիստոնեությունը մեծության և ուժի կրոն չէ, իսկ ժամանակը պահանջում էր հուգու վերելք, մարմնի և ուժի ծաղկում:

Լևոն Շանթի ստեղծագործությունը այս պրիզմայով քննելու փորձեր ևս եղել են՝ հեթանոսական գրական շարժման սահմաններում «Դին աստվածներ» դրաման տեղադրելով: Սակայն պետք է նշել, որ սա քննության չի դիմանում, մինչդեռ որոշ գրականագետներ, ինչպես Ս. Դանիելյանը, հակված են Շանթի դրաման համարել անգամ «հեթանոսավառ» և դնել Դ. Վարուժանի «Յեթանոս երգերի» կողքին: Շանթի դրամայում, սակայն, հեթանոսական ընդամենը պայմանականություն է գաղափարական հարցերի ստեղծման համար: Ինչպես իրավացիորեն նշում է գրականագետ Ս. Փանոսյանը, «Յեղինակի բնորոշած «Դին Աստվածները» խորհրդանշում են նախաստեղծ ազատությունն ու վայելքները, անկաշկան ու նախապաշարմունք կյանքը, և այդ առումով նրանք ներկայացնում են հականարտող, փոխբացառող երկու կողմերից մեկը: Կասկածից դուրս է, որ հավերժական ու համամարդկային խնդիրը, վերջինս բացահայտող հականարտությունը կարող էր գեղարվեստական այլ պայմանականությամբ ներկայացվել, և այդ դեպքում, բնականաբար, խոսք անգամ

<sup>1</sup> Ոշտումի Յ., Յեթանոս հոսանքը և Դ. Վարուժանի պոեզիան, [http://hpj.asj-oa.am/3682/1/1982-3\(73\).pdf](http://hpj.asj-oa.am/3682/1/1982-3(73).pdf):

լինել չէր կարող հեթանոսական գրական շարժման հետ աղերսների մասին»<sup>1</sup>: Շանթը մշակում է ժամանակային ընկալման փիլիսոփայական իր կերպը. դրամայում իրադրությունը ոչ թե ժամանակի, այլ հավերժության միավորն է: Այստեղ երկու ժամանակային դարաշրջանների՝ հեթանոսականի և քրիստոնեականի տևական դիտարկումն է՝ որոշակիորեն հակադրելով դրանք և պանծացնելով առաջինը, որը պայծառ, արևային գույներով ներկայացնում է կենսական վայելքի, ուժի, գեղեցկության աշխարհը. «Անշուշտ կյանքը ուրախության համար է տրված մեզի»: Տարբեր ժամանակներում իրար հակադրելու առումով դրաման մարդկային պարզ հոգու պատմությունն է՝ տարածված ժամանակի մեջ՝ խորհրդանշելով մտքի և սրտի, մտածման և գգացման հավերժական կրիվը:

Յիհավի, «Հեթանոսական» գրական շարժման կամ, ինչպես ինքն է կոչում, «բանաստեղծական հեթանոսության» ոգին ու առաջնորդն է Դանիել Վարուժանը: Նա XX դարի մարդն էր և ամենակին չէր երազում անցյալի, հեթանոսականի վերադարձ, այլ պահանջում էր լավագույն արժեքների վերարտադրում, որ թելադրվում է ժամանակի անհրաժեշտությամբ: Յիհն աստվածները դարնում են անցյալի կորցրած նյութական և հոգևոր հարստության խորհրդանշից: Բանաստեղծի «աղթքները» առ հեթանոս աստվածներ սկսվում են դեռևս «Ցեղին սիրտը» ժողովածուից («Առաջին մեջը», «Օրինյալ ես դու ի կանայս», «Աղոքք մը», «Նեմեսիս») և բնականորեն շարունակվում են «Դեթանոս երգեր» շարքում: Վահագնից հետո բանաստեղծը խոսք է հղում Ամահիտ դիցուիում հավատալով նրա հավիտյան կյանքին՝ «ոչ երկրիս վլա», այլ «Երկինքին մեջ»: Վարուժանը ծոներգում է նաև Կանատուրին՝ այգեգործության, պտղաբերության, հյուրնեկալության աստծուն: Վահագնը, Անահիտը, Կանատուրը, Աստղիկն ու մյուս աստվածները խորհրդանշում են լիարուն կյանքը՝ գեղեցկություն, Ուժ, Սեր, Նվիրում, Կյանքի ծիծաղ, հրճվանք, արքեցում: Այս լիարժեք կյանքի մարդու երազով էր բանաստեղծը հակադրվում թախծալի ներկային:

*Ես կ'երգեմ գինի - Բագիններուն ծիծաղը և խորաններուն արյունը:*

*Դարերու կյանքը կ'երգեմ, հանուն հածույքի և տառապանքի գեղեցկության:*

Դարեր, ուր լույսի և թափանցիկության աշխարհն է, որ հակադրվում է առօրյա խավարին, հզոր ու անկեղծ հերոսների աշխարհն է, ուր կան պայքարներ ու հաղթանակներ:

## ЯЗЫЧЕСКОЕ ЛИТЕРАТУРНОЕ ДВИЖЕНИЕ: СОПОСТАВЛЕНИЕ РЕЛИГИЙ, ИЛИ НОВАЯ ЭСТЕТИКА

Нарине Нушерванян

В западно-армянской действительности на расширенной международной основе появляется и набирает силу языческое поэтическое литературное движение. Оно отражает историю армянского народа во времена язычества, утверждая веру в Силу и Красоту. Ясно, что это движение было насыщено глубокой актуальностью. Древнейший период истории народа отражается в произведениях Варужана, Шанта, Зардаряна, Сиаманто, Аарона Гаспаряна, Суреняна, Эсаджаняна. Для Варужана языческое – это героическое, которое является единственным оружием в борьбе с гражданскими и социальными трудностями. Однако, основываясь лишь на поэзии Варужана, нельзя показать сходство и различие религий в творчестве других поэтов.

Варужан, являющийся предводителем языческого движения, или, как он говорил, «стихотворного язычества», представил мир света и прозрачности, который противопоставлен серым будням, мир мощных и честных героев, где есть и победы, и поражения.

<sup>1</sup> **Փանոսյան Ս., Առն Շանթ, Երևան, 1992, էջ 216:**

## **LITERARY PAGAN MOVEMENT: A CONTRADICTION OF RELIGIONS OR A**

### **NEW AESTHETICISM**

Narine Nushervanyan

In the Western Armenian reality within or along with the course of artistic and cognitive movements the heathen poetic literary movement is growing and expanding on the vast international basis. It reflected the pagan times of the history of Armenian people, the blowing of worship of Power and Beauty. It is obvious that the movement is full of deep modernity, moreover, it is a result of reality. The remote period of people's history is reflected in the works of D. Varouzhan, L. Shant, R. Zardaryan, Siamanto, A. Gasparyan, H. Sourenyan, L. Esatshanyan. The heathen, which is the only weapon to resist political and social miseries, is heroic for D. Varouzhan: if only the pagan soul didn't leave the Armenian... Of course, we cannot state that everybody understood the combination and contradiction of religions only through Varouzhan's example. Most of them could not overcome the burden of pagan theme. He was, indeed, the soul and the leader of "pagan" literary movement or "poetic paganism", as he calls himself, D. Varouzhan presented the world of light and transparency which contradicts the average obscurity, the world of powerful and sincere heroes full of struggles and victories.

## ԽՈՍՔԻ ՄՈԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԱԿԱՆ ԱՂՋԹԲՆԵՐԻ ՀԻՄՔ

Սարենիկ Կարապետյան

ԵՊԴ, Հայ բանասիրության ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ.՝ բ.գ.թ., ասիստ. Ռ. Դանքարձումյան

Էլփոստ՝ satenik1992@inbox.ru

Կեցության տարբեր երևույթների վրա ազդելու, դրանք իրենց հարմար հունով ուղղորդելու համար մարդկա օգտվել են կախարդանքի, հմայության ընձեռած հնարավորությունից: Դնայությունը միֆական մտածողության և նախնադարյան աշխարհներական արդյունք է: Ընդ որում, հմայական ցանկացած ծեսի, ակտի դեպքում կարենոր է հավատը վերերկրային որևէ ուժի հանդեպ: Դնայությունն ունի բազմատեսակ դրսևորումներ: Դրանց մեջ իր հիմնարար դերն ունի **խոսքի մոգությունը**: Խոսքը, ինչպես նկատում է ուսումնասիրող Ն. Մեշկովսկայան, հմայության կարևորագույն «գործիքն»<sup>1</sup>: Այն օժտված է մոգական անսահմանափակ ուժով: Խոսքի գորությունն օգտագործվում է պետական-քաղաքական նպատակներով, նրա միջոցով շարժվում են զորքեր, հաստատվում են օրենքներ, կնքվում են դաշնագրեր ու համաձայնագրեր: Խոսքի մոգական գործառությունը է պայմանավորված բանահյուսական հնագույն ժանրերից մեկի՝ հմայական աղոթքի գոյությունը:

Հմայական աղոթքը խոսքային բանաձև է, որն ունի գործառական որոշակի նպատակ և միտված է մարդկանց կամ շրջապատող աշխարհի վրա ազդելուն, իրերի ընթացքը փոխելուն:

Խոսքի ուժի մասին գաղափարը նույնքան հին է, որքան աշխարհի արարումը: Կարելի է նույնիսկ ասել, որ աշխարհը ստեղծվել է հենց խոսքի միջոցով. «Եւ Աստուած ասաց. «Թող լոյս լինի»: Եւ լոյս եղաւ» (Ծննդ. 1.3): Այդպիսով՝ անտեսանելին խոսքի միջոցով ստացավ իր գոյությունը:

Խոսքի՝ իրեն մոգական ուժի ընկալումը տարբեր ուսումնասիրողներ տարբեր կերպ են մեկնարանել, բայց մի կետում բոլորը համակարծիք են. Խոսքի գորությունը անսահման է: Այն ունի որոշակի եներգիա, ուժ, որի միջոցով ներգործում է արտաքին աշխարհի իրերի և երևույթների վրա:

Ունաճ կարծում են, որ հավատը խոսքի ուժի նկատմամբ գալիս է խոսքի ու գործի նույնացումից<sup>2</sup>: Մեկ ուրիշ դեպքում խոսքն ընկալվում է իրու այն նշանակող առարկայի մաս: Այսպես՝ ուսումնասիրող Ն. Մեշկովսկայան գտնում է, որ վերաբերմունքը խոսքին՝ իրեն մոգական ուժի, պայմանավորված է նշանի ոչ պայմանական, միանշանակ մեկնարանությամբ, այսինքն՝ խոսքը ոչ թե որոշակի առարկայի պայմանական նշանակությունն է, այլ նրա մասը: Օրինակ, ծիսական անվան արտաքրումը կարող է ապահովել այդ անունը կրողի ներկայությունը: Եվ սխալվել խոսքային ծեսի ժամանակ, նշանակում է վիրավորել, բարկացնել վերին ուժերին: Այսպիսի ընկալման հիմքը, ըստ ուսումնասիրողի, մարդկանց նախնական պատկերացումներն են: Հարցը տրամաբանության բացակայությունը չէ, պարզապես այդ տրամաբանությունը այլ է: Մրանում կարող ենք համոզվել երեխաների մտածելակերպի օրինակով (կոնֆետ բառը քաղցր է): Նույնացնելով նշանը և նշանակությունը, բառը և առարկան, առարկայի անունը և առարկայի եռթյունը՝ միֆական գիտակցությունը հակված է խոսքին վերագրելու այս կամ այն կախարդական, անիրական հատկա-

<sup>1</sup> Տե՛ս Մեչկովսկայ Ն., յանակ և րելիգիա, Մոսկվա, 1998, էջ 60:

<sup>2</sup> Այս առումով ուշագրավ է հայերեն բան հասկացության եղինաստ (միտք, խոսք, գործ) ընթանումը, ինչն էլ վկայում է այն մասին, որ տարբերություն չէր դրվում մտքի (համոզմունք, հավատալիք), խոսքի ու գործի միջև: Մանրամասն տե՛ս Հարությունյան Ա., Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Երևան, 2006, էջ 28:

նիշները, ինչպիսիք են կախարդանքի հնարավորությունը, իրաշալի, վերերկրային (աստվածային կամ հակառակը՝ սատանայական) ծագումը: Միֆական գիտակցության մեջ խոսքը ձեռք է բերում կուռքի, մասունքի կամ կրոնական այլ սրբության արժեք<sup>1</sup>:

Ն. Մեջկովսկայան մի հետաքրքիր դիտողություն է անում. «Կախարդական կամ սրբազն խոսքի նկատմամբ հավատը կապված է գլխուղեղի աջ կիսագնդի աշխատանքի հետ: Ի տարբերություն ձախ կիսագնդի գործառությունների, որոնք ապահովում են հնտելեկոտուալ-տրամարանական և վերացական ինֆորմացիայի ընդունումը և հաղորդումը՝ աջ կիսագնդը պատասխանատու է մարդու մտավոր կյանքի գօյայական-տեսողական և հոգական կողմերի համար: Անգիտակցական գործընթացները նույնպես բնորոշ են աջ կիսագնդի աշխատանքին»<sup>2</sup>:

Այսպիսով՝ Ն. Մեջկովսկայան հանգում է այն եզրակացության, որ նշանի ոչ պայմանական ընկալումն է այն իհմնական (էլեմենտար) հոգեբանական-սեմիոտիկ մեխանիզմը, որն առաջացնում է խոսքի նկատմամբ հավատավորական վերաբեր-մունքի հնարավորություն:

Նկատի ունենալով խոսքի գերբնական ուժը՝ մարդիկ տարբեր ժամանակնե-րում փորձել են դրա միջոցով որոշակի արդյունքների հասնել: Այսպես՝ խոսքով բու-ժելու մեթոդն է ընկած Զ. Ֆրոյդի հոգեվերլուծության հիմքում: Այս առումով նա մի ուշագրավ դիտողություն է անում. «Մեր հիվանդների անկիրք հարազատները, որոնց վստահություն է մերշնչում միայն ակնհայտը և շոշափելին, իսկ ավելի շատ՝ գործողությունները, երբեք պահը չեն կորցնում կասկածելու. «Ինչպես կարելի է բուժել հիվանդությունը միայն գրույցների միջոցով»: Դա, իհարկե, նույնքան ան-հե-ռատես է, որքան և անհետուողական. չէ՞ որ իենց այդ մարդիկ համոզված են, որ հի-վանդները միայն հորինում են իենց սիմպունները: Մի ժամանակ խոսքերը կա-խարդական էին, խոսքը իմաց էլ մեծ մասամբ պահպանել է իր նախկին կախարդա-կան ուժը: Խոսքերով նարդը կարող է երջանկացնել մեկին, ուղիշին գցել հուսահա-տության մեջ, խոսքերով ուսուցիչը փոխանցում է իր գիտելիքները աշակերտներին, խոսքերով հոետորը գրավիւմ է հանդիսատեսին և նպաստում նրա դատողություննե-րի որոշակիացնան: Խոսքերը առաջացնում են աֆեկտ և հանդիսանում են մեկը մյուսի վրա ազդելու համընդհանուր միջոց»<sup>3</sup>:

Խոսքին՝ իրեն մոգական ուժի, մեծ ուշադրություն են հատկացրել նաև բոլոր ժամանակների սուֆիստները՝ հստակ իմանալով, որ խոսքը կյանքի գաղտնիքի բա-նալին է: Բայց ի՞նչ է խոսքը: Ընդամենը այն, ինչ մենք արտասանո՞ւմ ենք: Ոչ, ըստ սուֆիստների՝ դա ընդամենը խոսքի մակերեսն է: Մեր ներաշխարհի արտահայտու-թյունն է խոսքը, մեր ձայնը, մեզ շրջապատող մթնոլորտն է խոսքը: Ըստ սուֆիստնե-րի՝ կյանքը արտահայտվում է իենց խոսքի միջոցով, որովհետև խոսքը շնչառության արտահայտությունն է<sup>4</sup>:

Այդ ունակությունը հարց է առաջանում. ի՞նչն է խոսքը դարձնում մոգական, որտե՞ղ է թարնված նրա ուժը. նշանակությա՞ն, արտաբերման ժամանակ առաջացած տա-տանումների<sup>5</sup>, թե՞ նրա գործածնան եղանակի մեջ: Յնդիկ փիլիսոփա, սուֆիստ Յազրատ Ինայատ Խանը գտնում է, որ որոշ խոսքեր օժտված են մոգական ուժով իենց նշանակության արդյունքում, ուրիշները՝ շնորհիկ այն տատանումների, որոնք առաջանում են արտաբերման ժամանակ, իսկ երրորդները՝ զանազան կենտրոնների

<sup>1</sup> Տե՛ս Մեչկովսկայ Հ., էջ 42:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 44:

<sup>3</sup> Փրեյդ Յ., Վեճումն ու պսիխոանալիզ. Լեկցիա, Մոսկվա, 1989, շ. 8.

<sup>4</sup> Յայտնի սուֆիստ Յազրատ Ինայատ Խանը դա բացատրում է հետևյալ կերպ. «Երբ մենք ուսումնասի-րում ենք մարդու շնչառությունը, առաջին բանը, որ նկատում ենք, այն է, որ շնչառությունը լւելի է, իսկ այն, ինչ մենք անվանում ենք խոսք, ընդամենը ավելի որոշակի արտաքինական շնչառությունն է մողու-լացված լեզվով և շուրթերով: Բերանի խոռոչում շունչը դաշնում է ձայն և հետևաբար խոսքի նախնական վիճակը շունչն է»: Տե՛ս Խազրատ Ինայատ Խան, Միտուսամ զանազան, Մոսկվա, 1997, թ. 1:

վրա ազդեցություն գործելու շնորհիվ<sup>1</sup>: Ընդ որում, ուսումնասիրողը գտնում է, որ մարդու կողմից արտաքրված և ընկալված յուրաքանչյուր խոսք ազդեցություն է ունենում ոչ միայն նրա մարմնի, այլև մտքի վրա. «Օրինակ, եթե մարդը անընդհատ իրեն հիմար անվանի կամ լսի, թե ինչպես են ուրիշները իրեն այդպես անվանում, ապա աստիճանաբար կդառնա հիմար, եթե անգամ ինձաստուն էր»<sup>2</sup>:

Խոսքն իրեն միտքը մաքրող և տիեզերական ներդաշնակության հետ կապ հաստատող միջոց է ընկալվում յոգայի մեջ: Այդ գործառույթը իրականացնում են մանտրամերը: Մանտրան սանսկրիտերեն բառ է, որ նշանակում է միտքը մաքրող (manta-միտք, tra-մաքրել): Մանտրամերը բարկացած են սանսկրիտ արմատներից (օրինակ՝ om, sat nam), որոնց արտաքրեման ժամանակ առաջացած տատանումների միջոցով կապ է հաստատվում տիեզերական ներդաշնակության հետ, ինչի շնորհիվ էլ մարդը հասնում է ներդընքնան: Ընդ որում կարևոր է ոչ միայն մանտրայի իմաստը, այլև նրա ճիշտ արտասանությունը:

Խոսքի մոգությունը բնորոշ է շեղել գրեթե բոլոր արխայիկ մշակույթներին: Նախ և առաջ իշխենք հին հնդկական վեդաները՝ մասնավորապես «Արհարվավեդան»: Գրականագետ Յ. Էդոյանը նկատում է. «Խոսքի և բարի նկատմամբ հին հնդիկների խոր հավատը, երբ խոսքը դառնում է «կեցության անալոգիա» և ձեռք բերում բացարձակ իշխանություն իրերի և ճակատագրի վրա, առանձնապես ուժեղ է արտահայտված «Արհարվավեդայում»: Դա կախարդական խոսքերի, մոգական բանաձևերի, հմայանքների հավաքածու է ուղղված կոնկրետ նպատակների»<sup>3</sup>: Փաստորեն «Արհարվավեդայի» հիմքը մոգությունն է, ավելի կոնկրետ՝ խոսքի գերբնական ուժը, որի միջոցով մարդը փորձում է շեղել իրերի ընթացքը հօգուտ իրեն, այսինքն, ինչպես նկատում է Յ. Էդոյանը, իռացիոնալ միջոցներով ցանկանում է հասնել ռացիոնալ նպատակների<sup>4</sup>: «Արհարվավեդայում» մարդը ցանկալի արյունքի հասնելու համար դիմում է աստվածներին, գերբնական ուժերին (Ագնի, Ինդրա, Սիրա-Վարունա, Երկինք և այլն): Յնայեթներն ունեն բազմազան նպատակներ: Օրինակ «Այրունահոսության դեմ» աղոթքը գործածվում է վերըերի արյունահոսությունը դադարեցնելու համար, «Խելագարության դեմ» հնայթն ուղղված է ընդդեմ դև-ռակչաների, որոնք մարդկանց ուղարկում էին խելագարություն, հանդիպում են զանազան աղետներից պաշտպանվելու համար կիրառվող աղոթքներ («Ընդդեմ տան հրդեհի», «Կործանման դեմ»), որոշ աղոթքների միջոցով էլ հմայողները փորձում էին իշխանություն ձեռք բերել կնոջ նկատմամբ («Կնոջ վրա իշխանություն ունենալու համար»):

Ուշագրավ է, որ որոշ ուսումնասիրողների կարծիքով «Արհարվավեդան» ժողովրդական ստեղծագործության արյունք է, ի տարբերություն «Ռիգվեդայի», որը գրված է արհեստավարժների կողմից<sup>5</sup>:

Խոսքի մոգությունը, խոսքի գերբնական ուժի նկատմամբ հավատը բնորոշ է նաև հին իրանական պյեզիային: Այս առումով ուշագրավ է հնագույն իրանական ժողովուրդների կրոնական պատկերացումներն ամփոփող «Ավեստայի» «Յասնա»-ներից մեկը՝ «Յասնա», 28 (Աղոթք խոսքի մասին), որտեղ Զրադաշտը ծգոտում է տիրանալ «մոգական խոսքին»: Վերջինս, ինչպես նշում է Յ. Էդոյանը, «պաշտպանում է մարդուն բոլոր տեսակի չար մտադրություններից, քանի որ խոսքը իր մեջ ընդգրկում է և Միտքը, և Գործը, և տիրանալ խոսքին՝ նշանակում է նաև տիրանալ Գործին»<sup>6</sup>:

<sup>1</sup> Стін Хазрат Инайят Хан:

<sup>2</sup> Стін նոյն տեղում:

<sup>3</sup> «Հին Արևելքի պյեզիա», խմբ.՝ Յ. Էդոյան, Երևան, 1982, էջ 566:

<sup>4</sup> Стін նոյն տեղում:

<sup>5</sup> Стін նոյն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 583:

Հմայանքներ (հիմնականում ընդդեմ դևերի, չար ոգիների, որոնց դեմ պետք է պայքարի Ակուրա-Մազդան), մոգական տեքստեր է պարունակում նաև «Ավեստայի» «Վենդիդատ» բաժինը<sup>1</sup>:

Հմայական խոսքերի, բանաձևերի հանդիպում ենք նաև Յին Եգիպտոսի պոե-գիայում: Ուշագրավ է հետևյալ սիրային հմայանքը:

Ողջույն քեզ, Ռա-Յորահերի, աստվածների հայր,  
ողջուն ձեզ, Յոթ Յարհորներ,  
ձեզ՝ կարմիր ժապավենով զարդարվածներին,  
ողջույն ձեզ, աստվածներ,  
երկնքի և երկրի տիրակալներ:  
Թող նրա աղջիկն ինձ հետևի,  
ինչպես կովը կերի հետևից,  
ծառան՝ երեխաների,  
թե դուք չստիպեք նրան ինձ հետևելու,  
ես կրակի կտամ տաճարը Բուրսիրիսի  
և կվառեմ այն<sup>2</sup>:

Հմայական աղոթքներով հարուստ է Միջագետքի գրականությունը: Տեքստերի մեծագույն մասը թվագրված է մ.թ.ա. 2-րդ հազարամյակ: Նշենք, որ հմայագրերի տեքստերը բավական ծավալուն են: Ուշագրավ է, որ երբեմն հմայողները ոչ միայն դիմում են գերբնական ուժերին, աստվածներին, այլև վկայակրչում են նրանց՝ խոսքը ավելի ազդեցիկ դարձնելու նպատակով: Օրինակ՝ «Օրորոցային փոքրիկ երգ Աշշուրից» խորագրով հմայանքի վերջին հատվածում հմայողը նշում է, որ հմայանքը իրենը չէ, ինքը միայն կրկնում է.

Ինը չէ հմայանքն այս,- հմայանքն եայի և Ասալլուհու,  
հմայանքը Դամուի և Գուլայի,  
Հմայանքը Սինակուկուտտումի, հմայանքի տիրուհու,  
Նրանք ասացին ինձ, իսկ ես կրկնում եմ<sup>3</sup>:

Այս հանգամանքի հետ կապված Յ. Էղոյանը նկատում է. «Մեծ հեղինակության հիշատակումը սրբագրություն է խոսքը և հավատ ներշնչում նրա հանդեպ, հետևաբար, այդ անունների հիշատակությունն ու սերունդների մեջ նրանց պահպանութը դառնում է անհրաժեշտ»<sup>4</sup>:

Այսպիսով, ինչպես տեսանք, խոսքի մոգական ուժի հանդեպ հավատը շատ խոր արմատներ ունի և դրսնորվել է ամենատարբեր պատմամշակութային ոլորտներում:

Խոսքն էներգիա է և ուժ, բայց սովորական բառերը սովորական հերթականությամբ չեն կարող ունենալ այն մոգական գործառությը, որը հատուկ է բանաձևային կառույցներին: Վերջիններիս դեպքում էլ չպետք է անտեսել մի կարևոր հանգանքները. խոսքային բանաձևը ներգործման ուժ կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ նրան հավատում են: Ընդ որում, ինչպես նկատում է Ն. Մեջկովսկայան, խոսքային բանաձևը կենդանի է այնքան ժամանակ, որքան նրան հավատում են, հակառակ դեպքում այն կվերածվի բանգարանային նմուշի, բանագետի նորատետրից մի էջ<sup>5</sup>:

<sup>1</sup> «Վենդիդատ»-«Ավեստայի» լեզվով՝ «Վի դեվո դատեն», այսինքն՝ «կոդեքս ընդդեմ դևերի», տես «Յին արևելքի պոեզիա», էջ 581:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 36:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 95:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 498:

<sup>5</sup> Տես Մեչկովսկա Ա., էջ 94:

Կարելի է առանձնացնել հմայական բանաձևերի չորս հիմնական տեսակներ՝

1. օրինանքներ,
2. անեքքներ,
3. երդումներ,
4. աղոքքներ:

Բանահյուսական այս հնագույն ժանրերի գոյությունը պայմանավորված է խոսքի մոգական ուժի նկատմամբ հավատով։ Յատկապես գիր չունեցող հասարակություններում խոսքի արժեքը մեծ է։ Դին հայերը հավատում էին, որ բառերի որոշակի կապակցությամբ հնարավլոր է կախարդել և հասնել արոյունքների։

Այսպիսով՝ հմայական աղոքքների գոյությունը պայմանավորված է խոսքի մոգական գորության նկատմամբ հավատով։ Խոսքն ունի որոշակի ենթագիւղ և ուժ, որով կարող է ներգործել արտաքին աշխարհի իրերի ու երևույթների վրա։

## МАГИЯ СЛОВА КАК ОСНОВА МАГИЧЕСКОЙ МОЛИТВЫ

Сатеник Карапетян

Для влияния на разные явления бытия, для направления их удобному себе пути люди пользовались возможностями магии.

Колдовство имеет многообразие проявлений. В них свое основное место имеет магия слова.

В нашей статье мы рассмотрели магию слова, как основу магической молитвы, как жанр древнего фольклера.

Изучив материал, пришли к выводу, что существование магической молитвы обусловлено верой в силу магического слова. Слово имеет определенную энергию и силу, которыми можно влиять на предметы и явления внешнего мира. Заметили, что магия слова типична была для всех архаических культур. Магические слова, формулы мы встречаем в древних индийских ведах, в поэзии древнего Ирана, Египта, Месопотамии.

Подробности исследования можете прочитать в статье.

## THE MAGIC OF SPEECH AS THE BASE OF SORCERY PRAYERS

Satenik Karapetyan

People have used the opportunity afforded by magic to affect on different phenomena of living, to direct them in desirable ways.

Magic has various manifestations. The magic of speech has its fundamental role in them.

In our article we have examined the magic of speech as the base of folk ancient genresorcery prayers.

Examining the material we have concluded that sorcery prayers exist due to the belief in power of the magic speech. Speech has some energy and power due to which it can influence on the subjects and phenomena of the outside world.

We have noticed that the magic of speech was typical to almost all ancient cultures.

The details of investigation can be found in the article.

## ՅԱՊԱՎՈՒՄԸ ՐԱՅԵՐԵՆՈՒՄ

Սարգիս Բալդարյան

ԵՊԴ, Պատմության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող

Գիտ. դեկ. բ.գ.թ., դոց. Ս. Գրիգորյան

Էլքուստ՝ s-baldaryan@mail.ru

Յապավումը պետք է տեղադրել լեզվական համեմատաբար նոր իրողությունների շարքում: Նրա՝ որպես «նոր որակի, հաստատուն տեղ ու դեր նվաճած երևույթի»<sup>1</sup> մուտքը գրական հայերեն կապում է 20-րդ դ. հետ: Միևնույն ժամանակ նրա ձևավորման վաղ փուլը պետք է վերագրել 19-րդ դ., երբ տառային հապավումները, ինչպես օրինակ՝ ՀՀԲ, ՆՀԲ, ՀԱ (հմատ: Դին հայկացյան բառարան, Նոր հայկացյան բառարան, Դանդես ամսօրյա), արդեն իսկ ծեռք էին բերել գործածության բավական ընդարձակ դաշտ: Բայց այդ շրջանում հապավումը ոչ թե լեզվական նոր երևույթ էր, այլ համառոտագրության նոր տեսակ: Յապավման «իսկական զարգացումը» սկսվում է խորհրդային կարգերի հաստատմանը<sup>2</sup>: Առաջ էին գալիս բազմաթիվ նոր երևույթներ՝ նոր, մեծ մասամբ՝ բաղադրյալ անվանումներով: Արդեն 1920-ական թթ. հայկական մամուլը լի էր խորհրդային իրողությունների անվանումների հապավված ձևերով<sup>3</sup>: Դաջորդ տասնամյակում հապավումը կանոնարկվում է լեզվաբանորեն. 1934 թ. միջնակարգ դպրոցի հայոց լեզվի քերականության նոր դասագրքի հեղինակ Ա. Ղարիբյանը «Նորագույն հապավումներ» ենթարածնում անդրադարձ է կատարուն հապավումներին ու դրանց տարրերակնանը: Յապավումների զարգացման ընթացքը կարելի է ենթարկել երկփուլային բաժանման:

- Յապավումը՝ համառոտագրության շարունակություն կամ նրա նոր տեսակ,
- Յապավումը՝ լեզվական նոր իրողություն:

Պատմության վաղ շրջաններում մագաղաթի, ապա նաև՝ թղթի պակասը հարուցում էր բառերի կրծատ գրության անհրաժեշտություն, որն էլ փաստորեն դառնում էր համառոտագրության հիմքը: Կիրառվել են բառերի համառոտ գրության տարրեր համակարգեր, որոնցից ամենատարածվածը հայտնի էր պատվագրություն անունով: Վերջինիս անվանումն ու կիրառումը կապվում էին պատվիկ կոչված նշանի հետ, որն ուներ գծիկի տեսք և դրվում էր հապավված բառի վերնամասում (ս՝թ=սուլը, ա՝ծ=աստված, և՛ն=ա այլն): Պատվագրությունը տարածվում էր առավել գործածական բառերի ու նաև վերջապորությունների (թ՝ն=ութիւն) վրա: Կիրառություն էին ստացել համառոտագրնան և 2 համակարգ՝ սյուն և երկվորյակ անուններով: Առաջինը փոխարինում էր բաց թողնվող ա ձայնավորին ու դրվում էր նրա փոխարեն: Սյունը նման էր այժմյան շեշտին (նվ=նավ, ժմնկ=ժամանակ): Երկվորյակը հիենից ներկայացնում էր 2 շեշտ՝ դրված կողք կողդի, ինչի հետ էլ կապվում է նրա երկրորդ՝ կրկնայուն անվանումը: Փոխարինում էր բաց թողնվող ձայնավորին (ի՞նրի՞թիւն=խոնարհություն): Ակնհայտ է համառոտ գրության այս համակարգերի համեմատաբար սահմանափակ հնարավորությունների առկայությունը: Դրանով ու նաև հապավման՝ որպես համառոտագրնան առավել զարգացած ձևի հանդես գալով էլ պայմանավորված է 19-րդ դ. երկրորդ կեսին տպագիր խոսքից, իսկ 20-րդ դ.՝ նաև ձեռագիր գրվածքներից նրանց դուրս մղվելը: Այդուհանդերձ, վերևում նշված համառոտագրածները պետք է դիտել որպես հապավման նախատիպեր: Այսպիսով՝ հապավումը ծնունդ է առել համառոտագրության հիմքի վրա ու անհրաժեշտաբար վերածել լեզվական նոր իրողության:

<sup>1</sup> Աղայան Եր., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 294:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> «Դայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում», Երևան, 1973, էջ 125:

Թեպետ հապավումներն ու համառոտագրությունները ծառայում են նույն նպատակին՝ բառերի կրծատ գրությանը, այնուհանդերձ հարկ է առանձնացնել նրանց բնորոշ 3 հիմնական տարրերություն:

• Համառոտագրությունների հետ մեկտեղ օգտագործվում են հատուկ կետեր, այսպես կոչված՝ կրծատման նշաններ<sup>1</sup>: Եթե համառոտագրվող բառը կազմված է 2 և ավելի բաղադրիչներից, ապա դիտվում է նաև դրանց անջատ գրություն: Մինչեւ հապավումների դեպքում անջատ և կետերով գրությունը բացառվում է: Սա կարևորագույն տարրերությունն է, որ հանգեցնում է հապավման բառաստեղծ գործառույթին, բանգի հապավված ձևերը լեզվի բառային մակարդակում դիտվում են որպես նոր բառեր, ինչը տեղի չունի համառոտագրության պարագայում:

• Համառոտագրվել կարող են ինչպես բառակապակցություններ, բաղադրյալ անուններ, այնպես էլ առանձին բառեր, այն դեպքում, երբ հապավվող բառը անպայմանորեն պիտի բաղկացած լինի առնվազն 2 բաղադրիչից:

• Համառոտագրվող բառերը արտասանվում են ամբողջական ձևով, կարծես «վերականգնվում են», այնինչ հապավման պարագայում տեղի ունի հապավված ձևերի անփոփոխ արտասանություն (լայնորեն տարածված է հատկապես տառային հապավումների այդպիսի արտասանությունը)<sup>2</sup>:

Ինչպես տեսանք, առաջին և կարևորագույն տարրերությունը հապավումը դարձնում է բառակազմության եղանակ: Երկու հիմնական տարրերություն էլ առկա է հապավման ու բառակազմական մյուս եղանակների միջև.

• Հապավման ձևակորումը ընթացել է գրավոր լեզվում, որտեղից, որպես լեզվական «պատրաստի երևույթ», փոխադրվել է նաև բանավոր խոսք: Բառակազմական մյուս միջոցների պարագայում տեղի ունի հակառակը:

• Հապավվող բառի բաղադրիչները ձևույթային միավորներ չեն (բացի վանկաբառային հապավման վերջին բաղադրիչից), բանգի դրանք, առանձին վերցրած, չեն արտահայտում որոշակի հստակ իմաստ: Բառակազմության մյուս եղանակներին սա բնորոշ չէ<sup>3</sup>:

Լեզվաբանության մեջ առկա են հապավման սահմանման մի շարք տարրերակներ: Դրանց անմիջական դիտումը պայմանավորված է հապավման միևնույն առանձնահատկության տարրեր ձևակերպումներով: Բոլոր դեպքերում էլ ընդգծվում է ելակետային կառույցի հոմանշային և կարճ ձեռ ստեղծելու հապավական գործառույթը: Տեսակային դասակարգումը նույնպես ունի բազմաթիվ տարրերակներ, որոնք միմյանցից զանազանվում են թե՝ առանձնացվող տեսակների քանակով և թե՝ նրանց ծագումնաբանության ընթացնամբ: Դասակարգման ոժվարությունը աղերսված է տարրերակնան մի բանի սկզբունքների առկայության հետ:

Հապավումը կազմվում է որպես ձև, վերջում ստանում իմաստ: Ուստի ձևի և իմաստի այդ համակցության երկատումն էլ պիտի դիտել որպես հապավական դասակարգման ամբողջական բնույթի բացահայտմանն ուղղված կարևոր քայլ: Հապավումների իմաստային կողմը պետք է ուսումնասիրել ժամանակատարածքային չափումով: Դիտարկելով ժամանակային հարթությունը երևան ենք բերում հապավումների 2 տեսակ՝ կենդանի-գործածական և պատմական<sup>4</sup>: Տարածքային-գործածական դաշտում ևս ուրվագծվում է 2 տեսակ՝ համագործածական և տերմինային-գրադարձունքային<sup>5</sup>: Հետաքրքրական, միաժամանակ նաև բարդ է դասակարգման որոշարկումը ձևային-կառուցվածքային բնույթի ներսում: Այսպես՝ այժմ առանձնաց-

<sup>1</sup> Աղյայան Էդ., էջ 300: Այդ կետերի գործածության բացառմամբ էլ կատարվեց անցումը համառոտագրությունից դեպի հապավում: Սրանով է պայմանավորված հապավման «համառոտագրությունից ծագելու և զարգանալու ամժամտելիությունը»:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 297:

<sup>3</sup> «Դայոց լեզվի զարգացումը...», էջ 125:

<sup>4</sup> Ավելի մանրամասն տես նույն տեղում, էջ 126:

<sup>5</sup> Ավելի մանրամասն տես Աղյայան Էդ., էջ 306:

վում է 3 հիմնական տեսակ՝ տառային, վանկային, խառը<sup>1</sup>: Հատկանշական է, որ վերոնշյալ տարբերակումը հիմնված է չուրզ 3 տասնամյակ առաջ առաջ քաշված քառատեսակ բաժանման վրա<sup>2</sup>, որի վանկաբառային և վանկատառային տեսակներն ել միավորվեցին եռատեսակ դասակարգման խառը տեսակի մեջ: Այսպիսի տարբերակումը կապված է հապավույթների տարբեր համակցությունների հետ: Հապավույթները բաշերի հապավված մասերն են, որոնցով կազմվում են հապավական բարդությունները: Առանձնացվում է նրանց 3 տեսակ՝ տառային, բառամասային կամ վանկային, հատվածական: Տառային հապավույթները կազմվում են հապավող բարի սկզբնատարերով, իսկ բառամասայինները՝ սկզբնամասերով: Հատվածական հապավույթներն ածանցավոր կամ բարդ ածանցավոր բաշերի, գոյականի սեռական հոլովածեկի այնպիսի հապավված մասերն են, որոնք նույնանում են իրեն մեկ բառ գործածվող բաղադրական հիմքի ուղիղ ձևի հետ (օրինակ՝ գյուղնախարարություն, անտառտնտեսություն)<sup>3</sup>:

Ժամանակին առանձնացվել են բառային և տառաբառային հապավումներ՝ որպես առանձին տեսակներ: Բառային հապավումների առանձնացումը վանկայինից բացատրվում էր «հապավումների տեխնիկայի զարգացմանը» և «մեծ թվով բառային հապավումների ստեղծմանը»: Այս տիպին էին վերագրվում այն հապավումները, որոնց առաջին բաղադրիչները կրծատվելուց հետո չեն կորցնում իրենց բառային տեսքը, բառային ինքնուրույն արժեքը, և նրանց հաջորդում է բառային ամբողջական բաղադրիչ (օրինակ՝ ծնողկոմիտե, սպորտիրապարակ)<sup>4</sup>: Իսկ տառաբառային հապավումները դիտվում էին տառային հապավումների բաղադրիչներից մեկի կամ մի քանիսի բացման հետևանք<sup>5</sup>:

Լեզվաբանության մեջ հիշատակվում են նաև գեղչումով և փոխառյալ հապավումները: Հապավումների բաղադրիչներից մեկի ամբողջական կամ գոնե մասնակի գեղչումը հարուցում է, ինչպես անվանել է Գ. Սևակը, գեղչումով հապավման կամ կրկնահապավման առաջացում (օրինակ՝ պրոֆաննամ=պրոֆեսիոնալների միության անդամ, գինկումատ=գինվրական կոմիսարիատ): Ժողովուրդների հասարակական-մշակութային կապերի ընդլայնումն ու ամրապնդումը պայմանավորում է բառային փոխանակումները, ըստ այդ էլ՝ փոխառյալ հապավումների հանդես գալը: Առանձնացվում է այսպիսի հապավումների 2 օրինակ՝ ռուսաց լեզվից փոխառյալ և օտարալեզու հապավումների<sup>6</sup>: Նախկինում օտարալեզու հապավումները կապել են ռուսերենի միջնորդության հետ<sup>7</sup>: Բայց միևնույն ժամանակ պետք է նկատել, որ փոխառյալ հապավումը «հայերենի համար ըստ էլելյան հապավում չէ», քանի որ դրա կազմությունն ընթացել է այլ լեզվում<sup>8</sup>: Նշվել է նաև, որ դրանք «հայերենում ընկալվում են որպես ինքնուրույն բառեր»<sup>9</sup>:

Լայն տարածում է գտել նաև հապավումների ընդհանրական բաժանումը 3 տեսակների՝ սիմվոլյային կամ խորհրդանշան-հապավումներ, բառային և բառակապակցական կամ բաղադրյալ<sup>10</sup>: Ինչպես, ասենք,  $H_2O$  քիմիական բանաձևն է խորհրդանշան ծառայում ջուր բարի համար, այնպես էլ տառային հապավույթներից կազմ-

<sup>1</sup> Եզեկյան Լ., Յայոց լեզու, Երևան, 2007, էջ 198: Եզեկյան Լ. և ուղիղներ, Յայոց լեզու, 10-րդ դասարանի դասագիրը, Երևան, 2009, էջ 100: Զաքարյան Յ., Ավետիսյան Յու., Յայոց լեզու, Բառագիտություն, Երևան, 2007, էջ 75:

<sup>2</sup> Ալյայան Էր., էջ 301-302:

<sup>3</sup> Ավելի մանրամասն տես նոյն տեղում:

<sup>4</sup> «Յայոց լեզվի զարգացումը...», էջ 136-137:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 139:

<sup>6</sup> Ալյայան Էր., էջ 307:

<sup>7</sup> Ս. Ա. Էլյանը առանձնացնում է ռուսերենից և ռուսերենի միջնորդությամբ փոխառված հապավումներ, տես՝ «Յայոց լեզվի զարգացումը...», էջ 141-142:

<sup>8</sup> Եզեկյան Լ. և ուղիղներ, էջ 101:

<sup>9</sup> Զահորեկյան Գ., ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989, էջ 227-228:

<sup>10</sup> Խաչատրյան Լ., Լեզվաբանության ներածություն, Երևան, 2008, էջ 160-161: Աղյամ Է., էջ 302-304:

ված հապավումները խորհրդանշաններով ներկայացնում են տարբեր բաղադրյալ անվանումներ: Յետաքրքրական այն է, որ նույն տառը կարող է հանդիս գալ տարբեր բառերի խորհրդանշանների դերում: Որպես 1 բառ գրվող և արտասանվող հապավումները կոչվում են բառային: Այս դեպքում հապավույթների բնույթը եւական չէ: Խորհրդանշան-հապավման կրկնակի գործածումը 1 բաղադրյալ անվան մեջ, նրա և բառային հապավումների կապակցումը, ինչպես նաև վերջիններիս գործածությունը չհապավված բառերի հետ կազմում են բառակապակցական կամ բաղադրյալ հապավումներ:

Այսպիսով՝ հապավումների դասակարգման գոյությունը ունեցող մի քանի համակարգերը կարելի է հանարել ճշգրիտ ու դրանց կիրառումը պայմանավորել նպատակահարմարությանը:

## АББРЕВИАТУРА В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Саркис Балдарян

В статье освещаются обстоятельства происхождения и развития аббревиатуры в армянском языке. Первоначально она являлась одной из разновидностей сокращений, но в начале XX века превратилась в новое языковое явление. История формирования и развития аббревиатуры представлена на фоне разных форм сокращений. В статье рассматриваются различия, существующие между аббревиатурами и другими словообразовательными единицами, а также различные классификации аббревиатур.

## ABBREVIATION IN ARMENIAN

Sargis Baldaryan

The circumstances of the origin and development of abbreviation in Armenian are illustrated in this article. Initially it was the continuation of shortening, but in the first half of the 20<sup>th</sup> century it became a new linguistic phenomenon. History of abbreviation is demonstrated on the background of different forms of shortening. Existing differences among them and other word-formative means are considered. Diversity of abbreviation classifications is mentioned considerably. An attempt of complete study of abbreviation in Armenian has been made.

# ՄԱՐՄԱՍԱՍԵՐԻ ԱՆՎԱԼՈՒՄՆԵՐԻՑ ԲԱՂԱՊՐՎԱԾ ԳՐԱԲԱՐՁԱՆ ԴԱՐՁՎԱԾՆԵՐԻ

## ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Վանուիհի Բաղմանյան

ԵՊՀ, Դասախրության ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ.՝ բ.գ.թ., դոց. Ն. Դիլքարյան

Էլքուստ՝ vanushhi.baghmalyan@mail.ru

Լեզվի գոյությունը հասարակության գոյության նախապայմաններից է, որ փոփոխվում է վերջինիս զարգացմանը զուգընթաց՝ համապատասխանաբար իր վրա կրելով այդ զարգացման որոշ առանձնահատկություններ: Այս պատճառով որևէ լեզվի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար պետք է այն ուսումնասիրել տարածմանակյա հայեցակետով: Դարձվածների՝ որպես բառապաշարի մաս կազմող ոճական հսկայական արժեք ունեցող միավորների տարածմանակյա քննությունը շատ խոստումնալից է, որովհետև դրանք ժողովրդական լեզվամտածողության արտահայտություններ են, և դրանց պատճական ուսումնասիրությունը մեծ հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու ժողովրդական լեզվամտածողության զարգացման ուղղությունների մասին: Որպես սկզբնաղբյուրմեր օգտագործել ենք 5-րդ դ. մեր պատմիչների՝ Ազգաբանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու, ինչպես նաև Վարքագիր Կորյունի և Ճարտասան-փիլիսոփա Եզնիկ Կողբացու երկերը: Մրանք մեսրոպյան հայերենի շրջանից (Ե դարից մինչև 460 թ.) վկայված 41 երկերի 4 դասերից (Եզնիկյան, Եփրեմյան, Կիւրեյյան, Ազգաբանգեղոյան)՝ երկուսը՝ Ազգաբանգեղոյան և Եզնիկյան լավագույն դրսնորումներից են, ուստի դարձվածների՝ որպես պատկերավորման անփոխարինելի արժեք ունեցող միջոցների ուսումնասիրությունն այս երկերում հույժ կարևոր և նպատակային է, քանի որ ինչպես Յ. Աճառյանն է նշում. «Եզնիկյանը բոլորից կանոնավորը, ճիշտը, հստակը, արվեստավորն ու գեղեցիկն է. Եփրեմյանը ամենից պարզն ու հասարակը. Կիւրեյյանը ներկայացնում է բարեխառն ոճ և բռնում է միջին տեղը. Ազգաբանգեղոյանը պերճ, բազմաբարդ, նրին ու հաճախ անկանոն»:<sup>1</sup> Մեր օգտագործած սկզբնաղբյուրներից Ազգաբանգեղոսը, Կորյունը, Բուզանդը Ազգաբանգեղոյան դասն են ներկայացնում, իսկ Եզնիկ Կողբացին՝ Եզնիկյան:

Մինչ դարձվածների քննությանն անցնելը՝ պարզաբանենք, թե ինչ ենք հասկանում դարձված ասելով: Երկու և ավելի բառերից կազմված կապակցությունը, որի բաղադրիչները հիմնականում հանդիս են գալիս վերահիմնաստավորված, կոչվում է դարձված: Նման կապակցությունները գրեթե միշտ պատկերավոր գաղափար են արտահայտում և համատեքստում հաճախ փոխաբերական իմաստով են գործածվում:

Հույժ կարևոր է և այն, որ կապակցությունը կարող է լինել պատկերավոր, բայց ոչ փոխաբերական, սակայն չի կարող լինել փոխաբերական՝ առանց պատկերավորության: Սա ևս ապացուցում է, որ ավելի ընդգծված է պատկերավորության դերը, քան փոխաբերության: Օրինակ՝ բրածե՛ լինել (Բուզ., 52), փախստական լինել (Խոր., 48) ևն: Բացի սրանց՝ կապակցությունը կարող է դարձված համարվել՝ չնայած ոչ պատկերավորություն է դրսնորում, ոչ փոխաբերական իմաստ: Օրինակ՝ այց առնել (Ազգար., 16), վնաս առնել (Ազգար., 154) ևն:

Անցնենք մարմնամասերի անվանումներից բաղադրված դարձվածների քննությանը՝ նշելով, որ այս երկերի դարձվածները իմաստային 11 խմբերում կարելի են

<sup>1</sup> Աճառյան Յ., Դայոց լեզվի պատմություն, հ. II, Երևան, 195, էջ 78:

դասակարգել, որոնցից քանակապես առաջինը մարմնամասերի անվանումներից բաղադրվածներն են:

### Ազաթանգեղոս

Ազաթանգեղոսի «Պատմութիւն Յայոց» երկը 5-րդ դ. հայ պատմագրության առաջին օրինակն է, որ ներկայացնում է 4-րդ դ. դեպքերը, հատկապես՝ 301 թ. քրիստոնեության մուտքը Յայաստան։ Ազաթանգեղոյան դասի տիպիկ օրինակ է, և պատահական չ այդ դասի՝ Ազաթանգեղոսի անունով կոչվելով։ Իր երկում պատմիչն օգտագործել է 268 դարձված, որոնց իմաստային վերլուծությունը ցույց է տալիս, որ գերակշռում են մարմնամասերի անվանումներից բաղադրված դարձվածները՝ 44 ( $\approx 16\%$ )։ Այսպես՝ ունկնդիր լինել (էջ 16)` 5 անգամ, կապել ընդ գարշապարս մեղաց (20)` 1, ի թիկուն հասանել (24)` 3, սրտաթափ լինել (34)` 1, ձերբակալ առնել (36)` 1, ակն ունել (42)` 6, յունկն մտանել (86)` 1, ուս դնել (86)` 1, բուռն հարկանել (106)` 3, խոնարիեցուցանել գունկն (114)` 1, ի ծունը իջանել (126)` 1, սրտի մտօք (138)` 3, ի լուր ականջաց (184)` 1, ճարպ գալ զակամք (320)` 1 ևն։ Ամենամեծ հաճախականությունն ունի ականատես լիմել դարձվածը, որ կիրառվել է 8 անգամ։

Անեն մի մարմնամասի անվանումից բաղադրված դարձվածներից քանակը յուրաքանչյուր երկում այժմ և հետայսու ներկայացնելու ենք այսուսակով։ Այսպես։

Զերն	10
Ակն	9
Ունկն	5
Թիկունք, ծունը, բերան	3
Ականջ, ոտն, սիրտ	2
Գարշապարս, ուս, բուռն, գյուխ, կրունկ	1

Ո. Ղազարյանի և Յ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան»-ում այս 44 դարձվածներից վկայված է ընդամենը 2-ը, ընդ որում՝ ձևափոխված՝ ձերբակալ առնել (36)-ը այստեղ ձերպակալ առնել ձևով է, իսկ ծունը դնել (112)-ը՝ ծունդը դնել։

Ա. Սոլքիսայանի և Ս. Գալստյանի «Յայերենի դարձվածաբանական բառարան»-ում վերը նշված դարձվածներից վկայված են 5-ը՝ ծունը դնել-ը, յականէ յանուանէ-ն և սրտի մտօք-ը՝ վերջին երկուսը, բնականաբար, ժամանակակից ուղղագրությամբ՝ հականե հանվանե, սրտի մտօք։ Իսկ ձգել զգեռս-ը և ի ծունը իջանել-ը վկայված են ժամանակակից ձեռքը ձգել և ծունը իջնել համապատասխան ձևերով։

### Փավստոս Բուզանդ

Փավստոս Բուզանդը պերճաբան է։ Իր Պատմությամբ նա արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Յայաստանի 4-րդ դ. իրադարձությունների մասին՝ երկն ավարտելով 387 թ. Յայաստանի առաջին բաժանումով։ Չպետք է մոռանալ, որ նա ևս Ազաթանգեղոյան դասին է պատկանում։ Պատմությունն ընդգրկում է աննախադեպ քանակությամբ, մեկը մյուսից գումենի 457 դարձված, որոնցից մարմնամասերի անվանումներից բաղադրվածների թիվը 56 ( $\approx 12\%$ ) է։ Դրանցից են՝ սրտաբեկ կացուցանել (38), որ գործածվել է 1անգամ, յանքի հարկանել (74)` 1, ձեռն յանձին հարկանել (208)` 1, ճակատս տալ (244)` 2, ձեռնթափ լինել (248)` 1, ակնկառոյց լինել (406)` 1 ևն։ Միևնույն դարձվածը Բուզանդը շատ է գործածում, ինչը նրա ոճի յուրահատկություններից է։ 8 անգամ գործածել է ծունը դնել, 9 անգամ՝ ի ձեռս տալ, 10 անգամ՝ յոտն կալ և ի ձեռս մատնել, 11 անգամ՝ ակն ունել դարձվածը։ Այսպես։

Զեռն	13
Ակն	8
Թիկունք	7
Ոտն	6
Սիրտ	4
Բերան, բուռն, ունկն	3
Ծունք, գլուխ, կրունկ, ճակատ, ծունկ, անութ, մէջ(թ), գուճս, մազ	1

ՄՐԲ-ում Փ. Բուզանդի գործածած այս 56 դարձվածներից վկայված է ընդամենը 5-ը՝ դարձյալ որոշակի փոփոխություններով: Այսպես՝ ծերակալ առնել (34) - ծերպակալ առնել, յոտն կալ (38)-յոտն ելնել, ծունը դնել (40)-ծունդր դնել, ի ծեռն գալ (206)-ի ծեռն ածել, ունկն դնել (358)-ունկն առնել (բանալ, մատուցանել):

Ի հավելումն նշենք, որ Բուզանդը դարձվածների կերտման մեջ վարպետ է. Երկն ընդգրկում է նորակազմ բազում դարձվածներ:

Վերոհիշյալ դարձվածներից Ա. Սուրբիայանի և Ս. Գալստյանի բառարանում վկայված է միայն ունկն դնել-ը:

### Եղիշե

Ժամանակագրորեն հաջորդ պատմիչը Եղիշեն է՝ իր «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» երկով, որի համար պատմական հիմք է ծառայել 5-րդ դ. հայ ժողովրդի մղած անձնուրաց պայքարը Սասանյան Պարսկաստանի դեմ և առանձնապես Ավարայրի ճակատամարտը: Երկն ընդգրկում է 214 դարձված, որոնցից մարմնամասերի անվանումներից բաղադրվածների թիվը 33 ( $\approx 15\%$ ) է: Դիցուք՝ տոնհար լինել (10), 3 անգամ, եղջեւ ածել (12), 1, ծունը կրկնել (90), 2, ի թիկունս ածել (126), 1, ծեռնամուխ լինել (212), 1, ականակապ լինել (346), 1 ևն: 8 անգամ Եղիշեն գործածում է ի ծեռն առնել, 10 անգամ՝ ծեռն արկանել, 12 անգամ՝ ի ծեռս տալ դարձվածը: Այսպես.

Զեռն	12
Ոտն	5
Ակն	4
Գլուխ, թիկունք	2
Եղջեւը, ծունը, ունկն, բերան, սիրտ, մազ, բուռն, մէջ(թ)	1

Այս 33 դարձվածներից ՄՐԲ-ում վկայվածների թիվը 3 է՝ կրկին ինչ-ինչ ձևակիոնությունների ենթարկված: Այսպես՝ ունկն դնել (90) - ունկն առնել (բանալ, մատուցանել), ի բերան առնուլ (114) -ի բերան առնել, ծերակալ առնել (132)-ծերպակալ առնել:

Ա. Սուրբիայանի և Ս. Գալստյանի բառարանում այս դարձվածներից ներառված են 4-ը՝ ունկն դնել-ը, որի մասին արդեն խոսել ենք, իսկ ի բերան առնել-ը, ի ծեռն առնել-ը և թիկունս դարձուցանել-ը վկայված են բերանն առնել, ծեռք առնել և թիկունք դարձնել ժամանակակից ձևերով:

### Մովսես Խորենացի

Պատմահայր Մովսես Խորենացին իր երկը շարադրել է եռանդուն և համաշափ՝ հզոր շունչ հաղորդելով իր պատմությանը բազմաթիվ թևավոր խոսքերի և դարձ-

վածների միջոցով: «Պատմութիւն հայոց»-ը ընդրգկում է հայ ժողովրդի ձևակուրումից մինչև Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մահն ընկած ժամանակահատվածը: Երկը ողողված է գեղեցիկ ու ինքնատիպ 233 դարձվածներով, որոնցից մարմնամասերի անվանումներից բաղադրվածների թիվը 31 ( $\approx 13\%$ ) է: Օրինակ՝ զբանագիր ածել (49), ուշ ի կուրծս անկանել (260), ի թիկունս ընկենուլ ուրուք (266), ընդ ակամք հայել (306), ոտնկորի լինել (314) ևն: Նշված դարձվածները երկում 1 անգամ են գործածվել: Միևնույն դարձվածի կիրառման ամենամեծ հաճախականությունը Մովսես Խորենացու երկում 6-ն է՝ **ձերբակալ առնել** և ի ձեռն տալ, 5 անգամ գործածել է **ձեռնատու լինել** և **ակն ունել** և 4 անգամ՝ ի բուռն առնուլ և բուռն հարկանել դարձվածները: Այսպես.

Ձեռն	11
Ակն	5
Բուռն, թիկունք	4
Ունկն, ոտն	2
ճակատ, կրունկ, կուրծք	1

Մարմնամասերի անվանումներից կազմված 31 դարձվածներից միայն 2-ն են վկայված ՄՀԲ-ում՝ **ձերբակալ առնել** (44) և **ունկն դնել** (348), իսկ Ա. Սութիասյանի և Ս. Գալստյանի բառարանում նշված դարձվածներից ոչ մեկը ընդգրկված չէ:

### Ղազար Փարպեցի

5-րդ դարի հայ պատմագրության վերջին ներկայացուցիչը Ղազար Փարպեցին է՝ իր «Պատմութիւն հայոց» երկով, որ սկսվում է 387 թ իրադարձություններից՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև Յայաստանի առաջին բաժանումից և ավարտվում Վահան Մամիկոնյանի՝ Պարսից արքունիքի կողմից Յայոց մարզան ճանաչվելու բախտորոշ հրադարձությամբ:

Երկի դարձվածների ընդհանուր քանակը 259 է, որոնցից մարմնամասերի անվանումներից են բաղադրված միայն 32 ( $\approx 12\%$ )-ը: Օրինակ՝ ձեռն ի գործ արկանել (12)՝ 6 անգամ, զսիրու հաստատել (70)՝ 1, ի գլուխ երթալ (134)՝ 1, զաչս յածել (264)՝ 1, զաչս ի վեր առնուլ (366)՝ 1, ակն արկանել (396)՝ 1 ևն: Փարպեցին ձեռն և գլուխ մարմնամասերի անվանումներն է հիմնականում օգտագործել դարձվածների կերտման գործում: Ամենաշատը՝ 7 անգամ, գործածում է **ձերբակալ առնել**-ը, 6 անգամ՝ **ձեռն ի գործ արկանել**-ը և **ի ձեռն տալ**-ը: Այսպես.

Ձեռն	10
Գլուխ	5
Ակն, ոտն	4
Աչք	3
Ունկն	2
Սիրտ, ունչ, կրունկ, բուռն	1

ՄՀԲ-ում այս դարձվածներից վկայված են միայն 3-ը, ընդ որում միայն **ի գլուխ ելանել** (58)-ն է նույնությամբ վկայվել, իսկ **ձերբակալ առնել** (170)-ը և **ունկն դնել** (200)-ը փոփոխվել են: Ինչ վերաբերում է Ա. Սութիասյանի և Ս. Գալստյանի բառարանին, ապա այստեղ վերոնշյալ դարձվածներից ոչ մեկը վկայված չէ:

## Կորյուն

5-րդ դ. մեզանում նշանավորվում է ոչ միայն պատմագրության, այլև վարքագրության ժամանակակից մերկայացուցիչը Կորյունն է՝ իր «Վարք Մաշտոցի» երկով: Համաձայն ժամանակակից ուսումնասիրողների՝ երկը գրվել է մոտավորապես 443-450 թթ. ընթացքում: Այն իր փոքր ծավալում ընդգրկում է դարձվածային ծանրակշիռ միավորներ, որոնց թիվը 76 է, և որոնցից մարմնանաւորի անվանումներից են կազմված 10 ( $\approx 13\%$ ) դարձվածներ: Դրանցից են՝ թեւանուխ լինել (84)<sup>1</sup>, ի ծեռն առնուլ (110)<sup>2</sup>, ի թիկունս իջանել (130)<sup>3</sup>, ականատես լինել (144)<sup>4</sup> և այլն: Կորյունը միայն ծեռն արկանել և ի ծեռն տալ դարձվածներն է 2 անգամ կիրառում, իսկ մյուսները՝ մեկական անգամ:

Չեռն	4
Ակն	3
Թիկունք	2
Թեւ	1

ՄՀԲ-ում այս դարձվածներից ոչ մեկը վկայված չէ, իսկ ժամանակակից դարձվածների բառարանում ընդհամենը մեկն է վկայված՝ ի ծեռն առնուլ-ը՝ ծեռքն առնել համարժեքով:

## Եզնիկ Կողբացի

5-րդ դարի հայ մատենագրության մեջ ուրույն տեղ է գրադեցնում Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ը: Քրիստոնեական կրոնի գաղափարաբանական տեսանկյունից հերքվում են հեթանոսական բազմաստվածության հավատալիքները, պարսից գրադաշտական կրոնը ևն: Դարձվածների թիվը այստեղ բավականին մեծ է՝ 175, որոնցից մարմնամասերի անվանումներից բաղադրվածները 15 ( $\approx 9\%$ )-ն են: Օրինակ՝ չունկնդիր լինել (14)<sup>1</sup>, սրտառուչ առնել (39)<sup>2</sup>, ընդ բերան ածել (57)<sup>3</sup>, աչս ունել (71)<sup>4</sup>, գլխապարտ գտանել (84)<sup>5</sup>, ի սիրտ անկանել (88)<sup>6</sup> և այլն: Միևնույն դարձվածը Կողբացին ամենաշատը օգտագործել է 3 անգամ: Դա ի ծեռս տալ դարձվածն է, իսկ 2 անգամ կիրառել է ի ծեռս մատնել-ը և սրտառուչ առնել-ը: Այսպէս՝

Չեռն	5
Սիրտ, ակն	2
Ունկն, ոտն, աչք, բուռն, բերան, գլուխ	1

ՄՀԲ-ում և Ա. Սուլքիասյնանի ու Ս. Գալստյանի բառարանում այս դարձվածներից միայն ի ծեռն առնուլ (43)-ն է վկայված՝ միջին հայերենում ի ծեռն ածել, իսկ մյուսում՝ բազմից հիշատակված ծեռքն առնել ձևով:

Մարմնամասերի անվանումներից կազմված դարձվածների տոկոսային հարաբերությունը ցույց է տալիս, որ, չնայած իր փոքր ծավալին, Կորյունի «Վարք»-ն ընդգրկում է 76 դարձված՝ մարմնամասերի անվանումներից բաղադրվածների 13%, որը բավականին ակնառու առավելություն է մնացյալ երկերի նկատմամբ. այնտեղ դարձվածները թեև շատ ավելի մեծաքանակ են Կորյունի երկի դարձվածների համեմատ (չպետք է մոռանալ, սակայն, երկերի ծավալային տարրերությունը), բայց մարմնամասերի անվանումներից բաղադրվածները խիստ սահմանափակ են՝ իհարկե տվյալ երկի դարձվածների ընդհանուր քանակի համեմատությամբ, մինչեւ ինաստային մյուս խմբերի նկատմամբ դրանք քանակական ակնբախ առավելություն ունեն: Ինչ վերաբերում է Ագաթանգեղոսի, Եղիշեի, Մովսես Խորենացու և Ղա-

զար Փարպեցու գործածած դարձվածներին, ապա դրանք քանակական լուրջ տարբերություններ չունեն ոչ միայն ընդհանուր դարձվածների, այլև մարմնամասերի անվանումներից բաղադրվածների տոկոսային հարաբերության առումով։ Առանձնանում են Փավստոս Բուզանդի և Եզնիկ Կողբացու Երկերի դարձվածները, որոնք, ընդհանուր առմամբ բավականին շատ լինելով, մարմնամասերի անվանումներից բաղադրված դարձվածների խիստ փոքր քանակ են պարունակում։ Այսպես՝ Փավստոս Բուզանդի 457 դարձվածների միայն 12%-ն է մարմնամասերի անվանումներից կազմված, իսկ Եզնիկի 175 դարձվածներից միայն 9%-ը։

Այս իրողությունը, անտարակույս, ոչ որպես թերություն կամ Կորյունի դեաքում ոչ որպես արավելություն ենք նշում, որովհետև Երկի բովանդակությունն է թելադրում որոշակի բառապաշար և ոճ։ Մարմնամասերի անվանումներից բաղադրված դարձվածների ըննությունը ցույց տվեց, որ դրանց մեջ ձեռն բառով կազմվածները ամենամեծաթիվն են բոլոր Երկերում, այդ առումով հաջորդը ակն բառն է, ապա՝ թիկունք և ոտն բառերը, իետ այսու՝ սիրտ, բերան, ունկն, բուռն և գլուխ բառերը, իսկ մնացյալ անունները՝ գարշապար, ուս, մէջք, անութ, մազ, կուրծք, թեւ, ականջ, եղծել, ծունք, ունչ, կրունկ, ճակատ, ծունկ, աչք, գուճ, մեկական դարձվածներ են կազմել ամեն մի Երկում՝ բացառությամբ ականջ բառի, որ միայն Ագաթանգեղոսն է գործածում 2 անգամ։

Մեր ուսումնասիրած բոլոր Երկերում ամենահաճախ գործածվող դարձվածն է, այսպիսով, **ի ձեռն-ը, մասնավորապես՝ ի ձեռս տալ –ը**։

Այսպիսով, 5-րդ դ. հայ մատենագրության դարձվածները, ըստ Վիճակագրական տվյալների, ունեն հետևյալ պատկերը՝

Հեղինակ, Երկ	Դարձվածների ընդհանուր թիվը	Մարմնամասերի անվանումներից բաղադրված դարձվածներ
Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց	268	44 (≈16%)
Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց	457	56 (≈12%)
Եղիշե, Վասն Վարդանայ և հայոց պատերազմին	214	33 (≈15%)
Սովես Խորենացի, Պատմութիւն Հայոց	233	31 (≈13%)
Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց	259	32 (≈12%)
Կորյուն, Վարք Մաշտոցի	76	10 (≈13%)
Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց	175	15 (≈9%)

**ИСТОРИЧЕСКОЕ РАЗВИТИЕ ФРАЗЕОЛОГИЗМОВ ГРАБАРА, СОСТОЯЩИХ  
ИЗ НАЗВАНИЙ ЧАСТЕЙ ТЕЛА**  
Вануи Багманян

Цель данной работы заключается в историческом исследовании фразеологизмов древнеармянского языка, состоящих из названий частей тела, на основе материала классической библиографии V века. Исследование показало, что фразеологизмы в этих произведениях можно разделить на лексико-семантические группы, состоящие, в основном, из названий частей тела. Историческое исследование этих фразеологизмов показывает, что они характерны лишь для V века, поскольку, несмотря на некоторые исключения, они не отмечены в среднеармянских и современных армянских словарях.

**THE HISTORICAL DEVELOPMENT OF GRABAR IDIOMS CONSISTING THE  
NAMES OF BODY PARTS**  
Vanuhi Baghmanyan

The aim of this work is the historical research of Grabar idioms, originated from the names of body parts, based on the best manifestations of the Armenian literature of the 5<sup>th</sup> century.

The research has shown that it is possible to present the idioms with different semantic groups, most of which consist of the names of body parts. The investigation of the same idioms had also shown that they are very characteristic only to the 5<sup>th</sup> century, as they are not mentioned in Middle and Modern Armenian phraseological dictionaries despite a very unique exception.

**ԹՈՒԱԿԱՍ ՄԱՐԴՈՒ ԿԵՐՊԱՐԾ ՆԱՐԴՈՒԻ «ԱՍՍԱ ՍԱՐՈՅԱՆ» ՎԻՊԱԿՈՒՄ**  
Քրիստինե Սաֆարյան  
**ԵՊՀ, Դայ բանասիրության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող**  
Գիտ. դեկ.՝ բ.գ.դ., պրոֆ. Ծ. Սաֆարյան  
Էլփոստ՝ qristin.safaryan@mail.ru

«Ամեն մի գրողի ստեղծագործություն այսպես, թե այնպես, նրա կենսագրության այլակեցված արտահայտությունն է. Գրողի կենսագրական որևէ թեկուր աննշան փաստ, նրա խառնվածքի և բնավորության թվացյալ մանրությ ևս կարող է բացվել - բացահայտվել, «ցրվել» տարբեր կերպարների մեջ, ներառել «դրսի աշխարհի և մարդկանց յուրովի զննումները և գեղարվեստական մտածողության ինքնասիրությամբ ներկայանալ որպես ինքնահաստատող մի կառույց»<sup>1</sup>:

Այդպիսին է նաև Նար-Դոսի (Միքայել Տեր-Ճովհաննիսյան) ստեղծագործությունը:

Նար-Դոսը դեռ մանկուց իր ընտանիքում «միայնակ» է եղել, շատ ավելի լաել, քան խոսել է, եղել է ինքնամփոփ և լրակյաց, հետևաբար նրա կենսագրությունը խոսում իիմք է իր ստեղծագործությունների համար, որոնց մնայուն արժեքը պայմանավորված է «Ավելորդ մարդկանց» (ինչպիսին օգում էր ինքն իրեն) հոգեբանական տիպերի գեղարվեստական ամփոփ կերտվածքով:

Նար-Դոսի համար ստեղծագործելու նյութը են հանդիսացել երկու աշխարհներ՝ արհեստավորական կյանքը և միջնամ մտավորական խավը, ու նրանց մեջ հեղինակը տարբերակել է մեկ այլ աշխարհ, ու մարդիկ դուրս են մնացել կյանքից՝ դառնալով ավելորդ:

Այս աշխարհի մարդկանց բնորոշ է հեռանկարի կորուստը:

Մտավորականության մասին իր ստեղծագործություններում հեղինակը ստեղծում է այս խավի ամբողջական նկարագիրը՝ գեղարվեստական ընդհանրացման հասցենով ավելորդ մարդու հոգեբանական տեսակը, կերպարն իր երկու դրսեռումներով՝ առաջին՝ թուլակամ մարդն է, ով պետք չի գալիս ոչ իրեն, ոչ կյանքին, կամ այլ կերպ ասած, առաջին տեսակը կորցնում է իր ինքնությունը հանրության մեջ և հեռանում ինքն իրենից, երկրորդը՝ ազատագրվում է հանրության կարծիքից և ազատում ինքն իրեն:

Թուլակամ մարդկանց բնորոշ են թագավորության որոշակի գծեր, որոնցով նրանք նմանվում են միմյանց: Մասնավորապես՝

ա. նրանք շուտ տպավորվող են,

բ. ամեն մանրությամբ հակված են ընկալել իիվանդագին սրվածությամբ,

գ. նրանք երազող են և, որպես կանոն, իրենք իրենց պատկերացնում են ուժեղ և գործունյա,

դ. վախկոտ և չնախաձեռնող են,

ե. մարդկանց շրջապատում անօգնական, անպաշտապան լինելով, կարծես ամենակարող և բրնձակալ են տանը:

Վերջապես թուլակամ մարդկանց ամենաբնորոշ հատկանիշն այն է, որ նրանք խիստ և դաժան են իրենք իրենց նկատմամբ:

Նար-Դոսի ստեղծագործությունում թուլակամ մարդու առաջին կերպարներից մեկը Աճան Սարոյանն է՝ համանուն վիպակում:

«Աճան Սարոյան» վիպակը Նար-Դոսի ինքնահաստատման ճանապարհի իիմանավոր վկայագրերից մեկն է, որտեղ վերջնականորեն հստակեցվում են նրա ստեղ-

<sup>1</sup> Սաֆարյան Վ., Գրողի և կերպարի անհատականություն, Երևան, 2001, էջ 172:

ծագործական խառնվածքի սահմանները, և դրան մեջ չափով նպաստում է գրողի նախընտրած հնարանքը՝ նամակագրության ձևը:

Աննան որպես թուլակամ և չնախաձեռնող մարդ ներկայանում է ընթերցողին սկսած առաջին նամակներից. «Ուզում եմ աղոթել և անիծել, ուզում եմ ապրել և մեռնել»<sup>1</sup>:

Աննան ունենոր ընտանիքի աղջկի էր, որը մանկուց սովոր էր ունենալ սրտի ցանկացածը, մշտապես շրջապատված լինել իրեն հաճելի անձանցով:

Կարծես ամեն ինչ հիմա էլ նույնն էր, բայց ինչ-որ անհասկանալի բան նրան չէր թողնում ապրել սովորական կյանքով, հիմա նա անճանաչելիորեն փոխվել էր, սկսել էր խուսափել մարդկանցից, պարահանդեսներ և զվարճանքի վայրեր այլևս չէր գնում, ամեն ինչից շուտ ձանձրանում էր, անգամ իրեն «թշվառ» էր գգում, միայնության մեջ մտածում էր, բայց թե ինչ, ինքն էլ չգիտեր: Եվ այսպես աստիճանաբար պարզվում են Աննայի կերպարի հոգեբանական շերտերը:

Երեմնի չարածի և ժպտերես աղջիկն այժմ ինքնամփոփ ու լռակյաց էր, ինչը զարմանալի էր թե՛ իր, թե՛ ընտանիքի անդամների համար:

Բայց Աննան նամակների հասցեատիրոջը՝ Յոհվիմեթին, գրում է, որ իր պահվածի պատճառ է համարում «պարապությունը», «անգործ լինելը», «մենակությունը»:

«Աննայի հոգեբանական դրամայի հիմքն այն է, որ նա կարող է տեսնել, քննել, եզրակացություններ ամեն, բայց երեք չնախաձեռնել, քանի որ նրա միջից հանվել է գործելու կարողությունը»<sup>2</sup>:

Յաջորդ նամակներում Աննայի կերպարը ներկայանում է այլ կողմից՝ երևալով որպես սիրող և հոգատար քոյլը և դուստր, մասնավորապես, երբ պատճում է ընկերություն եղբոր՝ Գրիգորի հիվանդության և այդ պատճառով իր վախերի մասին, նաև հոր մասին, ով զվարճասեր և կատակասեր մարդ էր, բայց վերջին ժամանակներում լուրջ և մտագբառ էր դարձել, ինչը ևս անհանգստացնում էր Աննային:

Շուտով Աննայի տարօրինակ և անհասկանալի պահկածին կարծես լրացնելու են գալիս կյանքի փոփոխվող պայմանները:

«Դժբախտությունը, և այն էլ ինչպիսի դժբախտություն, առաջին անգամ բաց արավ մեր տան դուռն ու ներս մտավ՝ այնտեղից այլևս չհեռանալու համար»<sup>3</sup>, - գրում է Աննան:

Նրանք զրկվում են ամբողջ կարողությունից, հայրն աջ ծեռքից անդամալույթ է դառնում և խելագարվում, իսկ պատճառն Աննան նշում է հոր թղթախաղային պարտքերի կուտակումն ու մտատանջությունները:

Այստեղ դրսնորվում են դուստր-Աննայի հոգեբանական առանձնահատկությունները: Թեև ամեն բան փաստ է, բայց նա հրաժարվում է հավատալ և ընդունել, որ իր հայրը՝ ազնիվ, պատվասեր ու հեռատես մի մարդ, կարող էր այդպես սխալվել և ընտանիքին այդպիսի կացության մեջ դնել՝ «... Ես համարձակ, առանց կողմնապահության պետք է ասեմ, որ նրա պես ընտանիքը պաշտող և նրա պատվի համար գլուխը ետ դրած մարդ ճրագով պիտի որոնել ...»<sup>4</sup> - գրում էր Աննան և ավելացնում, որ չի մտածում, կամ ափսոսում կարողության համար, այլ տանջվում է հոր համար. «Ես և մեր բոլոր ընտանիքը կորցրեցինք մի այնպիսի հայր, որպիսին կարող չէ տալ աշխարհին իր բոլոր գանձերով»<sup>5</sup>:

Յաջորդ նամակում Աննան գրում է, ինչպես են նրանցից վերցրել անգամ իրենց տունը, իսկ նրանք տեղափոխվել են իին տուն՝ խոնավ, մռայլ պատերով, որոնք կարծես միշտ լաց են լինում:

<sup>1</sup> Նար-Դոս, Երկեր (միահատորյակ), Երևան, 1977, էջ 237:

<sup>2</sup> Սաֆարյան Վ., էջ 174:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 200:

<sup>4</sup> Նար-Դոս, էջ 250:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 251:

Այստեղ ահա ի հայտ է գալիս վիրավորվածություն և խռովք կյանքի նկատմամբ. «Որքան դառը, որքան անտանելի է կյանքը ... միթե մարդուս կյանքը, որ վերջանում է ոչնչով, նորա խորհուրդը պետք է լինի նույնաբես ոչինչ ...»<sup>1</sup>, - գրում է նա:

Դժբախտությունները կարծես հաջորդում են մինչյանց և հաջորդը լինում է Աննայի եղբոք՝ Գրիգորի՝ Թթախտով հիվանդ լինելու փաստը: Գրիգորն Աննայի ամենասիրելի եղբայրն էր, ոչ միայն եղբայր, այլև սրտակից բարեկամ և ընկեր, ու կորստի վախճ աստիճանաբար ոչնչացնում էր Աննային: Բայց սա էլ դեռ ամենը չէր: Յերբ համում է նաև մեծ եղբոք՝ Արշակին, ում արբեցողության համար հեռացնում են պաշտոնից, և փոքրին՝ Գարեգինին, ում ծովության համար վրայում են ուսումնարանից:

Թույլ բնավորության ամենաբնորոշ հատկություններից մեկն ամեն ինչ հիվանդագին կերպով ընդունելու է: Աննային ահաբեկում է աղքատության հեռանկարը՝ եղբոք աշխատանքից հեռացվելուց հետո. «Աղքատությունը միշտ երևակայում են որպես հազար գլխանի հրեշ, որ մեզ իր սառը գրկի մեջ առած՝ իր սարսափելի ժամիքներով, դժոխային անհագ բավականությամբ կամաց – կամաց պիտի քաշի մեր հոգին ...»<sup>2</sup> և ավելացնում, որ ավելի լավ է շուտ մահանալ, քան տեսնել և ապրել այդ վիճակը:

Դաջորդ խորը հոգեբանական ընդհանրացումը դժվարությունը հաղթահարելու անձարակությունն ու անկամությունը, ծայրահեղորեն սրում է վատի գաղափարը՝ դարձմելով այն բոլոր գոյությունների հատկանիշ: Միևնույն ժամանակ կարելի է ներկայացնել նաև հաջորդ հոգեբանական վիճակը, որն անհասկանալի կատաղությունն ու անհաղթահարելի ատելությունն է բոլորի նկատմամբ, այդ թվում՝ հարացատների:

Սկսվում են ամանորյա տոնները, և Աննան կրկին ընկնում է խոր ընկճվածության մեջ, նա առավել, քան առաջ, սկսում է ատել ամեն ինչ, անգամ ասում, որ հնարավորության դեպքում կարգելիք նոր տարվա մուտքն իր գիտակցության մեջ: Նա նոր տարվա առաջին օրվա առավոտից փակվում է իր սենյակում և ասում, որ նոր տարին կատաղության ու ատելության այնպիսի զգացմունք է ներշնչել իրեն, որ չի ցանկանում տեսնել ոչ ոքի և պատրաստ է ընդունել, որ նոր տարին տոն է, եթե միայն վերադարձներ իրեն անհոգ և ուրախ անցյալը:

Բայց ...

Ի տարբերություն մյուս տարիների, այս տարի առաջինը մայրն է Աննային շնորհավորում, իսկ նա կարծես բարկությունը թափում է խեղճ մոր վրա, բղավում և վիրավորում է նրան: Եթր մայրը ցանկանում է հեռանալ, զղջում է իր արարքի համար և խոստանում է, որ այլև նման կերպ չի վարվի: Մայրը նրան խորհուրդ է տալիս միայնակ չմնալ և գնալ Գրիգորի մոտ: Եղբայրը, ով անհանգստացած էր Աննայի վիճակի համար, ասում է, որ քույրը շատ է մտածում և Աննայի այն հարցին, թե ինչ է մտածում, պատասխանում է. «Այն, որին մարդուս խելքը ոչ հասել է, ոչ կհասնի երրեք ...»<sup>3</sup> և ավելացնում. «...Թող կասկածը բնության արարչության և նարդկային կյանքը դեկավարող օրենքների նասին երբեք չմոտենա մանուկ ուղեղիդ: Ոչ մի, կատարելապես ոչ մի եզրակացության չհասնելով, նա ծնում է լոկ հանցանք: Թող անմեղ սրտիդ մեջ հավատը միշտ մաքուր, միշտ հաստատ մնա, որպես ջինջ լույսը: Դավատը լույս է, իսկ լույսը՝ կյանք»<sup>4</sup>:

Դասկանալով քոջ մտածունքների եզրահանգումը, նա փորձում է խնայել և պաշտպանել նրան, ինչն առժամանակ հաջողվում է:

Բայց հաջորդ իսկ նամակում Աննան գրում է. «Շատ վատ խաղ է խաղացել ինձ հետ ճակատագիրը: Դանկարծակի և անպատրաստ, նա շպրտել է ինձ այդ դառը,

<sup>1</sup> Նար-Դոս, էջ 252:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 254:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 269:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 269:

այդ սոսկալի իրականության առաջ և ասում է՝ հաստատում մնա: Ախ, թշվառականս, ինչ եմ ստացել, որ ինչ տամ ...»<sup>1</sup>:

Աստիճանաբար ամբողջանում է Աննայի հոգեբանական ծանր վիճակը:

Սահանում է նրա սիրելի եղբայրը:

Դա կործանարար հարված էր և ապրելու համար մղվող պայքարից հրաժարվելու սկիզբ, ինչպես նաև ամեն տեսակ զգացմունքների բթացում, այն աստիճան, որ նա ասում է, թե կուրծքը բացեն և սիրտը հանեն, այն սառաօծ կլինի: Եվ այժմ, երբ չկար արդեն սիրելի եղբայրը. Աննային ապրել դրդում էր մի զգացմունք, դա այն էր, որ թեկուզ անխոս, բայց մահացող եղբորը խոստացել էր խնամել ծնողներին:

Շուտով հոգեկան ծանր հարվածներին գումարվելու է գալիս նաև բարոյական հարված:

Աննայի մայրը գումար վաստակելու համար կար էր վերցրել կարելու, և Աննան նրան պիտի օգներ, բայց չեղ կարողացել կարել և կար բաժանող կինն ամոթանք էր տվել նրան ասելով. «Ահագին աղջկի ես և ամենահասարակ կար անգամ չգիտես, ամոք է»<sup>2</sup>:

Այստեղ, ահա առաջին անգամ Աննան մտածում է ինքնասպանության մասին:

Թուլակամների բնավորության տիպական հոգեբանական գժեր են հանդիսանում իիվանդագին ինքնասիրությունն ու եսասիրությունը և հենց խոցված ինքնասիրությունն ու եսասրիությունն էլ ի վերջո բերում են հանգուցալուծնան:

Աննան ասում է. «Ինչ մեծ համարում ունեի ինձ վիա, ... կարծում էի, թե մի բան անել կամենամ, իսկույն կանեմ, բայց փորձը ցույց տվեց, որ ոչինչ չեմ կարող անել, այլև ... որ ես ինքս ոչի՞նչ եմ, ոչի՞նչ, ոչի՞նչ... ինքս ինձնից սարսափում եմ: Գոնե չունենայի սրտիս մեջ՝ դեռ մանկությանս հասակից սերմանված հպարտությունը, այս գոռողությունը, ... գոնե կարողանայի տանել ինձ տված հանդիմանությունները, գոնե սիրտս կարողանար հաշտվել ուղեղիս հետ, և այժմ կատարելապես իրավունք ունեմ ասելու, որ ես իսկական թշվառ եմ ... Ա՞խ, ա՞խ, ... սրտիս և ուղեղիս մեջ դժոխք կա ...»<sup>3</sup>:

Ինքնասիրության դրսենորում է նաև Յոհիվսիմեի օգնության մերժումը. «Աղքատ տեղովով ինձ քսան ռուբլի ես ուղարկել, ինչու ... ինչու ես ուղարկել... և դեռ ներություն էլ ես խնդրում, որ ուշ ես ուղարկում, որովհետև ռոճիկդ նոր ես ստացել... Բայց թեզ ով ասաց, որ ուղարկես ... , նպատակդ ինչ էր, ինձ ծաղրել, ինձ հանդիմանել ...»<sup>4</sup>, ապա համաձայնում է գումարն ընդունել միայն ետ ուղարկելու պայմանով:

Դաշորդ նամակներում հաճախսակիհանում են մահվան և ինքնասպանության մասին նտքերը: Աննան գորում է. «Վերջը խո մահ է ...»<sup>5</sup>:

Յոգեբանական վիճակի ամփոփման պահը հասունանում է, ձևավորվում ատելություն իր նկատմամբ, որը շուտով վերաճում է ինքնածաղկման. «Ես կյանքի համար մի կոպեկ, մի գրոշ չարժեն»<sup>6</sup> կամ «Ես մի այլանդակ արարած եմ, որի բերանը հացը ծամած պիտի դնել ... որքան ատում եմ ինքս ինձ, որքան զգվում եմ ինքս ինձնից ...»<sup>7</sup>:

Աննան թույն խմելով ինքնասպան է լինում, իրեն մեղավոր զգալով ծնողների և եղբոր հոգու առաջ, նախընտրում է մահվան միջոցով ազատել ինքն իրեն այդ տանձանքներից, խնդրելով ընկերուիհուն. «Անիծիր ինձ, բայց լաց եղիր, արտասուք գուցե կրեթևացնի մեղապարտ հոգիս» և ավելացնում. «Ներիր, հպարտությունս հաղթեց, ապրելն ինձ համար անհնարին էր»<sup>8</sup>:

<sup>1</sup> Նար-Դոս, էջ 269:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 270:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 271:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 288:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 290:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 288:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 288:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 291:

«Աննա Սարոյան» վիպակը կարելի է բնորոշել որպես օրագրային գրառում, որոնցում Աննան ներկայացնում է իր կյանքում տեղի ունեցող իրադարձությունները:

Վիպակը բաղկացած է 24 նամակներից, որոնց շարադրանքը սկսվում է 1880 թ. սեպտեմբերի 6-ին և ավարտվում է 1881 թ. հոկտեմբերի 31-ին՝ իրենց մեջ ներառելով նի կյանքի պատմություն՝ տիտուր և հոգեցունց բովանդակությամբ:

## ОБРАЗ СЛАБОВОЛЬНОГО ЧЕЛОВЕКА В ПОВЕСТИ

### НАР-ДОСА «АННА САРОЯН»

Кристине Сафарян

Нар-Дос в повести «Анна Сароян» через главную героиню Анну создает образ слабовольного человека, впечатлительного, болезненно воспринимающего всякую мелочь, мечтательного и не предприимчивого. Героиня Нар-Доса пополняет галерею «лишних людей», не нашедших свое место в современном им мире.

Текст повести представляет собой переписку двух подруг. Из их писем читатель узнает, как меняется Анна: какая она была веселая, улыбчивая и какой стала после произошедших в ее семье несчастий – грустной, неразговорчивой, злой по отношению ко всем и ко всему.

Жизненные удары следуют один за другим: карточные долги отца Анны разоряют семейство, из-за болезни умирает ее брат Григор. Анна ничем не может помочь своей матери и семье. Чувство безысходности и бесполезности толкают героиню на самоубийство.

## THE IMAGE OF FRAIL MAN IN NAR-DOS'S NOVEL “ANNA SAROYAN”

Kristine Safaryan

In his novel “Anna Saroyan” Nar-Dos presents the image of weak-willed person through the main character Anna: they are deeply impressed, each trifle is understandable shallowly, they are poor-spirited dreamers. These people become unnecessary and get out of life.

This novel is presented like a letter. Anna writes to her girlfriend and through these letters we acknowledge Anna, in past she was smily and energetic, but afterwards she becomes lonely and angry with the world. Because of the debts of her father’s card games they lose everything and become poor, because of illness her brother Grigor dies, then her father dies and Anna can’t be helpful to her mother.

The sense of inextricability and unnecessities gives a solution.

Anna commits suicide. She prefers to release herself through death and writes “Sorry, but my proudness won”.

## ՍԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՏԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԲՈՒՋՈՒՄ

Անի Աբրահամյան

ԵՊՀ, Դայ բանասիրության ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ.՝ մ.գ.դ., պրոֆ. Ն. Հարությունյան

Էլ. փոստ՝ a.d.abrahamyan@ysu.am

Բարձրագույն կրթության համակարգում կիրառվող նորարարական գործընթացները ուսումնասիրելու և վերլուծելու համար նախ անհրաժեշտ է մեկնաբանել «նորարարություն» կամ «հնովացիա» հասկացության ծագումն ու նշանակությունը: Ինովատիկան գիտություն է, որն զբաղվում է նորարարությունների ստեղծմամբ, դրանց գնահատմամբ և գործնականում կիրառությամբ: Անհրաժեշտ է տարբերակել նաև «նորարարություն» և «նորամուծություն» եզրույթները: «Նորարարություն» ասելով՝ հասկանում ենք գիտական գաղափար, մեթոդ, ուղի, տեխնոլոգիա կամ համակարգ, իսկ «նորամուծություն» ասելով՝ այդ նորարարության ներդրման ընթացքը<sup>1</sup>:

«Նորարարություն» հասկացությունն առաջացել է ավելի քան 100 տարի առաջ լեզվաբանության և մշակութաբանության մեջ մշակութային դիֆուզիայի (տարածման) երևույթը, այսինքն՝ նի մշակույթի տարրերի ներթափանցումը մյուսի մեջ նկարագրելիս: «Նորարարություն» հասկացությունն ունի բազում բացատրություններ. այն կարող է լինել նոր ապրանք, տեխնոլոգիական նոր գործընթաց, կառավարման նոր կառուցվածք և համակարգ, նոր մշակույթ, նոր ինֆորմացիա և այլն: Նորարարական գործընթացի մասին առաջին անգամ ամբողջական նկարագրություն տվել է տնտեսագետ Ի. Շումաները 20-րդ դարասկզբին (1911 թ.) նորարարությունը վերլուծելով որպես «նոր համակցություն տնտեսական համակարգի զարգացման ժամանակ»<sup>2</sup>, իսկ արդեն 1930-ական թթ. Ի. Շումաները և Գ. Սենչը գիտական շրջանառության մեջ դրեցին «հնովացիա» տերմինը՝ որպես գիտական բացահայտումների, նոր տեխնոլոգիաների կամ ցանկացած նոր երևույթի նարմնացում: Այս ժամանակաշրջանից սկսած «հնովացիա», «հնովացիոն գործընթաց», «հնովացիոն ներուժ» և «հնովացիոն ռազմավարություն» տերմինները գիտական ճանաչում ստացան և հարստացրին մի շարք գիտությունների տերմինաբանական բառարանները:

Կրթության բնագավառում նորարարական գործընթացը ուսումնասիրության առարկա դարձավ 1950-ական թթ. Արևոտքում, իսկ 1980-ական թթ.՝ ԽՄՀՍ-ում: Սակայն ԽՄՀՍ-ը և, արհասարակ, սոցիալիստական պետություններն այս ոլորտում ունեին իրենց դժվարությունները: Այստեղ ամեն ինչ կապված էր կառավարման միանձնյա-վարչական աշխատավայրում:

Ինովացիոն գործընթացները արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է ոչ միայն համապատասխան կառավարչական կառողություններ, այլև ծշուրեն ներկայացնել կրթության հիմնական ինաստն ու բովանդակությունը, ըստ այդմ էլ՝ պլանավորել ու կազմակերպել նորարարական գործընթացները կրթության բնագավառում: Իհարկե, ամենօրյա պրակտիկ գործունեության համեմատ այս գործըն-

<sup>1</sup> Хуторской А., Педагогическая инноватика, Москва, 2008, с. 4.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 6:

թացը կարող է շատ երկար ու կտրված թվալ, և հենց այս պատճառով շատ բարձրագույն ուսումնական հաստատություններում մանկավարժական ինովացիան կամ գունվում է ամենացածր մակարդակում, կամ, առհասարակ, բացակայում է: Բայց նրա համար, որ նորարարությունների կիրառումը հարմարեցվի այդ կառույցի որդեգրած սկզբունքներին ու կառավարման ձևին, և միևնույն ժամանակ կանխատեսելի լինեն արդյունքները, անհրաժեշտ է ցանկացած նոր, պրակտիկ գործունեություն իրականացնել արդեն յուրացված համատեքստում: Նորարարական գործընթացի գլխավոր գործառույթը պայմանավորված է փոփոխություններով, և նորարարության պարտադիր հատկություններից են գիտատեխնիկական նորությունը և արտադրական կիրառելիությունը:

Նորարարական գործընթացն ունի իր կառուցվածքը, նպատակը, խնդիրները: Նորարարական գործընթացի առանձնահատկություններն ակնհայտ են դառնում նրա ցիկլային բնույթով, որոնք եւ ներկայացնում են այն փուլերը, որոնցով անցնում և որոնք հաղթահարում են ինովացիաները:

Նորարարական ցիկլը, ըստ Ա. Խուտորսկու, իրենից ենթադրում է առաջացում, զարգացում, հասունացում, յուրացում, կիրառում, տարածում, հագեցում, ճգնաժամ, ավարտ: Կարծում ենք Ա. Խուտորսկին մատնանշել է այն բնականոն ճանապարհը, որով անցնում է ցանկացած երևույթը: Նորարարական գործընթացի համապարփակ պատկեր է ներկայացնում Վ. Լազարկը, ով առանձնացնում է ինովացիոն գործընթացների 4 հիմնական փուլ՝ համապատասխան ենթափուլերով<sup>1</sup>:

### 1. Նորարարության ստեղծում.

- Կրթության համակարգի վերլուծություն և անհրաժեշտ փոփոխությունների առանձնացում,
- Նորարարությունների պլանավորում,
- Նորարարության փորձնական (էքսպերեմենտալ) կիրառություն,
- Նորարարության մանրազնին քննություն:

### 2. Նորարարությունների տարածում.

- Նորարարության տարածման նախապատրաստություն,
- Նորարարության նախակատվության ձեռքբերում,
- Նորարարությունների կիրառման համար անհրաժեշտ օգնություն,
- Տարածման և յուրացման արդյունքների վերլուծություն:

### 3. Նորարարությունների յուրացում.

- Կրթական գործունեության վերլուծություն և անհրաժեշտ փոփոխությունների առանձնացում,
- Նորարարության որոնում,
- Կրթական համակարգի ցանկալի ապագայի ծրագրավորում,
- Նորարարությունների ներդրում,
- Փոփոխությունների վերլուծություն և գնահատում,
- Նորարարության համակարգայնացում:

### 4. Կրթական գործունեություն:

Վերը նշվածն, իհարկե, նորարարական գործընթացի վարչարարական մասն ապահովող մասն է, և չպետք է մոռանալ, որ նորարարությունները, բացի վարչարարականից, կարող են լինել նաև այլ մակարդակում: Դրանք կարող են վերաբերել դասախոսի գործառույթներին, կրթական ծրագրերին կամ եվրոպական բարձրագույն կրթական տարածքին (ԵԲԿՏ):

<sup>1</sup> Խոտորսկ Ա., ս. 57.

Կրթության զարգացման համար նորարարական ուսուցման և մանկավարժական հիմունքի կայութեական պատճառներից մեկը համարվում է կրթության ճգնաժամը, որը սպառնում էր աշխարհին: Աշխարհի տարբեր երկրներում այդ ճգնաժամն ունեցավ յուրօրինակ դրսերումներ, քանի որ երկրների զարգացման մակարդակները տարբեր էին, և, չնայած բոլոր այդ տարբերություններին, նրանք ունեին հետևյալ ընդհանորությունները:

- զարգացող հասարակության պրակտիկ պահանջների և բուհերի շրջանավարտների իրական պատրաստվածության ու ստացած գիտելիքների անհամապատասխանությունը,
- բուհերի առջև նոր նպատակների սահմանում և կառավարման ձևերի ու կառուցվածքի ընթացիկ կազմակերպում,
- սովորողների հետաքրքրությունները և հնարավորությունները կրթական գործընթացում:

Կրթության ոլորտում նորարարությունների համար խոչընդոտ են հանդիսանում նաև ավանդական մեթոդները և դրանցով շարժվել ցանկացող կառավարիչները, քանի որ ավանդական մեթոդներ կարելի է անվանել այն մեթոդներն ու կանոնները, որոնք նախատեսված են արդեն հայտնի և կրկնվող իրավիճակները հաղթահարելու համար: Սակայն, ի տարբերություն ավանդականի, նորարարությունը ենթադրում է նոր, երբեք գոյություն չունեցած, աննախադեպ մեթոդներ ու ձևեր, որոնք կարող են կիրառվել զարգացման համար անհրաժեշտ բոլոր իրավիճակներում: Նորարարական գործընթացները կրթության ոլորտում իրականում շատ ավելին են փոփոխում, քան կրթության նոր նպատակներն ու բովանդակությունը: Այս գործընթացի առանձնահատկություններից է ուսանողի պատասխանատվության մեծացումն իր ապագայի կերտման գործում, քանի որ այն մեծացնում է պատասխանատվությունն իր մասնագիտական որակների ձեռքբերման միջոցով ապագան կերտելու հանդեպ՝ դրանով իսկ անուղղակի նպաստելով տվյալ երկրի որակյալ մասնագետների պատրաստմամբ պետության զարգացմանը:

Նորարարական գործընթացները կրթության բնագավառում նկարագրվում են որպես գիտելիքների տիրապետության հասուլ մի տեսակ, որն այլընտրանք է ավանդական ուսուցմանը: 1990-ական թթ. սկզբին Ռուսաստանը ներփակված ծրագիր մշակեց, ըստ որի բոլոր ուսումնական հաստատություններին ինքնակառավարման զարգացման հնարավորություն տրվեց, սակայն, մեծամասամբ դա չիրականացավ, քանի որ անհրաժեշտություն կար նորարարական մեթոդների, ինչպես նաև իրականացրած նորարարությունների պահպանման ու զարգացման: Դրա անհրաժեշտությունն էլ հենց հիմք հանդիսացավ մանկավարժական ինովացիայի ձևավորման ու զարգացման համար:

Որքան էլ կարևոր նորամուծությունների դերը կրթության բնագավառում, այրուհանդերձ պարզ է, որ դա չի կարող յուրացվել առանց պատշաճ կազմակերպման: Այսպիսով, նորարար խնբերը կանգնեցին հետևյալ խնդիրների առջև.

- Բուհերի, ուսանողների և ծնողների կարիքների տարբերություններ,
- Նույն բուհի ներսում տարբեր հայեցակարգերի ու մոտեցումների առկայություն,
- Կրթական չափորոշիչների և հասարակության պահանջների անհամապատասխանություն,
- Ավանդական և նորարարական կրթության համատեղում և ծիշտ փոխառեղում,
- Մեթոդական աջակցության և վերապատրաստման բացակայություն կամ սակագություն,
- Քարմարվողականությունը նորարարական երևոյթներին առկա պայմաններում,
- Դասավանդողի և առաջնորդի ինովացիոն տիպի բացայակությունը,

- Վարչական նորարարությունների և կրթական արդյունքների ախտորոշման և գնահատման հասարակական համակարգերի մոնիթորինգի փոխազդեցություն:

Բուհերում նորարարական գործընթացները հիմնականում նախաձեռնում են կառավարչական կառույցները: Կառավարման համակարգերում ևս տեղի ունեցան նորարարական գործընթացներ, ինչպես օրինակ.

- Պետական կրթական չափորոշիչների ներդրում,
- Բուհերի ինքնակառավարում,
- Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին անդամագրում,
- Բոլոնյան գործընթացին միացում,
- Կրեդիտային համակարգի ներդրում,
- Ուսումնական ծրագրերի փոփոխություն և այլն:

Հարկ է նշել, որ հենց այս փոփոխություններով էլ պայմանավորված է ողջ համակարգի գործունեության փոփոխությունը:

Եթե ուսումնասիրում ենք բուն կրթանորարարությունը, առաջինը ուշադրություն ենք դարձնում «նոր» տերմինին: Ա. Օժեգովն իր բառարանում «նոր»-ը ներկայացնում է որպես նոր ստեղծված կամ կատարված, նոր հայտնված կամ առաջացած, նախորդին փոխարինող կամ վերաբացված, ոչ հեռավոր անցյալին կամ մոտ ապագային առնչվող, ոչ այդքան ծանոթ, նորահայտ<sup>1</sup>: Եվ եթե վերոնշյալում «նոր ստեղծված»-ը մեզ տալիս է պատկերացում մինչ այդ ամբողջովին անհայտ երևույթի մասին, ապա հաջորդող բնութագրինները խսում են այն մասին, որ այդ նորում կարող են լինել հնի ինչ-որ տարրեր: Այս դեպքում հասկանալի է, որ գործ ունենք նորարարության 2 տեսակի հետ:

1. Ամբողջովին նոր ստեղծված,
2. Նոր, որն իր մեջ պարունակում է հնի տարրեր:

Չնել ու նորի համադրությունը կարող է տալ ինչպես կոնկրետացնող ու լրացնող, այնպես էլ գիտելիքի միանգամայն նոր պատկեր: Պետք է հիշել նաև, որ ամբողջ աշխարհում գոյություն ունի մանկավարժական համակարգերի կատարելագործման երկու հիմնական ճանապարհ՝ **էքստենսիվ և ինտենսիվ**:

▪ Էքստենսիվ ճանապարհ հիմնվում է լրացուցիչ ուժերի՝ ներդրումների վրա (նորագույն սարքավորումներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ այլն):

Սա իր հերթին կարող է լինել տրանսպլանտացիոն և տրանսֆորմացիոն:

➤ **Տրանսպլանտացիոն** է այն դեպքում, եթե համակարգն ամբողջությամբ առանց որևէ տարրի փոփոխության, ներդրում ենք մեր երկրում,

➤ **Տրանսֆորմացիոն** է այն դեպքում, եթե համակարգում որոշ փոփոխություններ ենք անում, որոշ տարրեր համապատասխանեցնում մեր ազգային արժեքներին, մտածողությանը և, իհարկե, կրթական ավանդույթներին, սակայն հարկ է նշել, որ բովանդակության և էության մեջ փոփոխություններ երբեք չեն արվում. փոփոխություններն արվում են միայն կիրառման ուղիների, ձևերի, միջոցների և մեխանիզմների մեջ:

▪ Ինտենսիվ ճանապարհ ենթադրում է կրթական համակարգի զարգացում ներքին ռեգերվաների հաշվին:

Այսօր Արևմտյան կրթական համակարգն առաջատար և օրինակելի է զարգացող շատ երկրների համար, և հարկ է նշել, որ արևմտյան բարձրագույն դպրոցը զարգանում է էքստենսիվ ճանապարհով: Կրթական նորարարությունների կիրառումն ու արդյունքների կանխատեսումը հիմնված են ոչ միայն անհատական, այլև ժամանակային տարրի վրա: Այն, ինչ նոր է մի դասավանդողի կամ ուսանողի հա-

<sup>1</sup> Տե՛ս Օյջեգով Ս., Շվեծովա Ի., Տոլկովայ հայության համար բառարարություն, Մոսկվա, 1992:

<sup>2</sup> Հարությունյան Ն., Մանկավարժական ինովացիաների փոխարինության, գիտատեսական և տեխնոլոգիական հիմքերը, «Մանկավարժական միտք», թ. 1-2, 2006, էջ 10:

մար, կարող է բոլորովին նոր չլինել մեկ այլ դասավանդողի կամ ուսանողի համար: Այս հանգամանքն ինքնին խոսում է դասավանդողի կամ ուսանողի՝ նորարարական տիպ լինելու մասին: Արդի տեղեկատվական դարաշրջանում սահմանափակվել միայն ֆորմալ՝ համալսարանական կրթությանը, նշանակում է չյուրացնել անգամ համալսարանական գիտելիքները, քանի որ բոլոր գիտությունները սերտորեն փոխկապակցված են: Որևէ խնդիր խորապես ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ինքնակրթության (ոչ ֆորմալ կրթության) միջոցով ստանալ համակողմանի գիտելիքներ, որոնք ոչ միայն կօժանդակեն մասնագիտական որակների կատարելագործմանը, այլև ուսանողին կրաքանչեն նորարար, քանի որ տեսական գիտելիքները գործնականում կիրառելիս ավելի արագ են զգում դրանց արդյունավետ լինելը, հակառակ դեպքում մշակում մեխանիզմներ՝ արդյունավետության և հանրամատչելիության համար:

Եթե ECTS կրեդիտային համակարգի ներդրումն ու կիրարկումը վերցնենք որպես օրինակ, ապա կնկատենք, որ որոշ բուհեր, օրինակ՝ ԵՊՀ-ն, նախանշված վերջնաժամկետից ավելի շուրջ անցան կրեդիտային համակարգով ուսուցմանը, ինչը ոչ միայն պայմանավորված էր նրանով, որ այն օրենքի պահանջն էր, այլև նրանով, որ բուհը որպես նորարարական տիպ իր տեսակի մեջ, տվյալ ինովացիոն գործընթացի կիրառումն սկսեց ավելի շուրջ՝ 2007-2008 ուստարում, այն ել՝ մագիստրատուրայում, քանի որ մագիստրատուրայում խմբերն ավելի փոքր են, ինչն ավելի վերահսկելի է դարձնում գործընթացը և գործնական կիրառության ժամանակ ավելի կանխատեսելի դարձնում դրա արդյունքը:

Ո. Յուսուփիբեկովան, ով մանրակրկուորեն ուսումնասիրել է կրթական նորարարությունների խնդիրը, նորարարությունը ներկայացնում է որպես կրթության բնագավառում փոփոխություններ անելու հնարավորություն, որը տանում է մինչ այդ չհանդիպած ու անհայտ արդյունքների, որոնք զարգացնում են տեսության ու պրակտիկայի միջև կապը: Նորարարությունները կարող են վերաբերել ինչպես ամբողջ կրթական գործընթացին, այնպես էլ դրա մի մասին միայն: Ո. Յուսուփիբեկովան առանձնացնում է կրթական նորարարությունների երեք խումբ:

1. Կրթության մեջ նորի ստեղծում: Այստեղ քննվում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են նորը կրթության մեջ, նորի ստեղծման պայմանները, նորարարության չափորոշիչները, նորի կիրառմանը և ընկալմանը նպաստող պատրաստվածությունը, ավանդույթները և նորագոյացությունները:

2. Նորի յուրացումն ու գնահատումը:

3. Նորի կիրառումը, որտեղ ուսումնասիրվում են օրինաչափությունները և տարատեսակները:

Նորարարությունները հիմնականում կապվում են տեխնոլոգիաների հետ: Վերջիններիս կիրառումը մշտապես արդյունավետ է լինում: Անցումն ուսուցման նորագույն տեխնոլոգիաներին ուսուցումը դարձնում է ուսանողակենտրոն, այսինքն՝ փոփոխվում է դասախոսի և կրթական հարացույցը (պարադիգման), որի արդյունքում ուշադրությունը կենտրոնանում է ուսանողի ուսումնական գործունեության վրա:

Նորարարական գործընթացների մասին տեղեկությունները մեր աշխատանքում վերաբերում էին մեծամասամբ դրանց էռլեցներ, նպատակին, կառուցվածքին ու խնդիրներին, սակայն, պետք է նշել, որ նորարարական գործընթացները բավականին մեծ ազդեցություն ունեցան նաև դասախոս-ուսանող փոխհարաբերությունների վրա, ինչը, սակայն, ավելի խորը ուսումնասիրության նյութ է:

**ПРИМЕНЕНИЕ ИННОВАЦИОННЫХ ПРОЦЕССОВ  
В ВЫСШИХ УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЯХ**  
Ани Абрамян

Чтобы быть конкурентоспособным в развивающихся странах и системах образования в нынешних быстро меняющихся условиях, необходимы гладкие и локализованные изменения с использованием инновационных процессов в системе образования. Целью данной статьи является представление исторических основ инновационного процесса, потребности в его использовании, сфер применений, а также отделение образовательных инновационных процессов, которые происходят в системе высшего образования, и изменения в результате инновационных процессов.

**INNOVATION PROCESSES AND THEIR APPLICATION  
IN THE INSTITUTIONS OF HIGHER EDUCATION**  
Ani Abrahamyan

In order to be competitive in developing countries and systems of education in the current rapidly changing conditions, it is required to make smooth and localized changes in our education system through innovative processes. The aim of the article is to present the historical basis of the innovation process, the necessity for its use and application areas, separate educational innovation processes that take place in higher education system, as well as the changes that occur as a result of innovation processes.

**ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**  
**ВОСТОКОВЕДЕНИЕ**  
**ORIENTAL STUDIES**



## ԹՈՒՐՔՄԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՄԱՐԹՈՒՄԿՈՒԼԻ ՖՐԱԳԻՒ ԴԵՐԸ

ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՐՊԱՍՍԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Անալյա Պետրոսյան

ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ.՝ պ.գ.թ., պրոֆ. Ա. Սաֆարյան

Էլքուստ՝ amalya.petrosyan@yandex.ru

Հայրենիք, լեզու, կրոն և մշակույթ. այլ կերպ ասած՝ հոգևոր արժեքներ: Սրանք են բոլոր ազգերի գոյության հիմնասյունները: Անկախ աշխարհագրական դիրքից և ազգային պատկանելիությունից՝ բոլոր գորդերն էլ իրենց ստեղծագործական գանձարանում ունեն գործեր, որոնցով փառարանում են վերոնշյալ հոգևոր արժեքներն ու ցույց տալիս դրանց կարևորությունը: Այս թեմաները չի անտեսել նաև քուրքմեն բանաստեղծ Մահրումկուլի Ֆրագիւ<sup>1</sup>, որի համար նման գաղափարներն ավելի մեծ կարևորություն ունեին, քան որևէ այլ բանաստեղծի համար, ով ստեղծագործել է խաղաղ պայմաններում:

Սույն հոդվածում կփորձենք ցույց տալ, թե ինչ դեր է կատարել այս բանաստեղծը քուրքմենական հասարակության հոգևոր արժեքների պահպանման գործում:

Մահրումկուլին ապրել և ստեղծագործել է քուրքմենների համար ամենածանր պատմական ժամանակահատվածում՝ 18-րդ դ.: Թուրքմենները զուրկ էին պետականությունից, իսկ քուրքմենական ողջ հողը վերածվել էր մշտական արյունահեղության դաշտի և պարբերաբար ենթարկվում էր Իրանի ահեղ տիրակալների հարձակումներին: Իսկ քուրքմենների միջցեղային պայքարն ավելի էր հեշտացնում արտաքին թշնամու գործը: Այս դարը երկակի նշանակություն ունի քուրքմեն ժողովրդի համար. այն միաժամանակ և հոգևոր գարողների, և ծանր պայքարի շրջան է: Երկու իմաստով էլ մեծ է Մահրումկուլի-բանաստեղծի և Մահրումկուլի-զինվորի դերը: Եվ որպես զինվոր, և որպես բանաստեղծ Մահրումկուլին բարձր էր զնահատում հոգևոր արժեքների պահպանում: Լինելով առաջավոր գաղափարների կրող՝ բանաստեղծը քաջ գիտակցում էր, որ ստեղծված պատմական ծանր պայմաններում պետք էր առաջին հերթին համախմբել մասնատված քուրքմենական ցեղերը, ապա միասնաբար պայքարել արտաքին թշնամու դեմ և ի վերջո ստեղծել մեկ միասնական, անկախ պետություն: Նա որպես պայքարի միջոց ընտրում էր իր բանաստեղծությունները, որոնցում շատ սուր է պոետի լեզուն: Եվ բնական է, որ 18-րդ դ. Մահրումկուլի համար ժամանակի հրամանականն էր դիմել հոգևոր արժեքների վերհաննանը, այսինքն՝ այս գաղափարները պարզապես թեմաներ չեն, որոնցով նա ստեղծագործում էր, այլ սրանք դարձել էին մի ամբողջ ազգի պայքարի հիմնասյուններ:

Ինչպես արդեն պարզ դարձավ, հոգևոր արժեքների վերհանումը ինքնանըապատակ չէր 18-րդ դ.: Յենց սրանով էլ պետք է բացատրել այն փաստը, որ Մահրումկուլի ստեղծագործություններում գերիշխող թեման հայրենասիրությունն է, որոնցում նա առաջ է քաշում հայրենիք հոգևոր արժեքի գաղափարը: Հայրենիքի թեման քուրքմեն բանաստեղծի ստեղծագործություններում մի քանի ճյուղավորումներ է ստացել: Դրանցից առաջինը և թերևս ամենակարևորը քուրքմենական ցեղերի միջև

<sup>1</sup> Ինչպես հայ (Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Ֆրիկ, Րաֆֆի), այնպես էլ քուրքմենական գրականության մեջ հատկապես միջնադարում բանաստեղծները հանդես են եկել գրական կեղծանուններով: Մահրումկուլին և բացառությունը չեն: Բանաստեղծի իրական անունն է Մահրումկուլի, իսկ Ֆրագի՝ կեղծանունը: Այն նշանակում է լրաց և հավանաբար կապ ունի պոետի կրօս տանջանքների հետ: Մահրումկուլի հոր գրական կեղծանունն է Ազադի (այսինքն՝ ազատ, անկախ), որն, ըստ ավանդության, նա ստացել էր Մուհամմեդ մարգարեի հրամանով, քանի որ երազում ազատվել էր դժոխքի կտտանքներից: Այս մասին տես՝ **Պրախին Հ.**, Հայութ հեռերկանաց շահութակ առաջին և թերևս ամենակարևորը քուրքմենական ցեղերի միջև:

միջցեղային կրիվներին վերջ տալու մոտիվն է: Սա խիստ կարևոր, առաջադեմ և «հանդուգն» կոչ է այդ շրջանի համար: «Հանդուգն» արտահայտությունը առաջին հայացքից կարող է անհասկանալի թվալ, բայց կիրառում ենք այն, քանի որ պոետը պետք է շատ մեծ խիզախություն ունենար, որպեսզի կոչ աներ բոլոր ցեղերին միավորվել՝ քաջ գիտակցելով, որ նման փափագի իրականացումը, կարելի է ասել, անհնար էր: Այս իմաստով ուշադրության է արժանի նրա «Արցունք ենք թափուն» («Döker bolduk ýasyymyz») բանաստեղծությունը.

Türkmenler baglasak bir ýere bili,  
Gurudars Gulzumy, derýaý-y Nili  
Teke, ýomut, gökleň, ýazyr, alili,  
Bir döwlete gulluk etsek bâsimiz<sup>1</sup>.

Թուրքմեններ, եթե դուք խաղաղ ապրել կարողանայիք,  
Մենք կցանաքեցնեինք Նիլը, մենք Կուզում կգնայինք  
Թեքե, յոնութ, յազիր և ալիի  
Եթե հինգ ցեղով մեկ պետության ծառա լինեինք:

Այս բանաստեղծական տաճ մեջ նա ցույց է տալիս միասնության ուժը: Թուրքմենական հինգ խոշոր ցեղերին կոչ է անում միավորվել և ծառայել մեկ պետության: Առաջին հայացքից բանաստեղծական այս տողը կարող է ընթերցողին թյուրիմացության մեջ զցել: Կարող է թվալ, թե խոսքը գնում է որևէ այլ հշխանության ծառայելու մասին, բայց իրականում բանաստեղծն ակնարկում է հենց իր հայրենի հողի վրա կառուցելիք պետությունը: Մահթումկուլի համար այս նվիրական առաջին քայլին նոր պիտի հաջորդի երկրորդ՝ միասնական պետության ստեղծումը: Սա արդեն երկրորդ ճյուղն է կամ մոտիվը, որն արտացոլված է հայրենասիրական թեմայով բանաստեղծությունների մեջ: Նա այս օգակարն է առաջ քաշում մեկ այլ՝ «Թուրքմենական օջախ» («Türkmen binasy») բանաստեղծության մեջ.

«Türkmen binasy»  
Teke, ýomut, ýazyr, gökleň, Ahal ili bir bolup,  
Kylsa bir jaýga ýörişni, açýlar gül lälesi<sup>2</sup>.

Թուրքմենական օջախ  
Թեքեն, յոնութը, յազիրը, օյոքլենն ու ախալը թե միավորվեն,  
Անսահման մեծ տարածքներ կնվաճեն:

Բանաստեղծը փորձում է իր խոսքը լսելի դարձնել սեփական ժողովրդին և հասկացնել, որ միայն միավորված և միասնական անկախ պետության պայմաններում թուրքմենական ոգին կարող է լինել անկոտրում և «Ոչ մի պատճեշ չի կարող դիմանալ թուրքմենական հեղեղի առջև» (Bent tutdurmaz gelse sili türmeniň)<sup>3</sup>:

Իսկ այս կոչն իրականում ամենամեծ խրատն է հասարակության յուրաքանչյուր անդամն, մասնավորապես երիտասարդներին, ովքեր վաղն իրենց հայրենիքի տերն են լինելու:

Իոգևոր արժեքների պահպանումով միայն հնարավոր կլինի հասնել ճիշտ հասարակության դաստիարակմանը, իսկ այդ նոր հասարակությունն ի օրու կլինի կառուցել գալիքի Թուրքմենստանը: Իր «Թուրքմենստանի ապագան» («Türkmeniň») բանաստեղծության մեջ Մահթումկուլին տալիս է այդ իդեալական երկրի նկարագի-

<sup>1</sup> Magtymguly, «Goşgular», Türkmen döwlet neşirýat gullugy, Aşgabat, 2010, s. 17.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 227:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 230:

ըստ ուղարկության կառավագակի հոգևոր արժեքներով հարուստ երիտասարդների շնորհիվ:

Jeýhun bilen bahry Hazar arasy  
Çöl üstünden öser, ýeli turkmeniň  
Gül-günçasy, gara gözüm garasy,  
Gara dagdan iner, sili turkmeniň<sup>1</sup>

Ձեյսունին կապույտ ջրերից մինչև խազար<sup>2</sup> ալեկոդ թռչում են ազատ քամիները հով թուրքմենստանի, Աչքերիս փառքն ու երանությունն են դաշտի վարդը բոց Ու սեզ սարերը հորդ հեղեղներով թուրքմենստանի:

Այս բանաստեղծությունն ամբողջությամբ թարախված է հիւյսով, լավատեսությամբ, ունի բարոյախրատական ու դաստիարակչական նշանակություն: Բանաստեղծն անցյալի հերոսների օրինակով փորձում է դաստիարակել ու երիտասարդներին նղել հոգևոր արժեքների պահպանմանը: Սա այն փոքրարիվ բանաստեղծություններից է, որտեղ բանաստեղծը չի դիմում որևէ անհատի, այլ դիմում է հենց ժողովրդին:

Սահթումկուլին մեծ դեր է ունեցել լեզվի՝ որպես հոգևոր արժեքի պահպանման գործում: Այստեղ արդեն կարող ենք խոսել ոչ միայն բանաստեղծ Սահթումկուլիի, այլև զինվոր Մահթումկուլիի մասին, ով դարձավ գրական թուրքմեներենի հիմնադիրն ու իր ժողովրդին տվեց պայքարի ավելի մեծ զենքը, քան պարզապես պողպատե սուրճն է: Եվ հենց ինըն էլ դարձավ այդ պայքարի առաջամարտիկը:

Հայտնի է, որ արևելքում գրականության լեզուներ են համարվել արաբերենն ու պարսկերենը: Սակայն Մահրումկուլին քաջ գիտակցում էր, որ սեփական գաղափարների հրականացմանը կարող է հասնել միայն մայրենի լեզվով գրված բանաստեղությունների միջոցով, իսկ արաբերենն ու պարսկերենը նրան օտար էին: Միաւ կլինի ասել, թե Մահրումկուլիից առաջ որևէ թուրքմեն գրողի նմքով չի անցել մայրենի լեզվով ստեղծագործելու կարևորությունը: Մահրումկուլի հայրն օդինակ՝ Դովեթմաննեղ Ազադին իր «Զրույց դրախտի մասին» («Behişttnamə») պեմուն գրում է հետևյալ տողերը. «Ինձ ծանոթ չեն արարի ու պարսկի լեզուն...Ես նրանց հետ գործ չունեմ»<sup>3</sup>: Եվ սրանով իսկ պարզ է դառնում, որ լեզվի հարցը հուզել է նաև Ազադիին, ով քաջ գիտակցել է ժողովորդին հասկանալի լեզվով գրելու անհրաժեշտությունը: Սակայն Ազադին եթե նույնիսկ մի քանի փորձեր էլ արել է, այնուամենայնիվ դրանք եական փոփոխություններ չեն եղել և միայն նրա որդուն՝ Մահրումկուլիին էր վիճակված արմատական փոփոխություն կատարել:

ԵՎ Մահրումկուլին թուրքմենական իրականության մեջ արեց այն, ինչ հայ իրականության մեջ արեց Խաչատուր Աբովյանը՝ ժողովրդի լեզուն դարձրեց գրականության լեզու:

Կրոնի հարցում, թերևս, Մահրումկովին ավելի գուստ է. նա երբեք կողմ չի եղել մոլի կրոնամոլությանը, նրա համար կարելի է ասել կրոնը պարզապես ժողովրդին մեկ գաղափարի շուրջ համախմբելու և բարոյախրատական գաղափարներ տարածելու միջոց է: Եվ այն բանաստեղծություններում, որտեղ նա կրոնական հարցեր է քննում, հիմնականում անդրադառնում է իսլամի բարեպաշտ կերպարներին և նրանց որպես օրինակ ներկայացնում, այլ կերպ ասած՝ կրոնը դիտում է ազգապահապահնան համատեքստում:

<sup>1</sup> Magtymguly, s. 230.

<sup>2</sup> Խազար՝ Կասպից ծով:

<sup>3</sup> Пряхин Г., с. 39.

Վերոնշյալ երեք հոգևոր արժեքներն ել (այն է՝ հայրենիք, լեզու, կրոն) հենց ձևավորում են թուրքմենական մշակույթը: Եվ սրանց պահպանումը ինքնին նշանակում է մշակույթի պահպանում:

Սույն հոդվածում անդրադարձ կատարեցինք թուրքմեն բանաստեղծ Մահրուն-կուլիին և փորձեցինք ներկայացնել նրա գաղափարները տարրեր հոգևոր արժեքների նկատմամբ և տեսանք, որ նա փառաբանել և կոչ է արել պահպանել դրանք՝ համարելով հայերնիքը, լեզուն, կրոնն ու մշակույթը պետության պահպանման հիմնաքարեր: Պահելով մի քանի նվիրական պատգամներ, այն է՝ սիրել հայրենիքը, լեզուն, սեփական մշակույթն ու կրոնը կարելի է ապրել առողջ հասարակության մեջ և հետևաբար ունենալ երիտասարդ սերունդ, ով գիտի նման արժեքների գինն ու կշիռը: Սա է բանաստեղծի փափազը և թերևս սրա շնորհիվ է, որ երկու դար անց թուրքմենները կարողացան իրենց սեփական հողում ստեղծել անկախ պետություն: Այս գործում, անշուշտ, մեծ է Մահրունկուլիի դերը:

## РОЛЬ ТУРКМЕНСКОГО ПОЭТА МАХТУМКУЛИ ФРАГИ В СОХРАНЕНИИ ДУХОВНЫХ ЦЕННОСТЕЙ

Амалия Петросян

У каждого народа есть будущее только в том случае, если его есть молодежь обладает богатыми духовными и моральными ценностями, формирование которых у молодежи возможно, в частности, посредством литературы.

Цель статьи – показать, какое влияние оказывают творчество туркменского поэта Махтумкули Фраги на молодежь.

Поэт пишет в своих стихах о таких духовных ценностях, как Родина, религия и культура. Большая часть его стихотворений посвящена теме любви к Родине. В них говорит не поэт, а сам народ. Махтумкули воспевает храброго джигита, образ которого должен служить примером для каждого юноши во все времена. В стихах поэта заложен глубокий философский и назидательный смысл. Они пробуждают в сознании молодого поколения чувство хозяина своей страны.

Велика роль Махтумкули и в развитии туркменского литературного языка, ведь без родного языка не может существовать ни один народ.

## THE ROLE OF TURKMEN POET MAHTUMKULI FRAGI IN PRESERVATION OF SPIRITUAL VALUES

Amalya Petrosyan

This article is devoted to the poet Makhtumkuli and his role in preservation of spiritual values. Our aim is to show the impact of his poems on youth and how even several centuries later they help to maintain spiritual values of people.

Every nation has a future only if it has youth with rich spiritual and moral values. Proliferation of such concepts in young people's minds is only possible through books and literature. For centuries people, including Turkmens, were deprived of statehood and were in our branching conditions. Thus the preservation of such values was put on shoulders of writers and poets.

## ԹՈՒՐՉ ԳՐՈՂ ԷՐՈՎԱՆ ՕԶԻ «ՎԻՐԱՎՈՐ ԵՍ» ՎԵՐՈ

Անուշիկ Մարտիրոսյան

ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ, հայցորդ

Գիտ. դեկ.՝ բ.գ.թ., դոց. Ռ. Մելքոնյան

Էլփոստ՝ anushikmartirosyan@yahoo.com

1971 թ. մարտի 12-ի ռազմական միջամտությունից հետո Թուրքիայում տիրող անօրինություններին բախված բանտարկյալների կյանքը, բռնությունների ու նվաս-տացումների դեմ պայքարող անձանց մենությունն ու օտարացումը, չհանձնվելու, կանգնած մնալու համար դատապարտյալների հույսերի ռեալիստական պատկերումը դարձավ թուրք հայտնի գրող Էրդալ Օզի «Վիրավոր Ես» («Yaralısim») վեպը:

«Վիրավոր Ես» վեպն ինքնակենսագրական բնույթ ունի, սյուժեն կառուցված է հեղինակի անձնական փորձի վրա, քանի որ Էրդալ Օզը, լինելով ծախսակրոնյան շարժման ակտիվ գործիչներից, 2 անգամ բանտարկվել է: Յեղինակն այս վեպի նա-սին գրում է. ««Վիրավոր Ես»-ը գիրը է, որով Ես հաղթեցի մարտի 12-ի հետ եկած ֆաշիստական փորձությունները: Վեպը չեմ գրել որպես ֆաշիստական քաղաքա-կան միավորումների ճնշումներն ապահօն, մի շարք իրադարձություններին քաջա-տեղյակ նեկի տպավորություն: Այս հիվանդ ժամանակաշրջանում «Վիրավոր Ես» վեպով փորձել եմ դեմ դուրս գալ ֆաշիզմի միկրոբին»<sup>1</sup>:

Վեպի սյուժեն որպես այդպիսին բացակայում է, չկա սյուժեի տրամաբանական միագիծ ընթացք, այն ամբողջությամբ հիմնված է գիտակցության հոսքի<sup>2</sup> վրա՝ առա-ջին պլան մղելով հերոսների հոգեբանության ու ներաշխարհի նկարագրություն-ները: Սակայն պետք է նշել, որ սյուժեի բացակայությունը կամ հատվածայնությունը վերականգնվում, փոխհատուցվում է դրվագների, մոտիվների, պատկերների ու զգացողությունների պարբերաբար կրկնություններով: Ստեղծագործության տարա-ծաժանանակային դաշտն ամբողջովին խաթարված է, և այս ամենին հեղինակը հասնել է՝ վեպի մեջ ներկա ժամանակը գուգադրելով անցյալ ժամանակին: Այն ամբողջությամբ գրված է երկրորդ դենքով<sup>3</sup>:

«Վիրավոր Ես» վեպի հերոսը երիտասարդ մտավորական է՝ «հանցանքս սո-ցիալիստ լինելն է» տեսակի անհատ: Կերպարի բնութագրումը բավական բարդ է, քանի որ բացակայում են հերոսի կենսագրությունը, նրա քաղաքական պատմու-թյունը, անգամ անունը: Յեղինակը թեև ներկայացնում է, որ գլխավոր հերոսի հան-ցանքն արգելված գրեթե կարդալն է, բայց տպավորություն է ստեղծվում, որ կա նաև ավելի լուրջ պատճառ: Վեպում չի նշվում ձերբակալության ստույգ տարեթիվը. առանձին, ցարուցրիկ տարրեր անուղղակիորեն վկայում են, որ հերոսի կյանքի այդ

<sup>1</sup> Naci F., 100 Soruda Türkiye'de Roman ve Toplumsal Değişme, İstanbul, 1990, s. 419.

<sup>2</sup> Ուկիսամ Զեյմսը 1890 թ. գրած «Յոզեբանության հիմնախնդիրներ» աշխատության մեջ առաջին անգամ տվեց գիտակցության հոսք անվանումը, որը հետագայում վերածվեց մի ամբողջ փիլիսոփայական – հո-գերանական հոսանքի, ապա որպես գրելած, իսկ հետո որպես գրական հոսանք մուտք գործեց գեղար-վեստական մտածողության մեջ և ամբանդվեց նաև գրականության մեջ: Զեյմսը գտնում էր, որ գիտակ-ցությունը հոսք է, գեն է, որտեղ մեր մորերու, զգացողությունները, պատահական ասոցիացիաները բախ-վում են իրար, նշտապես ընդհատում մերը մյուսին և տարօրինակ, քնահաճ կերպով անտրամաբանորեն միահյուսվում են: Նման գրական ստեղծագործություններում մեծ դերակատարություն են ստանում հե-ռուսների հիշողությունները, երևակայությունը, երկխոսությունները թիւ են, փոխարենը շատ են ներքին մենախոսությունները, մեծ կարևորություն են ստանում միփերը: Stein und Djemeces Y., Психология, Москва, 1991:

<sup>3</sup> Էրդալ Օզը գրել է, որ «Վիրավոր Ես» վեպը երկրորդ դեմքով շարադրելու «դրապատճառը» Դեմիզ Գեզ-միշն է եղել. «Նրա պատմելու ոճը յուրատեսակ գեղեցիկություն ուներ: Նա երեք «Ես» չեր ասում: Նրանցից ոչ մեկը «Ես» չէր ասում: Այդ էր պատճառը, որ նրանց պատմածը դադարում էր անձնական լինել, մեծ օրեկտիվիտյուն էր ծեր բերում»: (Утурգրար Ը., Современный турецкий политический роман, Литература стран зарубежного Востока 70-х годов, Реализм на новом этапе, Москва, 1982, с. 96).

փուլը հավանաբար տևել է մինչև համաներումը, որը սպասվում էր 1974 թ. հոկտեմբերի 19-ին՝ հանրապետության հշչական 50-ամյակի առթիվ։ Վեպում գործողությունների ծավալման հիմնական միջավայրը բանտն է։ Այն նույնպես ներկայացված է ստեղծագործությանը բնորոշ վերացականությամբ։

Այս ստեղծագործության մեջ նկարագրված գրեթե բոլոր իրադարձությունները՝ բանտարկություն, հարցաքննություններ, խոշտանգումներ, մեկուսարանում ու հիվանդանոցում անցկացրած օրեր, տեղի են ունենում ներկայում։ Վեպի տեքստային անցյալ ժամանակն ընդամենը մեկ օր է՝ դատից հետո ընդիանուր բանտախուց տեղափոխվելու գիշերը։ Ստեղծագործության բովանդակային ու կառուցվածքային առանձնահատկությունը թերևս նույն՝ նուրի<sup>1</sup> անունը կրող, նույն խցում ապրող 67 կերպարների առկայությունն է։ «Բանտախուցը լի էր նուրիներով»<sup>2</sup> այս նախադասությամբ է սկսվում վեպը։ Երդալ Օզն նուրիներից յուրաքանչյուրի ներաշխարհը բնութագրում է առանձնահատուկ կերպով՝ փորձելով ներկայացնել մարդկային հոգեբանությունների ծիշտ բնութագիրը՝ բազմաթիվ տարածածանակային ընդգրրկումների մեջ դիտարկելով նրանց բնակչության որոշակի դրսևորումներն ու առանձնահատուկ գժերը։ Այս նուրիները տարբերակելի են ըստ արտաքին հատկանիշների (Փոքրիկ նուրի, Շեկ նուրի), Վարքի (Պարոն նուրի) կամ ըստ բնակության վայրի (Յոզգաթցի նուրի), Մառլզեր նուրի։ Նուրիներից շատերի ճակատագիրը հեղինակը պատկերում է բավականին մանրամասն ու անտրամարանական հերթագայությամբ՝ օգտագործելով «պատմություն պատմության մեջ» շարադրման ձևը։

«Կիրավոր ես» վեպում հերոսները տարբերվում են նաև «որակապես»։ առանցքային հերոսը քաղբանտարկյալ է, իսկ մյուսները՝ «մանր հանցագործներ»։ «Տես, այս խցում 67 հոգի ենք՝ թեզ չհաշված, այսինքն՝ 67 նուրի և դու։ Դու քաղաքական ես (քաղբանտարկյալ)։ Ուրիշ ես... Գլուխութ է հանցագործ, գլուխութ ։ Գլուխութ չհավանածները, գլուխութ հանցագործ են համարել։ Նրանց հարմար չես եղել, բռնել փակել են թեզ, այդպես չէ»։ Տես, պարզ ասեմ, շատերս կեղսոտ մեղքերի պատճառով ենք այստեղ, այսինքն՝ մեր հանցանքը հպարտանալու բան չէ... Տես՝ ինչ են ասում, առանձնացրել են՝ ծեզ «քաղբանտարկյալ» են ասում, մեզ՝ «մանր հանցագործ»։ Անգամ մեր անուններն են առանձնացրել։ Սրանց ավել բան կա՝, ընկեր»<sup>3</sup>։ Յարկ է նշել, որ թեև հեղինակն այս կերպ շեշտում է ձախակողմյան շարժման ընթացքում հեղափոխականների ու ժողովրդի միջև համագործակցության բացակայությունը, մտավորական ու անկիրը, բանվոր դասակարգերի տարբերությունը, այնուհանդերձ ընդգծում նաև, որ հանուն արդարության պայքարի գլխավոր ուժը ժողովուրդն է։ «...մենք ծեզ հաստատ գիշում ենք, դրա համար էլ ծեզ քիչ ենք գնահատում։ Ծիշտ է՝ դուք էլ եք այդպիսին, հա՛։ Մեծամտանում եք։ Զեզ մոտենալ կլինի՛։ Բացի այդ, վեր եք կենում, մեր անունից առանց մեզ կրիվ եք անում։ Այդպես չի լինում. նախ դուք դրա իրավունքը չունեք, և հետո առանց մեզ կպարտվեք։ Հիմնական ուժը մենք ենք...»<sup>4</sup>.

Գեղարվեստական այս ստեղծագործության մեջ իրականությունն երկալանային է, այսինքն՝ հարցաքննությունների նկարագրություններին զուգահեռ ընթանում է անհատի «ժողովորականացումը», «միօրինականացումը» կամ վեպի տերմինաբանությամբ՝ «նուրիացումը», որը երդալ Օզն այսպես է բնութագրում։ «Զեռքով էլ կարող էին ուտել նուրիները։ Բանի որ քաղաքակրթության թերած ամեն բան ազատ մարդկանց իրավունքն է։ Այս մարդկանց մեծամասնությունը հասարակության կողմից հանցագործ է համարվել, մեկուսացրել են նրանց, հասարակությունից դուրս մի վայր խցկել։ Զեռքներից վերցրել են քաղաքակրթության ամեն ձեռքբերում՝ ըստ եռթյան այսպես պատժելով նրանց, զրկելով մարդ լինելուց։ Արդեն հասարակությու-

<sup>1</sup> Յատկանշական է, որ նուրի անունը ծագել է արաբերեն «նուր»՝ լույս բարից։

<sup>2</sup> Öz E., Yaralısın, İstanbul, 2011, 25. Baskı, s. 15.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 164-165:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 164:

նից, մարդկությունից վերացած այսպիսի արարածին «մարդ» կոչելու ինչ ինաստ կա: Այստեղ եղած բոլոր «նախամարդկանց», արևագործներին տարբեր, մի նոր, գուցե օրինակ «Նուրի» անունը տալն ավելի ճիշտ չէ՝ արդյոք»<sup>1</sup>:

Պետք է նշել, որ վեպում անկարելի է գտնել այսպես կոչված արտաքին աշխարհի օբյեկտիվ նկարագրություն. չկա ոչ կենցաղ, ոչ գյուղական կամ քաղաքային կյանք, և ոչ էլ բնություն: Կա մի միջավայր, որը կախված է նրանից, թե ինչպես են այդ ամենը դիտարկում գործող անձինք: Այս առումով վեպի գուգահեռ հարթություններից ամենակարևոր վայրը բանտախուցն է, որը միաժամանակ նաև «նուրիացման» գործընթացի սկիզբն է:

«Վիրավոր Ես» վեպում Նուրիներից բացի որպես գործող անձինք են հանդես գալիս նաև դահիճները, որոնց դեմքերը մշտապես մթության մեջ են, նրանցից միայն մեկին գլխավոր հերոսը «կապուտաչյա, շիկահեր ամերիկացիներին»<sup>2</sup> է նմանեցնում<sup>3</sup>: Վեպում հեղինակը կարևոր է հատկապես այս անդեմ դահիճների «մեքենայցումը»:

Այս ստեղծագործության հերոսի ապրումները, խոհերը բացահայտվում են մենախոսության միջոցով, ընդ որում ի տարբերություն «գիտակցության հոսքի» գրականության՝ «Վիրավոր Ես» վեպում մենախոսությունն աչքի է ընկնում կուռ տրամաբանությամբ, մտքերի հստակ շարադրմամբ, անգամ դաժան ֆիզիկական ու բարոյական տաճանքների պարագայում վերլուծելու, ենոցիաները վերահսկելու կարողությամբ: Ստեղծագործության ամենակարևոր թեմներից մեկը խոշտանգումներն են, որի չափազանց ռեալիստական նկարագրությամբ հեղինակը կարծես նպատակ է հետապնդել, որ ընթերցողն ինքը զգա բռնությունների կործանիչ ազդեցությունն անհատի վրա: Ընդ որում՝ նման տեսարաններում ուշադրություն են գրավում նուրբ մանրամասնությունները: «Այտիդ հասցված ապտակ: Միշտ աջ ձեռքով էր հարվածում: Յոթ օր է, ինչ անընդհատ ձախ այտիդ է հարվածում...»<sup>4</sup>:

Բնակարանի խուզարկությունից հետո հայտնվելով բանտում՝ հերոսը, թեև հասցել էր թաքցնել բոլոր հանցանաները՝ այրել էր արգելված գրքերը, այնուամենայնիվ չի կարողանում հաղթահարել վախի զգացողությունը: Սա ոչ թե ֆիզիկական խոշտանգումների, այլ ցավին չղիմանալով ականա մատնիչ դառնալու վտանգի հանդեպ վախ էր: Բանտում անցկացրած առաջին գիշերը, լարված սպասելով հարցաքննությունների ու խոշտանգումների, հերոսը փորձում է ազատվել «վախի հանդեպ ունեցած վախից», ջանում իրեն նախապատրաստել նրան, որ «դիմանա, գրություն չհայցի»: «Փորձում ես հիշողությունից ջնջել ամենը, ինչ գիտես: Ջնջում ես: Գլուխու դափ-դատարկ է: Նոր մաղած ծյան նման: Ոչինչ չգիտես: Նախ ինքը թեզ պետք է դրանում հավատացնես: Զգիտես: Անդադար կրկնում ես «չգիտեմ, չգիտեմ, չգիտեմ»<sup>5</sup>: Վեպում անհատի այս կոնֆլիկտն ինքն իր հետ ի վերջո ավարտվում է հերոսության, տևական տոկունության դրսւորմամբ. առաջին իսկ հարցաքննությունից ու խոշտանգումներից հետո հերոսը գիտակցում է, որ «լռում է և չի խնդրում գթալ իրեն»: «Ուրբան մոտենում է կյանքիդ վերջը, այնքան տոկունություն ես դրսւորում, և դա հասկանալով զարմանում ես: Բացահայտումդ թաքուն հպարտություն է առաջացնում քո մեջ, օգնում ուժ գտնել հետագա դիմադրության համար»<sup>6</sup>:

Վեպն ավարտվում է գլխավոր հերոսի «նուրիացմամբ», որը գրականագետ Ֆերի Նաջին բնորոշել է որպես դավաճանություն հերոսի նկատմամբ, քանի որ հե-

<sup>1</sup> Öz E., s. 216-217.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 177:

<sup>3</sup> Ըստ գրականագետ Մեդեք Թուրանի՝ Էրդալ Օզն այս կերպ փորձել է շեշտել, որ 1971 թ. մարտի 12-ի ռազմական միջամտության, ինչպես և դահիճների հետևում կանգնած էր ԱՄՆ-ն (Turhan M., Türk Romanında 12 Mart, Edebiyat Sosolojisi Açısından Bir İnceleme, İstanbul, 2009, s. 95-96)

<sup>4</sup> Öz E., s. 72.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 88:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 89:

դիմակն անմարդկային վերաբերմունքի արժանացած, դաժան խոշտանգումներին դիմացած, կրթված անհատին ի վերջո նմանեցնում, միօրինականացնում է գողություն, սպանություն, բռնաբարություններ կատարած հանցագործների հետ<sup>1</sup>: Այս առումով կարելի է ասել նաև, որ վեպը ինչ-որ տեղ անհատի՝ սեփական եսից օտարումի կորոնիկա է: Ասվածի ապացույց, թերևա, կարելի է համարել վեպի վերջում հերոսի մենախոսությունը. «Ընծովող լանջի տակ կանգնած ես, հայելու մեջ ես նայում: Դու ես սա: Մի զգվելի դեմք: Ծեծված գլխիդ տեղ-տեղ ուռուցքներ են: Աչքերդ ուռած են, դեմքդ յուղոտ, երկու մեծ կապտուկ: Անհմաստ: Տգեղ: Ստոր: Կեղտուտ... Դու՝ ես սա: «Ես են» ասող ծայն լսելով՝ ասում ես «Ես են»: Օտար ես և ծայնիդ, և հայելու միջի արտացոլանքիդ»<sup>2</sup>: Ուստի՝ խորհրդանշական է դաւնում նաև վեպի անվանումը՝ «Վիրավոր ես»: Այն արտահայտում է ոչ միայն հերոսի ֆիզիկական, այլև մահկան սահմանին հասած, սակայն բանտի բժիշկների օգնությամբ վերակենդանացած հերոսի հոգեկան վիճակը՝ վիրավոր, բայց չսպանված, չկոտրված և չենթարկված. «Մահն արդեն սարսափելի չէ, բոլորովին... Կիսամեռ ես արդեն... Եթե անգամ չմահանաս, այլևս երբեք նախկինը չես կարող լինել: Դու վերջացար»<sup>3</sup>:

Անհրաժեշտ է ընդգծել սակայն, որ Էրդալ Օզի հերոսն, ըստ էռլիյան, արտացոլում է խոշտանգումների ենթարկված մեկի ոչ թե ներքին, այլ արտաքին դիմադրությունը, քանի որ պակասում են անհատի հոգեբանական լուծումները: Վեպում թույլ է գլխավոր հերոսի՝ բռնություններին դիմադրելու պատճառն ու այդ դիմադրության հիմնավորումը: Այլ կերպ ասած՝ վեպը չգոռալ, չխնդրել, ի վերջո չկոտրվել ջանող մարդու վերացական պայքար է, ով անմարդկային պայմաններում աշխատում է պահպանել մարդկայնությունը: Այդ պատճառով կարելի է ասել, որ թեև Էրդալ Օզն այս ստեղծագործությունը բնորոշել է որպես «մարդու վեպ», սակայն մարդուն անբողջապես չի ուսումնասիրել, այլ արտացոլել է միայն դիմադրող, մեքենայացված մարդու պրոֆիլը:

## РОМАН ТУРЕЦКОГО ПИСАТЕЛЯ ЭРДАЛА ОЗА «ТЫ РАНЕН»

Анушик Мартиросян

Роман Эрдала Оза «Ты ранен» является прямым ответом на жестокие преследования политического левого движения после военного вмешательства Турции 12 марта 1971 года. Роман играет важную роль в литературном наследии турецкого народа и в коллективной памяти активистов левого крыла, интеллектуалов и писателей этого периода. Роман представляет собой ретроспективную самооценку революционера-интеллигента. Он проиллюстрирован документальными фактами и рассказами о пытках. Работа Оза, однако, лишена каких-либо конкретных ссылок на политические события и рассказывает о природе насилия и власти, применимой к любому тоталитарному режиму.

## THE NOVEL OF TURKISH WRITER ERDAL OZ “YOU ARE WOUNDED”

Anushik Martirosyan

The novel of Erdal Oz “You are Wounded” is a direct response to the traumatic and brutal oppression of the leftist movements after the military intervention in Turkey on 12 March 1971. The novel plays an important role among others from the March 12th literary corpus, in

<sup>1</sup> Naci F., s. 421.

<sup>2</sup> Öz E., s. 243-244.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 189:

the collective memory of the violent persecution suffered by leftist activists, intellectuals and writers during this period. It is a retrospective self-judgement of a leftist revolutionary intellectual with documentary accounts of torture. Öz's work, however, doesn't include explicit references to contemporary politics or events and reveals the nature of violence and power applicable to any totalitarian regime.

## ԱՐԴԻ ԵԲՐԱՅԵՐԵՆԻ «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ»

Էդիտա Ասատրյան

ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ.՝ բ.գ.թ., դոց. L. Տեր-Պետրոսյան

Էլփոստ՝ edit-asatryan@mail.ru

Խոսակցական եբրայերենի վերածննդի նախադրյալները նկատելի են 16-րդ դ., երբ գրվեց առաջին եբրայալեզու դրաման և կազմվեց առաջին իդիշ-եբրայերեն բառարանը: Եբրայերենը ունի երկար պատմություն. որպես գրավոր լեզու այն պահպանվել է ավելի քան երեք հազար տարի: Նման պատմությունը ակնհայտ և կարևոր հետո է բողել այս լեզվի վիճակ:

Եբրայերենի գարգացման նախնական փուլը սկսվել է աշքենազյան հրեաների միջավայրում 1770-ական թթ. Ներին սկսված լուսավորչական շարժման ժամանակաշրջանում, որի գարգացմանը նապատեցին ֆրանսիական լուսավորչական շարժման գաղափարները, որոնք հայտնի են եբրայերեն Հասկալա<sup>2</sup> անվանումով: «Հասկալայի» հրեական լուսավորչության ժամանակաշրջանը իր հետ բերեց համապատասխան գրականություն, որն ընդորինակել է արևմտաեվրոպական ժամանակաշրջանի թեմատիկան: Այս շրջանի գրողները անգամ ցածր խավին պատկանող հերոսների խոսքում գործածում էին Աստվածաշնչյան եբրայերենը<sup>3</sup>: Այդ ժամանակական նշանավոր գործիչներից էր գերմանացի հրեա Մոշե Սենդելսոնը: Հասկալայի ձևակիրնան կենտրոնը գերմանիան էր, սակայն 19-րդ դ. սկզբից այն աստիճանաբար տեղափոխվում է Ռուսաստան և Ավստրոհունգարիա: 19-րդ դ. երկրորդ կեսին սկսեց հրեաների կանոնավոր ներգաղթը Պաղեստին: Դրա պատճառներից էին Ռուսաստանում թափ առնող հակահրեական տրամադրություններն ու սիոնիստական շարժումը: Սիոնիստական շարժման գլխավոր նպատակը Պաղեստինում «ազգային օջախի», դրանից հետո էլ պետության ստեղծումն էր:

Արդեն իսկ մինչ մասայական ներգաղթի սկզբը Երուսաղեմում բնակվող սակավաթիվ, սակայն բազմալեզու հրեաները, որպես միջիանայնքային հաղորդակցության միջոց գործածում էին եբրայերենը: 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին, հրեաների ներգաղթի հետ մեկտեղ, տարածաշրջանում սկսեց ձևակիրվել նոր բազմալեզու միջավայր: Կառավարության, պետական պաշտոնյաների և զինվորականների լեզուն բռնընթաց էր, օյնուացիներինը և ավանաբնակներինը՝ արաբերենի տեղական բարբառները, իսկ դասական արաբերենը կրթված ընտրանու գրավոր լեզուն էր<sup>4</sup>: Ստեղծված իրավիճակում հասունանում էր եբրայերենի, որպես միասնական ազգային լեզվի վերականգնման անհրաժեշտությունը: Սակայն սիոնիզմի հիմնադիր Թեոդոր Շերցելը թերահավատ էր եբրայերենի ապագայի նկատմամբ: Ընդհանրապես սիոնիստական կազմակերպությունն իր ստեղծման օրվանից ի վեր (1897 թ.) մեծ նշանակություն չի տվել եբրայերենին՝ որպես հրեա ժողովրդի համագոյային լեզվի: Թեոդոր Շերցելի կարծիքով եբրայերենի վերակենդանացմանն ուղղված ջանքերն ապարդյուն էին և չէին հասնի որևէ շոշափելի հաջողության: Նա գտնում էր, որ Պաղեստինում յուրաքանչյուր հրեա կիսուի իր լեզվով, և այդ լեզվուներից մեկն ի վերջո կընդունվի բոլորի կողմից: Ենթադրվում էր, որ այդ լեզուն կլինի գերմաներե-

<sup>1</sup> Saenz-Badillo A., A History of the Hebrew Language, Cambridge University Press, 1993, p. 50.

<sup>2</sup> «Հասկալա»՝ «մասկիլ» արմատը նշանակում է կրթված, լուսավորված:

<sup>3</sup> Lowenstein S., The Berlin Jewish Community: Enlightenment, Family And Crisis 1770-1830, Oxford University Press, 1994, pp. 33-35.

<sup>4</sup> Spolsky B., Multilingualism in Israel, 'Annual Review of Applied Linguistics', vol. 17, 1997, p. 143.

նը կամ իդիշը: Յրեական կուսակցություններից շատերն ազգային լեզուն համարում էին իդիշը:

Այդ շրջանում շատ էին խրախուսվում նաև Եվրոպական լեզուները: Օրինակ ֆրանսերենն ուներ կարևոր կարգավիճակ, իսկ գերմաներենի տարածումը վայելում էր կառավարական շրջանակների աջակցությունը: 19-րդ դ. կեսին Արևելյան Եվրոպայից ներգաղթած հրեաները, ովքեր խոսում էին իդիշով, իրենց հետ բերեցին նաև իրենց նախկին բնակության երկրների լեզուները, օրինակ՝ ռուսերենը, լեհերենը, գերմաներենը, ֆրանսերենը կամ հունգարերենը<sup>1</sup>: Դասկանալի է այս ժամանակահատվածում ոչ մի տեղ երայերենը չէր գործածվում, որպես կանոնակարգված առօրյա լեզու<sup>2</sup>:

Երայերենի «Վերածնունդը» առհասարակ շատ բարդ գործընթաց էր իրենից ներկայացնում և սկզբնական շրջանում գրեթե բոլոր հրեա գրողները, լրագրողները, հասարակական գործիչները դեմ էին խոսակցական երայերենի վերածնման գաղափարին<sup>3</sup>: Նրանցից շատերի կարծիքով երայերենի բառապաշարը չի համապատասխանում ժամանակի արդի հասկացությունների արտահայտման պահանջներին: Ոնանք էլ կարծում էին, որ դեռ այն վերակենդանացնելու ժամանակը չի եկել: Օրինակ Յեհոշուա Սիրկինը (1838-1923 թթ.) Ուսասատանում լույս տեսնող երայալեզու «Սֆատենու» («Մեր լեզուն») ամսագրում հրապարակած իր հոդվածում գրել է. «Բարեկամնե՛ր, մի՛ փորձեք ժամանակից շուտ արթնացնել մեր քնած լեզուն, դեռ չի եկել այդ պահը»<sup>4</sup>: Մի մասն էլ գտնում էր, որ երայերենը հնարավոր չէ վերակենդանացնել այն պարզ պատճառով, որ յուրաքանչյուր որ կխոսի իր նախկին բնակության երկրի լեզվով: Օրինակ Ֆրիշմանը (1859-1922 թթ.), որը բարձրակարգ քարգմանիչ էր և կատարում էր տարբեր բարգմանություններ երայերենից այլ լեզուներ և հակառակը, այնուամենայնիվ, չընդունեց երայերենը որպես խոսակցական լեզու՝ գերադասելով խոսել գերմաներեն<sup>5</sup>: Այնուամենայնիվ երայերենը կարողացավ անել անհնարինը՝ 20-րդ դ. առաջին կեսին այն կարողացավ հաղթանակ տանել այնպիսի հզոր լեզուների դեմ պայքարում, ինչպիսիք էին գերմաներենը (ժամանակի գիտության և կրթության հիմնական լեզուն), անգլերենը (Պատեստինի մանդատյան շրջանի պաշտոնական լեզուն) և ֆրանսերենը:

Իսրայելում բազմաթեզու միջավայրի առկայությունը կապված էր նրա աշխարհագրական բարենպաստ դիրքի հետ: Այն ցամաքային կամուրջ էր, որը իրար էր կապում Ասիան, Աֆրիկան և Եվրոպան: Այստեղ են առաջացել երեք համաշխարհային կրոնները՝ քրիստոնեությունը, հուդայականությունը և մասամբ էլ իսլամը և հենց սա է դարձել բազմաթեզվության հիմնական պատճառներից մեկը: Սինդիզմի<sup>6</sup> գիտավոր գաղափարախոսը գտնում էր, որ ապագա իրեական պետությունում յուրաքանչյուր հրեա կստանա քաղաքացիության իրավունք, կշարունակի խոսել այն լեզվով, որը սովորել է իր ապրած երկրում<sup>7</sup>:

Յետագայում այս յուրահատուկ իրավիճակում սկսեց զարգանալ «բիլինգվիզմը»՝ երկլեզվությունը<sup>8</sup>: Սակայն 19-րդ դ. վերջին տասնամյակից ի վեր մոնուլինգվիզմի գաղափարախոսությունը սկսեց ակտիվորեն պայքարել իրեական բազմաթեզվության դարավոր ավանդույթի դեմ: 19-20-րդ դդ. Եվրոպական տարբեր երկրնե-

<sup>1</sup> Pilowsky A., Yiddish alongside the revival of Hebrew: public polemics on the status of Yiddish in Eretz Israel, 1907-1929. In: "J. A. Fishman (ed.), Readings in the Sociology of Jewish Languages", Leiden, Brill, 1985, p. 192.

<sup>2</sup> Fellman J., The Revival of a Classical Tongue: Eliezer Ben Yehuda and the Modern Hebrew Language, The Hague, Mouton, 1973, p. 13.

<sup>3</sup> Shoham R., Poetry and Prophecy: The Image of the Poet As a "Prophet" a Hero and an Artist In Modern Hebrew Poetry, Brill, 2003, p. 117.

<sup>4</sup> Крюков А., Иврит, Идиш и "Языковые Войны": из недавней истории иврита, "Еврейское слово", № 39 (262), 2005, с. 4.

<sup>5</sup> Սույն տեղում, էջ 55-56:

<sup>6</sup> Սինդիզմը որպես քաղաքական հոսանք ձևավորվել է 19-րդ դարի վերջերին:

<sup>7</sup> Spolsky B., pp. 138-140.

<sup>8</sup> Гампери Ջ., Типы языковых обществ, "Новое в лингвистике VII", Москва, 1975, с. 192.

րում հրեաների առօրյա խոսակցական լեզուն համարվում էր տվյալ տարածաշրջանի լեզուն: Եբրայերենը երբեք չի եղել որևէ հրեական համայնքի առօրյա խոսակցական լեզու: Կարայելուն տեղի ունեցած եբրայերենի վերածնունդը հանգեցրեց հայրենադարձների լեզուների արհեստական դուրս մղմանը:

19-րդ դ. վերջին տասնամյակում ընդհանուր լեզվական պատկերը փոխվեց: Սա կապված էր նախորդներից տարրեր գաղափարախոսության կողմնակից երիտասարդ գաղթականների հետ: Եբրայերենի վերածնունդը, որպես մայրենի լեզու աննախադեպ հանրական երևույթ էր<sup>1</sup>: Եբրայերենը, որպես հրեա ժողովողի մայրենի լեզու, պետք է ծառայեր «ազգային տան» ստեղծմանը և համոլիսանար միավորիչ ուժ ազգի համախմբման համար:

Սակայն այս ժամանակահատվածում կային որոշ գործիչներ, որոնք կտրականապես դեմ էին եբրայերենի գործածնանը որպես առօրյա խոսակցական լեզվի, քանի որ այն «սուլը լեզու» էր, հետևաբար, տվյալ արարքը՝ «սրբապղծություն»<sup>2</sup>: Զնայած նրանց առաջ քաշած առարկմանը՝ հրեական սուլը գործուն ոչինչ չի ասվում այն մասին, թե եբրայերենը, որպես առօրյա խոսակցական լեզու արգելված է գործածել, դեռ հակառակը հուրայականության հեղինակությունները քննադատում էին հրեաներին այլ լեզուներով խոսելու մեջ, այն դեպքում, երբ նրանք ունեին իրենց սեփական մայրենի լեզուն:

Եբրայերենի վերակենդանացման գործուն բացառիկ էր խաղացին հայտնի հասարակական գործիչ, լեզվաբան, լիտվացի հրեա Էլիեզեր Բեն-Յեհուդան (1858-1922 թթ., իսկական անունը՝ Լազար Պերելման) և հայտնի հրապարակախոս Ախադ հա-Ամը:

## ВОЗРОЖДЕНИЕ СОВРЕМЕННОГО ИВРИТА

Эдита Асатрян

Предпосылки зарождения разговорного иврита появились уже в XVI веке, когда была написана первая драма на иврите и составлен первый словарь идиш-иврита. Начальный этап развития иврита в среде ашкенезских евреев относится к 70-ым годам XVIII века, к периоду просветительского движения, известного под ивритским названием Хаскала, развитию которого способствовали идеи французского просветительского движения. В качестве письменного языка он существует уже более трех тысяч лет.

## REVIVAL OF THE MODERN HEBREW

Edita Asatryan

Preconditions for revival of the modern Hebrew were already evident in the 16th century when the first drama in Hebrew and the first Yiddish-Hebrew dictionary was written. Hebrew has a long history. As a written language it was preserved for more than 3000 years. It has its obvious and important mark on the language. Initial period of the development of Hebrew started among of Ashkenasi Jews in the 70s of the 18th century in the period of the movement of the enlightenment called Haskala the development of which is connected with the French Enlightenment movement.

<sup>1</sup> Nahir M., Language planning and language acquisition: The "Great Leap" in the Hebrew revival. In: "Christina Bratt Paulston (ed.), International handbook of bilingualism and bilingual education", New York, 1988, p. 275.

<sup>2</sup> Spolsky B., Review of M. Isaacs & L. Glinert (eds.), Pious Voices: Languages among Ultra-Orthodox Jews, "Language in Society", vol. 30, 2001, pp. 115-118.

## ՆԻԶԱՄԻ ԳԱՍՏԱՎԻՆ՝ ՍԻՐՈ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Հասմիկ Գալստյան

ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ, բակալավրիատ

Գիտ. դեկ.՝ դասախոս Գ. Գևորգյան

Էլփոստ՝ galstyan.hasmik@yahoo.com

Միջնադարյան դասական պարսկալեզու գրականության խոշոր ներկայացուցիչ է Արքան Հովհաննեսը 1141 թ. Գանձակ քաղաքում, որի ավերակները գտնվում են այժմյան Գյանջայից մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Պոետի հայրը եղել է Ղոմ քաղաքից, ինչը որոշ հեղինակների առիթ է տվել ենթադրելու, որ նրա ծննդավայրը Ղոմն է:

چو ڈر گرچه در بحر گنجه گم  
ولی از قهستان شهر قمم  
به تفرش دهی هست تا نام او  
نظامی از آن جا شده نام جو

Չնայած ես մարգարտի նման մոլորվել եմ Գյանջայի ծովում,  
Սակայն Ղոմ քաղաքի Կուխիստանից (բառ՝ «Լեռների Երկիր»)  
Մինչև Թաֆրիշ թա անունով մի գյուղ կա,  
Նիզամին այնտեղ գնաց՝ իր անունը (իր փառքը) փնտրելու<sup>1</sup>:

Նիզամի Գանջավիի կենսագրության մասին մեզ հասած տեղեկությունները չափազանց աղքատիկ են և կցկոտուր, որոնց մի մասն էլ վեր է հանված հենց պոետի ստեղծագործություններից: Յոդվածում շեշտը դրել ենք հեղինակի ստեղծագործության վրա և չենք անդրադարձել պոետի ազգային պատկանելության շուրջ առկա բանավեճերին՝ նրան համարելով պարսկալեզու պոեզիայի ներկայացուցիչ, թեև օգտագործված գրականության մեջ առկա են նաև խորհրդային ճանաչված իրանագետ ե. Բերտելսի հեղինակած վիճահարուց աշխատություններից:

Դեռևս երիտասարդ տարիքում նա իր դազալներով տաղանդավոր բանաստեղծի համբավ է ձեռք բերում և հնարավորություն ստանում ոյուրությամբ մուտք գործելու ցանկացած արքունիք, սակայն գերադասում է ստեղծագործական ազատությունը, քան պալատական բանաստեղծի՝ ապահովված, բայց անազատ փառքը:

Նիզամի Գանջավին թողել է հարուստ գրական ժառանգություն: Գրել է դազալներ, ղասիդներ, ռոբայիններ, սակայն նրա ստեղծագործության գագարն են կազմում Էպիկական ստեղծագործությունները, որոնք հավաքված են հանրահայտ հնգամատյանում՝ «Խամսե»-ում, որը Արևելքի գրական մշակութային արժեքների խևական հանրագունար է: «Խամսե»-ն կազմող հինգ պոեմները թե՛ սյուժետային, թե՛ կառուցվածքային և թե՛ տաղաչափության տեսակետից որևէ ընդհանրություն չունեն: Ինչպես հետազայում հետազոտողներն են պարզել, այդ պոեմները ոչ թե հեղինակն ինքն է գետեղել մեկ ժողովածուի մեջ, այլ 13-րդ դ. անհայտ խմբագիր-արտագրիչը՝ այն վերնագրելով «Խամսե»:

<sup>1</sup> Бертельс Е., Великий азербайджанский поэт Низами, Москва-Баку, 1940, с. 26.

«Խամսե»-ն կազմող պոեմներն են՝ «Մախօմ ալ-ասրար»-ը (Գաղտնիքների գանձարան), «Խոսրով և Շիրին»-ը, «Լեյլի և Մաջնուն»-ը, «Չաֆթ փեյքար»-ը (Յոթ գեղեցկուիի) և «Խսֆանդիար նամե»-ն:

Դնամատյանի առաջին պոեմը՝ «Մախօմ ալ-ասրար»-ն է (Գաղտնիքների գանձարան), որը գրվել է մոտավորապես 1173-1179 թթ., պատկանում է բարոյախրատական ժամրին և լայն ճանաչման է արժանացել ողջ Մերձավոր Արևելքում: Պոեմը կազմված է ներածական մասից՝ նախարանից և 25 գրուցներից, որոնք կոչվում են մաղալեներ (գրուց, խոսք): Կառուցվածքային տեսակետից պոեմն այնպիսին է, որ յուրաքանչյուր գրուց շարունակում է նախորդի միտքը: Այն առանձնանում է ոչ միայն իր բովանդակությամբ, այլ կառուցվածքով, լեցուն է սիմվոլներով և պահանջում է համապարփակ գիտելիքներ՝ ստեղծագործության ամբողջ խորությունը հասկանալու համար:

«Գաղտնիքների գանձարան»-ը պարսկալեզու գրականության ամենաբարդ ստեղծագործություններից է: Բանաստեղծն, ըստ երևույթին, ցանկացել է ցույց տալ, որ ամենայն վարպետությամբ տիրապետել է ժամանակի բանաստեղծական բարդ տեխնիկային և յուրաքանչյուր տողում կիրառել նույր համեմատություններ ու փոխարերություններ<sup>1</sup>:

Դնամատյանի երկրորդ պոեմը՝ «Խոսրով և Շիրին»-ն է, որն ավարտել է 1180 թ.: Սա սիրային-էպիկական վիպերգ է, որի սյուժեն մասնակիորեն վերցված է Սասանյան ժամանակաշրջանից: Գործող 2 հերոսներն եւ իրական պատմական անձինք են: Այստեղ Նիզամին նորարարություն է կատարել և պոեմի հերոս է դարձրել ոչ թե Սասանյան արքա Խոսրովին, այլ՝ Շիրինին: Նիզամին հիացմունքով է փառարանում Շիրինի աստվածային գեղեցկությունը, առաջինությունը, հավատարմությունը: Նիզամինի հանճարի շնորհիվ Շիրինը դարձել է համաշխարհային գրականության մեջ լավագույն կանացի կերպարներից մեկը:

Նիզամինի այս երկի առանցքը սերն է: Նա փորձել է Խոսրովի և Շիրինի կերպարները եմքերանական վելուծությամբ երևան հանելով այդ բնավորությունների հակասական կողմերը: Եթե Խոսրովի կերպարում բացակայում է ինքնազնիությունը, ապա Շիրինի սերն անձնվեր է և անմնացորդ: Խոսրովի կերպարին հակառի զարգանում է ֆարիադի կերպարը, ով ի տարբերություն Խոսրովի՝ ոչ մի գոհողության չի գնում հանուն սիրո: Ֆարիադի համար սերը իսկական ներշնչանք է իր աշխատանքի և արվեստի համար: Խոսրովի և ֆարիադի հակամարտությունը, ինչպես սպասելի էր, ավարտվում է ողբերգությամբ: Ֆարիադը գոհվում է: Բացասական կերպար է նաև Խոսրովի առաջին կնոջից՝ Մարիամից ծնված որդին՝ Շիրուեն, ով սիրահետում է Շիրինին և հանուն իր անձնապաշտական նկրտումների՝ դիմում հայրապահնության:

Նիզամին «Խոսրով և Շիրին» պոեմում ցույց է տալիս մարդու ներաշխարհն իր ողջ հարստությամբ, հակադրություններով, անկումներով ու վերելքներով<sup>2</sup>:

Նիզամինի երրորդ պոեմը՝ «Լեյլի և Մաջնուն»-ն է: Վիպերգն ունի արաբական ծագում: Այս ստեղծագործության հիմնական առանցքը կրկին սիրո գաղափարն է: Պոեմի թեմատիկան երկու երիտասարդների բոցավար սերն է և նրանց դառը ճակատագիրը: Թեյսի մոլեգին սերն արիք է դառնում իրեն Մաջնուն՝ խելագար մականունով կոչելու: Քեղինակը, ի տարբերություն նախորդ ստեղծագործության առանցքը կազմող սիրո, որն անկեղծ է ու ներշնչող, այստեղ՝ հակառակը, ցույց է տալիս չստացված և կործանված սիրո դառը հետևանքները: Քեղինակը ստեղծել է ներդաշնակ ստեղծագործություն, որն անշնչելի հետք է բողել միջնադարյան Արևելքի բոլոր ժողովուրդների գրականությունների վրա և ներշնչման աղբյուր դարձել բազմաթիվ

<sup>1</sup> Բերտելը Ե., ս. 61.

<sup>2</sup> Բրագինսկի Ի., 12 մինիատյուր, Մոսկվա, 1966, ս. 176-178.

կրկնապատումների համար: Համանուն վերնագրով ստեղծագործություններ են գրել Ամիր Խոսրով՝ Դեհլիսին<sup>1</sup>, Արդուլահման Զամին և այլք<sup>2</sup>:

«Եյլի և Սեջնուն» պոեմի ողբերգական սիրո պատմությունն ակամա հիշեցնում է Շեքսպիրի «Ունեն և Զուլիետ» ստեղծագործությունը: Սակայն Նիզամին իր ստեղծագործությունը գրել է Շեքսպիրից չորս հարյուր տարի առաջ, և նրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է իր բանաստեղծական ինքնատիպ նոտաթելակերպը<sup>3</sup>:

«Եյլի և Մաջնուն» պոեմի հիմնական բարոյական սկզբունքը այսպես կոչված ազնիվ «Եսասիրությունն» է: Իրական եսասեր սիրո նկատմամբ հավատը հանգեցնում է նրան, որ եթե մարդը սիրում է մյուսին, ապա պետք է ձգտի միայն իր սիրած եակի երջանկությանը՝ նրանում իր սեփական երջանկությունը գտնելու համար:

Գանջապիի չորրորդ պոեմը՝ «Րաֆթ փեյքար»-ը (Յոթ գեղեցկուիիներ), գրվել է 1197 թ.: Որպես վիհերգի հերոս հանդես է գալիս Սասանյան շրջանի արքա Բահրամ Գուրը<sup>4</sup>: Պոեմն ունի սյուժետային տրամաբանական երկու գիծ: Ինչպես նախորդ պոեմներում, այստեղ ևս առաջին պլան է մղվում սիրո գաղափարը: Բայց այս դեպքում սերը ո՞չ հերոսական է, ո՞չ ողբերգական, այլ հաճախ հանդես է բերում երջանիկ հանգուցալություններ: Պոեմի գաղափարական երկորդ գիծը Բահրամի՝ թերևամիտ տիրակալի վերափոխումն է արդար և իմաստուն տիրակալի, ով պայքարում է բռնության դեմ:

Պոեմում պատմվում է նրա արկածների և որսորդությունների մասին: Նա, արքա դառնալուց հետո, կնության է աւճում յոթ թագուիիների, որոնց պատկերները տեսել եր փոքր հասակում՝ իր պալատի որմնանկարում: Գեղեցկուիիները տարբեր ազգերից էին՝ հնդկուիի, խորեզմուիի, բուրքմենուիի, սլավոնուիի, մաղրեբուիի, բյուզանդուիի, պարսկուիի: Նրանցից յուրաքանչյուրի համար կառուցում է տարբեր մոլորակների և շաբաթվա օրերի գույները կրող պալատներ: Նիզամին վառ երանգներով է ներկայացնում յոթ գեղեցկուիիների պատմած նովելները և ցույց տալիս դրանց բովանդակության հետ դյաների գույների ներդաշնակությունը: Պոեմի վերջում Բահրամը վերափոխվում է, դառնում երկիրի արդար տիրակալ՝ արժանի այդ կոչմանը:

Նիզամիի ստեղծագործության մեջ հիմնականը արդարամիտ թագավորի թեման է, լավատեսության և հումանիզմի գաղափարը:

Նիզամիի վերջին, հինգերորդ պոեմը՝ «Խսֆանդիար նամե»-ն է (գիրք Ալեքսանդրի մասին): Պոեմը բաղկացած է երկու մասից: Առաջինը կոչվում է «Շարաֆ-նամե» (Փառքի գիրք), իսկ երկրորդը՝ «Եկրալ-նամե» (Երջանկության գիրք): Այս ստեղծագործության համար Նիզամին որպես հիմք ընտրել է Ալ. Մակեդոնացու կյանքը: Ալեքսանդրը բույր դեպքերում ներկայանում է որպես դրական, բարի, արդար հերոս, բույլերի և խեղճերի պաշտպան: Նա փնտրում է Երջանիկ և արդար երկիր: Պոետն Ալեքսանդր Մակեդոնացուն ներկայացնում է որպես հիեալական կերպար, բայց ոչ ամբողջովին գերծ թերություններից: Նիզամին իր հերոսի հետ վերջապես գտնում է այդ բաղդալի երջանիկ ու առասպելական երկիրը:

Այս պոեմում հեղինակը մարդկանց կոչ է անում ձգտել կատարյալ երջանկության, հավասարության և արհասարակ բացառում է պետության գոյությունը: Նիզամին այստեղ հանդես է գալիս որպես գիտնական և մտածող, նա ի նի է բերել այն ամենը, ինչ անհանգստացրել և մտահոգել է իրեն ողջ կյանքի ընթացքում<sup>5</sup>:

Նիզամիի բոլոր ստեղծագործությունների հիմքում ընկած է մարդը, նրա հոգեբանությունը: Նրա ստեղծագործությունը համարվում է պարսկալեզու գրականու-

<sup>1</sup>Տե՛ս <http://www.hosrov-tiv.narod.ru/index0.html>:

<sup>2</sup>Տե՛ս [http://islam-today.ru/istoriya/abdurraxman\\_dzhami\\_poet\\_i\\_sufij/](http://islam-today.ru/istoriya/abdurraxman_dzhami_poet_i_sufij/):

<sup>3</sup>Гянджееви Н., Лейли и Меджнун, Баку, 1981, с. 5-6.

<sup>4</sup>Рипка Я., История персидской и таджикской литературы, Москва, 1970, с. 211.

<sup>5</sup>Бертельс Е., с. 122.

թյան հումանիստական միտումների զարգացման գագաթնակետը<sup>1</sup>: Այստեղ մեծ տեղ է զբաղեցնում բարոյախոսությունը: Ըստ նրա՝ հասարակության կառուցվածքը պետք է փոխել բարոյական կատարելության հասնելու միջոցով: Նա գտնում է, որ երկրի զարգացման գործում առաջնակարգ տեղ է գրավում գիտությունը: Գանջավին քարոզում է ազնվություն, ազատ սիրո սկզբունքը և գտնում, որ ամուսնությունը պետք է հիմնված լինի անդավաճան և փոխադարձ սիրո վրա:

Վերլուծելով առանձին հերոսների կերպարները՝ նկատում ենք, որ Նիզամին ռոմանտիկ բանաստեղծ է: Իր ստեղծագործություններում նա նորարարություն է կատարում՝ դիմում է հերոսների անհատականացմանը, յուրաքանչյուրին պատկերում իր բնավորության և գործունեության ոլորտի համապատասխան<sup>2</sup>:

Նիզամիի բոլոր պոեմներում առկա են հսկայական պատկեր, ամբողջական գործողություն, վառ և կենդանի նկարագրված կերպարներ: Նրա յուրաքանչյուր բեյթը կամ երեմն զույգ բեյթերն իրենց մեջ ներառում են հիմնականը, գլխավորը և գեղարվեստական բավականություն են պատճառում:

Այսպիսով՝ Նիզամին քննադատելով իր դարաշրջանում տիրող անարդարությունները, անհավասարությունը, բռնությունը, փորձում է արդար ճանապարհով կերտել իր երազականությունը և պատճառում:

Նիզամի Գանջավին այն նշանավոր պոետների թվին է պատկանում, ովեր իրենց ստեղծագործություններով խոշոր ավանդ են ներդրել համաշխարհային գրականության մեջ:

## НИЗАМИ ГЯНДЖЕВИ – ПОЭТ ЛЮБВИ И СПРАВЕДЛИВОСТИ

Асмик Галстян

В статье изучается творчество Низами – крупнейшего представителя средневековой классической персидской литературы. О жизни этого поэта сохранилось немного сведений. Однако Низами оставил богатое литературное наследие: газели, касыды, рубаи. Вершиной его творчества являются эпические произведения, которые объединены в известной работе «Хамсе» («Пятерица»).

## NIZAMI GANJAVI – POET OF LOVE AND JUSTICE

Hasmik Galstyan

Ilyas ibn-Yusuf Nizami is the most eminent representative of medieval classical Persian literature. He was born in 1141 in the city of Gandzak. Information about his life is too scarce. Nizami left a rich literary heritage – ghazals, ghasides, robayis etc. The epic poems which are collectively known as “Khamsa” became the peak of his works.

It consists of five poems named “Makhran al-Asrar” (The Treasure of Mysteries), “Khosrow and Shirin”, “Laily and Majnun”, “Haft Paykar” (The Seven Beauties), and the last poem is named “Eskandar-Nameh”.

Nizami Ganjavi is one of the famous most poets who had valuable investment in the world literature.

<sup>9</sup>Տե՛ս <http://www.religiocivilis.ru/islam/islamn/461-nizami-gyandjevi.html>:

<sup>2</sup>Աղայան Եղ., Դրվագներ Արևելքի գրականության պատմության, Երևան, 1971, էջ 219-222:

**«ԳԱՍԹԱՐԲԱՅԹԵՐԱԿԱՆ» ԹԵՍԱՏԻԿԱՆ ԹՈՒՐՔ ԳՐՈՂ ԲԵՔԻՐ ՅԸԼՂԸԶԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Նաիրա Պողոսյան

ԵՊԴ, Արևելագիտության ֆակուլտետ, ասպիրանտ

Գիտ. դեկ.՝ բ.գ.թ., դոց. Ռ. Մելքոնյան

Էլքուստ՝ nairapoghosyan@ysu.am

Գերմանիայի թուրքական համայնքի ձևավորումը սկսվեց 1960-ական թթ., երբ առաջին թուրքերը աշխատանքային միգրանտների հրավերի միջակայան պայմանագրի հիման վրա մեկնեցին Գերմանիայի Դաշնային Հանրապետություն որպես «գասթարբայթերներ» (գերմաներեն Gastarbeiter՝ հյուր-աշխատող):

Ներկայումս Գերմանիայում բնակվում է մոտ 3 մլն թուրք<sup>1</sup>: Անցած 50 տարիների ընթացքում Գերմանիայի թուրքերը ոչ միայն կարողացել են որոշակի հաջողությունների հասնել տնտեսության, քաղաքականության, սպորտի և այլ ոլորտներում, այլև բավական ազդեցություն են ունեցել երկրի հասարակական, մշակութային, այդ թվում նաև գրական կյանքի վրա: Երկու սկզբունքորեն տարրեր գերմանական և թուրքական մշակույթների համանականությունը (տարբեր գիտնականներ անվանում են այն «միգրանտական գրականություն», «գասթարբայթերական գրականություն», «սահմանային գրականություն») հետաքրքիր և ուշադրության արժանի երևույթ է: Նրա հիմնադիրներն են համարվում այնպիսի թուրք գրողներ, ինչպիսիք են Բեքիր ՅԸԼՂԸԶԸ, Արա Օրենը, Յուլյան Փազարքայան<sup>2</sup>, ովքեր Գերմանիա մեկնած առաջին աշխատողների շարքերում են եղել և անձանք զգալով միգրանտական կյանքի բոլոր առանձնահատկությունները՝ հետագայում դրանք դարձել են գեղարվեստի նյութ: Մեր հոդվածի նպատակն է ներկայացնել «գասթարբայթերական» թեմատիկան թուրք գրող Բ. ՅԸԼՂԸԶԸ ստեղծագործություններում:

Բ. ՅԸԼՂԸԶԸ հաճախ չեն համարում Գերմանիայի թուրքական համայնքի, հետևաբար նաև «գասթարբայթերական գրականության» ներկայացուցիչ, քանի որ Գերմանիայում ընդամենը 4 տարի աշխատելուց հետո նա վերադարձել է Թուրքիա և իր գրական գործունեությունը շարունակել այնտեղ: Սակայն հենց նրա 1966 թ. հրատարակված «Մուլքերը Գերմանիայում»<sup>3</sup> ինքնակենսագրական վեպ-ռեպրտաժը դարձավ Գերմանիայի թուրքական գրականության անկյունաքարը: «Գասթարբայթերական» թեմատիկային են նվիրված նաև հեղինակի «Սպիտակ երգ»<sup>4</sup>, «Գերմանական հաց»<sup>5</sup> ժողովածուները:

Թուրքական քննարատական ռեալիզմի ներկայացուցիչ լինելով՝ Բեքիր ՅԸԼՂԸԶԸ իր ստեղծագործություններում ներկայացնում էր «Ուրֆայի խուլ գյուղը»<sup>6</sup> (որտեղից էլ ինքն էր ծագումով), գյուղացիների չարքաշ առօրյան, նրանց կյանքը թունավորող նախապաշարունքները, զրկանքներն ու անարդարությունը: «Գասթարբայթերական» թեմատիկային նվիրված ստեղծագործություններում ևս հեղինակը

<sup>1</sup> Keskin H., Göcün 50 yılında Türklerin Gölgesinde Almanya. Geleceğe yönelik uyum politikası için görüşler, İstanbul, 2011, s. 37.

<sup>2</sup> Halman T., Osman H., Türk edebiyatı tarihi, İstanbul-Ankara, 2007, s. 107.

<sup>3</sup> Yıldız B., Türkler Almanya'da, İstanbul, 2012.

<sup>4</sup> Նույնի Beyaz Türkü, İstanbul, 2012:

<sup>5</sup> Նույնի Alman ekmeği, İstanbul, 2012:

<sup>6</sup> Սուլյան Կուլի Ալման էկմեք, 2012: Утуруаури С., О некоторых особенностях современного турецкого критического реализма (на примере новеллистики Бекира Йылдызы), «Народы Азии и Африки: история, экономика, культура», N 6, Москва, 1976, с. 250.

շարունակում է այս գիծը՝ նկարագրելով նույն հասարակ մարդկանց կյանքը Գերմանիայի մեջ, անժանոր քաղաքներում: Նա վարպետորեն պատկերում է օտար միջավայրում հայտնված մարդկանց դժվարությունները, հոգեկան ապրումները, խորը հասարակությանը հարմարվելու բարդությունները, այսինքն՝ անդրադառնում է «զարգարաբարթերների» համար առանցքային դարձած բոլոր խնդիրներին:

Առաջին հերթին, հեղինակը ներկայացնում է այն պատճառները, որոնք ստիպում են մարդկանց դիմել «փախուստի». այդպես է կոչում միգրացիան «Թուրքերը Գերմանիայում» վեպի գլխավոր հերոս Յուլցեն: Նա ասում է. «Մի ժամանակ մեր նախնիները սրերով էին գրավում Եվրոպան, այժմ մենք անձնագրերով չենք կարողանում անցնել: Սրերի տերերը կարող էին անել ինչ ցանկանային: Անձնագրերի տերերը ստիպված են անել այն, ինչ իրենց հրամայում են»<sup>1</sup>: Եվ չնայած Բեքիր Յըլդըզի հերսներից յուրաքանչյուրն իր յուրահատուկ ճակատագիրն ու խնդիրներն ունի, բայց արտագաղթելու հիմնական պատճառը բոլորի մոտ էլ մեկն է՝ աղքատությունը, գործազրկությունը: Թեև կան նաև այնպիսի մարդիկ, ովքեր մեկնում են Գերմանիա ավելի ազատ կյանք վարելու նպատակով: Այս մասին են վկայում «Թուրքերը Գերմանիայում» վեպի սկզբում Ստամբուլից Մյունիսեն մեկնող գնացքի կուպեի ուղևորների պատմությունները: Նույն վեպում, ինչպես նաև «Սաուլքերը» պատմվածքում էլ ընթերցողն իմանում է, որ «արևմտյան դրախտ» հասնել ցանկացողների թիվն այնքան մեծ է, որ մարդիկ մեկնողների ցուցակում գրանցում են նորածին երեխաներին՝ հուսալով, որ նրանց հերքը կիասնի, երբ չափահաս դառնամ: Իսկ մինչ այդ գնալու թույլտվության դիմաց կաշառք տալու համար վաճառում են ամենաթանկ իրերը<sup>2</sup>, կեղծում փաստաթղթերը<sup>3</sup>:

Սակայն թե՛ վեպի հետագա ընթացքից, թե՛ պատմվածքներից պարզ է դառնում, որ Գերմանիայում թուրքերին սպասում է միայն ծանր աշխատանք, հիմասրափություններ ու կորուստներ: Մանրակրկիտ նկարագրելով աշխատողների առօրյամ՝ Բ. Յըլդըզի վերականգնում է առաջին միգրանտների կյանքի պատկերը և հնարավորություն տալիս հասկանալ թուրքական համայնքի կայացման առանձնահատկությունները: Բոլոր միգրանտներն ապրում են միանման կացարաններում, աշխատում մեծ գործարաններում, ուր բանվորը համակարգի գործունեության համար անհրաժեշտ սպիրական գործիք է: Նույնիսկ կորված մարդիկ հաճախ ստպիված են անել ծանր ֆիզիկական աշխատանք: Սակայն որոշ ժամանակ անց թուրքերը ստվորում են նոր կյանքին, ուր ամեն ինչ պլանավորված է, ուր այլընտրանքի բացակայության պարագայում կարելի է նույնիսկ խոզի միս ուտել: Քանի որ հեղինակի խոսքերով գուցեց «անհավատների» համար աշխատելը ավելի մեծ մեղք է, քան խոզի միս ուտելը<sup>4</sup>: Ընդհանրաես, Բ. Յըլդըզի ստեղծագործություններում թուրքական ինքնության պահպանման ու փոփոխության հարցը ներկայացված է այդպիսի առօրյա դրսևորումներով: Չնայած միգրանտները դեռ ամուր կապերով կապված են հայրենիքի հետ, ցանկանում են ետ վերադառնալ, բայց նոր կյանքն ու նոր հնարավորությունները փոխում են մարդկանց: Կանայք սկսում են տարատ կրել և հրաժարվում են ենթարկվել ամուսիններին, տղամարդիկ Թուրքիայում ապրող ընտանիքին փող ուղարկելու փոխարեն ամբողջ աշխատած գումարով գերմանական բարեկեցության խորհրդանշի մեքնա կան այլ բանկարժեք տեխնիկա են գնում: Սակայն այս անենը երշանկություն թերել չի կարող, քանի որ խորը է և օտար: Արդյունքում ամուսինը սպանում է իրեն չլսող կնոջը, մեքնան պարզապես փշանում է Թուրքիայի վատ ճանապարհների պատճառով, իսկ բանկարժեք տեխնիկան օգուտ տալու փոխարեն վնասվածքներ է առաջացանում:

<sup>1</sup> Yıldız B., Türkler Almanya'da, s. 8.

<sup>2</sup> Նույնի Beyaz Türkü,էջ 65:

<sup>3</sup> Նույնի Türkler Almanya'da, 2012, էջ 12:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 44:

Հեղինակը անդրադառնում է նաև գերմանական ու թուրքական մշակույթների բախմանը, նկարագրում է երկու հասարակությունների իրար հակասող բարքերը: Գասթարբայթերների համար տարօրինակ է ամեն ինչ՝ կանանց բաց հագուստներից մինչև պարտքով փող տալու խնդրանքը զարմացած մերժելը. «Մենք ոչ ոք չենք օգնում,- ասում է գերմանացի բանվորը,-քանի որ ոչ ոք օգնություն չի խնդրում: Անոր չի չօգնելը, ամոր է օգնություն խնդրելը»<sup>1</sup>: Երկու հասարակությունները հակադրելով՝ հեղինակը, երբեմն ընդունելով գերմանական նորմերի իրավացիությունը, նախընտրությունը տալիս է թուրքական կենսաձևին:

Այսպիսով, Բ. Յըլդըզը առաջին հեղինակներից էր, ով անդրադարձավ «գասթարբայթերական» թեմատիկային: Բ. Յըլդըզի ստեղծագործությունները բավականաչափ նյութ են տալիս միգրանտների առաջին սերնդի սոցիալական և հոգեբանական խնդիրները հասկանալու և ուսումնասիրելու համար: Սեփական փորձի վրա հիմնվելով՝ նա ներկայացրել է միգրանտների կյանքը, կենցաղի առանձնահատկությունները, այն հիմնական խնդիրներն ու բարդությունները, որոնց նրանք հանդիպում էին նոր երկրում: Միգրանտական կյանքի նկարագրություններն ու վերլուծությունը, ինքնության պահպաննան ու կորստի խնդիրը, մշակույթների բախման հարցը, որոնց իր ստեղծագործություններում անդրադարձել է Բ. Յըլդըզը, դարձան և թերևս ցայսօր էլ որոշ փոփոխություններով շարունակում են մնալ Գերմանիայի թուրքական համայնքի գրականության հիմնական թեմաները և այս կամ այն չափով արտացոլված են բոլոր գերմանաբնակ թուրք գրողների ստեղծագործություններում:

## «ГАСТАРБАЙТЕРСКАЯ» ТЕМАТИКА В ТВОРЧЕСТВЕ ТУРЕЦКОГО ПИСАТЕЛЯ БЕКИРА ЙЫЛДЫЗА

Наира Погосян

Литература турецкой общины Германии – явление интересное и достойное изучения. Одним из ее основателей считается турецкий писатель Бекир Йылдыз. Именно его роман «Турки в Германии» стал краеугольным камнем турецкой литературы в Германии, а проблемы, к которым он обращался в своих произведениях на «гастарбайтерскую» тему, продолжают оставаться актуальными до сих пор в творчестве турецких писателей Германии.

## THE THEME OF “GASTARBEITERS” IN THE WORKS OF TURKISH WRITER

BEKİR YILDIZ

Naira Poghosyan

The literature of the Turkish community of Germany is a very interesting phenomenon the initiation of which started in the mid-20th century when the first gastarbeiter from Turkey went to Germany for labour. Famous Turkish writer Bekir Yıldız was one of the founders of this literature. His novel “Turks in Germany” became the cornerstone of the Turkish-German literature. The books called “White song”, “German bread” are other prominent works of the author. Moreover, the main problems he raised in his works are still among the most discussed issues of the contemporary Turkish literature in Germany.

<sup>1</sup> Yıldız B., Türkler Almanya'da, s. 59.

**ՄՈՒԽԹԱՐ ԱՌԵԶՈՎԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՍԱՏԻԿ  
ԱՌԱՋԱՋԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Շուշան Խաչատրյան

ԵՊԴ, Արևելագիտության ֆակուլտետ, մագիստրանտ

Գիտ. դեկ.՝ պ.գ.թ., պրոֆ. Ա. Սաֆարյան

Էլփոստ՝ shush.khachatryan@gmail.com

Սույն աշխատանքում անդրադարձ ենք կատարել 20-րդ դ. ղազախ գրող Մուխթար Առւելովի գրական ժառանգությանը: Աշխատանքում քննության են առնվել մասնավորապես նրա ստեղծագործությունների թեմատիկ առանձնահատկությունները:

Եթե Մուխթար Առւելովի ստեղծագործական կյանքը պայմանականորեն բաժանենք փուլերի, ապա 1920-ական թթ. կարելի է համարել առաջին շրջանը: Այս շրջանի ստեղծագործությունները ցույց տվեցին Առւելովի ինչպես ուժեղ, այնպես էլ թույլ կողմերը: 1920-ական թթ. գրված ստեղծագործությունները թույլ էին գեղարվետականության և մտքի սրության տեսակետից, սակայն ունեին ընդգծված ուժեղ կողմեր: Իեղինակը խորապես տեղյակ էր նախ և առաջ ղազախ ժողովրդի կյանքին և կենցաղի բոլոր մանրանասնություններին, ժողովրդախոսակցական լեզվի առանձնահատկություններին, և հետո՝ անսահման սեր էր տածում հարազատ հողի նկատմամբ և ընդգծված անհանդուրժող վերաբերումներ ուներ անարդարության և բռնության նկատմամբ: Կասկածի տակ չդնելով այն փաստը, որ այս շրջանի ստեղծագործություններում մանրանասն և դիպուկորեն ներկայացվում են ղազախական կենցաղը, կոլորիտային կյանքն ու կերպարները, այնուամենայնիվ պետք է նշել, որ այս ստեղծագործությունները դեռ շատ հեռու էին կյանքի գեղարվետական պատկերումից: 1920-ական թթ. գրված ստեղծագործությունների առանձնահատկություններից մեկն այն է, որ կոլորիտային ռեալիստական պատկերները ներկայացվում են զուտ քննադատական ռեալիզմի միջոցով: Սակայն նա դեռ հեռու էր գործողությունների հեղափոխական ընթացումից և բավարարվում էր միայն երևույթների քննադատությանը՝ չառաջարկելով որևէ լուծում: Դերսուների ներքին աշխարհը, նրանց զգացումներն ու տրամադրությունները նույր լիրիկայով պատկերելը, դրանք բնության հետ ներդաշնակեցնելը 1920-ական թթ. առւելովյան ստեղծագործությունների մյուս՝ ուժեղ կողմերից են:

Դեղինակի այս շրջանի ստեղծագործությունների հիմնական թեման անօգնական և աղքատ նարդկանց կյանքն է: Այստեղ և Ռարիգան է «Անապատային պատկերներ» պատմվածքից, և որը Քասիմն ու Թեքտեգյուլն են «Կարաշ-Կարաշի հրադարձությունները» վիպակից, և «Ով էր մեղավոր» պատմվածքի հերոսուհին, և Քարագյոզը հանանուն պիեսից և այլն: Անօգնականների և հասարակ մարդկանց կերպարներ ստեղծելիս հեղինակն արդեն 1920-ական թթ. սկզբներից, անշուշտ որոշ թերացումներով, օգտագործում է կերպարների հոգեբանական վերլուծությունը: Սակայն այս հանգանաճը կարևոր է նաև այն պատճառով, որ հերսուների հոգեբանական վերլուծությունը ղազախ գրականության գեղարվետական արձակում նոր երևույթ էր: Այստեղ պետք է նշել նաև այս թեմատիկայով գրված «Որբություն» (1924), «Բննություն» (1925) և «Բատիրմա» (1925) պատմվածքները:

1921- 1928 թթ. առւելովյան պատմվածքներում հստակ երևում է ռուսական քննադատական ռեալիզմի դպրոցի ազդեցությունը, ինչը բավական ակնհայտ է երևում «Անցյալի ստվերներում» պատմվածքում:

Ժամանակի ընթացքում ստեղծագործություններից կարելի է տեսնել նաև հեղինակի աշխարհայացքի զարգացումը. նրա գրական վարպետության զարգաց-

մանը նպաստել էր նաև Միջինասիական և ապա Լենինգրադի պետական համալսարանում ստացած կրթությունը:

1920-ական թթ. գրեթե վերջին Առևզովը կարծես թե անցում է կատարում մասնավոր դեպքերի նկարագրությունից դեպի ավելի ծավալուն նկարագրության: Այսինքն՝ եթե նախկինում նկարագրվող պատկերները կյանքից վերցված դրվագներ էին կամ էպիգրաֆիկ հատվածներ, ապա համապատասխանաբար 1926 և 1927 թթ.գրված «Կարաշ-Կարաշի իրադարձությունները» և «Մոխրագույն արյունարրուն» վիպակներն այլ էին թե թեմայով, թե գեղարվեստական պատկերնան տեսակետից, քանի որ կյանքը, որը ներկայացվում էր ստեղծագործությունների մեջ, պատկերվում էր համեմատարար ավելի բազմակողմանիորեն և հերոսների հոգեբանական վերլուծությամբ<sup>1</sup>:

Արդեն 1920-ական թթ. վերջին և 1930-ական թթ. սկզբին Առևզովի ստեղծագործական կյանքում տեղի է ունենում շրջադարձ: Գլխավոր ուղղությունը, որով սկսում է աշխատել հեղինակը, դաշնում է սոցիալիստական ռեալիզմը, ինչն իր հետ թերում է նաև թեմատիկ որոշ փոփոխություններ: Այս անցումը գուցե նաև գաղափարական ճնշում էր, քանի որ նա մեղադրվում էր կրնունիստական «կուսակցության կանոնակարգը չպահելու», ազգայնական գաղափարներ արտահայտելու և տարածելու մեջ<sup>2</sup>:

Սոցիալիստական ռեալիզմով Առևզովը գրել է ինչպես պատմվածքներ, այնպես էլ պիեսներ, որտեղ նա փորձում էր պատկերել նոր կյանքն ու նոր մարդուն: Այս շրջանի բոլոր ստեղծագործությունները («Հետքեր», «Ներ կիրճ», «Ուսուսի», «Որսորդն ու արծիվը»), քացառությամբ «հասենի վերափոխումը» պատմվածքի, գրված են զուտ կոլխոզային թեմատիկայով:

Կոլխոզային կյանքը պատկերող թեմայով ստեղծագործելիս Առևզովը ջանում էր առավելագույն ներկայացնել սովետական մարդկանց դրական կողմերն ու լավագույն գծերը: Բայց այս հարցում նա ուներ ստեղծագործական և գաղափարական դժվարությունների: Իհարկե, այս դժվարությունները հասուլ էին այդ շրջանի բոլոր դազախ գրողների և առհասարակ գրականության համար, բայց դրանք նվազեցնում էին որոշ ստեղծագործությունների գեղարվեստականությունը: Խնդիրն այն էր, որ Առևզովը դեռ խորապես չէր գիտակցել, որ հասարակության մեջ փոփոխությունները, ինչին որ նա անդրադառնում էր, պետք էր նկարագրել ելնելով նախ հերոսների հոգեբանական փոփոխությունների պատճառահետևանքային կապից: Այսինքն՝ հերոսների գործողությունները բխեցնում էր ոչ թե հերոսների ներաշխարհում տեղի ունեցող փոփոխություններից, որոնք կապված են հասարակական փոփոխությունների հետ, այլ պարզապես արտաքին՝ հասարակական ու դասակարգային փոփոխությունների հետ:

Սոցիալիստական ուղղությամբ գրված ստեղծագործություններում հեղինակը հիմնական հերոսների միջոցով պատկերում է հնի ու նորի պայքարը՝ պայքար նոր գաղափարախոսության և նոր կարգերի: Եվ այս պայքարն առավել սուր պատկերելու համար Առևզովը հաճախ էր դիմում գեղարվեստական խորամանկության. հերոսների գաղափարական և մյուս հակասությունները սրելու նպատակով իրար հակասող երկու գաղափարների կրողներ էր դարձնում երկու հարազատ անձանց, օրինակ՝ երկու արյունակից եղայրների: Ավելի ուշ Առևզովն օգտագործում է այս մեթոդը նաև «Աբայի ուղին» վեպում՝ հակասության մի կողմում դնելով Աբային, մյուս կողմում՝ նրա հորը: Բնության կենդանացումը և դրանց միջոցով սիմվոլների ստեղծումը 1920-ական թթ. վերջին և 1930-ական թթ. սկզբի առևզովյան ստեղծագործությունների կարևոր առանձնահատկություններն են:

<sup>1</sup> Այս մասին տես՝ Այզով Վ., Первые годы, <http://www.auezov.kz/node/551>

<sup>2</sup> «Библиографический указатель на творчество Мухтара Айзова», Алма-Ата, 2005, с. 45-49.

Արձակին զուգահեռ Առևզովն աշխատել է նաև դրամատուրգիայի ոլորտում: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ Առևզովն արդարացիորեն համարվում է ղազախական թատրոնի հիմնադիրը: Կարելի է հիշել պարզապես «Ելնիկ և Քերեք» պիեսը, որն առաջին անգամ բեմադրվել է 1917 թ. «առլային դերասանների» կողմից<sup>1</sup>, ապա ավելի ուշ՝ 1926 թ., բեմադրվեց արդեն կազմավորված պրոֆեսիոնալ թեմում: Նշենք նաև, որ կյանքի ընթացքում Առևզովը մի քանի անգամ փոփոխությունների ենթարկեց պիեսը, ինչը, անտարակույս, կապված էր նրա գեղարվեստական վարպետության զարգացման հետ. հասկանալով, որ «Ելնիկ և Քերեք» պիեսը լինելու է ղազախական թատրոնի այցեքարտը, նա փորձում էր հնարավորինս կատարելագործել այն:

1930-ական թթ. ավելի քեղմնավոր եղան Առևզովի՝ որպես դրամատուրգի համար: Այս շրջանի թեմատիկ առանձանահատկությունն այն էր, որ ստեղծագործողը կարծես դիմում է պատմական իրադարձությունների օգնությանը՝ գաղափարական ասելիքն ընթերցողին հասցնելու համար: Ընդ որում, պատմական իրադարձությունները նկարագրելիս ևս շեշտը դրվում է սոցիալական թեմատիկայի վրա:

1934 թ. գրված «Կայծեր» (այն հայտնի է նաև «Գիշերային որոտներ» անվամբ) պիեսի հիմքում ընկած են պատմական և հասրակական-քաղաքական իրադարձություններ՝ ղազախների համար ազատագրական պայքար համարվող 1916 թ. շարժումը: Նշենք, որ այս թեմայով մի փոքր ավելի վաղ գրվել էր նաև «Դժվար ժամանակներ» վիպակը, որտեղ հեղինակը շեշտը դրել էր իրադարձությունների սոցիալական կողմի վրա: Մինչդեռ պիեսում արդեն ընդգծված երևում է, որ հեղինակը տուրք է տալիս մարդսիստական գաղափարախոսությանը և ներկայացնում է իրադարձությունների գաղապարական հենքը:

1930-ական թթ. առհասարակ բեղմնավոր էին ղազախական դրամատուրգիայի համար: Առևզովի հետ ասպարեզ են իշնում Բ. Մայլինը և Գ. Մուսրեպովան: Այս շրջանում դրամատուրգիայի «թիրախն» են դառնում ոչ միայն Ֆոլկլորային և պատմական սյուժեները, այլ նաև սովետական կյանքի խնդիրները: Ժողովրդական սյուժեների՝ «Քըզ ժիրեք», «Կողի Կորպէշ և Բայան Սուլու»-ի մշակումներն իրականացրեց Գ. Մուսրեպովան, «Եր-մարդըն»-ինը՝ Ս. Կամիլովը և այլն<sup>2</sup>: Դրամատուրգներն անդրադարձան 1916 թ. իրադարձություններին ևս, և Առևզովը նույնական չմնաց. «Կայծեր» պիեսի կողմին հայտնվեցին նաև «Այնան-Շոլպան», «Որս» (1934), «Խմճորի այգում» (1937) և «Սահամանագծին» (1937) պիեսները:

Քանի որ «Կայծեր» պիեսը 1930-ական թթ. առևզովան դրամատուրգիայի առանցքային կետերից է և թեմատիկ առումով ևս տիպիկ օրինակ է այս շրջանի ստեղծագործությունների համար, անդրադարձանք այս պիեսին ավելի մանրամասն:

«Կայծեր»-ը իր սյուժեով և գործողությունների կատարման ժամանակահատվածի առումով կապված է «Սովի տարիներ» վիպակի հետ (1928), սակայն, ի տարբերություն նախորդի, պիեսում ազատագրական պայքարը նկարագրված է ավելի բովանդակալից, հերոսների գործողություններն ավելի պատճառաբանված են հոգերանական գեղումներով: Պիեսն արդյունք է բազմակողմանի գիտելիքների, իրադարձությունների խորն իմացության, ինչպես նաև խորը գեղարվեստական ներշնչանքի: Այս պիեսում հասարակական իրադարձությունները ներկայացնող հատվածները պատկերված են գործողությունների հոլովականությամբ: Պատահական չէ, որ մասագետներն այս պիեսը համարում են Առևզովի՝ սոցիալիստական ռեալիզմով գրված լրջագույն ստեղծագործությունը<sup>3</sup>:

<sup>1</sup> Лизунова Е., Диосенбаева И., Мухтар Ауэзов к 60-летию, Алма-Ата, 1952, с. 11.

<sup>2</sup> «История казахской литературы», 2 т., Алма-Ата, 1971, с. 157.

<sup>3</sup> Каратасев М., Мухтар Ауэзов: заметки о творчестве, Алма-Ата, 1967, с. 26.

«Կայծեր» պիեսում արտացոլված են սուր սոցիալական բախումները, ինչը հանգեցնում է 1916 թ. ապստամբությանը: Սա հեղինակի համար յուրատեսակ վերլուծություն էր այն հակասության, որը կար իշխող դասակարգի և աշխատավոր զանգվածի միջև:

1937 թ. «Գրական Ղազախստան» ամսագրում լույս է տեսնում Առևելզովի նոր վեպի առաջին հատվածը՝ «Այսպես երգեց Տատյանան տափաստանում» Վերնագրով<sup>1</sup>, ինչը հայտարարեց դազախ գրավոր գրականության հիմնադիր Աբայ Կունաճակին նվիրված ստեղծագործությունների շաբաթ սկիզբը:

Այսահոտվ, 1930-ական թթ. Արևելյան ստեղծագործությունների թեման բազմազան էր. նա գրում էր նաև գրականագիտական ակնարկներ, կատարում էր թարգմանություններ, ակտիվորեն մասնակցում էր դաշտայի հասարակության մեջ նոր ձևավորվող գրականագիտական-քննադատական կյանքին: Իհարկե, այստեղ պետք է նշել նաև, որ գրականագիտական գրեթե բոլոր ակնարկներում ու աշխատանքներում Արևելյանը կամա թե ակամա տուրք էր տալիս ժամանակի գաղափարախոսությանը՝ քննադատելով նինչիեղափոխական պանիսամիստական մոտեցումները գրականության մեջ: Նա բացահայտորեն քննադատում էր այն ամենը, ինչը որ շեղվում էր իշխող գաղափարախոսությունից. «Հատկապես հեղափոխության առաջին տարիներին բուրժուա-նացիոնալիստ գրողների որդեգրած քաղաքականությունը գրականության մեջ անընդունելի պանրյութքական քաղաքականություն էր... Առավել բուրժուա-նացիոնալիստ գրող Մոգման Ժումարակի ստեղծագործություններում մենք տեսնում ենք նաև ոչ միայն հայրենիքի բնության ժխտում, այլև կյանքի ժխտում առհասարակ: Իրականությունից հեռանալով և նիայնությանը հանձնվելով՝ նա փորձում է դաշտայի գրականության մեջ արմատավորել հուսալքությունն ու վիատությունը, միստիկան, մեր ժողովորդին օտար էլեկտիզմը (տարատեսակ հայացքների, մոտեցումների անսկզբունք համատեղում, Շ.Խ.)»<sup>2</sup>:

Ամփոփելով պետք է նշել, որ տարբեր թեմատիկաներով ստեղծագործելի Առևտությունները հաջողական չեն տարբեր դրամատիկան պահպանության մեջ՝ առաջարկելով առաջարկային գործությունները և առաջարկային գործությունները:

## ТЕМАТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПРОИЗВЕДЕНИЙ МУХТАРА АУЭЗОВА

Шушан Хачатрян

В статье рассмотрено литературное наследие казахского писателя XX века Мухтара Ауэзова. Особое внимание мы обратили на тематику его произведений, на выбор которой, несомненно, повлияли исторические и политические события этого времени, которые сформировали его мышление как писателя.

В 1920-х годах начинающий писатель изображает жизнь бедных казахов в ауле, которые страдают из-за социальной несправедливости. Позже, в 30-ые годы, Ауэзов начинает работать над колхозной темой. А уже в конце 30-х-начале 40-х годов он заявил о себе как драматург, став основоположником казахского театра. Позже он начинает заниматься исследованием жизни и поэзии выдающегося казахского мыслителя Абая Кунанбаева, который становится прототипом главного героя поэме-эпопеи Ауэзова «Путь Абая».

<sup>1</sup> Лизунова Е., Дюсенбаева И., Мухтар Ауэзов к 60-летию, Алма-Ата, 1952, с. 26.

<sup>2</sup> Ауззов М., Мысли разных лет (сборник статей), Алматы, 1961, с. 42-43.

## **THEMATIC FEATURES OF MUKHTAR AUEZOV'S WORKS**

Shushan Khachatryan

The current article presents the literary heritage of the 20th-century Kazakh author Mukhtar Auezov. We pay special attention to the theme features of his works. It is obvious that some historical and political events were the main reasons that made the author change the themes of his works. In order to make our readers understand what those political and historical events were, we give some information about these changes and the changes in his private life as well. So, in the stories written in the 1920's the young author represents the life in Kazakh villages showing us torments and difficulties the characters have to overcome. Then, in the 1930's Mukhtar Auezov turns to socialism, and the main theme of his works becomes the so-called Kolkhoz theme. In the late 1930's and in the beginning of the 1940's Mukhtar Auezov improves his skills as a dramaturge. He is considered to be the founder of the Kazakh theatre. Finally, he begins to research the life of the Kazakh greatest thinker Abai Kunanbayev as a result of which he later becomes the main character of Mukhtar Auezov's greatest epic novel "The way of Abai".

ՌՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ  
ԲԱՆԱՒՐՈՒԹՅՈՒՆ

**РОМАНО-ГЕРМАНСКАЯ  
ФИЛОЛОГИЯ**

**ROMANCE-GERMANIC  
PHILOLOGY**



**ԻՏԱԼՈ ԿԱԼՎԻՆՈՅԻ «ՄԱՐԿՈՎԱԼԴՈ» ՎԵՊԻ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ  
ԱՌԱՋԱՋԱՏԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ**

Յասմիկ Կարապետյան

ԵՊՅ, Ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետ,  
բակալավրիատի ուսանող

Գիտ. դեկ.՝ բ.գ.դ., պրոֆ. Դ. Էդոյան

Էլփոստ՝ [hasmik.karapetyan93@gmail.com](mailto:hasmik.karapetyan93@gmail.com)

Իտալացի ժամանակակից գրող, արձակագիր Իտալո Կալվինոն ամբողջ աշխարհում ընթերցողներին հիացրել է իր պարզ, հեքիաթային պատմվածքներով: ճանապարհորդող կենսաբանների որդին ծնվել է 1923 թ. Կուրայում: Հետագայում ընտանիքը տեղափոխվում է Իտալիա, Սան Ռեմո: Նա մասնակցում է Երկրորդ համաշխարհային պատերազմին, մտնում Կոմունիստական կուսակցության շարքերը, 1943-1945 թթ. պայքարում Իտալիայի ազատագրման համար: 1947 թ. Թուրինի համալսարանի գրականության բաժինը ավարտելուց հետո թրակցում է կոմունիստական թերթերին, 35 տարի աշխատում է Einaudi հրատարակչական տանը: 1957 թ. խորապես հիասթափվելով Արևելյան Եվրոպայում տեղի ունեցած դեպքերից լքում է Կոմունիստական կուսակցության շարքերը: Աստիճանաբար նրա ստեղծագործություններում գերիշխող է դաշնում նեռուեալիստական ոճը, որով իր առանձնահատուկ և տարրերակիչ խոսքն է ունենում 20-րդ դ. իտալական գրականության մեջ: Նրա ստեղծագործություններից են «Անտեսանելի քաղաքները», «Կոսմիկոնիկները», «Եթե ձմռան գիշերը մի ճանապարհորդ»: Նրա ամենահայտնի ստեղծագործությունը «Սեր նախնիները» եռագրությունն է, որտեղ Կալվինոն նկարագրում է ժամանակակից մարդու այլարանական կերպարը<sup>1</sup>:

Իտալական նեռուեալիզմը ծաղկում է ապրում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այն երևան էր հանուն պատերազմին հանգեցնող և դրանից բխող սոցիալական խնդիրները: Յասնելով արմատներին՝ 1920-ական թթ., նման է վերիգմին (ռեալիզմի), սակայն տարրերվում է, որ նեռուեալիզմը ներշնչվել էր ֆաշիստական հալածանքերից, դիմադրությունից և պատերազմից: Բացի Իտալո Կալվինոյից նեռուեալիստական հայտնի գրողներ էին Ալբերտ Սորավիան և Չեզարե Պավեզեն: Պատերազմի տարիներին շատ նեռուեալիստ գրողներ բանտարկվեցին, երկրից հեռացան, կամ միացան պարտիզանական շարժմանը: Չարժումը նոր քափ առավ պատերազմից հետո: Նեռուեալիստական ֆիլմերը վավերագրական են, դերասանները հաճախ սիրողական մակարդակի, իսկ գրողնորությունը տեղի էր ունենում սվորական իրավիճակներում: Նեռուեալիստական երկու նշանակալի ֆիլմեր էին Ռուսելինի «Քաղ քաղաք» և Դե Սիկայի «Հեծանիվի գողը» ֆիլմերը<sup>2</sup>:

«Մարկովալդոն» կան «Տարվա եղանակները քաղաքում» գիրքը բաղկացած է 20 նովելից: Ամեն մի նովելը նվիրված է մի եղանակի: տարվա չորս եղանակների շրջանը գրքում կրկնվում է 5 անգամ: Բոլոր նովելներում հերոսը նեկան է՝ Մարկովալդոն: Իտալո Կալվինոն իր «Իտալական հեքիաթներ» ստեղծագործության մեջ բացահայտում է Մարկովալդոյի հմայքի գաղտնիքը: Կալվինոն հավատում է, որ իրականությունը կախարդական է: Եղր 20-րդ դ. երկրորդ կեսին նա սկսեց գրել «Մարկովալդոն», չգիտեր, որ ստեղծում է պատմողական ժանրի գլուխգործոց ֆրանսիացի քննադատների կողմից ուսուե roman պիտակավորված: Նա պարզապես հետևել է իր բնագդներին որպես հեքիաթաց և հասել տևական հավասարակշռության 20-

<sup>1</sup> Calligaris C., Italo Calvino, Mursia, 1985, p. 171.

<sup>2</sup> Roca D., La pangea della cultura. Proposte concrete di moduli interdisciplinari, Soveria Manelli, 2003, p. 284.

ոդ դ. իտալական նեռոռմանտիզմի ժառանգության և հերիաքային տեսլականի միջև: Միայն վեպի վերջում է նորաստեղծ ժամանակակից վերաբերությունը:

«Միայն տարածության մեջ ջյունը այնպես սպիտակ է, ինչպես այս էջում»:

Եվ ավելի զարմանալի է, որ «Անհետացած քաղաքներ» ստեղծագործությունը արդեն կար «Մարկովալդոյի» մեջ՝ ավելի համոզիչ պատմողական լեզվով: «Անտեսանելի քաղաքները» հիշողության պես են, մինչդեռ «Մարկովալդոն» նեզ փոխանցում է ավելի զգացմունքային, շոշափելի կյանքի որակներ:

Նրա կերպարին բնորոշ են որոշ գծեր՝ միամիտ է, օգայուն, հնարամիտ, փոքրինչ ծիծաղելի և տիտուր: Պարզ հոգի է, ունի բազմանդամ ընտանիք, աշխատում է որպես սևագործ բանվոր: Նա Չարլի Չալինի կերտած սպիտակ հերոս-սատանաների շարքից վերջին մարմնացումն է, բնության զավակ է՝ բանտարկված արյունաբերական քաղաքում: Թե որտեղից է նա եկել քաղաք, գրքում գրված չէ, թերևս նրան կարելի է բնորոշել «Էմիգրանտ» բառով, թեպետ այդ բառը գրքում ոչ մի տեղ չի օգտագործվում: Կերպարը լավագույնս բնութագրվում է հետևյալ հատվածում. «Այս Մարկովալդոյի աչքերը քիչ էին հարմարվել քաղաքային կյանքին. լուսավոր ցուցանակներ, լուսացույցներ, պատի թերթեր... Դրանք ինչքան էլ գրավիչ լինեին, նա երբեք ուշադրություն չէր դարձնում, կարծես նրա հայացքը սահում էր անապատի ավազների վրայով: Եվ ընդհակառակը դեղնած տերևը կամ փետուրը նրա աչքից երբեք չէին վրիպում: Չէր լինում այնպես, որ Մարկովալդոն չնկատեր ծիրու մեջքի ծիածանները, սեղանի փայտոցիլները կամ մայթի վրայի թզի կերկը և դրանք չդարձներ իր մտորումների առարկան՝ բացահայտելով տարվա եղանակների փոփոխությունները, իր հոգու երազները, իր թշվառ գոյությունը»<sup>1</sup>:

Այս բառերը կարող են ծառայել որպես կերպարի ներկայացում բոլոր նովելներում: Միավորելով բոլոր նովելները՝ քաղաքի կենտրոնում Մարկովալդոն՝

- 1) Սանրամանորեն ուսումնասիրում է եղանակային փոփոխությունները և կենդանիներն ու բույսերը,
- 2) Երազում է բնության նախնական վիճակի վերականգնման մասին,
- 3) Միշտ առաջ է շարժվում չնայած անընդհատ հիմաքափություններին:

Ամեն իրավիճակում ելքը մեկ չի լինում: Կալվինոյի հերոսն ունի երազանքներ, որոնք նա կարող էր իրականացնել: Այնուամենայնիվ, մի բանում Մարկովալդոն ծիշտ էր. ամեն ինչ ավարտվում էր իր համար անսպասելի կերպով: Օրինակներից մեկն էլ, երբ վեպում Մարկովալդոն խնանում է բույսը, որը նրա համար ավելին էր, քան սովորական բույսը: Բույսը գրեթե չորացել էր, բայց Մարկովալդոն հավատում էր, որ կարող է կյանքի վերադարձնել նրան: Նա ամեն օր ջրում և խնամում է նրան: Անգամ մի անձրևոտ գիշեր իր դեկավարին խնդրեց տուն տանել բույսը, քան դրսում թողնել: Հաջորդ օրը նկատեց, որ դեռ անձրևում է: Նա խնդրեց, որ բույսը մինչև շաբարված վերջ իր տանը մնա: Այսպիսով հնարավորություն ստացավ բույսին ամբողջովին առողջացնել: Մի քանի օր անց աշխատանքից վերադառնալով նկատեց, որ բույսը ծառի չափերի է հասել: Մարկովալդոյի տնօրենը որոշեց այն փոխարինել մեկ այլ նորմալ չափերի բույսով: Մարկովալդոն պատրաստ չէր բաժանվել իր սիրելի բույսից, պատրաստ չէր իր՝ մի քանի շաբարված աշխատանքը մեկ ուրիշին տալ, և որոշեց տուն տանել: ճանապարհին մարդիկ տեսնում էին հսկայական բույսի օդում պարող դեղին տերևները, որոշները անգամ փորձում էին բռնել դրանք: Մարկովալդոն, երբ ետ նայեց, տեսավ, որ մնացել է միայն մեկ տերև, որն էլ քամու գիրկը ընկած լքեց Մարկովալդոյից<sup>2</sup>: Սա մեկն էր այն դեպքերից, որ պատահում էին Մարկովալդոյի հետ: Նա ուրիշ սպասումներ ուներ, բայց միշտ չէր, որ ամեն ինչ վատ ավարտ էր ունենում:

Մարկովալդոյի սերը դեպի բնությունը միայն կարող էր ծնվել քաղաքաբնակի

<sup>1</sup> Calvino I., Marcovaldo ovvero le stagioni in città, Torino, 1996, p. 6.

<sup>2</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 106:

սրտում: Այդ պատճառով ոչինչ չենք կարող ասել նրա գյուղական ծագման նախին: Քաղաքի այս օտարականը իրականում հիմնալի քաղաքացի է:

«Մարկովալդոն» համարվում է քաղաքային հեքիաթի ձևով գրված էկոլոգիական այլաբանություն: Հոգեբանական գաղափարները հետին պլան են մղվել ի օգուտ մուլտֆիլմի, որտեղ մարդիկ և փաստերը իրար են հաջորդում երկրաչափական համաշխատթաքայմբ: Սուր մեկնաբանությունները և պարզությունը բնութագրում են Կալվինոյի լավագույն գրքերը, ինչպես օրինակ «Խաչված ճակատագրերի դյակը», «Գոյություն չունեցող ասպետը», «Երկատված վիկոնտը»: Անգամ Վաղ շրջանի հուսորական վիրտուոզության մեջ նրա տեսլականի ճկունությունը և խորությունը, հատկապես «Մարկովալդոյի» մի քանի պատմվածքներում, ինչպես օրինակ «Ջան մեջ կորած քաղաքը», «Շաբաթ օրվա արևը, ավազը և քունք»: Նա գրում է թերթ և անփույթ: Բայց այն ինչ ընթերցողը անմիջապես նկատում է նրա անզուսպ բանաստեղծական զգացմունքն է կյանքի նկատմամբ:

Մարկովալդոն ապրում է այս պատմությունների մեջ՝ աշխարհից կտրված ուսումնասիրելով, արտացոլելով և համեմատելով: Նա խոնարի բանվոր է կորած մեծ քաղաքում: Նա փակված է ժամանակակից կյանքի անհրականության մեջ, վայր, որտեղ անգամ շնչահեղձ են լինում կենդանիները («Դամառ կատունների այգին», «Թունավոր նապաստակը»): Նա կարուտում է բնությունը, իսկ բնությունը նրան զարնանահրաց կերպով պարզեցատրում է: Ասֆալտի միջից սնկեր են աճում («Սնկերը քաղաքում»), երկինքը համկարծ լայն բացվում է («Դանգիստ նստարանի վրա»), լուսինն ավելի վառ է շողում ցուցաբենիկերի վերևում տեղադրված ներնային լուսերից («Լուսինը և «Սյակը»):

Այս հեքիաթի հերոսները ժամանակակից կյանքից են՝ ավելածուներ, գիշերային պահակներ, գործազրուկներ, ովքեր, գլխավոր հերոսից սկսած, կրում են բարձրահունչ միջնադարյան անուններ, համարյա ասպետական պիեմների պես: Քաղաքի անունը երբեք չի հիշատակվում: Յնարավոր է, որ դա Միլանն է կամ Թուրինը, որտեղ Կալվինոն անցկացրել է կյանքի մեծ մասը: Այս անորոշությամբ Կալվինոն ցանկանում է ցույց տալ, որ դա ինչ-որ քաղաք չէ, այլ արդյունաբերական մայրաքաղաք՝ վերացարկված և տիպիկ:

Նույնքան անորոշ է այն ընկերությունը, որտեղ աշխատում է Մարկովալդոն: Անհայտ է, թե ինչ է այն արտադրում կամ վաճառում: Ակնհայտ է միայն մեկ բան՝ Մարկովալդոն օրական ուր ժամ բեռնում և բեռնաթափում է արկդեր: «Սրավ» ընկերությունը բոլոր ընկերությունների խորհրդանիշն է, որոնք դեկավարում են մարդկանց և տնօրինում վերջիններին ժամանակը:

Ի հակադրություն նովելների սյուժետային պարզության՝ գոքի ոճը հիմնված է բանաստեղծական հաջորդականության և ժամանակակից քաղաքային կյանքի, կյանքի մեջ ու փոքր թշվառությունների պրոզայիկ հեգնանքի վրա: Նովելներում սյուժեն կարծ է և հասարակ: Յենց առաջին նախադասությունը մեզ ներկայացնում է եղանակային թեման: «Քամին, հեռվից փշելով քաղաք, իր հետ բերում է զարմանահրաց շնորհներ, որոնք նկատում են միայն մի քանի զգայուն հոգիներ, ինչպես ալերգիկներն, ովքեր փաշտում են ծաղիկների փոշուց»<sup>1</sup>: Մյուս նովելներում սյուժեն կառուցված չէ միայն ծաղրանկարների վրա: Դրանցից յուրաքանչյուրն ունի ոճային առանձնահատկություն: Օրինակ. «Դանգիստ նստարանի վրա» նովելում համեմատություն է անում լուսնի և անընդհատ դեղին գույնը ցույց տվող լուսացույցի գույների միջև:

«Անտառ մայրուղու վրա» նովելը կարծես հրավերք լինի հանդիպելու ժամանակակից նուրբ ու երգիծական Կաֆկային. «Ցուրտը աշխարհում շարժվելու հազարավոր ձևեր և հազարավոր տարերակներ ունի՝ ծովերի վրա արշավում է վայրի ձիերի երամակի պես, գյուղերում այն ընկնում է ինչպես մորեխների պարսը, իսկ քաղաք-

<sup>1</sup> Calvino I., p. 15.

Աերում սրածայր դանակի պես կտրատում է փողոցները և թափանցում սառը տների ճաքերի միջով»<sup>1</sup>:

Գիրքը գրվել է 10 տարում՝ 1952-1963 թթ.: Այս տարիների ընթացքում խոյական հասարակության մեջ զարգացումները համապատասխանում են գրքի ներքին պատմության գրական մթնոլորտին:

Պատերազմից հետո՝ աղքատության և լարվածության տարիներին, հումանիզմը գոյության պայքարի բոլոր էլեմենտար խնդիրներով գրական և կինոնատոգրաֆիական նեռուեալիզմի գլխավոր թեման էր: Կալվինոյի պատմվածքները գրվեցին այն ժամանակ, երբ նեռուեալիզման մեջ ալիքն արդեն հանդարտվել էր. հետաքարտազյան վեպերը և ֆիլմերը լայնորեն լրացրանում էին աղքատությունը կյանքը: Քիչ-քիչ մբնոլորտը փոխվում էր: Խոպիայի տնտեսությունը վկայում էր զարգանալ, այլ թեմաներ էին դաշնում արդիական: Արժեքները փոխվում էին, և Կալվինոյի հեգնական մելանխոլիկ հեքիաթները ծնվեցին այդ «սոցիոլոգիական գրականությանը» գուգահեռ:

Այսուեղու ոչ թե անպաշտպան մարդու ներգրավվումն է հասարակական կառույցներին, այլ դառն արկած, որ գորեք միշտ պարտության դրոշմ ունի: Կարևոր է, որ սա երկրի կամ քաղաքացիների ողբերգությունը չէ, այլ այն մարդկանց, ովքեր ճնշված են կյանքի հետ համագործակցող անողոր սարքով՝ սով և աղքատություն, իսկ հետևանքներն են կիսաքաղցր քազմաքիվ երեխաները և զայրությով լցված կինը: Իր համար պարզագույն տառապանքներից կդառնա բնության արկածային փնտրութը, ինչին քաղաքը դեմ է:

Քաղաքի ցենենտի, ասֆալտի, փոշու մեջ Մարկովալդոն փնտրում է բնությունը: Բայց գոյություն ունի՝ բնությունը: Այն, ինչ նա գտնում է քինոտ, կեղծված բնությունն է՝ արատավորված արհեստական կյանքով: Մարկովալդոն մեր ժամանակակից հեքիաթի հերոսն է:

Կալվինոյի լեզուն չոր է և դիպուկ, գուրկ ավելորդաբանություններից: Բնությունը նկարագրելիս կիսաքանաստեղծական ոճը փոխվում է պրոզայիկ հեգնականի ժամանակակից քաղաքի կյանքը նկարագրելիս:

Սա գիրք է երեխաների, պատանիների, թե՝ մեծերի համար: Մենք տեսնում ենք, թե ինչպես է այդ ամենը միահյուսվում գրքում: Մի գիրք է, որի միջոցով հեղինակն իր տարակուսանքներով, կասկածներով ու մտահոգություններով կիսվում է աշխարհի հետ: Յնարավոր է՝ այդպես է:

## ХУДОЖЕСТВЕННЫЕ ОСОБЕННОСТИ РОМАНА ИТАЛО КАЛЬВИНО «МАРКОВАЛЬДО, ИЛИ ВРЕМЕНА ГОДА В ГОРОДЕ»

Асмик Карапетян

Тема статьи – художественные особенности рассказов в сборнике современного итальянского писателя, прозаика и эссеиста Итalo Кальвино «Марковальдо, или времена года в городе». В повествование включены моменты из жизни писателя, которые оказали большое влияние на его творчество. Эти эпизоды из реальной жизни автора способствуют созданию у читателя более полного представления о личности автора и его творческом пути. Итalo Кальвино изображает жизнь бедного сельского человека и его семьи, живущей в большом индустриальном городе в северной Италии. Главный герой романа – Марковальдо – любит природу и с отвращением относится к городской жизни. В каждом из рассказов Марковальдо встречается с тем, что кажется естественным и красивым, но впоследствии разочаровывает его. Темами,

<sup>1</sup>Տես նույն տեղում, էջ 54

объединяющими рассказы в сборнике, являются темы загрязнения окружающей среды, соотнесения вымысла и действительности, самоотречения, бедности и защиты прав потребителей. Природа в рассказах изображена уверенной и сильной, тогда как город изображен негативно.

## **ARTISTIC PECULIARITIES OF ITALO CAVLINO'S NOVEL “MARCOVALDO”**

Hasmik Karapetyan

The subject of the article is the artistic features in the collection of stories “Marcovaldo” and “The seasons in the city”, written by an Italian writer, novelist and essayist Italo Calvino. The story includes some facts about his life and had a great influence on his works and also in order to make the readers have an idea about the collection of stories of the Italian writer, Italo Calvino shows the life of a poor rural man and his family, who lived in a big industrial city in Northern Italy. The main character Marcovaldo loves nature and hates the city life. In each story he faces something that seems to be natural and beautiful, but actually disappoints him. General topics in the stories include the pollution of environment, the correlation of fiction and reality, self-denial, poverty and Consumer Protection. In each story the nature is described as self confident and strong, while the city is described negatively.

**«ՀՐԵԱԿԱՍՈՒԹՅԱՆ» ԹԵՍԱՆ ՍՈԼ ԲԵԼԼՈՈԻԻ «ՌԱՎԵԼՇԱՅԻՆ» ՎԵՊՈՒՄ  
Նարե Հակոբյան**

**ԵՊԴ, Ռոմանագերմանական քանասիրության ֆակուլտետ, մագիստրանտ  
Գիտ. դեկ.՝ բ.գ.թ., դոց. Ա. Եզանյան  
Էլփոստ՝ nare.hakobyan.1990@mail.ru**

20-րդ դ. ամերիկյան գրականությունը հստակորեն իր վճռորոշ դերն ունեցավ համաշխարհային գրականության զարգացման հարցում: Այդ ազդեցությունը յուրօրինակ էր և արտացոլում էր այդ դարաշրջանի հասարակական-քաղաքական, ինչպես նաև պատմական դեպքերը: Դարասկզբի վիպագործությունը ընդարձակեցին գրականության նյութի շոշափելիքի սահմանները՝ անդրադառնալով նաև երկրում տիրող անարդար քաղաքական նքնուրություն: Երկար պրատումերը, ոմի ու ծկի հայտնաբերման փորձերը նպաստեցին գրական հճերի ազատությանը: Առաջին համշխարհային պատերազմից հետո շատ գրողներ (Էլիոթ, Գերտրուդա Շտայն) արդեն իսկ խոսում էին ամերիկյան գրականության իրեն անկախ գրականություն դառնալու հեռանկարի մասին: Չենց 20-րդ դ. է, որ ամերիկացի գրողներն այլևս չեն դիմում Եվրոպային ներշնչչելու համար, այլ ունեին հստակ ձևավորված ոճեր:

Ավելի ուշ հաջորդեցին երկրորդ համաշխարհային պատերազմի սուսկալի դեպքերը, որից անմասն չմնացին Ֆիցերալդը, Ջեմինգսը, Ֆոլքները և այլք: Ֆիցերալդը տագնապում էր երազանքների կործանման համար, Ջեմինգսը՝ մատնանցում էր աճող մահվան և բռնության դեպքերը «Ամերիկյան դեկլարացիայի» արժեքների բացարձակ աղճատման պարագայում: Այդ նույն շրջանում Ֆոլքներն գործեց մտքի թրիչք՝ բացահայտելով անձին ներքին հոգեվիճակը, մարդկային մտքի բազմաշերտությունը: Եվ հատկանշական է, որ հենց քաններորդ դարի ամերիկյան գրականությունն էր, որ հնարավորություն տվեց նախորդ դարում ձևավորված ազգային փոքրամասնությունների գրական ժառանգությանը գոյություն ունենալ: Նոր գրականության զարգացումն ուղեկցվում էր քաղաքացիական իրավունքների ու ազգային հպատության գիտակցմանը: Արդյունքում ձևավորվեցին ասիհական, չինական, հնդկական, հրեական, լատինական-ամերիկյան գրականությունները, որոնցից յուրաքանչյուրն արտացոլում էր տվյալ ազգային փոքրամասնության ինտեգրումն Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Ինտեգրման տեսակետից հետաքրքիր է հետաների ներգրավումն ամերիկյան հասարակության մեջ:

Հրեաները սկսել են ներգաղթել Ամերիկա դեռևս տասնյոթերորդ դարից՝ կազմելով հրեական համայնքներ: Չենց այս շրջանից էր, որ սկսվեց հրեաների ասիմիլացիան և ինտեգրումը դեպի ամերիկյան մշակույթ: Այսպիսով, հրեան դարձավ ամերիկյան կյանքի մաս, թեև հիշողություններով շարունակում էր կապված մնալ իր հայրենիքի հետ, պահպանել իր հրեականությունը: Բայց հետաքրքրաշարժ է, որ այդ հրեականությունը ժամանակի ընթացքում իր մեջ սկսում է ներառել ամերիկյան տարրեր՝ որպես արդյունք ձևավորելով «անհատի նոր ինքնությունը»: Այս նոր ինքնությունը տարբերվում էր մինչ այդ գոյություն ունեցող հրեայի ինքնությունից: Նախկինում հրեա էր համարվում նա, ով ծնվել էր հրեական ընտանիքում, դավանում էր իինդրուիզմ, մինչդեռ նոր հրեական ինքնությունն իր մեջ ներառում է ամերիկյան մշակույթի հետ զուգադրված հրեական մշակութային էլեմենտներ, ձևափոխված լեզվի առկայություն, քանզի հիշեցնենով էին խոսում դեպի Ամերիկա արտագաղթած միայն առաջին սերնդի հրեաները: Այս ամենին պետք է նաև հավելել «տան» կոնցեպտը, որովհետև ներգաղթյալ հրեաների երկրորդ, երրորդ սերունդները ծնվել էին Ամերիկայում և չեն գործ կորցրած տան, հայրենիքի հանդեպ այն, ինչ գործ էին ներգաղթյած հրեաների առաջին սերունդը: Չետևաբար, «էթնիկական ինքնությունը» սիմվոլիկ բնույթ է կրում՝ չսահմանափակվելով եթնիկական-ազգային կառւցվածքով,

քանի որ հրեական ինքնությունը պահպանվեց, թեև հրեաները ապրում էին սփյուռքում: Եվ հենց այստեղ է, որ պետք է մատնանշել և խոսել ամերիկյան մշակույթի եզակիության մասին, քանզի այս մշակույթը հնարավորություն տվեց հրեային պահպանել իր մշակութային ժառանգությունը և փոխանցել այն իր սերունդներին: Որպես արդյունք, սա տանում է ոչ թե ազգային ինքնության կորստի, իսկ հետագայում՝ ծովալման, այլ ինքնությունը պահպանվում է, իսկ հետագայում գուգադրվում, ինչի շնորհիվ էլ ծնվեց հրեա-ամերիկյան գրականությունը: Սկզբնական շրջանում հրեաամերիկյան գրականություն որպես գրական նյութ օգտագործում էր հիշողությունները կորցրած հայրենիքի մասին իր մեջ պարունակելով աղերսական երանգներ: Հետագա ընթացքը հանգեցրեց հրեաամերիկյան գրականության զարգացմանը պոեզիայի, գեղարվեստական գրականության, դրանայի շրջանակներում: Այս զարգացումը տեղի ունեցավ շնորհիվ Գերտրուդա Շտայնի, Ֆիլիպ Ոոֆի, Աբրահամ Թահանի, Սոլ Բելլոուի և այլ նշանավոր հրեա-ամերիկացի գրողների:

Սոլ Բելլոուն ծնվել է 1915 թ. Քվերեկ կանադական քաղաքում: Երբ ինը տարեկան էր, ընտանիքը արտագաղթում է Սանկտ Պետերբուրգից դեպի Չիկագո: Այս արտագաղթը միշտ Բելլոուի հիշողության մեջ էր, քան որ Բելլոուի մայր միշտ հիշում և կարոտում էր պետերբուրգաց կյանքը: Այսինքն, դեռ վաղ տարիքից նրան հայտնի էր արտագաղթի բացասական հությունը: Ավարտում է Չիկագոյի արևմտյան քաղանական մեկում գտնվող Թուելի ավագ դպրոցը, ապա ընդունվում Չիկագոյի համալսարան: Հետագայում տեղափոխվում է Նորթվեսթերն համալսարան, որտեղ ուզում է ուսումնասիրել գրականություն, բայց գգում է անգլիական բաժնում տիրող հակահրեական մթնոլորտը, ուստի նախընտրում է մարդաբանության և սոցիոլոգիայի բաժինը: 1941 թ. դարձավ Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի: Երկրորդ համաշխարհայինի տարիներին անձամբ ականատես եղավ ռազմական ահասարսությունը դեպքերին՝ գտնվելով առևտրական ռազմանավի վրա: 1946 թ. աշխատում է Մինեսոտայի համալսարանում, դասավանդում Չիկագոյի համալսարանում: Բելլոուն արժանանում է Նորթերն մրցանակի մարդասիրական ըմբռնման և ժամանակակից մշակույթի նրբին Վերլուծության համար: Հենց մրցանակը ստանալիս կոչ է անում մարդկությանը լինել քաղաքակրթության փարոսներ և այն միշտ արթուն վիճակում պահել՝ չքողնելով նրա հնտելեկտին թմրել: Սոլ Բելլոուն մահացավ 2005 թ. Բռուսլինում՝ քաղվելով հրեական գերեզմանոցում:

Հենց նրա արմատները, կյանքում պատահած դեպքերն ու մասնագիտությունն էին, որ նրան ստիպեցին կենտրոնանալ իր ինքնության, հրեա և ոչ թե ամերիկացի լինելու վրա: Դեռևս համալսարանից ուղեկցող հակահրեականությունը, Երկրորդ համաշխարհայինի դեպքերը, արդի համալսարաններում հրեա ուսանողների նկատմամբ դասախոսների վերաբերնունքը, շրջապատող մտավորական աշխարհի ծախողմանը սպասողական լարվածությունը նրան ստիպեցին խորհել ամերիկյանը հրեականի հետ գուգադրելու մասին: Բայց իր մեջ առկա հրեականությունը հնարավոր չէր գտնել իրեն շրջապատող ամերիկյան աշխարհում: Այն գտնելու համար անհրաժեշտ էր դիմել պատմությանը, անցյալին: Ցավալի էր, սակայն անցյալն աստիճանաբար աղոտանում և ահետանում էր, մինչդեռ Բելլոուն ցանկանում էր հասկանալ, թե ինչ ասել է լինել հրեա ժամանակակից աշխարհում: Իրեն արդյունք պարզվեց, որ «հրեական ինքնությունը» դարձել է ծևափոխված հիշողություն, որն էլ ժամանակակից հրեային հնարավորություն տվեց ընտրել մեկից ավելի ինքնություններ, որոնք ամփոփվում են մեկ մշակութային ինքնության մեջ: Եզրու չէ, որ նա իր ելույթներից մեկում նշում է «ես ամերիկացի գրող եմ և հրեա՝ լինելով առաջին հերթին գրող, հետո նոր հրեա»<sup>1</sup>:

Բելլոուն գրել է մի շարք վեպեր, որտեղ նա խոսում է կամ հրեական ինքնության, կամ ամերիկյան իրականության մասին՝ առկա խորինները քննարկելով իրա-

<sup>1</sup> Sarna J., American Jewish Experience: A Reader, Oxford Press, 1998, p. 68.

ոից անկախ, իրարից զատ: Նրա երկերում խոսվում է հրեայի, նրա հոգևոր խնդիրների մասին, բայց չեն պատճառաբանվում դրանց իրական աղբյուրները: Այս վեճաբերում հրեան ընկալվում է իրք ամերիկացի: Այսինքն, այստեղ դեռևս նկատելի չեն ամերիկացու, հրեայի և ամերիկացի հրեայի տարրերակումը: Բայց 21-րդ դարը թելադրում է իր պայմանները, համաձայն որոնց անհատը պետք է գտնի իր արմատները իր «Եսը» հասկանալու համար: Բանն այն է, որ յուրաքանչյուր արժեհամակարգ, գաղափար ընկալվում և կիրառվում է միայն դրանք ստեղծողի հասարակական խնդիրներից, ինչն էլ տանում է «Եսի» պառակտմանը: Այս երևույթը չի վրիպում Բելլուի աչքից: Իրեան ներգաղթյալ է, ապրում է Ամերիկայում, բայց չի դառնում ամերիկացի՝ փոխարեն պահապաններով կրոնը, լեզուն, իրեական իր ինքնությունը: Այսպիսով, հասունացել էր այն պահը, երբ իրեականությունն ու ամերիկայն ինքնությունը պետք էր համարդել ու գուգադրել ստեղծելու համար իրեայի նոր ինքնությունը: Այստեղ ժամանակակից աշխարհն է, ժամանակակից իրեան, ով ոչ մի պարագայում չի դաշտանում իր արմատներն առավել շահավետ պայմաններում հայտնվելու համար: Սա էլ հենց Ամերիկայի առավելություններից մեկն է. անցյալի-ներկայի համադրում, իրեայի-ամերիկացու գուգադրում: Ժամանակն էր եկել խոսելու ամերիկայն իրականության թերությունների ու առավելությունների, դրանց շարժարիթների ու պատճառների, իրեայի և նրա կենցաղի մեջ ունեցած դերի մասին: Չենց այս ամենի կուտակումն էլ ծնունդ տվեց նոր երկին՝ «Ռավելշտայնին», որի միջոցով Բելլուն արտահայտեց իր նոր խոսքն ուղղված մարդկության ու աշխարհին:

«Ռավելշտայնը» տպագրվել է 2000 թ.: Սա Բելլուի վերջին վեպն էր, որը հուշագրություն է և պատմում է երկու համալսարական ընկերների մտերմության, նրանց բարձր մտավոր կարողությունների, սեռական հակումների մասին՝ ի դեմս սպառնացող մահվան վտանգի: Վեպի սյուժեն պարզ է. համալսարանի դասախոս Ռավելշտայնն իր մտերիմ ընկեր Զիքին խնդրում է գրի առնել իր կենսագրությունը մենուարի տեսքով: Ռավելշտայնը հիվանդ էր ԶԻԱՅ-ով, ուստի տեղյակ էր իր մահվան մասին: Զիքը չի համարձակվում սկսել այդ գործը մինչև որ չի հիվանդանում տրոպիկական հիվանդությամբ: Այստեղ է, որ ժամանակագրական առումով վերադառնում ենք վեպի սկիզբ:

Վեպը նաև համարվում է «ակադեմիական»<sup>1</sup>, ընտրությունը պատահական չէ. այս ժամը միտում ունի անդրադարձնալ էթնիկական արմատներին, ինչն էլ անհրաժեշտ է վեպի գլխավոր թեմայի «իրեականության» բացահայտման համար:

«Հրեականությունն» վեպում առաջին հերթին բացահայտվում է հերոսների միջոցով: Հերոսները դեպի Ամերիկա ներգաղթած սերունդն է: Նրանք գիտեին, թե ինչ է նշանակում լինել ոչ պակաս ամերիկացի այնտեղ ծնված ու կրթված ամերիկացու համեմատ: Եվ դրա գաղտնիքն այն էր, որ ամերիկացիները չեն պահանջում իրենց ազգի հետ միաձուլում. Զիքն ու Ռավելշտայնը չեն հրաժարվում իրենց իրեական արմատներից, ապրում են Ամերիկայում լինելով և ամերիկյանի, և իրեականի կրողը: Բայց իրենց լիարժեք «Եսն» զգալու համար ինչ-որ բան պակասում է, և այդ պակասը լրացնելու համար նրանք դիմում են Եվրոպային, հատկապես Փարիզին ու Ֆրանսիային, որտեղ բողել են ինչ-որ բան և որտեղ կգտնեն ենթագիտակցորեն կանչող որևէ երևույթ, թեկուզ և բացասական: Այս ընտրությունը պատահական չէ, քանզի Փարիզը եղել և մնում է եզակի մշակույթի կրողը: Տեղին է հիշատակել Բալզակի հայտնի խոսքերը. «Ղեպքերը տեղի չեն ունենում, եթե դրանք չեն պատահում Փարիզում կամ չեն արժանանում Փարիզի ուշադրությանը: Փարիզը պայթող հնոց է, և հենց այս քաղաքն է հիմնել այս սկզբունքը: Այն, ինչ չի հավանել Փարիզը, երբեք գոյություն չի ունենա»<sup>2</sup>: Ռավելշտայնը փարիզյան կյանքը համարում է հիասքանչ, լի հասարակական դեպքերով: Մինչդեռ ամերիկյան իրականությունը Եվրոպական

<sup>1</sup> Sarna J., p.54.

<sup>2</sup> Bellow S., Ravelstein, Indiana, 2000, p. 23.

կյանքի խղճուկ պատճեն է: Եվ իզուր չէ, որ Ռավելշտայնը մուտք է գործում Եվրոպական մտավորականության աշխարհ՝ ապացուցելու համար հրեական մտքի հզորությունը: Բայց Չիքի Վերաբերմունքը դեպի Եվրոպա ամբողջապես բացասական է, քանզի Փարիզում տիրում էր հակամերիկյան տրամադրություն, որն էլ կրկնապատկվում է հրեա-ամերկացու հանդեպ: Այդպիսի վերաբերմունք է արտահայտվում նաև Չիքի կնոջ մոր՝ դեպի իր հրեա փեսայի ինքնության հանդեպ: Այս ամենը հրեայի մեջ հանգեցնում է որոշակի բարդույթի ձևավորման, ինչը Ռավելշտայնի կողմից դրսենորվում է հարուստ, ցուցադրական շքեղ կյանքի հանդեպ մոլուցքով:

Դաջորիիկ «հրեականությունն» իր արտահայտումը գտել է նաև ինքնության ուսումնասիրնան մեջ: Այս պարագայում հիմնական շեշտը ներանձնային հաղորդակցության վրա է, որն էլ ձևավորում է անհատի «եսը», մինչդեռ անցյալ դարաշրջանում հիմնական շեշտը «հավաքական ինքնության» վրա էր: Ռավելշտայնը վեպում խստովանում է: «Եվ դու պատկանում ես երրորդ տիեզերքին, հնաօն հրեաների անհետացող մոլորակին»: «Հրեական ինքնությունը» բնութագրվում է հրեական և ամերիկյան մշակույթների միությամբ ու համադրությամբ՝ ձևավորելով մի անձ, ով «հրեական կյանք է վարում Ամերիկայում ամերիկյան լեզվով»<sup>1</sup>: Բայց հրեան չի շեշտում իր հրեական ինքնության բացարձակությունը, այլ անում է առավելագույնը նոր հրեա-ամերիկացուն գտնելու համար: Միևնույն ժամանակ անհնար է խոսել հրեականից փախուստի մասին: «Ես չեմ կարող փախչել իմ նախկին եսից: Հրեականից փախչելու ամեն փորձ կձախողի, բանզի ներքին եսը պահանջում է մի տեսակ վերադարձ»<sup>2</sup>: Յենց ժամանակակից մտավոր աշխարհն է, որ կասկածի տակ է դնում հրեական գիտակցությունը դարձնելով այն անհրական: Սոլ Բելլուն փախչում է «ինքնության ճգնաժանի սարսափից»<sup>3</sup>: «Հրեական ինքնության» փնտրությունը իր արտահայտումն է գտնում նաև «հրեական տուն» հասկացությամբ: Հրեան միշտ եղել է գաղթական, բազում այլերում բռնել օջախներ, տներ ու գնացել անհայտ ուղղությամբ: Վեպի անունն ինքնին խիստ առնչվում է «տան» կոնցեպտին. Գերմանիայում յուրաքանչյուր տոհմ ուներ կալվածք, որի անունն իր մեջ ամփոփում էր տեղանքի անվանումը հավելած «stein» բառը, որը բարգնանաբար նշանակում է «քար»: Այսպիսով, վեպն ընթերցելիս հրեայի մոտ կառաջանա «օջախի» հետ կապված ջերմ զգացողություններ:

